ISSN 0037-5810

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՍԻՈՆ

2023

ԱՊՐԻԼ – ՅՈՒԼԻՍ Թիւ 4-7

ՂԵ. 95 ՏԱՐԻ – ՆՈՐ ՇՐՋԱՆ



ISSN 0037-5810

ՍԻՈՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՂԵ. 95 ՏԱՐԻ – ՆՈՐ ԸՐՋԱՆ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ

2023	ԱՊՐԻԼ – ՅՈՒԼԻՍ	ԹԻՒ 4–7
2023	APRIL – JULY	№ 4–7

SION

A QUARTERLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE
ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

VOL. 95

ST. JAMES PRESS
JERUSALEM

ՀՐԱՄԱՆԱՒ
ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ՊԱՏՐԻԱՐՔ
Ն. Ա. Տ. ՆՈՒՐՀԱՆ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ



Իրաւատէր՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան,
Հայ Պատրիարք Երուսաղէմի

Proprietor: His Beatitude Archbishop Nourhan Manougian
Armenian Patriarch of Jerusalem

Գլխաւոր խմբագիր՝ Տ. Ներսեհ Աբեղայ Ալոյեան
Editor in Chief: Father Nerseh Aloyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ն.Ա.Մ.

Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն… 121

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. Գէորգ Աբեղայ Հայրապետեանի քարոզը՝ խօսուած Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. Պատարագին (24 Ապրիլ, 2023) 124

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

«Թորոս Լեւոնի» վէպի ստեղծագործական պատմութիւնը եւ արձագանգները 129

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Սուրբգրային յղումները Համաստեղի «Աղօթարան»-ում 136

ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» պատմական հիմքը եւ նրա վերաբերմունքը Արշակունիների նկատմամբ 143

ՎՈՎԱ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

Լռութեան գեղագիտութիւնը Սոս Սարգսեանի գրական երկերում 153

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏԵԱՆ

Համահաւաք ատենագրութիւններ Թուրքիոյ Հայոց Ազգային Երեսփոխանական ժողովի, Համագումար Ազգային ժողովի եւ Համազգային խորհուրդի (1919-1922)։ Գիրք Ա. Ատենագրութիւններ 822 էջ, Գիրք Բ. Յաւելուած եւ ցանկեր, 550 էջ։ Խմբագրեց եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, Երուսաղէմ, 2021 161

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ՆԵՐՍԷՍ ԱՒ. ՔՀՆՅ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Երկխօսութեան դերը եկեղեցիների միջեւ համերաշխ բարեկամութիւն ստեղծելու ճանապարհին 164

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Շահան Պէրպէրեան՝ իմաստասէր ուսուցիչը 174

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

EMMA CHOOKASZIAN

Two unpublished 11th century evangelist portraits from a private collection 179

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Ընդհանուր բովանդակութիւն «Սիոն»-ի (2020-2022), (Շար. 10, Վերջ) 187

ՅՈԲԵԼԵԱՆ

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Գիտութեան խոշոր կազմակերպիչը
(Պրոֆեսոր Գառնիկ Ասատրեանի 70-ամեակի առթիւ) 196

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԱԻԱՍԱՐԴ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Աջապահեան ընտանիքին ծագումն ու պատմութիւնը 198

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

ՏՕՔԹ. Յ. ԹՕՓՃԵԱՆ

Տելիչեան խնդիրը, Ս. Գիրք եւ Բաբելոն, (Մաս Ժե.), (Շար. 10, Վերջ) 210

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ

Խնածախի պատմամշակութային ժառանգութիւնը 214

ՏՊԱԳՐԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆ ՊԵՏՈՅԵԱՆ

Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ մի բացառիկ տպագրութիւն 229

ՈՒՂԵԳՐԱԿԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ՍՐԿ. ՊՕՂՈՍԵԱՆ

Բոլորի քաղաքը 251

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ԱՓՈՒՌՈՅ

- Հաղորդագրութիւն, կարգալոյծ հռչակուած է Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան 255

- Հաղորդագրութիւն Տնօրէն ժողովի, Ս. Աթոռ, Երուսաղէմ, 12 Մայիս, 2023 255

- Հաղորդագրութիւն Միաբանական Ընդհանուր ժողովի, Ս. Աթոռ, Երուսաղէմ, 13 Մայիս, 2023 256

- Հաղորդագրութիւն Միաբանական Ընդհանուր ժողովի, Ս. Աթոռ, Երուսաղէմ, 6 Յուլիս, 2023 256

- Նոր նշանակումներ 257

- Քրիստոնէական կարեւոր արարողութիւններէն միոյն՝ Լոյսի տօնակատարութեան, Իսրայէլի ոստիկանութեան կողմէ անտրամաբանական սահմանափակումներու վերաբերեալ հոգեւոր պետերու յայտարարութիւնը 258

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՅԼԵՒԱՅԼ

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

- Վարդապետական աստիճանի տուչութիւն 259

- Կենսագրութիւն Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեանի 260

- Կենսագրութիւն Տ. Տիրան Վարդապետ Յակոբեանի 261

- Իսրայէլի Փեթախ Թիքուա քաղաքին մէջ բացուեցաւ
Շառլ Ազնաւուրի անուան պարտէզ 262

- Աւագ Շաբթուան խորհուրդը. առժամեայ ցուցահանդէս
Հելէն եւ էտուարտ Մարտիկեան թանգարանին մէջ 262

- Յիշատակ նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս
Հայոց ցեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց (108-րդ տարելից) 263

- Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին վիրաւորուած
հերոս զինուորներու չորրորդ խումբին այցը Պատրիարքարան 263

- Ջատկական տօներու առիթով Երուսաղէմի Քաղաքապետին այցը
Հայոց Պատրիարքարան 264

- Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարքի առաջին պաշտօնական
մուտքը Սբ. Յարութեան տաճար 265

- Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարքի առաջին պաշտօնական
մուտքը Բեթղեհէմի Սբ. Ծննդեան տաճար 265

- Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարքի առաջին պաշտօնական
այցը Հայոց Պատրիարքարան 266

- Վերաօծում Սուրբ Հրեշտակապետացի՝ Սուրբ Հռիփսիմէի մատրան
վերանորոգուած խորանին եւ պատկերին 267

- Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի շրջանաւարտից հանդէս 267

- Սրբոց Թարգմանչաց վարժարանի շրջանաւարտից հանդէս 268

- Կիսասարկաւագական ձեռնադրութիւն 269

- Սարկաւագական ձեռնադրութիւն 269

- Ուրարի տուչութիւն 270

- Պաշտօնականք 279

ԱՆՆԱ ԿԷՃԷ-ՔՈՒՇԵԱՆ

Ս. Աթոռոյս Կիւլպէնկեան Մատենադարանը շնորհակալութեամբ
ստացած է հետեւեալ գիրքերը 271

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՐԿ. ԽՈՒՏԱՎԵՐՏԵԱՆ

Եկեղեցականք - Բեմականք 273

Յօդուածագիրներու ուշադրութեան 280

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանին՝ տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ, զգեցեալ պատմուճան սպիտակ, եւ զարհուրեցան: Եւ նա ասէ ցնոսա. «Մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն, յարեաւ, չէ աստ. ահաւադիկ տեղին ուր եդին զնա»:

(Մարկոս ԺԶ:5-6)

Զատկական կիրակի առաւօտ, երբ Իւղաբեր կիները իրենց Տիրոջ գերեզմանը կ'երթային, անոնք լաւ գիտէին թէ ի՞նչ կը սպասէր իրենց. աւելի ճիշդ, կը խորհէին թէ գիտէին, որովհետեւ անոնք կ'երթային գերեզման՝ անուշահոտ իւղերով օծելու մեռած մարմինը իրենց սիրեցեալ Վարդապետին եւ Տիրոջ: Բայց մենք լաւ գիտենք թէ այդ կիները ի՞նչ պիտի գտնէին հոն. թափուր գերեզման մը: Անոնք սակայն, իրենց մտքին մէջ կ'երթային հրէական օրէնքներու համաձայն մեռած մարմին մը օծելու: Անոնք կ'երթային ոչ թէ ապրող Մէկը տեսնելու, այլ անշունչ մարմին մը:

Մեզմէ շատեր այդ կիներուն պէս կեանքին կը մօտենան նոյն ձեւով, իւրաքանչիւր օր ուրիշ օր մըն է մեզի համար գերեզմանին մօտեցող: Նման այդ Իւղաբեր կիներուն, որոնք իրենց Տիրոջ մահուան պատճառով կը քալէին արշալոյսի մառախուղին մէջ, մենք եւս կը քալենք մեր կեանքի մառախուղին մէջ:

Իւղաբեր կիները այդ առաւօտ կ'երթային իրենց Վարդապետին գերեզմանը մահ տեսնելու, սակայն Միաշաբաթի այդ առաւօտ անոնք ուրիշ բան մը պիտի գտնէին հոն: Երբ անոնք Յիսուսի գերեզմանը հասան, տեսան թէ գերեզմանին իբր դուռ ծառայող քարը գլորած էր, եւ իրենց Վարդապետին մարմինը անյայտացած, բան մը որ պիտի գար զիրենք վախի ու շուարած կացութեան մատնելու: Յանկարծ լուսագեղ, շլացուցիչ զգեստներով երկու հրեշտակներ կը յայտնուէին, բան մը որ այդ կիները աւելի պիտի վախցնէր ու ծունկի բերէր: Ապա հրեշտակները ըսին. «Ինչո՞ւ ողջը կը փնտռէք մեռելներուն մէջ, չէ՞ք յիշեր որ ըսաւ, թէ ինք թէեւ պիտի մեռնէր, սակայն երեք օրեր ետք յարութիւն պիտի առնէր»: Միայն ատկից ետք էր որ այդ կիները պիտի անդրադառնային թէ իրենց Տէրը՝ Յիսուս՝ յարութիւն առած էր, որմէ վերջ անոնք պիտի վերադառնային առաքեալներուն, ըսելով. «Ան կ'ապրի»: Իւղաբեր կիները տակաւին կ'ողբային մահը իրենց վարդապետին, երբ յանկարծ դէմ առ դէմ կու գային անոր Յարութեան: Աստուածային հզօր ոյժը իջած էր մեռելներու աշխարհ եւ յարութիւն տուած էր Միածին Զաւկին:

Նախ գլորած քար մը, ապա թափուր գերեզման մը, յայտնութեամբ զոյգ մը լուսագեղ հրեշտակներու, որուն կը յաջորդէր մեռելներու թագաւորութեան մէջ այդ ցնցող լուրը Աստուածորդւոյն յարութեան, որ այդ օրուընէ ետք մուտք կը գործէր հաւատացեալներու կեանքէն ներս, նման այդ Իւղաբեր կիներուն, որոնք կու գային մեռած մարմին մը տեսնելու, սակայն ատոր փոխարէն կը գտնէին նոր կեանք: Միաշաբաթի այդ առաւօտ Հայր Աստուած մուտք կը գործէր հաւատացեալներու կեանքէն ներս, նման այդ Իւղաբեր կիներուն, որոնք սակայն մեռած մարմնի մը փոխարէն կեանք պիտի գըտնէին այդ գերեզմանին մէջ: Զատկուայ այդ առաւօտ Աստուած էր որ մուտք կը գործէր

մեր այս մեռած աշխարհը, նոր իմաստալից կեանքով։ Տակաւին մինչեւ այսօր Հայր Աստուած մուտք կը գործէ մեր մեռած կեանքերէն ներս, Քրիստոսով յաւիտենական կեանքի բարի ու մխիթարիչ լուրով։

Իւղաբեր կիները սիրով եւ մեծ ուրախութեամբ առին հրեշտակներուն տուած լուրը, թէ «Չէ աստ, այլ յարեաւ, որպէս ասացն»։ Անշուշտ առաքեալները նախ պիտի չհաւատային, մինչեւ որ Պետրոս Առաքեալ ինք անձամբ երթար իր Տիրոջ գերեզմանը եւ համոզուած վերադառնար թէ իրմէ առաջ Քրիստոսի գերեզմանը գացած կիներուն պատմութիւնը բարբաջանք կամ երեւակայական խօսքեր չէին։ Սովորաբար մարդ արարածը կը մերժէ ընդունիլ գէշ լուրը, սակայն այս մէկը ի վերջոյ ուրախ եւ կարեւոր լուր մըն էր։ Հաւանաբար առաքեալները կը սպասէին որ մէկը արթնցնէր զիրենք, ըսելով թէ ինչ որ տեսած էին վատ երազ մըն էր, վերջապէս, ո՞վ կրնար հաւատալ այդ օրերուն թէ մեռելներ կրնային դուրս գալ իրենց գերեզմաններէն, եւ թերեւս ալ անոնք այդ վերագրեցին Իւղաբեր կիներու երեւակայութեան։ Եւ դժբախտաբար մինչեւ այս օրս կան շատեր, որոնք կը մերժեն ընդունիլ Քրիստոսի իրենց պարգեւած նոր կեանքը, որովհետեւ այս աշխարհին մէջ իրենց միակ գիտածը՝ մահն է, ո՛չ միայն ֆիզիքական՝ այլ հոգիին մահը, զիրենք շրջապատող խաւարն ու տիեզերական առանձնութիւնը, մինակութիւնը։

Յիսուսի մեռելներէն յարութեան ամենահամոզիչ փաստը, սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, իր յուսախաբ աշակերտներուն վրայ թողած տպաւորութիւնն էր։ Տակաւին քառասուն եւ ութ ժամեր առաջ էր, որ անոնք կը լսէին իրենց վարդապետին վերջին խօսքերը, «Ամենայն ինչ կատարեալ է», «Ամէն ինչ վերջացաւ», սակայն շաբթուան առաջին օրն իսկ, երեկոյեան, էմմաուսի ճամբուն վրայ անոնք կու գային լսել իրենց յարուցեալ Տիրոջ խօսքերը. «Ես եմ, մի՛ վախնաք»։ Հերովդէս ի զուր կը փորձէր ոչնչացնել Քրիստոսի հետեւորդները։ Փարիսեցի Սաւուղը - Պօղոս Առաքեալ - ոգի ի բռին փորձեց իր պատեանին մէջ խեղդել առաջին դարու քրիստոնէութիւնը։ Հռոմի կայսրերը նոյնիսկ ձախողեցան իրենց փորձերուն մէջ ճզմելու նոր կրօնքը։ Յետոյ, Քրիստոնէական եկեղեցւոյ շարունակականութիւնը ինքնին պիտի գար անոր յարութեան ամենազօրաւոր փաստերէն մին ըլլալու, ու երկու հազար տարիներէ ի վեր ոչ մէկ ոյժ կրցած է յաղթահարել զայն, ընդհակառակը՝ ցայսօր ամէն Զատկի, միլիոնաւոր մարդիկ իրար կ՛ողջունեն ըսելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Աւագ Ուրբաթ օրով Քրիստոս խաչուեցաւ մարդկութեան կողմէ. իսկ Աւագ Շաբաթ օր ամբողջ տիեզերքը շնչահեղձ կը սպասէր. սակայն այդ հոյակապ Զատկական առաւօտուն Անոր յարութիւնը կու գար միանգամ ընդմիշտ հաստատելու թէ մահը վերջնականապէս յաղթահարուած էր։ Քրիստոսի մեռելներէն եռդարձը մարդկութեան կը բերէր նոր յոյս, նոր կեանք եւ չիշատակելի նոր օր մը, եւ Յիսուսի հրաշափառ Յարութեամբ Աւագ Ուրբաթ օրուան խաւարը վերջնականապէս կը փարատէր։

Սովորական օրեր մենք մահուան կը նայինք եւ կ՛արտայայտուինք իբր դժբախտութիւն կամ ողբերգութիւն մը, սակայն Զատկի օրով ան քրիստոնեային համար կը դառնայ յաղթանակի օր մը։ Սովորական օրեր մենք մահուան մասին կը խօսինք փսփսուքով, վախով, որովհետեւ ան իր հետ կը բերէ անհատնում վիշտ եւ ցաւ, սակայն Զատկի օրով քրիստոնեան, մանաւանդ Հայը, որ առաւելագոյնս ճաշակած է մահուան սարսափն ու դառնութիւնները, կու գան հաստատելու թէ յաղթանակը կեանքին է, Քրիստոս՛ով եղած կեանքին. մահը կրնայ հարուածել մարմինը, սակայն երբե՛ք հոգին, որովհետեւ «Հոգին է կենդանարար»։ Մեզմէ ոմանց համար կեանքը ամենօրեայ պայքար է ու կռիւ,

սակայն Զատիկը, Քրիստոսի յարութեամբ կու գայ մեզի տալու հոգեկան ոյժ, յոյսի նշոյլ մը որուն միջոցաւ մենք պիտի յաջողինք յաղթահարել մեր դէմ ծառացող բոլոր դժուարութիւնները։ Եւ վերջապէս ի՞նչ բանի շուրջ կը դառնայ Զատիկը, եթէ ոչ յոյսի եւ վերածնունդի, եւ խորհրդածութեան մեր կեանքերու մասին։ Մեր Փրկչին Յարութիւնը յոյսի անհատնում աղբիւր մըն է ու միաժամանակ կեանքին նայելու նոր իմաստասիրութիւն մը, զոր պարտինք միշտ տանիլ մեր հետ ո՛չ միայն Զատկին, այլ նաեւ տարւան մնացած միւս բոլոր օրերուն։

Զատիկը սիրելիներ, այսպէս ըսած փարատոքս մըն է, որ կը միացնէ կեանքի եւ մահուան հակասութիւնները։ Մեր մարդկային փորձառութեամբ ու հասկացողութեամբ մահը կ՚անճիտէր, չեղեալ կը նկատէր կեանքը, մինչ Զատիկը կու գար մեզի վերյիշեցնելու թէ կեանքը եւս կրնար իր կարգին անճիտել մահը, որովհետեւ մեր Փրկիչը իր կեանքով յաղթեց մահուան։ Յարութիւնը այլաբանութիւն մը չէ, այլ իրականութիւն մը, ան այլեւս ընդմիշտ պատռած է մահուան վարագոյրը, եւ իրար միացուցած կեանքը՝ անմահութեան եւ ժամանակաւորը՝ անժամանակին։ Աստուածորդին մեռաւ եւ յարութիւն առաւ մեզի համար, միայն մեզի սորվեցնելու որպէսզի մենք եւս կարենանք յարութիւն առնել իրենց պէս մեր կեանքի դժուարութիւններէն եւ ձախողութիւններէն պարտինք գիտնալ եւ կարենալ մեռնիլ իրեն պէս։

Զատիկը, սիրելի հաւատացեալներ, կոչ մըն է ուղղուած մեզի, վերակենդանացնելու մեր մեռած կեանքերը։ Սիրելի հաւատացեալ եղբայրներ եւ քոյրեր, ձեր ամբողջ էութեամբ եւ ի բոլոր սրտէ հաւատացէք մեր Փրկչի Յարութեան, ո՛չ միայն իբր պատմական դէպք մը կամ իրողութիւն մը, այլ մեր կեանքերէն ներս իբր ներկայ, ապրող իրականութիւն մը։ Եւ երբ ի բոլոր սրտէ կը հաւատաք, ապա մեր Փրկչին Յարութեան զօրութիւնը պիտի փոխէ ձեր կեանքերը եւ չետ այդու ձեր գերեզման այցելութիւնները, նման Իւղաբեր Կիներուն, պիտի չըլլան պարզ այցելութիւն մը տրուած սիրելի ննջեցեալներու եւ կամ անոնց յիշատակին, այլ ատկից ետք դուք պիտի սկսիք շրջիլ ձեր սիրտերը լեցուն Աստուծոյ սիրով, գերերջանիկ, նոր կեանքով։

Սիրելիներ, ի բոլոր սրտէ հաւատացէ՛ք Ս. Զատկուայ հրեշտակներու տուած բարի լուրին, «Ձի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ, այլ յարեաւ որպէս ասացն։ Ինչո՞ւ ողջը կը փնտռէք մեռելներուն մէջ, հոս չէ, այլ յարութիւն առաւ»։ Այս առաւօտ դուք եւս գացէք եւ այդ հրեշտակներուն նման ձեր սիրելիներուն տուէք Հայր Աստուծոյ սիրոյն բարի լուրը, Իր Միածին Զաւկին Յարութեան աւետիսը, ըսելով թէ Ան կ՚ապրի եւ պիտի շարունակէ կեանք տալ բոլոր անոնց՝ որոնք կը հաւատան իրեն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից. ամէն։

Ձեզ և Մեզ Մեծ Աւետիս,
Քրիստոս Յարեաւ ի Մեռելոց։

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԳԷՈՐԳ ԱՔԵՂԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ ՄԱՏՈՒՅՈՒԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 Ապրիլ, 2023)

«Ես եմ Յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ մեռանի, կեցցէ»:
(Ա. Թագ. Գ:9)

Սիրելի հաւատացեալներ,

Այժմ կը գտնուինք յետ Յարութեան քառասնօրեայ տօնախմբական շրջանի մէջ, որը քրիստոնեաներուս համար հոգեւոր բերկրանքի, Աստուածային շնորհներու վայելումի, ինչպէս նաեւ յաւիտենական կեանքը վերստանալու յոյսի եւ անոր լոյսով ցնծալու շրջան մըն է:

Մեր Տիրոջ Յարութիւնը մարդկային կեանքի նորոգութեան եւ մեղքի պատճառով այս աշխարհ մտած ապականութեան եւ մահուան իշխանութեան չեղոքացման սկիզբն է, այդ իսկ պատճառով այս Կիրակին կը կոչուի «Նոր Կիրակի»: Նոր կը կոչուի նաեւ մեր Տիրոջ՝ իր Յարութեամբ այս աշխարհին վրայ եկեղեցին հաստատելուն համար, որու միջոցաւ կը բաշխէ իր Աստուածային շնորհները, եւ անոնցմէ մեծագոյնը՝ իր կենարար Մարմինը եւ Արիւնը, որն իր մէջ ունի անապական կեանքի եւ համընդհանուր յարութեան թթխմորը:

Մինչեւ Փրկչի Յարութիւնը, մարդկութիւնն իր բոլոր ձեռքբերումներով եւ նուաճումներով հանդերձ անճար եւ անօգնական կը մնար մահուան իրողութեան առջեւ, սակայն Տիրոջ յարութիւնը եղաւ առաջին չաղթանակը մահուան դէմ եւ այդ ի մտի ունենալով՝ Պօղոս Առաքեալ ուրախութեամբ կը գոչէ. «Ո՞ւր է մահ չաղթութիւն քո, ո՞ւր է դժոխք խայթոց քո» (Կորնթ. 15:55): Արդարեւ, ուրախալի է մեր Տիրոջ Յարութիւնը եւ պարծանքը՝ բոլոր քրիստոնեաներու, որովհետեւ այն աւետիսն է մարդկային կեանքին վրայ Աստուածային իշխանութեան վերահաստատումի եւ աշխարհականի վրայ չարի իշխանութեան տապալումի, եւ, վերջապէս, իսպառ վերացումի:

Այսօր մենք կը նշենք նաեւ Հայոց Ցեղասպանութեան 108-րդ տարելիցը: 1915 թ.-էն ի վեր Ապրիլ 24-ը ամէն մի հայու յիշողութեան մէջ կը մնայ որպէս ազգային ողբերգութեան օր: Հայ ազգն իր հազարամեայ գոյութեան ընթացքին բազում փորձութիւններու միջով անցած է, բազում աղէտներ տեսած է: Յաճախ պետականութեան կորստեան պատճառով ինկած է տարբեր կայսրութիւններու լուծի տակ եւ տարատեսակ բռնութիւններու ենթարկուած է, սակայն այն ինչ կատարուեցաւ Առաջին Աշխարհամարտի տարիներուն՝ աննախադէպ էր, որովհետեւ մարդկային կորուստէն զատ զրկուեցանք նաեւ մեր պատմական բնօրրանի մեծագոյն մասէն, ուր ձեւաւորուած էինք որպէս ազգ

եւ ապրած էինք մինչեւ 20-րդ դար, եւ եթէ չըլլար վերջին եւ վճռական ճիգը՝ Սարդարապատի հերոսամարտը, պիտի չունենայինք նաեւ այսօրուան փոքրիկ Հայաստանը, որով կարծես առժամանակ կանխուեցաւ Թուրքի եւ անոր եռեւը կեցած ուժերու հայկայինջ ծրագրին ամբողջական իրագործումը: Սակայն այդ ծրագրին յղացողներն ու գործադրողները վստահաբար պիտի չհանգստանան այնքան ատեն, մինչեւ որ իրենց սկսած գործը կարողանան աւարտին հասցնել: Այսինքն՝ Հայ ժողովուրդի գլխուն տակաւին կը շարունակէ դամոկլեան սուրի պէս կախուած մնալ բնաջնջումի եւ վերջնականապէս սեփական հայրենիքէն տարագրումի վտանգը, եթէ Հայը իր փրկութեան եւ գոյութեան երաշխիքները շարունակէ փնտռել իրմէ դուրս:

Մենք մինչեւ Ցեղասպանութիւն զբաղած էինք Եւրոպական երկիրներու խիղճը արթնցնելով, որպէսզի անոնք գան եւ ազատագրեն մեզի Թուրքական լուծէն, կամ գոնէ ճնշում գործադրեն Թուրքական կառավարութեան վրայ՝ բարեփոխումներ մտցնելու Արեւմտեան Հայաստանի գաւառներու մէջ: Այս նպատակին էր ուղղուած այդ ժամանակուայ գրեթէ բոլոր հայկական կուսակցութիւններու եւ հայ քաղաքական գործիչներու ջանքներն ու նախաձեռնութիւնները: Սակայն, ինչպէս գիտենք, այն որեւէ դրական արդիւնք չտուաւ, հակառակը, յանգեցուց մեր ազգի մեծագոյն ողբերգութեանը՝ Հայոց Մեծ եղեռնին: Բայց, կարծէք թէ, այդ ալ բաւական չէր դասեր քաղելու համար. Ցեղասպանութիւնէն ետք ալ շարունակեցինք արդարութիւն եւ իրաւունք պահանջել աշխարհէն, այն պարագային, երբ նոյն աշխարհին առջեւ գործուեցաւ մեր ազգի մեծագոյն նախճիրը:

Արդէն հարիւր եւ աւելի տարիներ են, ինչ Ապրիլ 24-ին Թուրքական եւ Եւրոպական տարբեր դեսպանատներու առջեւ ցոյցեր կ'ընենք՝ անոնց ուշադրութիւնը մեր կողմը գրաւելու համար: Սակայն որմէ՞ ինչ կը պահանջենք. մեր ազգի դահիճ Թուրքերէն արդարութի՞ւն, որոնք մեր հայրենիքին տիրացան, թէ՞ Արեւմտեան երկրներէն, որոնց լուռ համաձայնութեամբ գործուեցաւ մարդկութեան այդ մեծագոյն ոճիրը: Վերջապէս մենք ե՞րբ պէտք է հասկնանք Աւետարանական այն պարզ ճշմարտութիւնը, թէ փրկութիւնը դուրսէն չի գար, այլ այն մեր ներսն է, եւ մեր ներսէն պիտի սկսի: Մեր ամբողջ դժբախտութիւնը հէնց այս կարեւոր ճշմարտութիւնը չհասկանալու մէջ է, որ յոյսերնիս մեր փոխարէն ուրիշներու վրայ դրած ենք եւ Աստուծմէ զատ օտար տէրեր կը փնտռենք:

Ամենուր մենք զմեզ առաջին քրիստոնեայ ազգը կը հռչակենք, եւ տակաւին չենք իւրացուցած մարդոց վրայ յոյս չդնելու Աստուծոյ պատգամները. որոնք խստագոյնս կ'ազդարարեն. «Անիծեալ է այն մարդը, որն իր յոյսը մարդու վրայ կը դնէ» (Երմ. 17:5) կամ՝ «Յոյս մի՛ դրէք իշխաններու վրայ, մարդոց որդիներ, որովհետեւ անոնցմէ փրկութիւն չկայ» (145:3): Եթէ գոնէ վերջին հազարամեակի ընթացքին մեր յոյսը Աստծոյ վրայ դրած ըլլայինք, մեր ինքնավստահութիւնը կը մեծնար եւ մեր ճակատագրին տէրը կ'ըլլայինք ու վերջին թշուառութեան չէինք հասնի: Բայց նաեւ պէտք է ճիշդ ըմբռնել Աստուծոյ վրայ յոյս դնելու իմաստը, որպէսզի անմտօրէն Աստուծոյ չմեղադրենք եւ չըսենք, թէ այսքան ատեն յոյսերնիս Աստուծոյ վրայ դրած էինք, ի՞նչ օգուտ ունեցանք: Գրիգոր Տաթեւացին այսպէս մտածողներու համար կ'ըսէ. «Յոյսն առանց աշխատութեան ոչ է յոյս, այլ յանդգնութիւն» (Գիրք Հարցմանց): Արդարեւ, եթէ մենք մեզմէ եկածը չենք ընէր եւ յաջողելու համար համապատասխան ջանքեր չենք թափէր կամ Աստուածահաճոյ կեանքով չենք ապրեր, ի՞նչ համարձակութեամբ պիտի ակնկալենք Աստուծոյ բարեհաճութիւնը կամ զօրակցութիւնը. մեր գործը ցանելն ու մշակելն

է, իսկ Աստուծոյ գործը՝ բարենպաստ եղանակ ապահովելն ու աճեցնելը։

Դարձեալ մենք զմեզ առաջին քրիստոնեայ ազգը կը կոչենք, բայց արդեօք ցանկութիւն ունի՞նք կատարուածի մէջ մեր մեղքերն ու սխալները տեսնելու, թէ՞ միայն դահիճը կը մեղադրենք իր ոճրագործութիւններու, իսկ մեծ տէրութիւնները՝ իրենց անտարբերութեանց համար։ Հոգեւոր տեսանկիւնէ այս հարցը քննելով, մի՞թէ խելամտութիւն է շարունակ սատանան մեղադրել մեր դէմ չարիք նիւթելու եւ գործելու համար։ Մի՞թէ յստակ չէ, որ անիկա երբեք պիտի չդադրի մեր հոգիներու կորստեան համար աշխատելէ, սակայն հարցն այն է, թէ մենք ի՞նչ կ'ընենք մեր հոգիները փրկելու համար։ Ճիշդ նոյն կերպ, թուրքը իր նպատակին հասնելու եւ մեր հայրենիքին տիրելու նկրտումներով, չխնայելով իր նիւթական միջոցները՝ յօդս կը ցնդեցնէ որեւէ խոչընդոտ։ Միւս կողմէն եւրոպացին ալ ամենուր իր շահը կը հետապնդէ, որպէսզի իր ազգը օգտուի, իսկ մենք, որպէս հինգ հազար տարուայ պատմութիւն ունեցող ազգ, ինչո՞ւ չունինք համապատասխան զգուշութիւն եւ դիմադրողականութիւն՝ թշնամու չար մտադրութիւնները հասկնալու, համապատասխան միջոցներ ձեռք առնելու եւ մեր նկատմամբ անոր ոտնձգութիւններուն դէմ դնելու համար։ Մենք զմեզ յանձնած ենք բախտի քմահաճոյքին եւ շարունակ կը բողոքենք մեր իսկ գէշ բախտէն։

Որեւէ կրօնի մէջ սատանայի եւ չարիքի մասին այնքան չի ուսուցանուիր, որքան քրիստոնէութեան մէջ։ Պատճառն այն է, որ մի միայն Քրիստոսի լոյսն է, որ սփռուելով աշխարհի մէջ էապէս կը բացայայտէ խաւարը եւ չարի բոլոր գործերը։ Ճշմարտութիւնը եւ Աստուածային լոյսը փնտռող քրիստոնեան ամէն վայրկեան պայքարելով այդ ճանապարհին արգելք հանդիսացող սատանային դէմ՝ հետզհետէ կը ստանայ անոր նրբագոյն հնարքներն ու խաբէութիւնները ճանչնալու կարողութիւն։ Սուրբ հայրերն իրենց խրատներու մէջ յաճախ կը խօսին այդ ճանաչողութեան նշանակութեան մասին՝ նշելով, որ առանց ատոր անհնար է հասնիլ կատարելութեան։ Եթէ անհատական փրկութեան պարագային զգուշութիւնը, խորագիտութիւնը, չարի հնարքները ճանչնալն ու անոր լարած թակարդներէն խուսափիլը այդքան կարեւոր եւ էական է, մի՞թէ նոյնը չէ պարագան քրիստոնեայ ազգի մը համար, մանաւանդ Հայ առաջին քրիստոնեայ ազգին համար, որ դարերով շրջապատուած եղած է այլակրօն թշնամի ազգերով եւ շարունակ գոյութեան եւ ինքնութեան պահպանման վտանգի առջեւ կեցած է։

Մեր Տէրը կ'ըսէ. «Գող ոչ գայ, եթէ ոչ զի գողասցի եւ սպանցէ եւ կորոուսցէ» (Յովհ. 10։10)։ Գողը եւ աւազակը չէ, որ մենք պատեհ-անպատեհ առիթներով պիտի մեղադրենք, որովհետեւ անոր գործը գողնալ ու սպանելն է, այլ նախ մենք զմեզ պիտի մեղադրենք, որ գողին եւ թշնամիին համար խոցելի եղած ենք՝ նախադրեալ ստեղծելով, որ ան իր չար ծրագիրը յաջողցնէ։

Մէկդի դնելով մեր ազգին բնորոշ պարծենկոտութիւնը՝ պէտք է քրիստոնէական լոյսի ներքոյ ճշմարիտ ինքնաքննութեամբ ճանչնանք եւ ընդունինք պատմութեան մէջ մեր բաժին մեղքերն ու սխալները, որոնք լայն դուռ բացած են մեծ աղէտներու եւ ազգակործան պատուհասներու, որոնցմէ օգտուելով՝ թշնամին, յարմար պահ մը իր սեւ գործը կատարած է։

Սեփական մեղքերը տեսնելը եւ անոնց համար ի սրտէ զղջալը շնորհ է եւ քրիստոնէական ամէնէն կարեւոր առաքինութիւնը, որը կը շարժէ Աստուծոյ ներողամտութիւնը եւ միաժամանակ ճշմարիտ վերընթացի ճամբայ կը բանայ։ Անհատաին կամ հոգեւոր կոչին բնորոշ չէ սեփական մեղքերը տեսնելը կամ անոնց համար զղջալը։

Անոր բնորոշ է մշտական ինքնարդարացումը եւ սեփական սխալներու պատճառները ուրիշներու մէջ փնտռելը, որը ոչ միայն հոգեւոր փակուղի է, այլեւ կը շարժէ Աստծոյ արդարացի բարկութիւնը։

Եթէ քրիստոնէաբար անաչառ հայեացք նետենք մեր անցեալին, յատկապէս Մեծ եղեռնին նախորդող շրջանին, բազմաթիւ թերացումներ պիտի նկատենք մեր ազգային կեանքէն ներս, որոնք վառ գոյներով արտայայտուած են արեւմտահայ գրականութեան մէջ։ Անոնցմէ առաւել յայտնիներն են Յակոբ Պարոնեանի «Աբիսողոմ Աղա»-ն, «Ազգային Ջոջեր»-ը, Երուանդ Օտեանի «Ընկեր Փանջունի»-ն եւ այլ գրողներու պատմուածքներ եւ երգիծական պատումներ, որոնք այդ օրերու հայ հասարակութեան բարոյական բարքերու անկեալ պատկերը կը ներկայացնեն։ Ասոնց կողքին եթէ աւելցնենք հայկական կուսակցութիւններու ներազգային պառակտիչ գործունէութիւնը, եւ անոնց արկածախնդիր ու անհեռատես գործողութիւնները, Օսմանեան կայսրութեան մէջ այս ու այն կողմ բախումներ հրահրելու եւ անարդիւնք ցոյցեր կազմակերպելու հետեւանքով մարդկային մեծ կորուստներու պատճառ կը դառնային, ինչպէս նաեւ հայ հոգեւորականութեան անկեալ վիճակը, հայ մտաւորականներու մեծ մասի հակակրօնական գաղափարները, որոնք իբրեւ թէ Եւրոպայի մէջ ուսանած եւ «լուսաւորուած», սակայն մկրտութեան շնորհը ուրացած մարդիկ էին եւ Հայաստան վերադառնալով՝ ճշմարիտ հաւատքը իբրեւ յետամնացութիւն եւ միջնադարեան խաւար շրջանի երեւոյթ կը քարոզէին՝ մեծ գայթակղութիւն դառնալով իրենց ազգակիցներու եւ հայրենակիցներու համար, պիտի տեսնենք, որ մենք էինք թէ՛ քաղաքականապէս, թէ՛ բարոյապէս եւ թէ՛ հոգեւորապէս այդ արհաւիրքները մեզի համար պատրաստողը։

Քրիստոնէական գիտակցութիւն չունեցող մարդոց համար այս խօսքերը հաւանաբար շատ խիստ կը թուին, սակայն մենք՝ որպէս հաւատացեալ ժողովուրդ, պարտինք հոգեւոր աչքերով եւ Աստուածային հայեացքով նայիլ մեր պատմութեանը, որպէսզի ճշմարիտ ինքնաքննութեամբ ճանչնանք մեր մեղքերը եւ սխալները, ի խորոց սրտի զղջանք եւ դարձեալ մեր ազգային միասնութիւնը կառուցենք մեր քրիստոնէական հաւատքի շուրջ, ինչպէս Ս. Սահակ Պարթեւ Հայրապետը կ՚ըսէ. «Ճշմարիտ հաւատքն է եկեղեցի, որ գումարէ եւ շինէ զմեզ ի մի միաբանութիւն գիտութեան Որդւոյն Աստուծոյ» («Եկեղեցին ճշմարիտ հաւատքն է, որ Աստուծոյ Որդին ճանչցողներու միաբանութեան մը մէջ կը մէկտեղէ մեզ»։ (Սոփերք Հայկականք)։

Ազգային ինքնահայեցողութեան եւ ինքնաքննադատութեան նպատակը բնաւ ալ թուրքի ոճրագործութիւնը արդարացնելը չէ, Աստուած անպայման իր արդար դատաստանը օր մը պիտի տեսնէ հոգեւոր թշնամիի ձեռքին գործիք ծառայած այս ազգին նկատմամբ, այլ՝ ճշմարիտ ինքնաճանաչման հասնիլը եւ ետդարձի ճանապարհը բռնելը, որպէսզի Աստուած մեզի զօրաւիգ գտնելով՝ կարողանանք ոտքի կենալ այս ինկած, կոտրուած ու նուաղած վիճակէն։

Եթէ իսկապէս մենք ինքնաճանաչողութեան այս ճանապարհով շարժինք, վստահաբար Սաղմոսի խօսքերով մեր թշնամիներու սուրերը իրենց սիրտերը պիտի մտնեն եւ անոնց աղեղները պիտի փշրուին. «Սուրք նոցա մտցեն ի սիրտս նոցա եւ աղեղունք նոցա փշրեսցին» (Սղմ. 36։15), բայց եթէ չամառենք մեր խստասրտութեան մէջ, պէտք է նաեւ այն տողերը, ուր սաղմոսի բառերը կ՚ըսեն. «Աստուած դատաւոր արդար հզօր եւ երկայնամիտ, որ ոչ ածէ զբարկութիւն իւր զօրհանապազ. ապա թէ ոչ դառնայ առ նա, սուր իւր սրեալ է եւ զաղեղն իւր լարեալ» («Արդար, հզօր եւ համբերատար դատաւոր է Աստուած, որն իր զայրոյթը հանապազ չի թափեր, սակայն եթէ Անոր չդառնանք,

իր սուրբ սրուած է, իսկ աղեղը՝ լարուած»։ Սղմ. 7։12)։

Մենք Յարութեան հաւատքի վրայ խարսխուած ժողովուրդ ենք, այս իսկ պատճառով ինչպիսի գողգոթաներու միջով ալ որ անցած ենք ցայժմ, Աստուած դարձեալ յարութիւն տուած է մեզի։

Խաչը, որ հին աշխարհի մէջ չարչարանքի եւ մահուան գործիք էր, Փրկչի խաչելութեամբ եւ յարութեամբ դարձաւ կեանքի գործիք եւ յաղթութեան նշան, այդպէս ալ մեր ժողովուրդի տառապանքը կարող է դառնալ ազգային զարթօնքի եւ հոգեւոր վերածնութեան պատճառ, եթէ օտարներուն ապաւինելու փոխարէն ապաւինինք մեր Տիրոջը եւ աշխարհէն արդարութիւն պահանջելու փոխարէն նախ ինքներս վերահաստատուինք Աստծոյ արդարութեան մէջ։ Այն ատեն միայն մեր թշնամիները կը ստանան իրենց արժանի հատուցումը, իսկ մենք կը պարծենանք Քրիստոսի խաչով, որուն փառք եւ երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն։



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԹՈՐՈՍ ԼԵԻՈՆԻ» ՎԷՊԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ

Համառօտագիր

Սոյն յօդուածում անդրադարձել ենք Մերենցի «Թորոս Լեւոնի» պատմավէպի ստեղծագործական պատմութեան մանրամասներին եւ ժամանակակիցների ու յետագայ ուսումնասիրողների արձագանգներին: Վէպի ստեղծագործական պատմութեան մանրամասների առումով անգնահատելի արժէք են ներկայացնում վիպասանի դստեր՝ Թագուհի Շիշմանեանի նամակները, որոնցից ի հարկի կատարել ենք մէջբերումներ: Վէպում տիրապետողը վառ հայրենասիրութիւնն է: Մարդկային բոլոր յատկանիշները ձուլւում կամ հակադրւում են այդ գաղափարին: Հերոսները բաժանւում են երկու մասի՝ հայրենիքին նուիրուած անձնուէր մարդիկ եւ կենտրոնախոյս ձգտումներով համակուած հայրենիքի թշնամիներ: Պատմական դէպքերի մի մասը հեղինակը վերապատմում է, առանց կոնկրէտացնելու այն մարդկային փոխյարաբերութիւնների մէջ: Քիչ են օգտագործուած պատմական այն աղբիւրները, որոնք նիւթ են ծառայում այդ ժամանակաշրջանի Կիլիկիայի ժողովրդի կենցաղի, բարքերի նկարագրութեան համար: Ժամանակակիցները վէպի մասին արտայայտուել են ջերմ եւ ընգծել հեղինակի տաղանդը պատմական վէպ ստեղծելու գործում: Թորոսի կերպարը հմայել է նրանց որպէս հայրենասիրական եւ հումանիստական գաղափարներով տոգորուած անձնաւորութիւն: Ստ. Պալասանեանը, ճիշդ է նկատել, երբ ասել է, թէ քիչ կը պատահի այդ վէպի նման իր ժամանակին գրուած ու հրատարակուած գիրք: «Թորոս Լեւոնի» վէպն, ինչպէս իր ժամանակին նշում էր Յովհ. Թումանեանը, այսօր էլ մնում է հայրենասիրութեան եւ ժողովրդասիրութեան վառ օրինակ մեր սերունդների համար:

Մուտք

Հայ ժողովրդի ազատագրման մասին ունեցած յոյսերն ու տենչերը դեռեւս երիտասարդական տարիներից անթեղուած էին Մերենցի հոգում: Նրա վիպական գործունէութիւնը գալիս էր ապացուցելու, որ օտարութեան մէջ գտնուող, բայց հոգով իր ժողովրդին նուիրուած Մերենցի խուզարկու միտքը իրօք յառած է եղել հայրենի երկրում տեղի ունեցող իրադարձութիւններին: Թուրքական բռնապետութեան պայմաններում ընկճուած հայութեանը հարկաւոր էր արթնացնել, յիշեցնել Կիլիկեան Հայաստանի հերոսական եւ փառաւոր անցեալը, որի համար մեր պատմագրութիւնը հսկայական նիւթ էր տալիս: Հետեւաբար ժողովրդի ճակատագրի ու նրա լուսաւոր ապագայի մասին պայծառ լաւատեսութեամբ տրամադրուած Մերենցը պատմական վէպ ստեղծելու առաջին քայլը կատարեց՝ գրելով իր անդրանիկ երկը՝ «Թորոս Լեւոնի»-ն, որի թեման վերցուած է Կիլիկիայի պատմական անցեալից: Վէպում հեղինակի ուշադրութիւնը բեւեռուել է հայկական ընդհատուած պետականութեան վերականգնման փոթորկալի ժամանակին: Մերենցը գիտակցօրէն ընտրել է պատմութեան այն շրջանը, երբ օտարերկրեայ զաւթիչների դէմ ոտքի կանգնելով՝ ժողովուրդը բացայայտում է իր ազգա-

յին բնաւորութեան՝ անհուն ազատասիրութեան ու հայրենասիրութեան ամենավսեմ առանձնայատկութիւնները։ Իրաւացի էր «Արաքս»-ի քննադատը, երբ ասում էր, թէ Մերենցը, «մտնելով պատմական անցեալի խորքերը եւ ընտրելով անցեալից նիւթեր իւր վէպերի համար, նպատակ է ունեցել ցոյց տալ, թէ ինչ էին անում մեր նախնիք այդ դէպքում, երբ հայրենիքը ոտնակոխ եղած օտարներից ընկնում էր վտանգի մէջ»[1]։

Սոյն յօդուածով նպատակ ունենք անդրադառնալու Մերենցի «Թորոս Լեւոնի» վէպի ստեղծագործական պատմութեան մանրամասներին ու արձագանգներին, որոնք առաւել պակաս ուշադրութեան են արժանացել հետազօտողների կողմից։

*1870-ական թուականներին, Մերենցն սկսում է իր որոնումները հայոց պատմական անցեալի մէջ ու պատմական լայն հայեցակարգ մշակելու եւ իր գաղափարական մտայղացումները գեղարուեստական ինքնատիպ ձեւով արտայայտելու համար, խորացնին ուսումնասիրում է ժողովրդի կեանքի պատմութեան տարեգիրքը, նրա հերոսական սխրանքներով լի էջերը՝ ճանաչելով ժողովրդի անցեալը, ներկան աւելի լաւ ըմբռնելու համար, աւելի պայծառօրէն նայելու դէպի ապագան։ Այդ նպատակով Մերենցը շրջագայում է Հայաստանի տարբեր վայրերը՝ ծանօթանալու «իւր ազգի վիճակին»։ «...անիկա (Մերենցը - **Ե.Ա.Ա.**) իր ոտքերովը կարդացած է հայոց աշխարհը,- գրում է Յ. Օշականը,- եւ աչքերովը յօրինած՝ անոր հոգին, զայն ծուէն-ծուէն քակելով, քաշելով մեր դաշտերէն, մեր ջուրերէն ու երկինքէն։ Երկու անգամ ըրած է անիկա այդ սրբազան ուխտաւորութիւնը իր պապերուն հողերը դէպի։ Միւս կողմէ՝ Կիլիկիա, Կիպրոս, այսինքն Թորոս Լեւոնիին ենթահող ծառայող աշխարհը անիկա դարձեալ իր կրուկներովը կը ճանչնայ»[2]։*

*Մինչ երկրորդ ճամբորդութիւնը Մերենցը Կիպրոսում արդէն գրել էր իր առաջին պատմական վէպը՝ «Թորոս Լեւոնի»-ն, որի գրութեան թուականի մասին մեզ ստոյգ տեղեկութիւն է տալիս վիպասանի դուստրը՝ Թագուհին (մտերիմները նրան փաղաքշաբար Թագուկ էին անուանում)։ «Թագուկ ինքն ալ գրագէտ մը եղած է[3],- գրում է նրա մասին Երուանդ Օտեանը,- եւ գուցէ անգիտակից աշխատակիցն իր հօր. նուրբ ճաշակ եւ արուեստագէտի երեւակայութիւն կ'երեւան իր յօդուածներուն եւ «Գարնան մի Ասուպ» անուն իր մէկ գեղեցիկ վիպակին մէջ»[4]։ Վերջինս 1877-ի Ապրիլի 3-ին հօրեղբօրորդուն՝ Զարեհին, ուղղած իր նամակում գրում է. «Հայրս... երբեմն կը գրէ, ես ալ նոյն միջոցին իր առջի օրուան գրածը կ'օրինակեմ։ Ի՞նչ կը գրէ՝ պիտի ըսես, ահա խնդիրը. եւ ես գաղտնիք մը պիտի յայտնեմ քեզ. հայրս հեղինակութիւն մը սկսած է. **Թորոս Լեւոնի** անուամբ վէպ մը. Յունուար 3-ին սկսաւ, կէսը անցած է. այս միայն քեզի համար է, լռենք։ Մեծ մտածմունքներէս մէկն ան է հիմա, շարունակ հօրս կ'ըսեմ թէ ե՞րբ պիտի լմննայ, գրիչը ձեռքը կուտամ, ամա՜ն, շուտ ըրէ՜, կ'ըսեմ, եւ երբեմն ալ կը նեղացնեմ։ Եթէ ինձ հարցնես՝ շատ աղէկ, օգտակար, ազգային ոգուով լի եւ հետաքրքրաշարժ վէպ է։ Բայց ես այնչափ հայրս եւ իր գրածները կը պաշտեմ որ կը վախնամ իմ դատողութիւններէս»[5]։ Իսկ 1878-ի Փետրուարին տիկին Մամուրեանին գրած նամակում Թագու-*

---

[1] **Թ. Զաքարեան**, Ահաբս, Գիրք Բ., Պետերպուրկ, 1888, էջ 119։

[2] **Յ. Օշական**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 4, Երուսաղէմ, 1956, էջ 459։

[3] Մերենցի արխիւում մեծ տեղ են գրաւում «Մենիկ» կեղծանունով Թագուհի Շիշմանեանի էռոնիկները, ամփոփ նամակները եւ յուշերը, ինչպէս նաեւ «Գարնան մի ասուպ» նորավէպը, որոնք Փրոֆ. Ալ. Մակարեանը ամփոփել եւ հրատարակել է մի գրքում՝ 2015-ին։

[4] **Ե. Օտեան**, «Մասիս» հանդէս, 42-րդ տարի, թիւ 3997, 26 Յունիս, 1893, Կ. Պոլիս, էջ 389։

[5] **ԳԱԹ**, Մերենցի ֆոնդ, 20/Ի; Տե՛ս նաեւ **Թագուհի Շիշմանեան (Օր. Մենիկ)**, Երկեր, Աշխ. Ալ. Ա. Մակարեանի,

կը խոստովանում է, որ ինքը հնարաւոր բոլոր պայմաններն ստեղծել է հօր համար, որպէսզի վերջինս կարողանայ ստեղծագործել. «Ամէն առտու կ'ելնէի՝ գործէն դառնալէն վերջը Թորոսը կ'ըսէի եւ թուղթերը ձեռքը կուտայի, երբ գլուխ մը ամբողջանար մէկէն կ'օրինակէի, վասնզի կը վախնայի որ եթէ թողում չի գրեր»[6]:

Հօրեղբօրորդուն ուղղուած մէկ այլ նամակում (10/22 Յունիս, 1877. Կիպրոս) Թագուկը յայտնում է, որ Ծերենցը «Թորոս Լեւոնին» աւարտել է երեք ամսուայ ընթացքում՝ 1877-ի Ապրիլի վերջին: Վէպն առաջին անգամ հրատարակուել է նոյն թուականին Կ. Պոլսում[7]: Գրքի առաջին բարեկամներից էր Ղեւոնդ Ալիշանի կրտսեր եղբայրը՝ եւրոպական դրամագիտական մի քանի ընկերութիւնների պատուաւոր անդամ Սերովբէ Ալիշանը: «Դուք Թորոսին հաւներ էք,- գրում է նրան Թագուհին,- Ձեր հաւանումը իմ սիրտս հանգչեցուց. Ալիշան մը երբ ըսէ գրքի մը համար «մեր նոր մատենագրութեան մէջ տեղ մը պիտ ունենայ միշտ»՝ այդ գիրքը երջանի՛կ է: ...3 ամիս անով ապրեցայ. ամէն առտու երբ ելնէի՝ առջի գործս էր հօրս գրասեղանին մօտենալ, գրածը կարդալ, զայն օրինակել. եւ թէ որ ոճի պզտի ne´gligences*ներ (անտեսումներ[8]) սպրդած են, բոլոր յանցանքն իմ շտապելուս էր»[9]: Իսկ որոշ ժամանակ անց արդէն Թիֆլիսում գտնուող Թագուհին իրենց ընտանիքի նոյն հաւատարիմ բարեկամին 1879-ի Յունուարի 31 թուագրուած նամակում պատմում է թիֆլիսահայ միջավայրում գրքի ջերմ ու լայն ընդունելութեան մասին. «Դուք որ Ծերենցի ճշմարիտ բարեկամն էք՝ պէտք է գիտնաք թէ Թորոսը ա՛յն աստիճան ազդեցութիւն ըրած է այստեղ, որ գիմնազ գացող աշակերտէն սկսեալ մինչեւ հայ խմբագիրը եւ Ագուլիսի շաքար ծախողէն որ կ'ըսէ թէ Ագուլիս ալ ղրկած է քանի մը օրինակ՝ մինչեւ քաղաքիս նշանաւոր տիկնայք կարդացած են»[10]:*

Արդարեւ, «Թորոս Լեւոնի»-ն հրատարակութիւնից յետոյ անմիջապէս տարածուել եւ մեծ արձագանգ է գտել հայութեան երկու հատուածներում: Այդ են վկայում ժամանակակիցներն ու յետագայ ուսումնասիրողները: ««Թորոս Լեւոնին» տառացիօրէն կախարդեց հայ գրական եւ հասարակական միտքը,- գրում է Ս. Սարինեանը,- դա այն բացառիկ երկերից էր, որ արժանացաւ համազգային ճանաչման, զբաղեցրեց ընթերցողների ամենալայն շրջաններ»[11]: «Լրատու մը,- գրում է Ա. Արփիարեանը,- Թիֆլիսի ռուսերէն թերթի մը մէջ կը ծանուցանէ, թէ արդէն Պոլիս այդ վէպէն 30,000 օրինակ լափած է... Ծերենց օրուան նորութիւնը կը հռչակուի Թիֆլիս»[12]: «Ազգային դէմքեր» մատենաշարի հեղինակ Սիմէոն Երեմեանն էլ գրում է. «Ծերենցը իր «Թորոս Լեւոնի» վէպով թուրքահայ գրականութեան մէջ յեղափոխական զարթումի առաջին նշանը կուտար»[13]:

Վէպի համազգային հռչակը, անշուշտ, պայմանաւորուած էր գաղափարների եւ

Երեւան, 2015, էջ 10:

[6] Նոյն տեղում:

[7] «Թորոս Լեւոնի»-ն երկրորդ անգամ հրատարակուել է 1881 թ. Թիֆլիսում: Երրորդը՝ յետ մահու՝ 1902 թ. Թիֆլիսում: 1911 թ. փոփրիկ առաջաբանով լոյս է տեսել Կ. Պոլսում, ապա 1917 թ. Պոսթոնում, 1933 թ. Հալէպում, 1935 թ.՝ Պէյրութում, 1939 թ.՝ Գահիրէում: 1957 թ. Երեւանում (երկեր, էջ 5-206), 1985 թ.՝ «Հայ դասականների գրադարան» մատենաշարով (էջ 27-222):

[8] Բացատրութիւնը՝ Ալ. Մակարեանի:

[9] **ԳԱԹ**, Ծերենցի ֆոնդ, 22/I; Տե՛ս նաեւ **Թագուհի Շիշմանեան (Օր. Մենիկ)**, Երկեր, Աշխ. Ալ. Ա. Մակարեանի, Երեւան, 2015, էջ 11:

[10] Նոյն տեղում:

[11] **Ս. Սարինեան**, Հայկական ռոմանթիզմ, Երեւան, 1966, էջ 430:

[12] **Ա. Արփիարեան**, Երկեր, «Հայ դասականների գրադարան» մատենաշար, Երեւան, 1987, էջ 400:

[13] **Ս. Երեմեան**, Ազգային դէմքեր. գրագէտ հայեր, գիրք 5, Վենետիկ, 1914, էջ 441:

տրամադրութիւնների այժմէականութեամբ: «Թորոս Լեւոնի»-ն լոյս տեսաւ այն օրերին, երբ բռնկուած էր ռուս-թուրքական պատերազմը, եւ հայկական մթնոլորտը վառւում էր ազատագրութեան յոյսերով ու սպասելիքներով: Միանգամայն իրաւացի էր Ստ. Պալասանեանը, որը Գրիչ ստորագրութեամբ Ծերենցի վէպին նուիրուած իր գրախօսականում գրում էր. «Քիչ գիրք կը պատահի, որ «Թորոս Լեւոնի»-ի նման իւր ժամանակին գրուած ու հրատարակուած լինի»[14]: Ծերենցի վէպը ազգային երազանքների մի կախարդական հանգրուան էր՝ հայոց պատմութեան անակնկալ հրաշքը: Վիպասանը հայ ընթերցողին ապշեցրեց պատմական Հայաստանի կենդանի պատկերներով, ցոյց տուեց մի իրական երկիր՝ իր կոլորիտով, արքունիքներով ու բերդերով, ուժի, հերոսութեան եւ հայրենասիրութեան ներուժով:

Ընթերցողը «Թորոս Լեւոնի» վէպի միջոցով ծանօթանում է Հայաստանի 12-րդ դարի գոյավիճակին, տեսնում, թէ վիպասանը որքան կենդանի է նկարագրել այն աղէտները, որ կրել է հայ ժողովուրդը օտար նուաճողներից, աւատական նախարարների կենտրոնախոյս ձգտումներից ու գործողութիւններից:

Վէպի հիմքում դնելով Հայաստանի հնագոյն պատմութեան դրամատիկական ժամանակաշրջաններից մէկի քաղաքական իրադարձութիւնները եւ հայոց պատմութեան նշանաւոր դէմքերից մէկի՝ Թորոս Լեւոնի հերոսական գործունէութիւնը՝ արձակագիրը բացայայտել է պատմական իրադրութիւնների զարգացման ընթացքը՝ պայքարը հայրենիքի ինքնուրոյնութեան պահպանման եւ պետականութեան վերականգնման համար: «Եւ ի՜նչ իմաստուն ու գեղեցիկ է դնում նա իր գործի հիմքը,- գրում է Յովհ. Թումանեանը,- իրեն հերոս առնելով Թորոս Լեւոնին, բիւզանդական բանտում փակուած հայ իշխանազնը, որ բանտից դուրս փախչելով, հասնում է իր հայրենիքը, ազատասիրութեան շունչ է փչում, սիրտ տալիս, ոտքի է հանում իր ժողովրդին ու կանգնեցնում է ամուր՝ իր ազատ կեանքով ապրելու»[15]:

Երբ համեմատում ենք պատմական տարբեր աղբիւրներում պահպանուած փաստերը վէպում նկարագրուող իրադարձութիւնների հետ, նկատում ենք, որ Ծերենցը հայ պատմագիրներից վերցրած նիւթին մօտեցել է իւրովի: Պատմական աղբիւրներում Թորոսի՝ Կիլիկիա վերադառնալու մասին կան տարբեր տեղեկութիւններ: Օրինակ՝ Սամուէլ Անեցին վկայում է, որ Թորոսը Պոլսից նաւով փախչում է Անտիոք եւ այնտեղից անցնում է Կիլիկիա, միանալով եղբօրը՝ Ստեփանէին, գրաւում Ամուտա բերդը. «Բայց ասեն ոմանք, թե նաւով յԱնտիոք ել՝ և եկն ի Կիլիկիա եգիտ զեղբայրն իւր զՍտեփանէն՝ և հնարիւք նախ զԱմուտայն առին և ապա նովաւ այլոցն տիրեալ»[16],- գրում է նա: Իսկ ուրիշներն ասում են, շարունակում է նոյն պատմիչը, որ Թորոսը բանտից ազատուելուց յետոյ միաժամանակ ապրում է կայսեր պալատում նրա հսկողութեան տակ, ամուսնանում է մի հարուստ կնոջ հետ եւ նրա մահից յետոյ, հարստութիւնը վերցնելով, մի քահանայի առաջնորդութեամբ մտնում է Կիլիկիա եւ գրաւում Վահկայ բերդը. «Իսկ այլք ասեն՝ թէ մինչ ի Կ. Պօլիս էր՝ Դշխոյ կին մի սիրեաց զնա՝ և ետ նմա գանձս բազումս, և Թորոս զգանձն հետ բերեալ գնաց ի լեառնն Վահկային՝ և յայտնեաց զինքն քահանայի միոյ. և քահանայն ուրախացեալ գործ եդ նմա հովուի»[17]:

---

[14] **Ստ. Պալասանեան (Գրիչ)**, «Փորձ» հանդէս, երրորդ տարի, 1879, Փետրուար, թիւ 2, Տփխիս, էջ 135-136:

[15] Թումանեանը ինձնադատ, Կազմեց եւ խմբագրեց Ն. Թումանեան, Երեւան, 1939, էջ 259:

[16] **Սամուէլի քահանայի Անեցւոյ**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթագրութիւններով Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 131:

[17] Նոյն տեղում:

Եւ վերջապէս մի այլ աղբիւրում կայ տեղեկութիւն, որ Թորոսը Յովհաննէս Կոմնենոս կայսեր բանակի հետ մասնակցում է Կիլիկիոյ պատերազմին, եւ երբ կայսրը մահանում է, եւ նրան յաջորդում է որդին՝ Մանուէլ Կոմնենոսը, յոյները վերադառնում են, իսկ Թորոսը մնում է Կիլիկիայում՝ փրկելու իր տառապեալ հայրենակիցներին. «Իսկ Թորոս որդի Լեւոնի մնաց յայնժամ ի Կիլիկիայ և ոչ գնաց զկնի զօրաց կայսերն, այլ գնացեալ ի սահմանս Վահկային ի գեօղ մի իբրև զօտարական ոք ոչ յայտնեալ զինքն ումեք՝ բայց միայն քահանայի միոյ Հայոց զի ծանոյց նմա, թէ որդի է Լեւոնի»[18]։

Թէեւ պատմական աղբիւրներում Թորոսի՝ Կիլիկիա վերադառնալու մասին կան տարբեր փաստեր, բայց այդ բոլորը անհերքելիօրէն վկայում են մի բան, այն է՝ Թորոսն իր ժողովրդին ազատագրելու նպատակով 1145-ին Կ. Պոլսից փախչում է Կիլիկիա, իր շուրջն համախմբում հայկական ուժերին, պայքար ծաւալում օտարերկրեայ նուաճողների դէմ՝ վերականգնելու Կիլիկիայի անկախ պետականութիւնն ու քաղաքական ինքնուրոյնութիւնը։

Օգտագործելով պատմական աղբիւրներում յիշատակուած փաստացի տուեալները՝ Մերենցը կերտել է բովանդակութեամբ հարուստ մի ստեղծագործութիւն։ «Թորոս Լեւոնի»-ն նրա առաջին ծաւալուն երկն է, որը կառուցուածքով, արծարծուած խնդիրներով առանձնայատուկ տեղ է գրաւում հայ պատմա-ռոմանթիկական վիպագրութեան մէջ։

Երբ հանգամանօրէն ուսումնասիրում ենք դասական գրողների պատմական երկասիրութիւնները, նկատում ենք, որ Մերենցի, Րաֆֆու եւ Մուրացանի պատմավէպերում առկայ է ընդհանուր նմանութիւն արծարծուած հասարակական-քաղաքական խնդիրների, բնաւորութիւնների կերտման արուեստի, պատմական դէպքերի նկարագրման եւ, որ ամենակարեւորն է, հայրենիքի ու հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի գեղարուեստական պատկերաւորման առումով։

Մերենցը, Րաֆֆին, Մուրացանն իրենց վէպերում արտայայտիչ կերպով պատկերել են տարբեր դարաշրջաններում ազատագրական տրամադրութիւններով շիկացած Հայաստանի փոթորկոտ կեանքը, հայ ժողովրդի մղած անձնազոհ եւ հերոսական պայքարն օտար նուաճողների դէմ, ցոյց տուել նրա հոգեկան կորովն ու վեհութիւնը, մարդկային-բարոյական անընկճելի մեծ ուժը եւ յաղթելու անսասան հաւատը։

Պատմա-վիպագրութեան խոշորագոյն այս ներկայացուցիչները հայ իրականութեան մէջ հանդէս են եկել որպէս պայքարի երգիչներ, որոնք իրենց հայրենասիրական եւ ազատաբաղձական զգացմունքներն ու խոհերն արտայայտելու համար ընտրել են պատմավէպը, որպէսզի անցեալի պանծալի հերոսների օրինակով ոգեւորեն եւ խանդավառեն ժամանակակից սերունդներին։ Արուեստագէտի յատուկ վարպետութեամբ Մերենցն ստեղծել է իր ժամանակի հետ խօսող հայրենասիրական մի երկ, որն աչքի է ընկնում լայն ընդգրկմամբ ու խոր ժողովրդականութեամբ։ Ազատագրական պայքարի ոգին, ժողովրդի հերոսական անցեալի արտացոլումը, բիւզանդական բարբարոսներին եւ ներքին հարստահարիչներին խորտակելու ռոմանթիկական ոգին, Թորոսի կատարած սխրագործութիւնները վէպում արտայայտուել են այնպիսի յուզականութեամբ, որ համակում են իւրաքանչիւր ընթերցողի։

Հոգեբանական առանձին դրուագներ, առանձին դէպքեր ու իրադարձութիւններ, հերոսների կեանքի դրամատիկական վիճակներ են պատկերուած վէպում, որոնք

[18] Նոյն տեղում, էջ 206:

իրենց իմաստաւորումով հասցուած են դարաշրջանի գաղափարական խնդիրների բարձունքին: Ո՞րն է հայրենասիրական այն առաւել լայն ու նշանակալից բովանդակութիւնը, որ դրսեւորւում է Մերենցի այս վէպում, եւ որը մեզ հնարաւորութիւն է տալիս ուսումնասիրելու այդ երկն ամբողջութեան մէջ: Դա հայոց ազգային-ազատագրական պայքարի, նրա մաքառման կամքի ուժի ու ապագայի անխախտ հաւատի, նրա պատմական ճակատագրի այն փիլիսոփայութիւնն է, որ այս վէպում ի դէմս Մերենցի գտել է տաղանդաւոր արուեստագէտին:

Վէպի առաջին էջերից հեղինակը մեզ ներկայացնում է Կ. Պոլիսը՝ արեւելեան եւ արեւմտեան իւրօրինակ ճաշակով զարդարուած այդ քաղաքը, որն աչքի էր ընկնում ճարտարապետական հնաոճ կառուցուած տաճարներով, պերճաշուք պալատներով ու արձաններով, որոնք արտակարգ հմայք էին տալիս քաղաքին:

Մայրաքաղաքի արտաքին նկարագիրը տալուց յետոյ հեղինակը պատկերում է Մանուէլ Կոմնենոս կայսեր արքունիքը, ուր թագաժառանգի ընդունելութեան կապակցութեամբ հաւաքուել էին բարձրաստիճան հոգեւորականներ՝ պատրիարքն ու մետրոպոլիտը, ազնուականներ, պալատական մեծամեծ իշխաններ եւ այլ երեւելի անձինք: Կոմնենոս կայսեր պալատի հանդիսաւոր տեսարանի մէջ արդէն որոշակիօրէն գծագրւում են քաղաքական կոնֆլիկտի բնոյթը, յետագայ գործողութիւնների զարգացման ընթացքը, եւ ակնյայտօրէն դրսեւորւում է հեղինակի դիրքորոշումը ընդհարուող կողմերի հանդէպ:

Մերենցը սկզբում միտումնաւոր նկարագրում է ազնուականութեան եւ հոգեւորականութեան, այսինքն՝ տիրապետող պաշտօնական հասարակութեան արտաքին փայլը, պալատականների եւ մասնաւորապէս արքայի սիրալիր ու հոգատար վերաբերմունքը Թորոս իշխանի նկատմամբ: «Վե՛ր կաց, որդիդ Լեւոնի,- ասում է Կոմնենոս կայսրը,- արեւ եւ ազատութիւն կը շնորհեմ քեզ, տուն ու ոճիկ եւ ամէն պիտոյքդ գանձէն պիտի հոգացուին. ջանա՛ արժանի լինիլ բարութեանցս եւ երախտագիտութիւնն լինի քու առաքինութիւնդ», այնուհետեւ դիմելով բարձրաստիճան հոգեւորականներին՝ շարունակում է. «Իմ կրօնական դիտաւորութիւնքս ալ, սուրբ հարք, ետքը ձեզի կ'իմացնեմ եւ կը փափաքիմ, որ այս ազնուական երիտասարդին հոգեկան դաստիարակութիւնն ալ խնամք չի մոռանանք»[19]:

Կայսրին թւում էր՝ բարյացակամ այն վերաբերմունքը որ արտաքուստ ցուցաբերում էր Թագաժառանգի նկատմամբ, ինչ-որ չափով պիտի ամոքեր նրա խոցոտուած եւ վիրաւոր սիրտը: Բայց ապարդիւն: Հանդիսաւոր խոստումներն ու պալատական միջավայրի արտաքին փայլն ու շքեղութիւնը չեն հրապուրում երիտասարդ իշխանին, չեն մեղմացնում նրա վշտերը, ընդհակառակը, նրա հոգում դեռ վաղ պատանեկան տարիներից առաջացած վրիժառութեան զգացումն էլ աւելի է բորբոքւում, եւ նրա սիրտը լցւում է պայքարի բուռն ցանկութեամբ: Նա սեփական աչքերով տեսնում է, որ արքունիքի այդ շքեղ արտաքին փայլի տակ թաքնուած են բիւզանդական բարձր հասարակութեան այլանդակ բարքերն ու սովորութիւնները:

Վէպում պատմւում է, թէ ինչպէս արքունիքից Թորոսը իր ծառայ Բաբգէնի հետ տարւում է մի բնակարան: Այստեղ նա հանդիպում է հայկական ծագում ունեցող մի յոյն կնոջ՝ Եւփիմէին: Սիրահարուած լինելով սկզբում Թորոսի եղբօրը, ապա Թորոսին՝ Եւփիմէն մի քանի օրում կազմակերպում է իր ամուսնութիւնը նրա հետ եւ ապա փա-

[19] **Մերենց**, երկեր, Երեւան, 1957, էջ 9:

խուստը Կիլիկիա։ Վէպի մեծ մասը նուիրուած է Թորոսի պատերազմական գործողութիւններին եւ ձեռք բերած իշխանութեան ամրապնդման նկարագրութեանը։ Վէպն աւարտում է Թորոսի մահով։

Այսպիսով՝ Ծերենցը եղաւ մեր պատմա-վիպասանութեան առաջին մեծ ճամբորդներից մէկը, որ, քայլելով պատմութեան քառուղիներով, անցեալի փորձով ձգտեց ոչ միայն իմաստաւորել ներկան, այլեւ լուսարձակել ապագան։ Ելնելով Կիլիկիայի պատմութեան ու արդիականութեան նկատմամբ ունեցած տեւական հետաքրքրութիւնից՝ վիպասանի երախայրիքը հանդիսացած «Թորոս Լեւոնի» վէպի ստեղծման մանրամասները մեզ հաղորդում է վիպասանի շնորհաշատ դուստր Թագուկն իր նամակներում։ «Թորոս Լեւոնի» վէպը լոյս տեսնելուն պէս հիացմունք է առաջացրել թէ՛ Կ. Պոլսի եւ թէ՛ Թիֆլիսի գրական շրջանակներում եւ ժողովրդի մէջ։ Այն այսօր էլ մեզ հետաքրքրում է ոչ թէ որպէս սոսկ պատմական, հերոսական էջերի վերարտադրութիւն, այլ որպէս մնայուն ու այժմէական գործ։

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՅՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ «ԱՂՕԹԱՐԱՆ»-ՈՒՄ

1957 թ. Համազգայինի հրատակարութեամբ լոյս է տեսնում սփիւռքահայ գրող Համաստեղի «Աղօթարան»-ը[1], որը 2005 թ. զետեղւում է Մ. Խաչատրեանի կազմած «Համաստեղ. Մոռացուած էջեր» Գ հատորում[2], իսկ առանձին գրքոյկով լոյս է տեսնում 2017 թուականին։

Համաստեղը յայտնի է իր արձակ գործերով, սակայն կեանքի վերջին տասնամեակում գրուած ստեղծագործութիւնը, որը հեղինակի գրական, փիլիսոփայական, աստուածաբանական հարցերի ու աշխարհընկալման ամբողջութիւնն է, գրուած է արձակ բանաստեղծութեան ձեւով. այս ստեղծագործութիւնը բնորոշւում է քնարական հերոսի մշտական ներկայութեամբ ու մենախօսութեամբ, գեղարուեստական չափածոյին բնորոշ ներքին լարուածութեամբ, պատկերաւորման համակարգով, ինչպէս նաեւ որոշ տողերում առկայ հանգով ու ռիթմով։ Ա. Զօպանեանը Համաստեղի արձակը բնորոշել է որպէս բանաստեղծական. «Ինքն է, որ օր մը մեզի պիտի կարենայ տալ, մեր հրճուանքին համար, հայկական «Միրեւո» մը, որ անհրաժեշտ չէ, որ ոտանաւոր գրած ըլլայ»[3]։ Եւ իսկապէս, «Աղօթարան»-ը գրուած է բանաստեղծական ոչ թէ չափածոյ (ոտանաւոր), այլ արձակ տողերով։ Այդպիսով Համաստեղի արձակը սկսւում է բնորոշուել բանաստեղծականութեամբ։ Համաստեղի բանաստեղծական արձակի մասին կարեւոր դիտարկում ունի գրականագէտ Վ. Գաբրիէլեանը։ Վ. Գաբրիէլեանը Համաստեղի բանաստեղծական արձակի ամենածաւալուն գործը «Աղօթարան»-ն է համարում եւ դասում արձակ պոեմների շարքին. «Համաստեղի արձակի բանաստեղծականութիւնը պայմանաւորուած է ոչ միայն իրականութիւնը բանաստեղծի սուբյեկտիւ ընկալումով, պատկերաւոր մտածողութեամբ, գոյնի, բոյրի, կեանքի, տրոփիւնի զգացողութեամբ, այլեւ խօսքի հնչերանգով, ռիթմականութեամբ եւ բանաստեղծական ժանրին բնորոշ մակդիրների, որոշիչների, յատկացուցիչների յետադաս գործածութեամբ»[4]։

Համաստեղի գրչով բանաստեղծութիւնը հնչում է որպէս աղօթք։ Այս են վկայում բանաստեղծութեան մասին իր ընկալումները. «Բանաստեղծութիւնը կը սկսի հոն, երբ բառերը իրարու քով կու գան, կը կազմեն աղօթք ու խնդրանք՝ պաշտպանութիւն դեւերէն, բնութեան արհաւիրքներէն, վայրի կենդանիներէն ու օձերէն... աղօթքը եղած է սկիզբը լեզուին ու բանաստեղծութեան»[5]։

Գրական ստեղծագործութիւնների հեղինակները յաճախ իրենց պատկերած որոշակի իրականութիւնից բացի՝ աչքի առաջ ունենում եմ ընդհանրապէս իրենցից առաջ ստեղծուած մշակոյթը։ «Գրողը ստիպուած է ոչ միայն հաշուի առնել իրենից առաջ ստեղծած գրականութիւնը, որը այսպէս թէ այնպէս, կայ նրա գիտակցութեան մէջ,

---

[1] **Համաստեղ**, Աղօթարան, Համազգային հայ մշակութային ընկերակցութիւն, Պէյրութ, 1957, էջ 88։

[2] **Համաստեղ**, Մոռացուած էջեր, հ. Գ, Հայկական հայագիտական հրատ., Երեւան, 2005, էջ 211-242։

[3] **Ա. Զօպանեան**, Երկեր, Սովետական գրող հրատ., Երեւան, 1988, էջ 764։

[4] **Վ. Գաբրիէլեան**, Պատմութեան խորհուրդը եւ ներկան, ԵՊՀ հրատ., Երեւան, 2012, էջ 239-240։

[5] **Համաստեղ**, Մոռացուած էջեր, հ. Դ, Երեւանի պետական համալսարանի հրատ., Երեւան, 2007, էջ 170։

այլեւ իրենց գրական զինանոցը հարստացնել ինչպէս նախորդող, այնպէս էլ իրենց ժամանակի գրականութեան յիշատակումներով, կերպարների ու պատկերների նմանութեամբ, փոխառութեամբ, որեւէ կարգի անդրադարձով: Ակամայ կամ գիտակցուած այդ անդրադարձները կատարւում են տարբեր՝ խօսքի ոճաւորման, պատմական յիշողութեան արթնացման եւ այլ նպատակներով»[6]:

Տեքստերի մէջ որոշակի կապերի առկայութեան հնարաւորութիւնը լեզուաբանների ուշադրութեան կենտրոնում է եղել դեռեւս վաղուց, որը յետագայում՝ 1967 թուականին Իւլիա Կրիստեւայի կողմից ստացել է միջտեքստայնութիւն անուանումը: Այդպիսով ցանկացած տեքստ երկխօսութեան մէջ է այլ տեքստերի հետ կամ Ն. Գուչինհսկայի բնորոշմամբ՝ «նոր տեքստերը ձեւաւորւում են արդէն իսկ յայտնի տեքստերից վերցուած որոշակի միաւորների միջոցով»[7]:

Այս առումով, եթէ Համաստեղի «Աղօթարան»-ը դիտարկենք միջտեքստային կապերի՝ տեքստ տեքստի հետ երկխօսութեան համատեքստում, ապա կը նկատենք, որ այն ձեւաւորուել է սուրբգրային աւազանի ներազդմամբ, ինչպէս նաեւ որոշակի տեքստային յղումներ կարող ենք նկատել գովաբանական աղօթքների տեքստերից, Աստուածաշնչեան պատմութիւններից, Նարեկացու «Մատեան»-ից, Մեծարենցից եւ Տէրունական աղօթքից:

Իր «Ի՞նչ է գրականութիւնը» յօդուածում Համաստեղը գրում է, որ Հին Կտակարանում կեանքի ու մահուան պայքար կար, որը սակայն չենք նկատում Նոր Կտակարանում. «Մենք այդ չենք տեսներ Նոր Կտակարանին մէջ, ուր գերեզմանէն կը սկսի նոր կեանքը»[8]: Այս դէպքում հնարաւոր միջտեքստային կապերն ուղղւում են դէպի Նոր Կտակարան, քանի որ այն ամբողջութեամբ կեանքի գովերգում եւ փառաբանում է: Համաստեղի «Աղօթարան»-ի հիմնական բովանդակութիւնը նոյնպէս կեանքի ու այդ կեանքում Աստծու ներկայութեամբ ստեղծուած գեղեցկութեան գովերգումն է: ««Աղօթարան»-ը 21-րդ դարի կէսերի մարդու աղօթքն է, հիացմունքը, ուրախութեան ճիչը, որ կայ, ապրում է Աստծու ստեղծած աշխարհում, վայելում է կեանքն իր ամբողջական հիացքով»,- գրում է «Աղօթարան»-ը կազմած եւ հրատարակութեան պատրաստած գրականագէտ Մ. Խաչատրեանը[9]:

Կայ հետաքրքիր մի համընկնում, որը, ըստ էութեան, պատահականութիւն չէ: Համաստեղի «Աղօթարան»-ը բաղկացած է 22 գլուխներից. Նոր Կտակարանում 22 գլխից է բաղկացած Յայտնութիւնը[10]: Գլուխների համարակալումների համընկնումը առաջին միջտեքստային դրսեւորումն է, որը կարծես ուղղորդի, թէ կոնկրէտ ինչին յառենք մեր ուշադրութիւնը եւ որտեղ փնտռենք որոշ հարցերի պատասխանները: Միջտեքստայնութիւնը յուշում է, որ. «Ամէն մի տեքստ նոր հիւսուածք է՝ գործած հների քաղուածքներից»[11] եւ այս ընդհանրական մեկնաբանութեամբ Համաստեղի «Աղօթարան»-ում կարող ենք գտնել բազմաթիւ քաղուածքներ՝ մեր առջեւ որպէս ելակէտ ունենալով Յայտնութիւնը:

---

[6] Գրականութեան տեսութեան արդի խնդիրներ, ԵՊՀ հրատ., Երեւան, 2016, էջ 138:

[7] **Гучинская Н. О.**, Шпильманский эпос и проблема текстопорождения. Интертекстуальные связи в художественном тексте, Санкт-Петербург, Образование, 1993, 47 стр.

[8] **Համաստեղ**, Մոռացուած էջեր, հ. Դ, նշ. աշխ., էջ 169:

[9] **Մ. Խաչատրեան**, Համաստեղի Աղօթամատեանը, Հորիզոն գրական շաբաթաթերթ, Երեւան, 2017:

[10] Նոր Կտակարան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1992:

[11] Գրականութեան տեսութեան արդի խնդիրներ, նշ. աշխ., էջ 142:

«Աղօթարան»-ը բացում է «Կը հաւատամ»[12] արտայայտութիւնը, որը երեք անգամ կրկնւում է Ա գլխում: Սա կարծես մի ընդհանրական մեկնաբանութիւն լինի Յայտնութիւնը բացող այն խօսքերին, թէ. «Երանի՛ նրանց, որ կարդում են այս մարգարէութեան խօսքերը եւ երանի՛ նրան, ով լսում եւ պահում է այն, ինչ որ գրուած է նրա մէջ, որովհետեւ մօտ է ժամանակը» (Յայտ. 1:3):

«Աղօթարան»-ի տարբեր գլուխներում կրկնուող «երանի»-ները ընթերցողին տեղափոխում են աստուածաշնչեան բնագիր՝ Մատթէոսի եւ Ղուկասի Աւետարաններում հնչող յայտնի երանիների շարքը: Սակայն Աղօթարանի տարբեր հատուածներում «երանի»-ով սկսուող տողերի կողքին զուգահեռ կան նախադասութիւններ, որոնք սկսւում են «վայ»-ով, ինչպէս.

Երանի անոր, որ չի երկնչիր (ԺԵ):

Երանի անոր, որ կը տեսնէ Աստուած իր կերպարանքին մէջ այնքան իրական եւ այնքան կատարեալ (ԺԷ):

Երանի անոր, որ կը հոտոտէ ու կը զգայ իմացականութիւնը ծաղկին, հողին, կանաչին ու թարմ հացին, որ օրհնաբեր երանութիւն ու խաղաղութիւն է տուներուն (ԺԷ):

Ապա.

Վայ ինձ, որ կասկածեցայ Քու գոյութեանդ, Տէր, ու ինկայ փղմուտ ճամբաներուն մէջ եւ մարմինս հողին փակած՝ ծանր խեցի մը դարձայ (Ե):

Վայ ինձ, որ առօրեայ հոգերը որդերու նման մարմինս կրծեցին եւ փագնապներուս մէջ չմտածեցի Քու մասին, չփնտռեցի Քու մտերմութիւնը, Տէր (Ե):

Վայ ինձ, որ մարդոց մոլուցքին մէջ ինկայ, անոնց հետ արշաւեցի եւ ափելութիւնը, նախանձը մտրակեցին զիս դեւերու պէս (Ե):

Առհասարակ Աստուածաշնչի Յայտնութիւն գրքին անծանօթ չէ հակադրութիւնների միջոցով խօսքի կառուցումը եւ երանի-վայ արտայայտութիւններով սկսուող կառոյցներ մենք տեսնում ենք հէնց Յայտութեան մէջ, ինչպէս օրինակ.

Երանի՛ նրանց, որ կարդում են այս մարգարէութեան խօսքերը եւ երանի՛ նրան, ով լսում եւ պահում է այն, ինչ որ գրուած է նրա մէջ, որովհետեւ ահա մօտ է ժամանակը (Յայտն. 1:3):

Երանի՛ նրանց, որ արթուն են եւ պահում են իրենց զգեստները, որպէսզի մերկ ման չգան եւ իրենց ամօթոյքները չերեւան (Յայտ. 17:15):

Ապա՝

Վայ, վայ, վայ երկրի վրայ բնակուողներին, երբ կը հնչի նաեւ միւս երեք փողերի ձայնը, որը պիտի հնչեցնեն հրեշտակները (Յայտ. 17:19):

Համաստեղի «Աղօթարան»-ի եւ Աստուածաշնչի Յայտնութեան միջեւ կան նաեւ այլ ընդհանուր եզրեր: Եթէ այս սահմանը ընդլայնենք, ապա կը նկատենք, որ «Աղօթարան»-ը նաեւ որոշակի ընդհանրութիւններ է ձեռք բերում ապոկալիպտիկ ժանրին յատուկ ստեղծագործութիւնների հետ: Յայտնութիւնը յատուկ հրէական գրական ժանր է, որը յայտնի է ապոկալիպտիկ անուամբ: «Այն յաճախ օգտագործւում էր լարուածութեան մէջ գտնուող ժամանակներում՝ համոզուելու համար, որ Աստուած վերահսկում

[12] **Համաստեղ**, Աղօթարան, Հայաստան հրատ., Երեւան, 2017: Այսուհետ սոյն գրքից մէջբերումների էջերը կը նշուեն մէջբերումից յետոյ՝ փակագծերում:

է պատմութիւնը եւ ազատագրելու է իր ժողովրդին։ Գրական ժանրի այս տեսակն ունի իր առանձնայատկութիւնները, որոնցից առաջինը հէնց Աստծու տիեզերական ինքնիշխանութեան ուժեղ զգացումն է, այլ կերպ ասած՝ մոնոթեիզմ եւ դետերմինիզմ»[13]։

«Ես եմ Ալֆան եւ ես եմ Օմեղան, ասում է Տէր Աստուածը, նա, որ է, որ էր եւ որ գալու է. Ամենակալը» (Յայտ. 1։8)։ Յայտնութիւն գրքրի այս տողերը եւ ապոկալիպտիկ ժանրին բնորոշ Աստծու տիեզերական ինքնիշխանութեան ընկալումը գեղարուեստական ինքնատիպ մեկնաբանութիւն է ստանում Համաստեղի «Աղօթարան»-ի տարբեր գլուխներում, որոնցից առաւել բնութագրական են ԺԹ գլխի հետեւեալ տողերը.

... ու դուն բաժնուած ես, Տէր, այդ բոլորին մէջ, բաժնուած ես բարի ու արեւոտ ժպիտի մը պէս, բաժնուած ես նոր ծլած արտի վրայ մաղուող բարակ անձրեւի պէս։

Աստուած բաժնուած է թէ անշունչին եւ թէ շնչաւորին մէջ։

Համաստեղի «Աղօթարան»-ի տարբեր գլուխներում մեծամասամբ գերակշռում է մենախօսութիւնը եւ սիւժէի բացակայութիւնը, բայց կան գլուխներ, որոնցում Աստուածաշնչեան այս կամ այն դրուագը դառնում է սիւժէտային գիծ եւ մեկնաբանւում իւրովի։ «Աղօթարան»-ը դառնում է միջոց Համաստեղ գրողի եւ մարդու քրիստոնէական աշխարհընկալման եւ Աստուած-մարդ փոխյարաբերութիւնների բացայայտման։ Այս իմաստով Համաստեղը Աստուածաշնչեան դրուագների ընտրութեան հարցում յատուկ մօտեցում է դրսեւորում։ Նա վերցնում է այնպիսի հատուածներ, որոնք ուղիղ իմաստով ապաշխարանք, զղջում են արտայայտում եւ վերստին հաստատումն են Համաստեղի «Հաւատամքի» եւ քրիստոնեայի փրկութեանը՝ ըստ էութեան կրկին յղում անելով Յայտնութեանը։

«Աղօթարան»-ի Դ հատուածում ներկայացւում է հետեւեալ դրուագը.

Խրախճանքի ժամանակ լսում է դռան թակոց. «Երբ բացի դուռը, տեսայ մուրացիկի կերպարանքով մէկը, քուրջերուն մէջ, կը դողար ցուրտէն ու դողան ձայնով ապաստարան կը խնդրէր» (Դ)։ Սակայն քնարական հերոսը, տրուելով խրախճանքին, չի արձագանքում. «Ես փակեցի դուռը, ես մեղաւորս, ես, անկատարս» (Դ)։ Այս հատուածում հանդիպում են որոշ հակադրութիւններ. խրախճանք-մեղքի զգացում, մուրացկանցոփ կեանքով ապրող, խնդրանք-մերժում եւ այլն։ Ըստ երեւոյթին՝ որոշ պատկերներ «Աղօթարան»-ում են խորհրդանիշների արժէք են ձեռք բերում, օրինակ՝ խրախճանքի պատկերը մեզ յիշեցնում է հեթանոսութիւնը, իսկ մեղքի զգացումը՝ քրիստոնէութիւնը։ Այս առաջին եզրը՝ խրախճանք, անհոգութեան զգացում, իր տեղը զիջում է մերժումից ծնուած մեղքի եւ մեղաւորութեան զգացմանը, այսինքն՝ քրիստոնէական բարոյախոսութեան ընկալմանը. «Երբ վերադարձայ խնջոյքին, տեսայ, որ գինին ու կիներուն մարմնեղէն համանուագը, որ տարածուած էր մարմնիս մէջ, դանդաղեցաւ եւ հետզհետէ աւելի պայծառացաւ ծանր դէմքը մուրացկանին։ Փնտռեցի զայն ճամբաներուն վրայ։ Հարցուցի գիշերապահներուն։ Թակեցի դռները այն տուներուն, ուր լոյս տեսայ» (Դ)։

Սիւժէտային այս պատումը յիշեցնում է Յայտնութիւն 4։20-ի հետեւեալը. «Ահաւասիկ ես դռան առաջ եմ եւ բախում եմ, եթէ մէկը ականջ դնի իմ ձայնին եւ դուռը բացի, կը մտնեմ նրա մօտ եւ կ'ընթրեմ նրա հետ եւ նա՝ ինձ հետ»։

Հոգեւոր բովանդակութեամբ տեքստերում յաճախ է Տիրոջ գալը ներկայացւում

[13] **Ք. Աթլի**, Վերջին վարագոյրը. Յայտնութիւն, Սերտողութեան ուղեցոյց մեկնաբանութեան շարք, հ. 12, էջ 33։

աղքատ մարդու կամ մուրացկանի կերպարանքով: Ահա նմանատիպ մի դրուագ կայ 1770-1773 թթ. Կոստանդնուպոլսում լոյս տեսած «Հարանց վարքը» գրքում[14]: Եթէ փորձենք Աղօթարանում ներկայացուած Տիրոջ՝ մուրացկանի կերպարով գալու դրուագի միջտեքստային կապերը գտնել, ապա կը փաստենք, որ այս դէպքում միջտեքստային հնարաւոր յղումները ուղղւում են ոչ թէ Յայտնութիւն, այլ «Հարանց վարքը» գիրքը:

«Հարանց վարք»-ի Ը՝ «Ոչինչ ի ցոյց մարդկանց չանելու մասին» գլխում ներկայացւում է հետեւեալը. Տէրը «ծեր աղքատի տեսքով» ներկայանում եւ ցանկանում է մտնել մի վանականի տուն: Վանականը մերժում է դռնապանին, ով եկել եւ յայտնում էր աղքատի գալու մասին. «Չգիտե՞ս եւ չե՞ս տեսնում, որ շատերի հետ եմ խօսում եւ յոգնած եմ, ինձ հանգի՛ստ թող այս ժամին»[15]:

Թէ՛ «Հարանց վարք»-ում եւ թէ՛ «Աղօթարան»-ում նոյնն է տիրոջ գալու կերպը, սակայն տարբեր են պատմութեան տակ թաքնուած ենթատեքստերը: «Հարանց վարք»-ի հերոսը այդպէս էլ չի հասկանում, որ այդ ծեր, աղքատ մարդու կերպարանքով Տէրն է եկել, բայց ահա Համաստեղի քնարական հերոսը հասկանում է, որ Տիրոջը չճանաչելով՝ տեղի է ունեցել անդառնալին, եւ սկսում է անցնել ապաշխարանքի եւ ինքնամաքրման ճանապարհով.

Վայ ինձ, որ կասկածեցայ քու գոյութեանդ (Ե):

Վայ ինձ, որ առօրեայ հոգերը որդերու նման մարմինս կրծեցին եւ փագնապներուս մէջ չմտածեցի Քու մասին, չփնտռեցի Քու մտերմութիւնը, Տէր (Ե):

Այսպիսով, Աղօթարանի սուրբգրային աւազանը խորանում է եւ որոշակի ընդհանրութիւններ ձեռք բերում նաեւ Նարեկացու «Մատեան»-ի քրիստոնէական աշխարհընկալման հետ:

Իր «Հայկական դպրութիւնը մեր անգիր դպութենէ մինչեւ միջին դար» յօդուածում Համաստեղը, անդրադառնալով Նարեկացուն, գրում է. «Նարեկացին համակերպուող մը չէ, այլ պարտուած մը՝ իր պայքարին մէջ: Կը զգայ, որ մեղքով լեցուն է իր կեանքը, եւ ուժեղ ալիքներուն պէս եզերքներուն կը զարնուի»[16]: Այս առումով տարբեր են Նարեկացու եւ Համաստեղի քնարական հերոսները: Համաստեղի հերոսը չի պարտւում, չի կոտրւում, այլ շարժւում է առաջ՝ որդեգրելով Նարեկացու լաւատեսութիւնը. «Իր այդ ողբերգական աղօթքներուն մէջ մեծագոյն լաւատեսն է Նարեկացին»[17], քանի որ Համաստեղի բուն նպատակը ոչ թէ հաւատաքննութիւնն է, այլ Աստուած-մարդ յարաբերութիւնների ներդաշնակութիւնը: Համաստեղի քնարական հերոսը ենթագիտակցօրէն անցել է Գր. Նարեկացու «Մատեան»-ի մաքրագործման ճանապարհով, քանի որ հերոսը հասել է Աստուած-մարդ հաղորդակցութեան բաւականին խորը աստիճանին: Այդ աստիճանին հասնելու համար ենթագիտակցօրէն հերոսին առաջ է մղում Նարեկացին. «Նարեկացին կամուրջ է նետում մարդու եւ Աստծու միջեւ, իսկ Համաստեղը քայլում է դէպի Տէրը տանող այդ կամրջով՝ փայփայելով Աստուածամարդու իտէալը»[18]:

Եւ նարեկացիական լաւատեսութեամբ ու Աստուածամարդու իտէալով Համաստեղի հերոսն անցնում է ապաշխարանքի ճանապարհով եւ գտնում ներքին խաղաղու-

---

[14] Գիրքը աշխարհաբար թարգմանութեամբ լոյս է տեսել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից 2016 թուականին:

[15] Սուրբ հայրերի վարքն ու կենցաղավարութիւնը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2016, էջ 287:

[16] **Համաստեղ**, Մոռացուած էջեր, հ. Դ, ընդ. աշխ., էջ 199:

[17] Նոյն տեղում, էջ 169:

[18] **Մ. Խաչատրեան**, Համաստեղի Աղօթամատեանը, Գրական թերթ, Երեւան, 2017:

թիւն. «կը հաւատամ, Տէր, որովհետեւ հաւատքը երանութիւն է իմ մարմնին ու զգայարանքներուն» (Զ)։

Համաստեղի հերոսը, գտնելով ներքին խաղաղութիւն եւ ներդաշնակութիւն, աղօթում է այսպէս.

Տուր ինձ, Տէր, իմաստութիւնը հաւատքին... հաւատամ, որ մարդիկ միշտ ալ բարի են եւ չար չի կրնար ըլլալ ան, որ Քու կերպարանքով ստեղծուած է (Զ):

Տուր ինձ, Տէր, իմաստութիւնը, որ սիրեմ իմ անձը (Զ):

Տուր ինձ իմաստութիւնը, Տէր, որ մտերմանամ իմ եսին հետ, սիրեմ իմ անձը (Զ):

«Տուր, ինձի, Տէր» յարակրկնութիւններով սկսուող գեղարուեստական ստեղծագործութիւնը հայ գրականութեանը յայտնի է դեռեւս 1906 թուականից՝ «Արդի մարդուն Հայր մերը»[19] վերնագրով։ Մ. Մեծարենցը այս բանաստեղծութեամբ ցոյց տուեց, որ հասել է քրիստոնէական բարոյախօսութեան այն աստիճանին, որ խնդրում է ոչ թէ անձնական, այլ անանձնական ուրախութիւն. «Տուր ինձի, տէր, ուրախութիւնն անանձնական»։

Համաստեղի «Աղօթարան»-ում «Տուր, ինձի, Տէր» յարակրկնութիւններով սկսուող տողերը ինքնըստինքեան միջտեքստային կապեր են ստեղծում ոչ միայն Մեծարենցի ստեղծագործութեան, այլեւ խոհափիլիսոփայական եւ աշխարհընկալման ամբողջութիւնների հետ։

Թւում է, թէ աղօթելիս Համաստեղի քնարական հերոսը անձնական մղումով է առաջ շարժւում, բայց իրականում այդպէս չէ. նա կրում է Մեծարենցի անանձնականութեան դրոշմը.

Սէրը միայն անձնական, երբեք սէր չէ, շատ կարճատես եւ մահկանացու (ԺԸ):

Սէր է այն, երբ վշտահարի մը արցունքներուն մէջ կը զգանք արցուիլը մեր աչքերուն (ԺԸ):

Իր «Աղօթարան»-ում Համաստեղն անդրադարձել է աստուածաշնչեան որոշ գաղափարների. չերկնչելու, սիրոյ եւ ճշմարիտ հաւատի։

Աղօթարանի ԺԵ գլուխը սկսւում եւ աւարտւում է հետեւեալ տողով. «Երանի անոր, որ չի երկնչիր»։ Համաստեղը տալիս է չվախենալու, չերկնչելու բանալին, որն է՝ դէպի Աստուած տանող ճանապարհը. «Եղիր կատարեալ, ինչպէս ինքը Աստուած է ու քալէ իմաստուն ժպիտով կեանքի շէն, կեանքի կանաչ, կեանքի քարուտ ու կեանքի ամայի ճամբաներէն։ Այդ ճամբաները քեզ Աստծոյ կը տանին» (ԺԵ)։

Մարկոս 5։35-ում ասւում է. «Մի՛ վախեցիր, այլ միայն հաւատայ»։ Համաստեղը ըստ էութեան կարեւոր է համարում Աստուած-մարդ փոխյարաբերութիւնների ճշմարիտ ու ներդաշնակ կառուցման համար վախի բացակայութիւնը եւ երանի է տալիս նրան, ով չի վախենում, քանի որ այն չի խախտում հաւատի ներդաշնակութիւնն ու կայունութիւնը։

«Սիրել միմեանց» եւ «Աստուած սէր է» աստուածաշնչեան գաղափարներով է ողողուած «Աղօթարան»-ի ԺԸ գլուխը։ Որոշակի ընդհանրութիւններ կան Աստուածաշնչի եւ «Աղօթարան»-ի հետեւեալ տողերի միջեւ.

---

[19] **Մ. Մեծարենց**, երկեր, Սովետական գրող հրատ., Երեւան, 1986, էջ 121։

Եւ սրանո՛մ երեւաց Աստծու սէրը մեր հանդեպ. այն, որ Աստուած իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպէսզի նրանով կենդանի լինենք (Ա Յովհ. 4:9):

Սէրը Աստծոյ շունչն է եւ մենք կը դառնանք անանձնական, ինչպէս Աստուած ինքն է տարածուած, ինչպէս ինքը Յիսուսն է նկանակի ու գինիի պէս բաշխուած (ԺԸ):

*«**Ինչպէս հաւատալ, Տէր**»: Աղօթարանի ԺԲ հատուածը սկսւում է հռետորական այս հարցադրումով, որի պատասխանը Համաստեղը գտնում է աղօթքի, աղօթելու մէջ.*

Աստծոյ հետ հաղորդակցութեան մէջ կը մտնէ խոնարհը աղօթքով, որ արտայայտութիւնն է սիրոյ, ինչպէս կանաչը արտայայտութիւնն է տերեւին (ԺԸ):

Համաստեղեան այս հարցադրումը՝ ինչպէս հաւատալ, Տէ՛ր, որոշակի կապ է ստեղծում Աստուածաշնչեան չհնչող հարցադրման՝ իսկ ինչպէս աղօթել:

Եւ արդ, դուք այսպէս աղօթեցէք... (Մատթ. 6:9):

Աղօթարանի սուրբգրային աւազանի հատման կէտը Տէրունական աղօթքն է, եւ պատահական չէ, որ այն աւարտւում է Տէրունական աղօթքից մէջբերմամբ.

Եղիցին կամք քոյ...

Չեմ ըսեր, կամքդ թող ըլլայ, Տէր, որովհետեւ դուն իմ մէջ կամք ես ու իմացականութիւն (ԻԲ):

Տէրունական աղօթքը քրիստոնէական ծիսակատարութիւնների ժամանակ սովորաբար սւում է սկզբում եւ վերջում՝ ամէն անգամ խորհրդանշելով Տիրոջ յայտնութեանական խօսքն իր մասին. «Ես եմ Ալֆան եւ Օմեղան, Առաջինը եւ Վերջինը, Սկիզբը եւ Վախճանը» (Յայտ. 1:8, 1:10, 2:17): Եւ պատահական չէ, որ Համաստեղի «Աղօթարան»-ը նոյնպէս աւարտւում է Տէրունական աղօթքով կամ մէջբերմամբ եւ քրիստոնէական աղօթքների վերջում հնչող բառով՝ ամէն. դա հաստատումն է Համաստեղի «Հաւատամք»-ի եւ Տիրոջ յայտնութեանական խօսքի.

... որովհետեւ դուն իմ մէջ կամք ու իմացականութիւն ես: Դուն իմ մէջ ներդաշնակութիւն ես, Տէր (ԻԲ):

Իմ գոյութեան մէջ է, Տէր, որ կ'ամբողջանայ քու կերպարանքը ու իմ հաւատքին մէջ՝ քու յաւիտենականութիւնը... (ԻԲ)

Ամէն:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Հայ բանասիրութեան մագիստրոս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՒ ՆՐԱ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայ պատմագրութեան լաւագոյն էջերից մէկը Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնն է»՝ իր ժամանակի պատմագրութեան մէջ ամբողջական պատմութիւն, որում Խորենացին ներկայացրել է հայ ժողովրդի ծագումից մինչեւ Արշակունեաց արքայատոհմի կործանումն ընկած դէպքերը: Իր «Պատմութեան» հիմքում նա դրել է պատմական հաւաստի եւ ժամանակագրօրէն ստոյգ տուեալներ. «Չկայ ստոյգ պատմութիւն առանց ժամանակագրութեան»,- գրում է Քերթողահայրը:

«Խորենացին առաջինը եղաւ, որ գրեց հայ ազգի սիստեմական պատմութիւնը սկզբից մինչեւ իր ժամանակները,- գրում է Ս. Մալխասեանը: Սա մի ստեղծագործութիւն էր, «ի չգոյէ գոյի ածել» էր մի ազգի անցեալը, սա մի ծննդեան վկայական էր մեր ազգի համար, որ մինչեւ այդ ժամանակ չգիտէր, թէ ով է ինքը, եւ ինչ ծագում ունի: Կապելով հայ ազգի սկզբնաւորութիւնը Ս. Գրքի հետ, ծագեցնելով հայերին Յաբէթի ցեղից՝ նա հայ ազգի համար ստեղծեց պատուաւոր տեղ միւս հին ազգերի շարքում: Սերեցնելով հայերին աշտարակաշինութեան ժամանակակից Հայկից, նկարագրելով այս հսկայ աղեղնաւորին իբրեւ ազատութեան սիրահար եւ բռնակալ Բելին սպանող, նա փառաւոր ու սիրելի դարձրեց հայերին իրենց ծագումը»[1]:

Հայոց տիրակալները Խորենացու երկում բաժանուած են երկու մեծ խմբի՝ բնիկ տէրեր եւ եկուորներ: Առաջինի նկատմամբ է բեւեռուած Խորենացու մեծ սէրն ու նուիրումը, մինչդեռ երկրորդ խմբի ներկայացուցիչները մեծամասամբ արժանանում են որոշ քննադատութիւնների: Ջափաւոր վերաբերմունքի են արժանանում միայն այն եկուորները, որոնք նպաստել են երկրի բարեկարգմանը, հզօրացմանը, սահմանների ամրութեանը: Հայ ազգը Խորենացու համար հին ժամանակներից հայոց աշխարհում ապրած եւ ապրող, նոյն լեզուն ու արիւնը կրող ժողովուրդն է, որի յաղթանակների եւ յաջողութիւնների գլխաւոր նախապայմանը ազգային միասնութիւնն է, բնիկ տէրերի իշխանութիւնը, հայրենիքի յաջողութեան համար պայքարող հերոսները:

«Հայոց մեծերի ծննդաբանութիւնը» վերնագրով առաջին գրքում մի հետաքրքիր ընդգծմամբ նա միանգամից ներկայացնում է իր համակրանքը հայոց բնիկ, թէկուզեւ հեթանոս տէրերի նկատմամբ եւ փափաքում ծնուած լինել հզօրների ժամանակներում եւ ականատեսի աչքերով գրի առնել նրանց մեծագործութիւնները: Պատմահայրը գրում է. «Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեանառուք և հաւաստի հարազատք: Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ գալ Փրկչին և զիս գնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տէրութեամբն խրախճանալ, և յարդեացս ապրել վտանգիցս: Այլ վաղ ուրեմն փախեաւ ի մէնջ պատահումն այն թէ

[1] Տե՛ս **Մ. Խորենացի**, Հայոց պատմութիւն, Երեւան, 1981, էջ 33:

արդեօք և վիճակ»[2]: Ըստ էութեան, Խորենացու համակրանքի ու սիրուն արժանացած բնիկ տէրերը ոչ միայն քաջ հերոսներ են, այլեւ՝ ազգային դիւցազուններ:

*Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ հերոսների կերպաւորման գլխաւոր չափանիշը նրանց կատարած գործերն են՝ դրական շեշտադրումով: Ահա Մովսէս Խորենացին գրում է. «Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան – **Հայկ, Արամ, Տիգրան**. քանզի ըստ քաջացն՝ ազգք քաջք. իսկ միջոցքն՝ որպէս դէպ ումէք թուիցի կոչել» (էջ 100): Պատմահայրը մեծ հրճուանքով գովերգել է հայ ժողովրդի բնիկ թագաւորներին (Հայկ, Արամ, Արա, Երուանդ, Արտաշէս, Տիգրան)՝ ցանկանալով նրանց դարձնել հայ տիրակալների լաւագոյն օրինակ, բարձրացնելով հայոց միաբանութեան եւ հզօր ու փառահեղ պետականութեան գաղափարը՝ արտայայտելով իր սէրը նրանց հանդէպ: «Ազգային գոյաբանութեան հիմքը եւ ընդգրկումն ու ձեւը պետականութիւնն է, եւ դրան են միտուած երեք կատարելատիպերի ընդհանրացումները, դրանց հետ կապուած՝ «բնիկ տէրերի» գոյաձեւային իմաստաւորումները»[3], - նկատում է Վ. Սաֆարեանը:*

Իր «Պատմութեան» հերոսներին ներարկելով առասպելական եւ վիպական տարրեր՝ Խորենացուն յաջողւում է ստանալ գեղարուեստական կերպարներ:

Նրա «Պատմութեան» մէջ անգամ եկուոր տէրերն են բաժանւում երկու խմբի՝ ըստ իրենց գործունէութեան դրական եւ բացասական կողմերի: «Միշտ կարեւորելով «բնիկութեան» կենսաբեր ուժը՝ Խորենացին սթափ դիրքորոշմամբ արժեւորում է դա նաեւ օտար ծագումով տիրակալների մէջ, եթէ նրանց գործունէութիւնը ուղղուած է երկրի եւ պետականութեան ամրապնդմանը»[4]:

*Առաջին Արշակունին, որի մասին խօսում է Խորենացին, **Վաղարշակն** է: Վերջինիս գահ է բարձրացրել պարսից Արշակ Մեծ արքան՝ օգտուելով հայոց անիշխանութիւնից եւ խառնաշփոթից: Բայց Վաղարշակը, գալով իշխանութեան, դրական ազդեցութիւն է ունենում երկրի բարեկարգման համար: Ընթերցողը այս Արշակունու մասին առաջինը իմանում է այն, որ Հայաստանում պարթեւ Արշակունիների հիմնադիր Վաղարշակը նամակ է յղում Արշակ Մեծին՝ գրելով, որ ինքն իր մտքի ու ուժերի սահմաններում հոգ է տանելու այս թագաւորութեան մասին: Սա կերպարաւորման համար անշուշտ հետաքրքիր ընդգծում է: Հերոսը նամակում խօսում է լիարժէքօրէն անկեղծ՝ առանց աւելորդաբանութիւնների՝ թողնելով դրական տպաւորութիւն: Ապա իր նամակում նա անհրաժեշտութիւն է համարում իմանալ, թէ ովքեր են նախկինում տիրել Հայոց աշխարհին, եւ որտեղից են եկել այն նախարարութիւնները, որ կան Հայաստանում: Արդիւնքում Արշակի Մեծի հրամանով եւ Վաղարշակ Արշակունու ցանկութեամբ Մար Աբաս Կատինան բացում է արքունական դիւանը՝ փորձելով գտնել փաստեր հայերի եւ նրանց երկրի մասին:*

Այնուհետեւ Վաղարշակ Արշակունին կարգաւորում է մեր աշխարհի հիւսիսային եւ արեւմտեան կողմերը՝ բնակեցնելով եւ շէնացնելով դրանք: Նա կոչ է անում մարդկանց թողնել աւազակութիւնը, հպատակուել արքունական հրամաններին եւ յաւակնել աւելի բարձր պաշտօնների: Յաջորդիւ՝ Խորենացին ծաւալուն ներկայացնում է, թէ՝ Վաղարշակը ինչպէս է կազմակերպում թագաւորութիւնը, ինչպէս եւ որտեղ է հիմ-

---

[2] **Մ. Խորենացի**, Հայոց պատմութիւն, Երեւան, 1981, էջ 80: Այսուհետ սոյն գրից մէջբերումների էջերը կը նըշուեն մէջբերումից յետոյ՝ փակագծերում:

[3] **Վ. Սաֆարեան**, Հայ միջնադարեան գրականութիւն, Երեւան, 2016, էջ 51:

[4] Նոյն տեղում, էջ 54:

*նում նախարարութիւնները եւ ինչպէս է կազմակերպում իր թագաւորութեան կենցաղավարութիւնը: Նա նախարարութիւններ է սահմանում Բագրատունի (թագակիր ասպետներ), Գնթունի (արքային զգեստաւորող), Հայկազունի (արքայի թիկնապահ), Արծրունի (արքայի առաջից արծիւներ պահող), Գնունի (արքայի համար ըմպելիքներ պատրաստող), Սպանդունի (սպանդանոցները ղեկավարող) եւ այլ ցեղերի համար եւ ծառայութիւնների ղեկավարներ նշանակում այդ տոհմերի ներկայացուցիչներին: Այս նոյն Վաղարշակը բնիկ Հայկազունիների շառաւիղներին ոչ կարեւոր պաշտօններում է նշանակում, աշխատում է նրանց հեռու պահել Այրարատից: Վաղարշակը կարգաւորում է նաեւ արքունի կենցաղավարութիւնը՝ սահմանում արքունիք մտնելու եւ ելնելու, խորհրդի, կերուխումի եւ զբօսանքների ժամերը: Արքայի կերպաւորման տեսանկիւնից հետաքրքիր է նաեւ այն փաստը, ըստ որի, Վաղարշակը իրեն երկու օգնական յիշեցնողներ է կարգում՝ մէկը բարին պէտք է յիշեցնէր, իսկ միւսը՝ վրէժխնդրութիւնը. «Եւ բարւոյ յիշեցուցանողին հրաման տայ՝ ի բարկութեանն արքայի և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել **զիրաւն** ու **զմարդասիրելն**» (ընդգծումը մերն է- **Ա. Կ.**): Սա բաւական հետաքրքիր ընդգծում է արքայի կերպարը մարդասիրութեան ջատագով ներկայացնելու առումով: Թէպէտ Վաղարշակը հրաման է արձակում, որ քաղաքացիների յարգն ու պատիւը աւելի լինի, քան գիւղացիներինը, բայց նաեւ արգելում է քաղաքացիներին, որ գոռոզանան. նրանք պէտք է եղբայրաբար վարուեն գիւղացիների հետ:*

Պատմագրութեան եւ բանահիւսութեան մէջ կերպարը դառնում է սիրելի եւ դրական, երբ սահմանները պաշտպանելուց բացի ընդարձակում, զօրացնում եւ շէնացնում է երկիրը: Ահա Խորենացին պատմում է, որ Վաղարշակը հրաման է տալիս նորոգել Շամիրամի քաղաքը եւ ուրիշ շատ տեղերում շինել բազմամարդ քաղաքներ, մարդաշատ գիւղեր: Այդ տարածքների մարդաշատութիւնը ապահովելը սկսում է՝ իր որդիներին այդ վայրերում բնակեցնելով: Միայն մի որդուն՝ Արշակին է նա պահում իր մօտ՝ իբրեւ իր ժառանգի, որն իրենից յետոյ պէտք է դառնար արքայ: Նրա այս քայլը դառնում է օրէնք Արշակունի արքաների համար:

*Հետաքրքրական է **Արտաւազդ Արշակունու** կերպարը: Վերջինիս կերպաւորման մէջ շատ հետաքրքիր գիծ է մտցուած: Նա, ի տարբերութիւն նախորդների, ոչ մի կարեւոր բան չի արել իր երկրի համար: Նա, սովորութեան համաձայն, իր եղբայրներին եւ քոյրերին բնակեցնում է այլ գաւառներում, իսկ Այրարատում մնում է միայն ինքը՝ որպէս գահի ղեկավար: Ապա Խորենացին գրում է. «Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եղոյց. այլ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ, մօրից և եղեգնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց, զիշավայրիս և զխոզս արածելով. զիմաստութիւնէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ և ստրուկ որովայնի արդարև լինելով՝ զաբիւս մեծացուցաներ» (էջ 158): Նման գնահատականը, ինչպէս նկատում է Մ. Մկրեանը, ցոյց է տալիս, որ Խորենացու համար մարդը, թէկուզ լինի արքայ, եթէ իր գործերով օգտակար չի լինում երկրին ու ժողովրդին, ապա նա ամենասինքլոր մարդուց էլ ցած է կանգնած[5]: Ապա Խորենացին էլ աւելի վառ գոյներով ներկայացնում է Արտաւազդի կեանքի աւարտը: Հռոմեացի եռապետ Անտոնիոսը գերեվարում է Արտաւազդին եւ յետոյ սպանել տալիս[6]:*

---

[5] Տե՛ս **Մ. Մ. Մկրեան**, Հայ հին գրականութեան պատմութիւն, Երեւան, 1976, էջ 184:

[6] Պատմական աղբիւրներում Արտաւազդը Տիգրան Մեծի որդի Արտաւազդ II-ն է, որ կառավարել է Ք. Ա. 55-34 թթ.: Այս առիթին գերեվարել է հռոմեական երրորդ եռապետութեան անդամ Անտոնիոսը, անցկացրել նրան յաղթահանդէսով Հռոմի փողոցներով: Հայոց արքան եւ թագուհին հրաժարուել էին գլուխ խոնարհել Անտոնիոսի կնոջ՝ Կլեոպատրայի առաջ, եւ վերջինիս հրամանով Արտաւազդը գլխատւում է: Այսինքն՝ պարզ է դառնում, որ Ար-

*Բաւական հետաքրքիր են Արշամ Արշակունու որդու՝ **Աբգարին** վերաբերող հատուածները: Վերջինիս կերպարը ներկայացնելու համար Խորենացին գործածում է ինչպէս սոսկ նկարագրական հատուածներ, այնպէս էլ մէջ է բերում Աբգարի թղթերն[7]՝ ուղղուած Քրիստոսին, Հռոմեացի կայսր Տիբերիոսին, որդուն՝ Ներսեհին, եւ այլոց, որոնցում Աբգարը ներկայանում է իբրեւ հաւատաւոր մարդ, որն անվերապահօրէն հաւատում է Փրկչի էութեանը: Ինչպէս նկատում է Ստ. Մալխասեանը, Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ ներառուած նամակները աչքի են ընկնում իրենց հակիրճ ոճով: Այս նամակները հաւանաբար վաւերական չեն, մեծ մասամբ պատմիչի հեղինակածներն են: Խորենացու դարում սա ընդունուած ձեւ էր ոչ միայն մեր, այլեւ օտարազգի մատենագրութեան մէջ: Բայց այդ նամակներն ուրիշ հետաքրքրական կողմ ունեն. նրանցից երեւում է, թէ Խորենացին ինչպէս է պատկերացնում յիշեալ թղթակիցների փոխադարձ յարաբերութիւնները. արդեօ՞ք մտերմական են այդ յարաբերութիւնները, թէ պաշտօնական, իբրեւ հաւասարներ են գրում միմեանց, թէ պետը ստորադրեալին կամ հակառակը. սրանցով էլ որոշւում են հայոց թագաւորների քաղաքական դիրքն ու նշանակութիւնը օտար արքաների նկատմամբ[8]:*

Մովսէս Խորենացին պատմում է, որ Աբգար Ե-ն, «լսելով Փրկչի սքանչելագործութիւնների համբաւը եւ հաւատալով, որ դրանք մարդու զօրութիւններ չեն, այլ՝ Աստծու», իր բանբերների միջոցով թուղթ՝ նամակ-խնդրագիր է ուղարկում Երուսաղէմ՝ Փրկչին, որպէսզի նա գայ եւ բժշկի իրեն, որովհետեւ մարմինն ապականուած էր չարաչար ցաւերով՝ բորոտութեամբ: Աբգարը արժանանում է Փրկչի պատասխանին, որտեղ ասւում է, որ Փրկիչը կ'ուղարկի իր աշակերտներից մէկին, որը կը գայ, «կը բժշկի եւ կեանք կը շնորհի քեզ եւ քեզ հետ եղողներին» (էջ 170): Փրկչի համբարձումելուց յետոյ Թովմաս առաքեալը Եդեսիա է ուղարկում Թադէոս առաքեալին, որը բուժում է Աբգարին, քաղաքի բոլոր հիւանդներին ու ախտաւորներին, քարոզում Աւետարանը եւ Եդեսիայի եպիսկոպոս կարգում Ադդէ անունով մետաքսագործին, ապա մեկնում, ըստ Մովսէս Խորենացու, Աբգարի քեռորդու՝ հայոց Սանատրուկ թագաւորի արքունիք: Աբգարը[9] դարձի գալով նամակներ (թղթեր) է յղում Հռոմի Տիբերիոս կայսրին, Ասորեստանի Ներսեհ թագաւորին, որ իր որդին էր, Պարսից Արտաշէս թագաւորին, որպէսզի նրանք եւս ընդունեն Յիսուս Քրիստոսին՝ որպէս Աստծոյ Որդու եւ Փրկչի[10]: Ահա Արտաշէսին գրած նամակներից մէկում Աբգարը գրում է. «Հաւատացեա՛ բանի նորա, դու և եղբարք քո և ամենեքեան, որ հնազանդին քեզ կամաւոր: Զի ախորժելի է ինձ՝ զձեզ ըստ մարմնոյ ազգականս՝ լինել ինձ մտերիմ հարազատս և ըստ հոգւոյ» (էջ 184): Այսինքն՝ Աբգար արքային հոգեհարազատ դառնալու համար կարեւոր նախապայման էր նոր հաւատին հետամուտ լինելը:

տաշիսեան արաւերը երբեմն ներկայացւում են Արշակունիների անուան տակ: Տե՛ս **Լ. Մկրտումեան**, Հայոց պատմութիւն, Երեւան, 2016, էջ 46:

[7] «**Թուղթ**» բառացի նշանակել է գրութիւն՝ ուղղուած մէկից միւսին, նամակ, ուղերձ: Միջնադարեան հեղինակների «թղթերի» մէջ արծարծուել են կրօնական, փիլիսոփայական եւ սոցիալական հարցեր: Տե՛ս **Էդ. Զրբաշեան, Հ. Մախչանեան**, Գրականագիտական բառարան, Երեւան, 1972, էջ 120:

[8] Տե՛ս **Մ. Խորենացի**, Հայոց պատմություն, Երեւան, 1961, էջ 46:

[9] Աբգարի մասին եղած առասպելի պատմաբանական վերլուծութիւնը հաստատում է, որ Եդեսիայի նշանաւոր տիրակալը, որ քրիստոնէութիւն ընդունեց, Աբգար Թ-ն է, ով ապրել է 2-րդ դարի վերջերին, իսկ առասպելը պատմական իրական դէպքը ետ է տարել մինչեւ մեր թուարկութեան սկիզբը եւ վերագրել մէկ այլ արքայի՝ Քրիստոսին ժամանակակից Աբգար Ե-ին: Տե՛ս **Նիկողայոս Ադոնց**, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, 1987, էջ 385, 560-561.

[10] Տե՛ս **Է. Բ. Աղայեան, Բ. Առաքելեան, Գ. Գալոյեան եւ այլք**, Հայ ժողովրդի պատմութիւն, հ. 1, Երեւան, 1971, էջ 607:

*Արշակունիների կերպարակերտման տեսանկիւնից առաւել կարեւոր են քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունած **Տրդատ Մեծին** վերաբերող հատուածներն ու նկարագրութիւնները: Այդ մասերում տեսնում ենք Խորենացու ողջ համակրանքը արքայի նկատմամբ, նրա անձի եւ գործի փառաբանութիւնը: Տրդատը Արշակունիների մէջ եզակիներից է, որ արժանանում է Խորենացու դրական գնահատականներին: Անգամ կարող ենք նկատել, որ Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ Տրդատ Մեծը առաջին հերթին քաջ դիւցազուն է, հայոց հզօր արքայ:*

Տրդատի եւ Խոսրով Կոտակի մասին պատմող հատուածները ներկայացնելիս Խորենացին նշում է, որ նրանց մասին համառօտակի խօսում է Տրդատի «յաջող քարտուղարը», եւ ինքն օգտուել է Ագաթանգեղոսի աշխատութիւնից: Ապա պատմահայրը տալիս է Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» բովանդակութիւնը՝ մի քանի տողի սահմաններում՝ յաւելելով, որ ինքը ցանկանում է այս շրջանի անցքերը ներկայացնել երկար եւ խիստ ճշմարիտ տեղեկութիւններով. «Արդ թէպէտ և Ագաթանգեղոս այսպէս համառօտ էանց ընդ այս, բայց ես հաւանեալ եմ ձիգ և յերկար առնել զպատմութիւն ժամանակիս այսորիկ, ճառելով ի սկզբանէն, և ճշմարիտ ասացուածովք հոծ և խիտ» (էջ 246):

Տրդատ Մեծի հետ ընթերցողի ծանօթութիւնը սկսւում է նրա մանկութեան ողբերգականութեան պատկերից. կոտորւում է Խոսրով Մեծի ընտանիքը, եւ «Արտաշիրը լսել էր, թէ հայոց նախարարներից մէկը Խոսրովի որդիներից մէկին առնելով փախցրել ազատել է՝ կայսեր դուռը հասցնելով...» (էջ 303): Յաջորդիւ Խորենացին ներկայացնում է Տրդատի քաջագործութիւնները, որ ապագայ արքան կատարում է Հայաստանի անիշխանութեան շրջանում իր մանկութեան տարիներին: Ըստ էութեան, առաջին յատկանիշը, որ նկատւում է Տրդատի կերպարում, քաջ եւ արի լինելն է: Խորենացին մէջբերում է Փերմելիանոսի պատմածը Տրդատի քաջագործութիւնների մասին. Տրդատը մանուկ հասակում սիրում էր ձի հեծնել, կորովի ձիավարում էր, հմուտ էր զինավարժութեան մէջ, սովորել էր պատերազմական արուեստը, վարժ տիրապետում էր կրկեսային արուեստին այնքան, որ «վերկուց ցլուց վայրենեաց միով ձեռամբ կալեալ զեղջերէն, թափեաց հանդերձ ընդվզեալ ջախջախմամբ» (էջ 264):

Տրդատ Մեծի կերպարակերտումը իւրօրինակ զարգացում է ստանում: Ահա Պատմահայրը ներկայացնում է Տրդատի քաջագործութիւնները արքայ եղած ժամանակ մինչ նոր հաւատքն ընդունելը: Այսինքն՝ միայն քրիստոնէութեան ընդունումը չէ, որ գեղեցկացնում է այս Արշակունու կերպարը: Նա այն ցանկալի «ոչ բնիկ» տէրն է, որ իր անձով ու գործով արժանացել է Պատմահօր դրական վերաբերմունքին: Այս Արշակունին բազում յաղթանակներ է տօնում՝ անձամբ գլխաւորելով մարտերը: Կերպարը ստանում է դիւցազնական լիարժէք յատկանիշներ՝ երբեմն անգամ չափազանցուած: Թագաւոր ժամանակ՝ պարսիկների դէմ կռուելիս, Տրդատը, ասում է պատմիչը, քաջութեան աւելի մեծ գործեր է կատարում, քան «Իլիականում» է պատկերուած: Խորենացին ներկայացնում է մի դիպուած, որտեղ երեւում է Տրդատի դիւցազնական ողջ ուժը. պարսից զօրքը, գիտենալով արքայի սաստիկ եւ հերոսական ուժը, նետերի հարուածով գետնին է փռում Տրդատի ձին, բայց արքան, ոտքի կանգնելով եւ հետիոտն յարձակուելով, թշնամիներից շատերին գետին է գլորում եւ, մէկի ձին բռնելով, «արիաբար աշտանակեր» (տե՛ս էջ 273): Ապա Խորենացին սաստկացնում է նկարագրութիւնը. «Միւսանգամ կամաւոր լեալ հետի՝ սուսերաւ զերամակս փղացն պուղէր» (էջ 274): Ինչպէս բնորոշ է դիւցազնական հերոսին, Տրդատը մարմնաւորում է ազնուական ոգի եւ աս-

պետական վեհանձնութիւն, խիզախ եւ համարձակ բնաւորութիւն։

Խորենացին շարունակում է Տրդատի յաղթահանդէսները ներկայացնելը։ Հերոսական Տրդատի քայլերից Խորենացին յիշում է Աղուանաց պատերազմի ժամանակ Բասիլների արքային երկու կէս անելը։ Նա դառնում է թշնամական զօրքի ահ ու սարսափը. նրա ձեռքերի արագութիւնից բազում զինուորներ էին տապալւում։ Իր երկասյր սրի հարուածով քաջազուն Տրդատը երկու կէս է անում թշնամու զօրքի առաջնորդին, նոյն հարուածով մէջտեղից կիսւում է եւ նրա ձին։ Թշնամական զօրքը, տեսնելով իրենց արքային սպանուած, փախուստի է դիմում, իսկ Տրդատն էլ նրանց հետապնդում է մինչեւ յունաց աշխարհը։

Տրդատի առնական ուժի եւ արիութեան բազմաթիւ գործերի մասին ամէն մի առիթով շարունակաբար պատմում է Խորենացին՝ ընթերցողին յանուն հայրենիքի պաշտպանութեան հերոսականութեան ոգով դաստիարակելու նպատակով։

Քաջ Տրդատ Մեծը Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ յատկապէս դրական է շեշտաւորւում Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն դարձնելու շնորհիւ։ Կարեւոր է Խորենացու վերաբերմունքի տարբերութիւնը առ Լուսաւորիչ եւ Տրդատ Մեծ։ Չնայած այն փաստին, որ նրանք երկուսն էլ ահռելի աշխատանք են տարել աստուածահաճոյ կրօնը ընդունելու գործում, Տրդատը երբեմն Լուսաւորչից աւելի բարձր տեղ է զբաղեցնում։ «Հաւատի ու ճգնողութեան մէջ նրանք երկուսը հաւասար էին, իսկ համոզիչ կամ ստիպողական խօսքերով հնազանդեցնելու մէջ թագաւորի շնորհն աւելին էր։

Տրդատը նաեւ զբաղւում է շինարարութեամբ։ Ահա նա վերաշինում է Գառնիի տաճարը։ Տրամաբանական հակասութիւնն ակնյայտ է. քրիստոնէութիւն ընդունած արքան, քանդել էր տուել բազմաթիւ մեհեաններ, չէր կարող այդ ընթացքում կանգնեցնել մէկ ուրիշ հեթանոսական տաճար, հետեւաբար Խորենացին շփոթում է փաստերը։ Իրականում Գառնիի հեթանոսական տաճարը կառուցուել է ոչ թէ Տրդատ Մեծի, այլ Տրդատ Առաջինի կողմից, որին Խորենացին չի անդրադառնում։

Տրդատի կերպարին Խորենացին յաւելում է նաեւ ողբերգական յատկանիշներ։ Տրդատի կեանքի վերջին շրջանի մասին խօսելիս Խորենացին եւս մէկ անգամ ընդգծում է արքայի՝ դէպի բարին ու լաւը եղած վերաբերմունքը, ընդգծում հայ ժողովրդի մերթ ընդ մերթ արթնացող խստասրտութիւնը, ամբարտաւանութիւնը եւ անհաճոյ վերաբերմունքը դէպի բարի գործերը, որոշակի մասի հակադրուելը արքայի՝ քրիստոնէական կրօնին հետեւելու ցանկութեանը։ Եւ Տրդատը, չկարողանալով ներել նրանց այս պահուածքը, հրաժարւում է «երկրային պսակից» եւ գնում «երկնային պսակի» ետեւից՝ ընտրելով ճգնակեացի կեանքը։

Խորենացին աւարտին է հասցնում Տրդատի կերպարի դրամատիզմը՝ ցոյց տալով նրա մահուան պատկերը, միաժամանակ արտայայտելով իր բարկութիւնը. «Աստանօր ամաչեմ ասել զճշմարտութիւնն, մանաւանդ թէ **զանօրէնութիւն** և **զամբարշտութիւն** ազգիս մերոյ, և զմեծի ողբոց և արտասուաց արժանի զսոցա գործս։ Քանզի զհետ առաքեալ, կոչեն զնա՝ լինել ըստ կամաց նորա, և ունել զթագաւորութիւնն։ Իսկ ի չհաւանել սրբոյն՝ տան նմա արբումն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատակ զմոլեխինդն. և կամ թէ զմերն իսկ ասել, կատաղեալ Եբրայեցիքն ըմպելի լեղեալ խառնեալ Աստուծոյ մերոյ» (էջ 302)։ Ապա Խորենացին հայերին այս բնորոշումն է տալիս. «Ազգ թիւր և դառնացող, ազգ, ոչ ուղղեաց զսիրտ իւր, և ոչ հաւատարմացաւ Աստուծոյ ոգի

նորա» (էջ 302)։ Խորենացին Տրդատի մահուան մասին ցաւով արձանագրում է. «Արբուցեալ նմա դեղ մահու՝ զրկեցան ի լուսոյ շնորհաց ճառագայթից նորա» (էջ 304)։ Տրդատ Մեծ արքայով Մովսէս Խորենացին աւարտում է «Հայոց պատմութեան» երկրորդ գիրքը։

«Մեր հայրենիքի պատմութեան աւարտը» գրքում Խորենացին ներկայացնում է Տրդատի մահից յետոյ մինչեւ Արշակունեաց արքայատոհմի կործանումն ընկած դէպքերը։

*Յաջորդ Արշակունին **Խոսրով Կոտակն էր**՝ Տրդատ Մեծի որդին։ Եթէ Փաւստոս Բուզանդը գոնէ Խոսրովի վերաբերեալ դրական է արտայայտւում, Խորենացին Կոտակի եւ յաջորդ արքաների մասին արտայայտւում է քննադատաբար։ Այսպէս օրինակ՝ **Արշակ Բ-ն**, որին ընթերցողը սկսում է ճանաչել Վաղեսին եւ այլոց գրած թղթերից, որոնցում երեւում է նրա վերաբերմունքը բիւզանդական կայսեր եւ պարսից արքայի նկատմամբ։ Եթէ Փաւստոս Բուզանդի երկում Արշակ Երկրորդը, իր թերութիւններով հանդերձ, ներկայացուած է որպէս իսկական հայրենասէր։ Նա ըմբոստ է իր թշնամիների նկատմամբ եւ սիրուած՝ ժողովրդի կողմից՝ յատկապէս հայ զինուորներից, ովքեր քաջաբար կուում էին յանուն նրա, ապա Մովսէս Խորենացու երկում նման դրական յատկանիշների դրսեւորումը ոչ միայն բացակայում է, այլեւ սարկաստիկ ձեւով ծաղրուած է արքային վերագրուող քաջութիւնը. «Անձնահաճ եղեալ, պարծելով հանապազ ի գինարբուս և յերգս վարձակաց. քաջ և արի երևեալ քան զԱքիլլես, իսկ արդեամբք Թերսիտեայ նմանեալ կաղի և սրագլխոյ. վտարանջեալ յիւրոց նախագլխացն, մինչև զամբարտաւանութեանն ընկալաւ վարձս» (էջ 334)։*

Խորենացին որոշակի փոփոխութիւններով ներկայացնում է նաեւ Արշակ եւ Գնել, Արշակ եւ Տիրիթ յարաբերութիւնները։ Կուրացած Տիրանը, իրեն մեղաւոր համարելով որդու՝ Տրդատի մահուան համար, թոռանը՝ Գնելին է տալիս իր բոլոր ունեցածը եւ կալուածքները, ամուսնացնում Փառանձեմի հետ։ Արշակը, ի դէմս Գնելի, տեսնում է իրեն հակառակորդ եւ փորձում հեռացնել իր երկրի հեռաւոր վայրերը, ինչի պատճառով արժանանում է կուրացած հօր կշտամբանքներին։ Ահա այստեղ Արշակի բացասական կողմերը ներկայացւում են էլ աւելի խտացուած գոյներով։ Խորենացին առաջ է քաշում այն մտայնութիւնը, որ Տիրանին սպանել է տուել Արշակը՝ խեղդամահ անելու հրամանարձակելով։ Այնուհետեւ Արշակը, հետամուտ լինելով Տիրիթի եւ Վարդանի նենգ խօսքերին, նորից նախանձով եւ կասկածով է լցւում Գնելի նկատմամբ։ Ի տարբերութիւն Բուզանդի «Հայոց պատմութեան», որում Գնելն արքունիք է հրաւիրւում Վարդանի կողմից, Պատմահայրը այդ դիպուածը ներկայացնում է հետեւեալ կերպ. Արշակը անձամբ թուղթ է յղում Գնելին։ Այս թղթով Արշակը ներկայանում է հաշուենկատ, նախանձոտ, խորամանկ արքայի կերպարում. «Արշակ արքայ Հայոց մեծաց, Գնելոյ իմում որդւոյ խնդալ։ Տեսցես տեղիս քաջերէս ի լերինդ Ծաղկաց զպարկացիր ջրով և պատրաստեսցես. զի եկեալ մեր՝ ըստ արժանեաց թագաւորականաց հանդիպեսցուք ցորսոց» (էջ 342)։ Հետամուտ հրաւէրին՝ Գնելը գնում է արքունիք եւ սպանւում արքայի հրամանով։

Խորենացին նշում է, որ Արշակը չապաշխարեց, այլ անամօթաբար, սպանուածի գանձերն ու ժառանգութիւնն իրենով անելուց յետոյ կնութեան է առնում Գնելի կնոջը՝ Փառանձեմին, որից ունենում է մի որդի եւ անուանում Պապ։

Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ Տիրիթի նկատմամբ Արշակի բարկութեան պատճառը այն չէ, որ Տիրիթն իրեն խաբել էր՝ Գնելին վատաբանելով, այլ այն,

որ Տիրիթին էր մեղադրում հարեւան երկրների հետ յարաբերութիւնների սրման համար: Տիրիթը նոյնպէս սպանւում է Արշակի հրամանով:

Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ պահպանուած են Արշակաւան դաստակերտի հետ կապուած այն դրուագը, որ Արշակաւանը բնակեցւում է գողերով, մարդասպաններով, ուրիշների կանանց փախցնողներով, որոնք ազատւում էին դատ ու դատաստանից: Արշակաւանի կառուցումը վկայում է Արշակ Բ-ի ինքնատիպ քաղաքականութեան մասին: Ե՛ւ Բուզանդը, Ե՛ւ Քերթողահայր Խորենացին քննադատաբար ու զայրոյթով են խօսում Արշակի այս «յանդուգն» ձեռնարկման մասին: Բայց պէտք է ընդունենք, որ Արշակը իրականում ցանկանում էր ունենալ ազատ եւ օտարների բռնութիւններից զերծ անկախ ու ինքնուրոյն մի պետութիւն: Բայց շրջապատն ու հանգամանքները ստիպում են նրան ենթարկուել այս կամ այն տէրութեան կամքին, հետեւաբար նա փորձում է, անջատուելով շրջապատից, իրագործել արտաքին եւ ներքին թշնամուց պաշտպանուած եւ ինքնուրոյն պետութեան գաղափարը՝ կառուցելով Արշակաւանը:

Մինչ հայերը զբաղուած են լինում ներազգային անմիաբանութեամբ, թշնամիները ամէն կողմից սկսում են ճնշել հայերին: Արշակը դիմում է Ներսէսին՝ իրեն եւ նախարարներին յաշտեցնելու նպատակով: Ներսէսը յաշտեցնում է արքային եւ նախարարներին: Որոշ ժամանակ անց Արշակը, չմոռանալով Արշակաւանի հանդէպ նախարարների արածը, նրանցից շատերին խաբէութեամբ հրաւիրում է ընթրիքի եւ սրի է քաշում բոլորին՝ տղամարդկանց, կանանց եւ երեխաներին: Արշակի կերպարի դաժանութիւնը հասնում է առաւելագոյնի, երբ նա հրամայում է հորերի փայտից կախել նախարարների ծառաներին, որոնք իրենց տէրերի ոսկորները թաղել էին: Արշակը իրեն քննադատող եւ հանդիմանող Խադ սարկաւագին նոյնպէս հրամայում է սրի քաշել եւ քարկոծել: Սակայն Խադին իրեն ծանօթ նախարարները փախցնում են իրենց գաւառները:

*Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ Արշակի կերպարի բացասական կողմերի արտայայտութիւններից է նաեւ այն, թէ ինչ բովանդակութեամբ նամակ է յղում այս Արշակունին իր ծանօթ պարսից զօրքի իշխանին, երբ Շապուհը նորանոր հարուածներ է տեղում Հայոց աշխարհի վրայ: Խորենացին Արշակին ներկայացնում է խտացուած բացասական յատկանիշներով. նամակում Արշակը ներկայանում է իբրեւ դաւադիր արքայ, որի ուղեղում միայն սեփական կաշին փրկելու ցանկութիւնն է. «Դու արիւն իմ և հարազատութիւն, ընդէ՞ր այդպիսեաւ վարես զիս ջերմութեամբ. Թէպէտ և ակամայ զգալուստ քո գիտեմ, ոչ կարացեալ սայթաքել զհրամանս Շապհոյ՝ գալ ի վերայ քո ազգականիս: Այլ **արդ՝ թուլացո՛ ինձ ղօղել ուրեք վայրկեան մի ժամանակի, մինչև ոգի առեալ՝ անցանեմ կարացից յերկիրն Յունաց. և դու կալցես զաշխարհս, և բազմաց յինէն հանդիպեսցիս բարութեանց, որպէս ի մտերիմ հարազատէ**» (ընդգծումը մերն է- **Ա. Կ.**): Արշակը այստեղ ներկայանում է իբրեւ փոքրոգի եւ վախկոտ մարդ: Արշակ-Ալանաւոզան յարաբերութիւնը ոչ միայն իսպառ բացակայում է Բուզանդի «Հայոց պատմութեան» մէջ, այլեւ ներկայացւում է բոլորովին ուրիշ լոյսի տակ: Ալանաւոզանը մէկն է բազմաթիւ այն մարդկանցից, որոնք գլխաւորում էին Հայոց աշխարհը աւերելու եկած զօրագնդերը: Արշակը Վասակ Մամիկոնեանի աջակցութեամբ երեսուն տարի արժանի հակահարուած է տալիս թշնամու՝ իրար յաջորդող բանակներին, այդ թւում եւ Ալանաւոզանին. «...Գայր հասանէր ընդ առաջ զօրացն Պարսից. հարկանէր կոտորէր զամենեսեան առ հասարակ. և զմնացեալսն փախստեայս առնէին յերկիրն Պարսից. և*

ինքեանք զգուշանային սահմանացն իւրեանց»[11]։

Խորենացին, չլինելով Արշակի ժամանակակիցը, սուբյեկտիւ է նրա մասին խօսելիս։ Պատմահայրը՝ որպէս քրիստոնէական բարոյականութեամբ առաջնորդուող անհատ, քննադատում է Արշակ Երկրորդի անձնական կեանքը, չի ընդունում նրա քայլերը՝ ընդդէմ արտաքին եւ ներքին թշնամիների։

Պատմահօր գրքում Արշակի՝ Շապուհի կողմից գերեվարուելու պատճառն այն հանգամանքն էր, որ Փառանձեմը հրաժարուել էր անձամբ ներկայանալ պարսից արքային։ Առանց ներկայացնելու մանրամասները Խորենացին մի տողով ընդգծում է, որ Արշակը, լսելով երկրին պատուհասած թշուառութիւնների մասին, վերջ է տալիս իր կեանքին։ Խորենացին էլ Բուզանդի նման Արշակի կերպարի մէջ մտցնում է դրամատիզմի շերտեր՝ համառօտ ներկայացնելով նրա վախճանը։

*Ժամանակագրօրէն յաջորդն Արշակունիներից **Պապն** է։ Առաջին անգամ Պապին ընթերցողը տեսնում է Զիրաւի ճակատամարտում։ Պատմիչն արտայայտում է չեզոք վերաբերմունք նրա անձի նկատմամբ՝ միայն նշելով, որ «Յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապա նուաճեալ» (էջ 372)։ Պապի կերպարն այնքան էլ խտացուած գոյներով ներկայացուած չէ, որքան Փաւստոս Բուզանդի գրքում է։ Խորենացին միայն նշում է, որ Ներսէսը խորհուրդ է տալիս Պապին հօր՝ Արշակի նման անիրաւութիւններ չգործել, գնալ շիտակ ճանապարհով, յարգել նախարարներին, իսկ վերջիններին էլ՝ յարգել եւ ենթարկուել արքային։ Խորենացին ընդգծում է, որ Պապը նախարարներին վերադարձնում է նրանցից խլուած տարածքները, ցուցաբերում էր «անընչասէր բարք և ապրում էր առատաբար»։ Եւ այդ բարքի համար արժանանում է Ներսէս Մեծի հանդիմանութիւններին եւ ցանկանում վնասել նրան, բայց Թէոդոս ինքնակալից երկիւղելով, որոշում է դա անել գաղտնաբար՝ մահացու դեղ խմեցնելով կաթողիկոսին։*

Ի հակադրութիւն Փաւստոս Բուզանդի նկարգրութիւնների՝ Մովսէս Խորենացին արքայի վախճանը նկարագրում է հետեւեալ բովանդակութեամբ. Թէոդոսի հրամանով Պապի դէմ են ուղարկւում Տերենտիոսի զօրքը. վերջինս բռնում է Պապին եւ շղթայակապ ներկայացնում կայսերը։ Եթէ Բուզանդը ներկայացնում է խնջոյքի տեսարանում Պապի սպանութիւնը Տերենտիոսի կողմից, Մովսէս Խորենացին գրում է, որ Պապը գլխատուել է Թէոդոսի կողմից Բիւզանդիայում եօթ տարի կառավարելուց յետոյ. «Եւ պապայ յաղերս աղաչանաց անկեալ, զի մի՛ մեռցի, այլ յանդիման լինել արքայի. և քաջին Տերենտիանոսի գթացեալ՝ շնորհեաց նմա զմաղթանսն։ Եւ երկաթեղէն կապանօք երթեալ առաջի մեծին Թէոդոսի՝ ըստ իւրում անզգամութեանն սակրով վճարի, թագաւորեալ ամս եօթն» (էջ 374)։ Խորենացին փոփոխում է մանրամասները՝ երբեմն առաջ քաշելով իր պատկերացումները կատարուած դէպքերի վերաբերեալ։

Ստացւում է այնպէս, որ հայոց արքաները մեծ մասամբ զոհւում կամ ընկճւում են թշնամիներ արքաների կողմից, ինչն էլ մեր գլխաւոր խնդիրներից է։ Առանց արքայի գոյատեւող տէրութեանը տիրելը կարող է տեւել ակնթարթ, այն էլ այնպիսի երկրում, որի ներսում երկպառակութիւններն ու անմիաբանութիւնները, արքաների դէմ ըմբոստութիւնները, վերջիններիս յաճախ անտրամաբանուած քայլերը դառնում են սովորական եւ մեծ աղէտ բերում պետութեանը։

Կարեւոր մի հանգամանք եւս. Տրդատ Մեծին յաջորդող արքաների մասին Խորենացին խօսում է հակիրճ։ Օգտուելով Բուզանդից՝ Պատմահայրը շրջանցում է Տիրանի,

[11] **Փաւստոս Բուզանդ**, Հայոց պատմութիւն, Երեւան, 1987, էջ 172։

Արշակի, Պապի մասին վիպական հատուածները եւ պարզապէս նշում, որ ամէն յաջորդ Արշակունի նախորդի նման ոչ մի կարեւոր գործ չի արել, ապրել է հաճոյքների համար՝ արժանանալով հոգեւոր դասի ներկայացուցիչների յանդիմանութիւններին։

Արդէն Արտաշիրի Արշակունու՝ հայոց գահից հեռացնելու դրուագում վերստին Խորենացին ընդգծում է հայ ժողովրդի չարաղէտ անմիաբանութիւնը եւ արքաների նկատմամբ կրկնուող դաւադրութիւնը։ Ինչպէս նկատում է Հր. Թամրազեանը, «արդէն նախորդ գլուխներում Խորենացին բնաւ էլ մեղմ չի խօսում Արշակունեաց ցեղի վերջին թագաւորի մասին, դառնութեամբ է յիշում նրա շուայտ ու ցոփ կեանքը, անառակ ցանկութիւնները։ Բայց դրա հետ միասին, նա չի մոռանում աւելի կարեւոր մի բան. չէ՞ որ նա թագաւոր էր, Հայոց թագաւոր։ Նրան չէր կարելի մատնել օտարներին եւ անհաւատներին, քանի որ կար աւելի մեծ բան՝ դարերից ստացած ժառանգութիւնը՝ հայոց գահը, որը նախարարների չար միաբանութեան եւ պարսիկների խարդաւանքների պատճառով, Արտաշիրի գահազրկման հետ միասին, վերանում էր»[12]։ Ահա նախարարների չարախօսութիւններով պարսից Վռամը Արտաշիրից խլում է արքայութիւնը, իսկ Սահակ Պարթեւից՝ կաթողիկոսական աթոռը։

Այսպիսով՝ իր կերտած կերպարներով, ինչպէս նաեւ գեղեցիկ նկարագրութիւններով, իմաստալից ասոյթներով ու զգացմունքային խօսքով, առաքինութեան փառաբանութեամբ Մովսէս Խորենացին նպատակ է ունեցել պաշտպանել միասնական հայրենիքի, հզօր ու լուսաւոր ազգային պետութեան գաղափարը։ Խորենացին բարձր է գնահատում այն իշխաններին եւ «բնիկ» ու եկուոր թագաւորներին, որոնք նպաստել են հայկական պետութեան ամրացմանը եւ հայրենիքի տնտեսական, քաղաքական, մշակութային առաջադիմութեանը։ Պատմահայր Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնը» դարեր շարունակ եղել է դասագիրք, օրինակ եւ չափանիշ միջնադարեան հայ բոլոր պատմագիրների համար։ Այն դուրս է եկել ազգային պատմութեան շրջանակներից եւ դարձել համաշխարհային պատմագիտական մտքի նշանաւոր կոթողներից մէկը։

ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՊՀ Հայ բանասիրութեան մագիստրոս,
ՀԱՊՀ քոլէճի դասախօս

[12] Տե՛ս **Հր. Թամրազեան**, Հայ իննադատութիւն, Գիրք Ա, Երեւան, 1983, էջ 100։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՌՈՒԹԵԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՍՈՍ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ

Մուտք

Մարդու ստեղծագործական մտայղացումը տարաստիճան դրսեւորումներ ունի: Ժամանակի ընթացքում այն նորանում, բազմաճիւղ է դառնում, փոխակապակցւում կամ տարանջատւում է ընթացիկ երեւոյթներից:

Ժամանակակից գրականութեան համատեքստում դիտարկելով ժանրային որոշ հարցեր՝ ակնյայտ է դառնում, որ գրական ստեղծագործութիւնները բարդ է միանշանակ ժանրային տեսանկիւնից դասակարգել: Այսօր ստեղծուող գրականութեան ժանրաձեւային սկզբունքները նորովի են ներկայանում եւ տեսականօրէն խնդիրներ են առաջացնում: Կարծես թէ գրական ժանրերը ենթարկւում են փոփոխութիւնների, ներթափանցումների, եւ ձեւաւորւում է նոր ժանրային համակարգ: Ժանրի կազմաքանդումը դառնում է անխուսափելի: Հեղինակներն իրենց ստեղծագործական տարածութեան միջանկեալ փորձարկումներով (ի դէպ՝ թէ՛ արձակում, թէ՛ պոեզիայում, եւ թէ՛ դրամատուրգիայում) դիմում են ճկուն լեզուարուեստին, նշանագիտական համակարգին, փիլիսոփայութեանը, հոգեւոր ու հասարակական շարժմանը եւ այլն: Փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր Սլաւի-Աւիկ Յարութիւնեանն իրաւացիօրէն է նկատել, որ «գրականութիւնը սեռերի եւ տեսակների կամ ժանրերի բաժանելը մէկ հիմքով չի կատարւում»[1], որը մէկ անգամ եւս փաստում է ժանրային համակարգի փոփոխութեան մասին: Մեր յօդուածի սահմաններում դիտարկուող լռութեան գեղագիտութիւնը՝ որպէս գրական ստեղծագործութեան կոմպոզիցիոն տարր, այսօր էլ հայ եւ օտարերկրացի հեղինակների ձեռագրերում նկատելի գրողական հնարք է: Սակայն լռութեան գեղագիտութիւնը եւս ունի տարաստիճան դրսեւորումներ՝ ըստ ստեղծագործութիւնների տեսակների: Լռութիւնն այս դէպքում չասուած խօսքը չէ, այլ՝ այն խօսքը, որն ասուել է մարդու գիտակցութեանը, ոչ թէ թղթին: Ժամանակակից գրականութեան համատեքստում նորայայտ ստեղծագործական մեթոտները հաշուի առնելով, որը, ի դէպ, թէ՛ էսսէի, թէ՛ պատմուածքի, վիպակի, վէպի եւ դրամատուրգիայի դէպքում դրսեւորւում է, կան բազում օրինակներ, մենք գալիս ենք մի շարք հարցերի պատասխաններ փնտռելու՝ ինչո՞ւ է գրւում այս կամ այն տողը, ինչո՞ւ է ստեղծւում գեղարուեստական կերպարը, ու ինչպէս է հեղինակը ձեւաւորում իր ստեղծած կերպարի պիտանելիութիւնը, եւ ամենակարեւորներից՝ ինչպէ՞ս անել այդ ամէնը, որ ոչ թէ մակերեսօրէն տեքստ ստանանք, այլ՝ բովանդակալից գրական ստեղծագործութիւն:

Արուեստագիտութեան թեկնածու, պրոֆեսոր, կինոգէտ Սուրէն Յասմիկեանն առաջարկել էր տեսաբան ընթերցողներին, որ դրամատիկ մտածողութիւնում ձեւաւորուող տեղաշարժերի մասին նոր ուսումնասիրութիւն գրելու դէպքում վերնագրեն

[1] **Ս. Ա. Յարութիւնեան**, Արուեստի նշանագիտական սահմանները, Երեւան, 2017, էջ 70:

«Խօսքին սպասելիս»[2]: Պարտաւորուած ենք անդրադառնալ խօսքին, դրա էութեանն ու խօսքի ենթադրելի լռութեանը՝ այս անգամ զուգահեռներ տանելով Սոս Սարգսեանի գրական երկերում:

Խօսքին սպասելիս

Ժամանակակից գրականութիւնը, կարելի է ասել, դարձել է սինթետիկ արուեստի ճիւղ, որի պատճառներից առաջինը հասարակական ու քաղաքական, միջմշակութային անցուդարձերն են, արուեստի տարբեր տեսակների ազդեցութիւնը, ինչպէս նաեւ դրանց խաչաձեւումները: Այդ ամէնը հաշուի առնելով՝ նշենք, որ փոխւում, նորանում է նաեւ գրական ստեղծագործութեան կոմպոզիցիոն կառոյցը: Խօսքը զիջում է պատկերին, պատկերը պատմում է խօսքի մասին: Իսկ պատկերը ստեղծւում է բառերով:

Լռութիւնը մարդկային վիճակ է՝ նոյնքան բնական, որքան խօսելը: Ուստի անհրնար է չանդրադառնալ լռութեան երեւոյթին: Լռութեան գոյաբանական էութիւնը կարեւորւում է, քանի որ այն անքակտելիօրէն կապուած է մարդկային երեւոյթի հետ՝ մի կողմից հակադրւում է ձայնին, միւս կողմից՝ համեմատւում նրա հետ: Ուստի լռութիւնն օգտագործւում է առաջին հերթին որպէս նշան հաղորդակցութեան ոլորտում եւ միայն երկրորդ հերթին՝ մարդկային ընկալման բեկման մէջ՝ գեղանկարչութեան, գրականութեան, երաժշտութեան եւ փիլիսոփայութեան մէջ:

Լռութիւնն արուեստի համար հէնց այդ լռութիւնը ցուցադրող կերպարի ընտրութիւնն է:

Արուեստում լռութեան թեմայի գրաւչութիւնը կապուած է, թերեւս, միայնութեան պատճառներն իմանալու յաւերժական ցանկութեան, բառերի անզօրութեան զգացման հետ, որտեղ «խօսում են» յոյզերն ու զգացմունքները: Իսկ արուեստը զգացմունքների գեղագիտական մշակում է իրականացնում: Արուեստի փիլիսոփայութեան տեսանկիւնից վերլուծելով լռութեան գեղագիտութիւնը՝ նկատում ենք, որ լռութիւնն աւելի արտայայտիչ է, քանի որ այն զուրկ է արուեստագէտի կողմից սովորական լեզուով փոխանցուող խօսքից: Այն մարդուն տալիս է ազատութիւն, մինչդեռ, ըստ որոշ լեզուաբանների եւ փիլիսոփաների եզրակացութեան՝ լեզուն հանդէս է գալիս որպէս ճնշելու եւ բռնութեան միջոց:

Այս համատեքստում դիտարկենք Սոս Սարգսեանի հեղինակած՝ կեանքի դրամատիկ վիճակով եւ ինքնատիպ ձեռագրով առանձնացող «Վակոտը» նորավէպի եւ «Ոտնամաններս» պատմուածքի կառուցուածքաբանական հարցերը:

Լռութեան գեղագիտութիւնը Սոս Սարգսեանի ստեղծագործութիւններում երկակի գործառոյթ ունի: Այն միեւնոյն ժամանակ ապահովում է ե՛ւ տեքստի բնական ռիթմիկան, ե՛ւ երկխօսութիւնների կայունութիւնը: Միւս կողմից՝ բառով բացատրուած լռութիւնը նպաստում է գեղարուեստական կերպարի ստեղծմանը:

---

[2] **Ս. Յասմիկեան**, **Հ. Յասմիկեան**, Լռութեան գեղագիտութիւնը 20-րդ դարի դրամատուրգիայում, Երեւան, 2013, էջ 98:

ԲԱՌ + ԼՌՈՒԹԻՒՆ

գեղարվեստական կերպար

ԼՌՈՒԹԻՒՆ

Լռութիւնը հեղինակի ստեղծագործութիւններում զգացմունքային, միեւնոյն ժամանակ հոգեւոր գործառոյթ է կատարում: Հեղինակը խորապէս գիտակցում է լեզուի զօրութիւնն ու լեզուական բոլոր հնարաւորութիւններն օգտագործում որպէս ստեղծագործական տարրերի հիմք:

Իր առինքնող կերպարով, հարուստ կենսափորձի ու անպարփակ մտահորիզոնի յղկած պատկերաւոր գրչով նա կարողացաւ թողնել մի ժամանակահատուածի վաւերագրութիւն՝ «Վարագոյրից այս կողմ», «Ոտնամաններս», «Լակոտը», «Կանչ» գրքերում արտացոլելով իրականութեան լոյսն ու ստուերը:

Ս. Սարգսեանի «Լակոտը» նորավէպը ստալինեան բռնատիրութեան, անհատի ինքնակայացման դժուարին ուղու, բարոյական կերպարի ձեւաւորման ու յաղթանակի մասին է: Երկի առաջին իսկ տողից հեղինակը դինամիկ վիճակի մէջ է պահում ընթերցողին: Կարճ երկխօսութիւնների մէջ կեանքի գեղագիտական կողմերը կենտրոնացնելով՝ նա խտացնում-հիւսում է իրական դրուագային ու ամբողջական պատմութիւն: Նիւթական մակերեւոյթի գոյութեան շերտերը երկում քննւում են հայ մարդու տեսանկիւնից, սակայն հեղինակի վերաբերմունքն ամբողջանում է այն ժամանակ, երբ խնդիրների տիրոյթն անձնականացւում է: Իսկ այդ անձնականացման մշակոյթը մուտք է գործում լռութեան տիրոյթ. մենք ընթերցում ենք պատմութիւն, որի մէջ ապրում է մարդը, բայց չի խոստովանում՝ արդեօ՞ք ապրում է: Այդ լռութեան ապացոյցը երկու ներքին աշխարհների բախումն է՝ հայի տեսակի եւ մարդ-տիեզերքի կամ, այսպէս ասած, արտաքին ու ներքին աշխարհների, որոնք շատ դէպքերում հոգեւոր միջուկով են զուգահեռւում: Երբեմն նաեւ տրագիկոմիկ տարրերն են ներթափանցում «Լակոտի» ստեղծագործական տարածքներ եւ ապահովում արձակի բնականոն անցումները: Մէջբերուող ընդարձակ հատուածներն ի դերեւ են հանում հեղինակի պատումի այդ առանձնայատկութիւնը:

- Խլուրդի նման գետինը փորելով՝ հազարաւոր կիլոմետրեր ծածուկ ճանապարհ եմ կտրել:

- Խեղճ:

- Ու պատկերացնո՞ւմ ես՝ ոչինչ չունեմ ասելու:

- Հա, բա ինչո՞ւ եկայ:

- Էստեղ լուր տարածուեց, որ քեզ գնդակահարել են:

- Չէի՞ր կարող մի գիր, մի երկտող ուղարկել։

- Որ կարողանայի, կ'ուղարկէի։

- Պէտք է ուղարկէիր։

- Վախենում էի ծնողներիս վնասել։

- Ես սպասում էի։

- Կը գրէի՞ր։

- Երեւի։

- Ափսոս։

- Ամենածանր յօդուածներից մէկով էին դատել։

- Ո՞ր։

- Առաջնորդի վրայ մահափորձ կազմակերպելու[3]։

* * *

- Չի եղել մի պահ,- խուլ ձայնով ասաց Գրիգորը,- չի եղել մի էնպիսի վիճակ, որ ես ինձ չյարգեմ։

- Գիտեմ։

- Կամ կորցնեմ մարդկային արժանապատուութիւնս։ Էն դժոխքում...

- Դժոխքում...

- Միշտ մարդ եմ մնացել։

- Ի հարկէ։

- Կարծում էի՝ սիրտս ապառաժ քարից է, բայց՝ չէ։ Հիմա էստեղ տեսնում եմ, որ չէ... Սիրտս շիկացած քուրայի մէջ հալւում, մարում է, կորչում է՝ գրողի բաժին դառնալով...

- Լաւ է՝ մարդ մեռնի։

- Հա...

- Ես էնտեղ զգացի, դրա համար էլ փախայ, եկայ... (էջ 75-76)

Քանի որ մեր ուսումնասիրութեան գլխաւոր կէտերից է երկխօսութիւնների դինամիկ անցումներում լռութեան գեղագիտական կողմերն ընդգծելը, ապա մէջբերուած հատուածներում նկատում ենք նախ հեղինակի ոճական սահմանները՝ «է»-ի կիրառութիւնը «ա»-ի փոխարէն, այդպիսով տեքստին առօրեայ խօսքին բնորոշ բնականութիւն հաղորդելու յաջողուած փորձը՝ չնայած անհարկի մանրամասնութիւններին։ Բայց լռութիւնն ընդգծւում է չասուածի մէջ՝ ինչո՞ւ է մարդ մեռնելուց փախչում կամ ինչո՞ւ չի ցանկանում հեռանալ արժանապատուութիւնից, այն էլ մի միջավայրում եւ ժամանակաշրջանում, երբ համատարած քաոս ու անելանելի իրավիճակ էր՝ բացասական, պարզապէս դժոխային երեւոյթներով։ Նաեւ դրանցով է պայմանաւորուած այն հանգամանքը, որ հեղինակը երբեմն տեքստում գործածում է «լռութիւն» եւ «երկար լռութիւն» արտայայտութիւնները՝ կարծես դրամատուրգիային բնորոշ տարրեր ներմուծելով արձակ տեքստի մէջ եւ այդ ամէն ինչը պատկերացնելով այլ հարթութեան վրայ։

- Քեռի, էս երեխան իմը չի։

- Միշտ համոզուած ենք եղել, որ քոնն է։

---


[3] **Ս. Սարգսեան**, լակոտը, Երեւան, 2010, էջ 75-76։ Այսուհետ սոյն գրքից մէջբերումների էջերը կը նշուեն մէջբերումից յետոյ՝ փակագծերում։

- Էդ ո՞նց։

- Երեխան... Ով որ պահում է, երեխան նրանն է։

(Երկար լռութիւն) *(էջ 101)*

Այս պարագայում տեղի են ունենում իմաստային ձեւերի զարգացումներ.



Ինչպէս տեսնում ենք, տեքստի իմաստային որոնումներին յաջորդում է իմաստային վերելքը, որը կարող է շարունակուել եւ կանգ առնել պարզապէս դադարի տեսքով կամ նոր որակներ ձեւաւորել՝ լռութեան գեղագիտութեանը դիմելով, որն էլ նոր զարգացման հնարաւորութիւն է տալիս եւ տեքստը դարձնում աւելի յագեցած։

Սոս Սարգսեանի երկի կառոյցը փուլային զարգացում ունի։ Հեղինակը, օգտուելով ձայնային-լեզուական միջակայքերի ընձեռած բոլոր հնարաւորութիւններից եւ տեքստում հանդէս գալով պատմողի դիրքերից, ամուր կառոյց է ստեղծում յիշողութեան եւ կեանքի նիւթականացման համատեքստում։ Այսպիսով, կազմաւորուած յիշողութեան կեդրոնը դառնում է մարդ-հերոսը, որի հետ կարծես կեանքը վիճում է։ Բայց հեղինակը չի տանում այն կէտին, որտեղ մարդը մոռանում է ինքն իրեն, այլ ամէն կերպ նիւթականացուած աշխարհից տարանջատում է նախընտրելի արժեհամակարգով կերպարը, բացայայտում բուն նիւթի տիրոյթի բացասական ու դրական առանձնայատկութիւնները։ Սա պատճառ է դառնում, որ մարդկային վիճակը դրուի արդիական լռութեան մէջ, այսպէս ասած՝ ստեղծի ֆոնային վիճակ, որտեղ մարդ-կեանք-աշխարհ յարաբերութիւնը կը ներդաշնակուի միայն այն պարագայում, երբ մարդը ճանաչի ինքն իրեն ու կեանքը։

Հեղինակի տեքստում էական է դառնում երկու բան, որոնք մեծ կարեւորութիւն ունեն մարդկային կենսակերպի բացայայտման առումով։ Առաջինը՝ կեանքը՝ որպէս կենսագրութիւն, կառուցւում է անընդհատ գործող, շատացող ու կուտակուող «ճակատագրական» երեւոյթների հենքի վրայ։ Երկրորդը՝ մարդը՝ իրականութեան լարուածութեան կենտրոն։ Այսինքն՝ ամէն ինչ կատարւում է մարդու շուրջ, բայց ելքեր փընտռողի դերում պահն է՝ երբեմն նիւթականացող ու յաղթող, երբեմն էլ՝ ընկճուող, բայց խղճի խայթ ունեցող եւ մտաւոր լարումների դրդող։

Նորավէպի վերջաբանն ինքնին նոր տեքստային կառոյցի գաղափարի է մղում. «Ինչքա՜ն ճամբաներ կան աշխարհում...» (էջ 108)։ Այսպիսով, ընթերցողը հասնում է


մի կէտի, որտեղից աշխարհ-անսահմանութիւն միջակայքը դառնում է կեանքի վիճակ եւ որոնման քայլերի մղում: Իսկ որոնումները նոր խօսք ու ճանապարհ գտնելու համար են: Դեռ սպասում ենք խօսքին…

Կեանքի այլացման հեռանկարի մէջ է ծաւալւում Սոս Սարգսեանի «Ոտնամաններս» ստեղծագործութիւնը: Մանկութեան յիշողութիւնները Հայրենական մեծ պատերազմի դաժան տարիների, յատկապէս անթերի ոտնամաններ ունենալու եւ ոտքերը չսառչելու երազանքի մասին այս գրական երկը եւս իրականի ու գեղարուեստականի միջժանրային վաւերագրութիւն է: Հեղինակ-հերոսն անընդհատ մտածում է, թէ անձրեւն ի հեճուկս իրեն է գալիս, եւ թւում է, թէ իր ոտքերը միշտ թաց են: Եւ այդպիսով, այս գրական երկում կարծես հեղինակի բոլոր մտքերն ու ապրումները կենտրոնանում են դարձեալ յիշողութեան համապատկերում: Յիշողութեան լուսթիւնը քօղարկւում է պատմութիւններով, որոնք հեղինակի այդ շրջանի կեանքի դրական կողմն են ապահովել:

Երկի կառուցուածքային առանձնայատկութիւնները քննելով՝ գալիս ենք այն եզրակացութեան, որ հեղինակը պահպանում է իր ընտրած լեզուամտածողութեան ամբողջականութիւնն ու ընտրուած արտայայտչաձեւը, որն ինքնանպատակ չէ: Մանկութիւն երեւոյթը հեղինակի համար դառնում է գործիք, որով բացում-փակում է կեանքը բոլոր կողմերից՝ այդպիսով խաղալով նաեւ լուսթիւն երեւոյթի հետ:

«Անսասան, անյաղթահարելի, վիթխարի ուժ է մանկութիւնը. մանկութիւնը յաղթահարել հնարաւոր չէ: Մանկութիւնն ամէն իմաստով եւ հարուստ է, անվերջանալի է, եւ, ինչքան էլ ծանր լինի, շատ քաղցր բան է»[4],- մէջբերուածը կեանքի մայրամուտին վարպետի տուած հարցազրոյցներից է: Անցեալից եկող իրադարձութիւններն ուրուագծւում են պատմողի մանկութեան թեթեւութեան ու ծանրութեան մէջ:

Եթէ սխեմայով պատկերելու լինենք «Ոտնամաններս» ստեղծագործութեան կառուցուածքը, ապա այն կ'ունենայ այս տեսքը.



Աշխարհ-նիւթ-մարդ կապը «Ոտնամաններս» ստեղծագործութեան առաջմղիչ ուժն է: Թէեւ աշխարհն ընկալելու, նիւթի գոյութեան եւ տարբեր խնդրայարոյց իրավիճակներ առաջ են բերում հարցեր, բայց չեն պարտադրում ընթերցողին գտնել դրանց պատասխանները, այլ կարծես ստիպում են հարմարուելու. «Աշխարհը լաբիրինթոս է,- հռչակում է Պետեր Կորնելը,- տեղի, յիշողութեան, ասոցիացիաների լաբիրինթոս»[5]: Եւ

[4] **Ա. Զախարեան**, Սոս Սարգսեանի նոր գիրքը պատմում է ոտնամաններ ունենալու նրա մանկութեան երազանքի մասին, https://armenpress.am/arm/news/699366 (10.07.2023):

[5] **П. Корнель**, Пути к раю, Москва, 1999, с. 89.

յիշողութեան լաբիրինթոսն էլ պատւում է ամբողջ ստեղծագործութեան առանցքով։

«Պատերազմ է, բնական է, որ ամէն ինչի պակասութիւն կայ. ուտելիքի, հագնելիքի... տաքութեան։ Ու ես ոտնաման չունեմ։ Կարգին ոտնաման չունեմ, էդ պատճառով էր, որ անձրեւը ինձ թւում էր, թէ ի հեճուկս ինձ է թափւում, թէ իմ անձնական թշնամին է՝ դաժան ու անխիղճ։ Ուզում է ինձ աշխարհքից վերացնել։ Իրականում, մի ամբողջ պատերազմ ու յետոյ էլ իմ ոտքերը թաց էին։ Ես մեր ժամանակներում ինձ ո՞վ կը հասկանայ, հիմա ո՞վ է բոբիկ որ...

Կռիւս մօրս հետ, որ մի անգամ եմ արել, բայց եւ այնպէս, իմ կողմից ստորութիւն էր՝ նրան երեսով տալը, թէ. «Պապան չասա՞ց, որ էրեխեքի ոտները չոր կը պահես»[6]։ Սոս Սարգսեանն իր արձակի միջավայրի համար անկեղծութիւնն ընտրել է անհրաժեշտ միջոց։ Երբեմն արձակը ծնւում է պոետիկ ակունքներից, որն էլ լուութեան համատեքստում դառնում է լուռ կենսագրապատում՝ գեղարուեստական արտայայտութեամբ։ Ինքնութեան զգայուն փնտռտուքի ընթացքում հեղինակը սիւժէ-մեկնաբանութիւններ է մեկնում՝ տեքստի վերին մակարդակում պահելով ձեւաւորուող աշխարհի ու գոյաբանութեան խնդիրները։ Իսկ այդ խնդիրների մասին խօսում են արարքները։

«Ոտնամաններս» ստեղծագործութեան մէջ լուութեան գեղագիտութիւնը բազմաձեւ է, այն դրսեւորւում է սեփական ինքնութեան տիրոյթում եւ կեանքի փնտռտուքներում։ Ստորեւ մէջբերուող հատուածներն այդօրինակ խտացումներ են.

Փողոցները, մայթերն անբարեկարգ, ցեխ, մեծ ու փոքր ջրափոսեր, թացութի՛ւն, թացութի՛ւն...

Ինձ էդպէս էր թւում, էդպէս եմ յիշում, քանի որ... (էջ 7)

* * *

Հերն էլ անիծած էս տեսակ կեանքի, էս չվերջացող թացութեան, էս չվերջացող ճանապարհի... (էջ 18)

Եզրակացութիւն

Սոս Սարգսեանի գրական երկերում սոցիալական, գաղափարական եւ հոգեւոր աշխարհների միաձուլումը դառնում է անխուսափելի։ Հեղինակն իր գիտակցութեան մէջ երեւոյթների որոշուած եւ տարորոշուած ձեւերի սինթեզի միջոցով կարողացել է դրուագային պատկերներ ստանալ՝ մարդկային կենդանի հաղորդակցութիւնը բերելով տեքստային տիրոյթ։ Այդ դէպքում տեքստը դառնում է իրականութեան օբյեկտիւացում եւ սկսում է ելակէտեր փնտռել։ Ս. Սարգսեանի երկերում ելակէտը երբեմն լուութիւնն է, երբեմն էլ՝ պարզապէս խօսքով մղուող լուութիւնը։ Այդ լուութիւնը որոշակիանում է հեղինակի ցուցաբերած ընդգծուած վերաբերմունքի շնորհիւ։ Գրական երկի տեքստային բաղադրիչները դառնում են շարժուող, փոփոխուող եւ անընդհատ ներազդող գործողութիւնների մէջ են մտնում՝ այդպիսով նաեւ փաստելով գեղարուեստական գործիքների բազմակողմանիութեան մասին։

Մեր դիտարկած գրական երկերի տեքստային տարածութիւնները երկչափ են՝ հեղինակի իմացութեան-աշխարհընկալման (նաեւ փորձառութեան) սահման ու գոյաբանութեան խնդիրներ։ Սա թոյլ է տալիս եզրակացնել, որ կեանքի ընթացքում կատարուող երեւոյթները տեքստային հարթութեան մէջ դիտարկելն աւելի իրատեսական

[6] **Ս. Սարգսեան**, Ոտնամաններս, Երեւան, 2012, էջ 7։

ընթացք կարող է ստանալ գրական երկի կազմալուծման արդիւնքում։

Այսպիսով, եթէ դիտարկենք Սոս Սարգսեանի ստեղծագործութիւնների կառուցւածքային եւ գաղափարական մեկնակէտերը, կարելի է ստանալ հետեւեալ սխեման.

ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Հեղինակի վերաբերմունքը — Գոյութիւն
Հոգեւոր վերաբերմունքը
Սոցիալական վերաբերմունքը
Կրկնակի իրադարձութիւն
Յիշողութիւն
Յիշողութեան լռութիւն
Լռութիւն (կամ դէպի անսահմանութիւն)


Առանձնացուած այս կէտերը նոյնպէս որոշակի են եւ չեն կարող վերջնական հաստատել տեքստում առկայ վերաբերմունքային կողմերը, յիշողութեան եւ լռութեան փոխգործակցութեան ընթացքի արտաքին ու ներքին շերտերը։ Ուստի կարծում ենք, որ մեր դիտարկած ստեղծագործութիւններից բացի, նմանօրինակ կառոյցով գրական երկերը նոյնպէս պէտք է անցնեն տեքստի կազմաքանդման փուլով՝ կիրառուած գեղարւեստական գործիքների եւ դրանց հնարաւորութիւնների բացայայտման նպատակով։

ՎՈՎԱ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՄԱՀԱՒԱՔ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ, ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՒ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ (1919-1922)

Գիրք Ա. Ատենագրութիւններ, 822 էջ, Գիրք Բ. Յաւելուած եւ ցանկեր, 550 էջ: Խմբագրեց եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, Երուսաղէմ 2021:





[Combined/Aggregate Minutes/Records of the National Representative Assembly of Turkey's Armenians, the Conference of the National Assembly, and the All-Armenian Council (1919-1922)

Volume I: Minutes; Volume 2: Appendices and Lists. Edited and annotated by Vatche Ghazarian, Jerusalem, 2021.

This two-volume work is a monumental achievement that has required years of painstaking labor—labor of love-- and love of history.

As the title indicates, the volumes offer, for the first time in the case of most documents,

the minutes and related documents of three major institutions in post-World War I Ottoman Empire/Turkey. The significance of the almost 1500 pages of documents becomes clear when one thinks of the fateful events that followed that most fateful of events, now characterized as the Genocide of the Armenians: The return of Armenian life and politics in the Ottoman Empire/Turkey, the establishment of what came to be known as the First Republic of Armenia, the negotiations preceding and then the signing of the Treaties of Versailles and Sèvres, the collapse of the Armenian republic and the rise of the Turkish one on the ashes of its Armenian subjects.

Volume I include the minutes of 41 meetings covering the March to December 1919 period, 68 for the year 1920, 69 for the year 1921 and 55 for 1922.

Volume II offers 223 appendices (correspondence involving American, European and Armenian leaders such as Col. William N. Haskell, James W. Gerard, Boghos Nubar Pasha and Patriarch Zaven, to name a few; between the Armenian Patriarchate and the Ottoman government; and between Armenian councils in Istanbul and the surviving Armenians in the regions) as well as lists (National assembly members, Index of proper names).

Editor Vatche Ghazaryan's well-researched and detailed introduction places these documents in their proper historical setting. Mr. Ghazarian is careful in describing the journey these documents have taken from Istanbul to Jerusalem via Manchester and Marseille, a most valuable contribution to our ability to assess origin and authenticity.

Ghazarian is careful to observe that for the historian to do his/her proper job s/he must also refer to a plethora of still unpublished documents such as the minutes of the Political Council and the daily newsletter (released by the Information Office, Տեղեկատու Դիւան) of the Istanbul Patriarchate (1912-1922), as well as archives of the Armenian Delegation, Republic of Armenia and memoirs of diplomats.

It is common for states to publish archival material or otherwise make them available to scholars and lay readers alike. This is rarely the case for non-state actors or Diasporas.

Archival material constitutes one of the basic sources for the writing of history and yet it is not so simple or even natural for organizations to preserve their documents in any organized form, house them safely and with the necessary care, and then publish them or see them published.

In the case of Armenian history, we should note that before World War I the Armenian Patriarchate of Constantinople published the proceedings of the National Assembly in print form within a few days of the meetings, just as state legislatures do. Not a state, the Patriarchate was not Diaspora either. Situated outside of historic Armenia, it constituted the nominal and, in some ways, the actual leadership of all Armenians in the Ottoman Empire that included the majority of the Armenian people, the segment living on the historic Western Armenian lands.

To my knowledge, of all the non-state actors in Armenian history, the Armenian Patriarchate of Istanbul and the Dashnaktsutiune are the only institutions that have kept meticulous records AND published them in a systematic manner.

The material in these volumes cover the challenges facing the leadership of what was left of the Armenian people following the Genocide, a multiplicity of complex and painful issues,

including:

The gathering of orphans, women, and Islamized Armenians; organizing relief for the survivors; the re-creation of national, i.e., community life and the future of the National Constitution; the transformation of the prewar "azgayin durk" or national/millet tax with "hayreniki durk" or the fatherland tax; cataloguing of losses, reparations, and return of confiscated properties; the preparation of files against those responsible for the massacres and deportations following Allied promises for justice to be rendered; relations between the various bodies speaking, in one logic or another, in the name of Armenians; relations with other non-Muslim communities such as the Greeks; relations with the Ottoman government, the Allies, with special reference to the British in the capital and the French in control of Cilicia where eventually Armenians had to face the rising Turkish nationalists; and the preparations for and conduct during the Treaties of Versailles and Sevres.

The list can easily be characterized as the material of which the history of the period is made, especially the coming to an end of most organized Armenian existence in Turkey outside of Istanbul. In sum, the material in these two volumes tell the story, almost day by day, of the valiant but ultimately failed attempt of Armenian leaders to recover from what came to be known as the Genocide and reestablish a modicum of organized Armenian life in what would emerge as Turkey.

The collection of documents in these two volumes touch upon themes that are relevant today: The internal dynamics of the relationship of various bodies claiming leadership and the right to determine policy; relations between the political parties and the Church; Armenians in the provinces versus the leaders in Istanbul; the government of the Republic facing the challenge of the National Delegation; the refugees versus state authorities; questions of legitimacy, coordination, and cooperation; and, ultimately, the definition of national interest(s).

The style of these documents, dry and dispassionate, belie the dramatic and traumatic events they cover. Maybe that is the way it should be, if these documents are to serve as bases for analysis and not just hatred.

Finally, the collection in these two volumes is more than material for Armenian history. It also sheds light on the policies of the Great powers and the Ottoman government and the way one category of people, Armenians, perceived them and were affected by them.

The scholarly community should be most grateful to Mr. Vatche Ghazaryan and his colleagues for having produced this treasured collection.

JIRAIR LIBARIDIAN

Cambridge / Yerevan

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵԻ ՀԱՄԵՐԱՇԽ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մուտք

Քրիստոնէական եկեղեցու պատմութեան առաջին հազարամեակի ընթացքին առաջացած դաւանական, ծիսական, կարգապահական խախտումները կարգաւորւում էին Տիեզերական ժողովների միջոցով: Այսպէս Աղեքսանդրեան-Անտիոքեան աստուածաբանական դպրոցների հակամարտութիւնները աւարտւում են Սուրբ Երրորդութեան դաւանանքի բանաձեւմամբ՝ առաջին երեք Տիեզերական ժողովների որոշումների ընդունմամբ (325 թ., 381 թ., 431 թ.)[1]: Առաջին մեծ բաժանումը Ընդհանրական եկեղեցում տեղի է ունենում Քաղկեդոնի ժողովի (451 թ.) պատճառով, որը հետեւանքն էր Հռոմի Լեւոն Պապի եւ Աղեքսանդրիայի Կիւրեղ Եպիսկոպոսի միջեւ՝ «Մի Քրիստոս յերկուս բնութիւն» միակեցութեան բանաձեւումի շուրջ: Ժողովի բանաձեւած նոր «Հաւատոյ Սահմանումը» եւ Լեւոն Պապի տոմարի պարտադրանքը բաժանում է եկեղեցին երկու ընտանիքների՝ Քաղկեդոնական եւ ոչ Քաղկեդոնական (Միաբնակ եւ Երկաբնակ) խմբակցութիւնների: Երկրորդ բաժանումը տեղի ունեցաւ 1054 թ. Յոյն եւ Լատին եկեղեցիների միջեւ՝ Սուրբ Հոգու բխման (Ֆիլիոքուէ) եւ Հռոմի Պապի գերագահութեան հաւակնութեան շուրջ[2]:

Եկեղեցու առաջին շրջանը յատկանշական է եօթ Տիեզերական ժողովներով, որոնցից Հայ եկեղեցին ընդունում է երեքը, իսկ Բիւզանդական եկեղեցին՝ եօթը: 1054 թ. յետոյ Կաթոլիկ եկեղեցին շարունակել է հաւաքներ գումարել՝ դրանք համարելով Տիեզերական (վերջինը Վատիկանի 2-րդ ժողովն էր, որ տեղի ունեցաւ 1962-1965 թթ.):

Այսօր Տիեզերական ժողովներ գումարելու շրջանն անցել է պատմութեան գիրկը եւ դրանց տեղը բռնել է Միջեկեղեցական երկխօսութեան նախաձեռնութիւնը՝ Համաշխարհային եկեղեցիների խորհրդի հովանաւորութեան ներքոյ: Այսպէս՝ Արեւելեան ոչ Քաղկեդոնական եւ Հռոմի կաթոլիկների աստուածաբանների միջեւ 1971-1988 թթ.

---

[1] Նիկիայի 2-րդ ժողովը դատապարտում է պատկերամարտիկներին եւ վերականգնում պատկերապաշտներին: Հայ եկեղեցու մէջ պատկերամարտութեան կողմնակիցներ էին Պաւլիկեան եւ Թոնդրակեան աղանդաւորները: Եկեղեցական գրականութեան մէջ, օտար վարդապետների շարքում պատկերամարտութեան դէմ գրած առաջին ընդդիմախօսութիւնը Վրթանէս Քերթողի «Յաղագս պատկերամարտից» թուղթն է: Տես՝ **Արիստակէս Եպս. Սեդրակեան**, «Հայաստանեայց եկեղեցու պատկերայարգութիւնը», «Պատմական տեսութիւն», Ս. Պետերպուրկ, 1904; **Երուանդ Մելքոնեան**, «Վրթանէս Քերթողը եւ պատկերամարտութիւնը», Ս. էջմիածին Յունիս-Յուլիս (1970), էջ 86-97: Բնագրի ֆրանսերէն թարգմանութեան համար Տե՛ս **S. Der Nersessian,** "Une Apologie des images du Septieme siecle" Etudes Byzantines et Armeniennes = Byzantine and Armenian Studies, Louvain, 1973, pp. 379-403,

[2] **Dvornik**, **Francis**, The Ecumenical Councils, New York, 1961; S. L. Greenslade, Schism in the Early Church. What light can the past throw?, SCM London, 1964; Steven Runciman, The Eastern schism. A study of the papacy and the Eastern churches during the XI and XII centuries, Oxford, 1956; **Ներսէս Քհնյ. Ներսէսեան**, «Տիեզերական ճանաչում ստացած եկեղեցական ժողովների հեղինակութեան եւ անսխալականութեան աղբիւրները» եւ «Եպիսկոպոսաց ժողովը Հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ. Եպիսկոպոսաց ժողովի օրակարգի պատրաստման յանձնախումբ: Ջեկուցումներ, Ս. էջմիածին (2003), էջ 38-56 եւ 78-86:

կայացել են հինգ ոչ պաշտօնական երկխօսութիւններ եւ չորս խորհրդակցութիւններ Ուղղափառ եկեղեցիների հետ (1964 թ., 1967 թ., 1970 թ., 1971 թ.)։

Սոյն յօդուածում անդրադարձել ենք Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիների միջեւ երկխօսութիւնների մէջ քննարկուող խոչընդոտներին եւ սպասուելիք լուծումներին։

Ինչո՞ւ պէտք է տարբեր եկեղեցական հարանմանութիւններն արժէքաւորեն միջեկեղեցական երկխօսութիւնները։ Ուղղափառ եկեղեցիներին պատկանող շատ համայնքներ երկխօսութիւնը համարում են ժամանակի վատնում։ Ինչպէ՞ս պէտք է պայքարել այս մտածելակերպի դէմ։

Առաջին եւ ամենաբացայայտ պատասխանն այն է, որ եկեղեցիները հետապնդում են երկխօսութիւնը որպէս հնազանդութիւն Քրիստոսի արտայայտած կամքին։ Վերջին Խորհրդաւոր Ընթրիքին ի՞նչ հրահանգ տուեց Նա իր աշակերտներին։ Շատ վճռական եւ զգացական պահ էր այդ, որովհետեւ գիտէր, որ իր ձերբակալումը եւ մահը հեռու չէ, ուստի որոշում է խօսել միութեան մասին. «Չի ամենեքեան մի իցեն» (Յովհ. 17։21)[3]։ Աղօթում է նրանց հետ, քանի որ, եթէ եկեղեցիներն իրենց նուիրում են երկխօսութեանը, դա անում են, որովհետեւ ցանկութիւն ունեն ձայնակցելու եւ իրականացնելու Տիրոջ պատուէրը։

Այս կարող ենք հիմնաւորել մի երկրորդ պատճառով, որն արտացոլանքն է մարդ էակի նկարագրի ամենահիմնական յատկանիշներից մէկի։ Մարդ կարիքն ունի երկխօսութեան, քանի մարդ էակն իր իսկ բնութեամբ երկխօս արարած է։ Նա ունի բնածին ընդունակութիւն՝ ուրախութեան եւ ողբերգութեան։ Մարդը միայն տրամաբանութիւն ունեցող արարած չէ՝ շնորհուած ինքնաճանաչութեամբ, այլ էակ, որն ունի ընդունակութիւն մտածելու եւ արտայայտուելու՝ ամենաարտայայտիչ եղանակով։ Մարդ էակը նաեւ ընդմիշտ կապի մէջ է իր արարչի հետ՝ աղօթքով։ Մարդը նաեւ «քաղաքական» արարած է՝ ստեղծուած Աստուծոյ կողմից ապրելու համար՝ կազմակերպուած համայնքներում կամ քաղաքներում։ Այլ խօսքով, մարդը երկխօս եւ ընկերական արարած է, որն իրեն լիուլի ճշմարտապէս արժեւորում է, երբ երկխօսութեան մէջ է մտնում իր նմանների հետ։

«Անապատի Հայրերի ասացուածքներ»-ի գրքում այս պատմութիւնն է պատմում. Եգիպտոսի Հայր Մակարիոսը, մի օր քայլելիս անապատի մէջ երկխօսութեան մէջ է բռնւում ճանապարհի եզրին նետուած մի մեռած մարդու գանկի հետ։ Քնքշօրէն գանկին դիպչելով հարցնում է. «Ո՞վ ես դու»։ Գանկը պատասխանում է. «Ես կուռքերի քահանայապետ էի, որոնց պաշտում էին այստեղ բնակուող հեթանոսները»։ Գանկը շարունակում է իր խօսքը՝ յայտնելով, որ ինքն այժմ գտնւում է դժոխքի տանջանքների մէջ, եւ հայցում է Մակարիոսին, որ իր համար աղօթի, որպէսզի մի քիչ հանգիստ վայելի։ «Ի՞նչ է այդ հանգիստը, որին ձգտում ես»,- հարցնում է Մակարիոսը. «Ի՞նչն է քեզ տանջում, ի՞նչն է բնոյթը քո տառապանքի»։ «Այս է բնոյթը մեր տառապանքի»,- պատասխանում է գանկը. «մենք մէկս միւսին կապուած ենք կռնակ առ կռնակ եւ չենք կարողանում իրար տեսնել երես առ երես, աղօթիր մեզ համար, որ ամէն մէկս կարողանանք տեսնել մէկս միւսի երեսը կիսաչափ։ Եւ սա կը լինի մեր հանգիստը»[4]։

---

[3] **Arch. Tiran Nersoyan**, "This is the day", Five Vienna Consultations, 1971, 1973, 1976, 1978, 1988, PRO- Oriente, Vienna, 1993, pp. 277-79. Տիրան Արք. Ներսոյեանի խառզը՝ խօսուած Ս. Աստիսանոսի Տաճարում, Սեպտեմբեր 17, 1978 թ.՝ Կարդինալ Կօնիգի մատուցած եպիսկոպոսական պատարագի ընթացքին։

[4] Macarius/Simeon of Egypt (4th-5th cent.) Saying of the Desert Fathers, pg 65.

Այս է էութիւնը դժոխքի. չկարողանալ իրար տեսնել երես առ երես, չկարողանալ յարաբերուել եւ չկարողանալ իրար սիրել: Սարթրի [Sartre] ասածով՝ "L'enfer, c'est les autres", այսինքն՝ «դժոխքը օտար մարդկանց համար է», բայց նա սխալւում էր: Տ. Ս. Էլիոթ [T. S. Eliot] աւելի մօտ է ճշմարտութեանը, երբ իր "The Cocktail Party" բանաստեղծութեան մէջ գրում է.

«Ի՞նչ է դժոխքը: Դժոխքը ինքը մարդն է.
Դժոխքը միայնակ է. միւս կերպարները
Պարզ լուսարձակումներ են. չկայ փախչելու որեւէ բան
Եւ ոչնչից փախչելու: Մէկը մշտապէս միայնակ է»:

Վաղ շրջանի քրիստոնեաները այս վիճակը որակում էին այս ասացուածքով՝ "Unus Christianus, nullus Christianus", այսինքն՝ «մէկ քրիստոնեան քրիստոնեայ չէ»: Այս ասացուածքը կարելի է ընդարձակել եւ ասել. "Una Persona, nulla persona", որը թարգմանւում է այսպէս. եթէ մէկը մեկուսացած է ուրիշներից եւ մերժում է յարաբերուել եւ երկխօսել, իրական մարդ չէ ըստ պատկերի եւ ըստ նմանութեան Սուրբ Երրորդութեան[5]: Այս կէտը շատ յստակօրէն ընդգծւում է յունարէնում «անձ» բառի մէջ՝ «պրոսօպօն» (prosopon), որը բառացիօրէն նշանակում է «դէմք» կամ «երես, կերպարանք»: «Ես իրական անձ չեմ, եթէ չունեմ կարողութիւն՝ նայելու դիմացինի աչքերին եւ թոյլ տալու, որ նա էլ նայի իմ աչքերին»:

Այս հայեցակէտը շատ համոզիչ կերպով բանաձեւում է Յովհաննէս Մակմարրին՝ [John Macmurray] իր տուած Քիֆֆորդի անուամբ դասախօսութիւնների երկրորդ շարքում: Իր՝ «Անձին» նուիրուած դասախօսութեան մէջ գրում է. «անձը միայն գոյութիւն ունի, երբ սերտ դինամիկ յարաբերութեան մէջ է ուրիշի հետ»[6] եւ աւելացնում՝ հետեւաբար «ես» կարիքը ունեմ «մէկ ուրիշի», որպէսզի ինքս ինձ գտնեմ իմ մէջ»[7]: Որքան այս վերաբերում է անհատին, ոչ պակաս չափով վերաբերում է նաեւ կրօնական համայնքներին: Որպէս բաժանեալ եկեղեցիների անդամներ, մենք պէտք է ասենք մէկս միւսին՝ «ես քո կարիքը ունեմ, որպէսզի լինեմ ամբողջական: Դրանից այն կողմ, որպէս անհատներ մեծ կրօնական համայնքների՝ Հրեայ, Հնդիկ, բուդիստ, քրիստոնեայ եւ մահմետական, պէտք է նոյնը ակնկալեն միմեանցից:

Հետեւաբար այս է պատճառը, որ մենք պէտք է երկխօսութեան բռնուենք միմեանց հետ, թէկուզ մեր անհատական համայնքի անհատների հետ կամ միջեկեղեցական հարթակի վրայ: Երկխօսութիւնն այս պարագային պերճանք չէ եւ ոչ էլ այլընտրանք բարեմասնութեան: Հետեւաբար, այն երկխօսութիւնները, որ տեղի են ունենում տարբեր եկեղեցական համայնքների միջեւ՝ Ուղղափառ եւ Կաթոլիկ, Կաթոլիկ եւ Անգլիական, ինչպէս եւ Արեւելեան հինգ եկեղեցիների, չպէտք է սահմանափակուի աստուածաբանների եւ մասնագէտների շրջանակներում, այլ ամէն մէկիս որպէս քրիստոնեայ եւ մարդ էակ: Այս համատեքստում է, որ մենք պէտք է դիտենք բոլոր երկխօսութիւնները քրիստոնեայ եկեղեցիների ոլորտում:

Որո՞նք են աստուածաբանների առաջնակարգ խնդիրները

Վերջին անգամ, երբ Կաթոլիկները, Ուղղափառները եւ Արեւելեան եկեղեցիների

[5] **W. Kallistros**, 'The human person as an icon of the Trinity', Sobornost/Eastern Churches Review 8:2 (1986), pp. 6-23.

[6] **J. Macmurray**, Persons in relation, London, 1961, pg. 17 [Gifford Lectures].

[7] **J. Macmurray**, նշ. աշխ., pg. 69.

ներկայացուցիչները միաւեղ հաւաքուեցին ամենաբարձր մակարդակով՝ Ֆերրարա-Ֆլօրենս (1438-39) ժողովն էր, որը կաթոլիկ եկեղեցին համարեց Տիեզերական ժողով։ Ժողովականները մօտ տաս ամիս (որոշ ընդմիջումներով) վիճեցին զանազան դաւանական, եկեղեցաբանական, ծիսական հարցերի շուրջ.

Ա. Սուրբ Հոգու բխման եւ Ֆիլիօքուէ (Filioque) տերմինի յաւելումը Հաւատոյ Հանգանակին[8]։

Բ. Չորս ամիս (դարձեալ որոշ ընդմիջումներով) յատկացրին Դժոխքի եւ Սրբերի միջնորդութեան հարցին։

Գ. Պապի գերագահութեան խնդրին յատկացրին տաս օր՝ դա էլ ժողովի աւարտին[9]։

Տաս ամիս Սուրբ Հոգու բխման խնդրին եւ տաս օր Պապի նախաթոռութեան յաւակնութեանը։ Այս էր ժողովի առաջնակարգ խնդիրների հերթականութիւնը 15-րդ դարում։ Այսօր՝ 21-րդ դարում, խնդիրների առաջնահերթութիւնները միանգամայն տարբեր են[10]։

Որոշ Ուղղափառ աստուածաբաններ, թէեւ ոչ բոլորը, շարունակում են Ֆիլօքուէ [Filioque] տերմինի յաւելումը, եւ տարբեր մօտեցումները Սուրբ Հոգու առաջացման՝ մնում է Արեւմուտքում եւ Արեւելքում միութեան շատ լուրջ արգելք[11]. եւ կան աւելի փոքր թուով կաթոլիկ աստուածաբաններ, որ համամիտ են նրանց կեցուածքին։ Իսկ ներկայում թէ՛ Ուղղափառ, եւ թէ՛ Հռոմէական կաթոլիկները համամիտ են, որ երկու յարանուանութիւնների միջեւ, ոչ թէ Սուրբ Հոգու աստուածաբանութիւնն է առաջնակարգ, այլ Հռոմի եպիսկոպոսի դերի եւ առաքելութեան հասկացողութիւնը տիեզերական համատեքստում։ Վերջին երկու տասնամեակներում թէ՛ կաթոլիկները, եւ թէ՛ Ուղղափառները հակուած են ընդգրկելու մի եկեղեցաբանութիւն, որ կոչւում է կօինօնիա (koinonia) *կամ յաշտ հաղորդակցութիւն։ Բայց այս հասկացողութիւնը միատարր չի ընկալւում կամ գործադրւում։*

Լաետենտուր Կաէլի (Laetentur Caeli) *միութեան հաղորդագրութեան մէջ, որ Ֆլորենսիայի ժողովը 6 Յուլիս, 1439 թ.[12] հռչակեց, հինգ կարեւոր կէտեր է առանձնացնում՝ Սուրբ Հոգու բխման հարցը, Ֆիլօքուէ տերմինի յաւելումը հանգանակին, անխմոր հա-*

---

[8] Հայոց եկեղեցին չի ընդունում «եւ որդւոյ» յաւելումը։ Մխիթարեանները Հայ եկեղեցու դաւանաբանը անխոհեմաբար աղաւաղելով՝ Գրիգոր Նարեկացուն եւ Ներսէս Շնորհալուն պապական դարձնելու համար նրանց երկերի հրատարակութիւնների մէջ «ի Հօրէ Բղխեալ»-ը, դարձնում են «բղխեալ ի Հօրէ եւ յՈրդւոյ»։ Հայ եկեղեցին իր ժամագրքում ունի այս բանաձեւումը. «Հաւատամք զՍուրբ Հոգին Աստուած՝ աներ, անժամանակ. ոչ ծնեալ, այլ բղխեալ ի Հօրէ, էակից Հօր եւ փառակից Որդւոյ», որը նման է Գրիգոր Նարեկացու եւ Ներսէս Շնորհալու ուսուցմանը։ Տե՛ս **Նորայր Եպս. Ծովական**, «Մատենախօսական։ Հայոց եկեղեցին», «**Սիոն**» Յունուար (1963), էջ 14-19։

[9] **Ե. Աւ. Քհնյ Ներսէսեան**, «Տիեզերական ճանաչում ստացած եկեղեցական ժողովների հեղինակութեան եւ անսխալականութեան աղբիւրները», Եպիսկոպոսաց ժողովի օրակարգի պատրաստման յանձնախումբ։ Ջեկուցումներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2003, էջ 38-56 (Արտատպուած՝ «Սիոն», 1992 թ. թիւ 1-2-3, Յուն.-Փետր.-Մարտ, համարից)։

[10] Կաթոլիկ-Ուղղափառ բանակցութիւնների մասին աւելի մանրամասն տեղեկութեան համար Տե՛ս **W. Kallistros**, " The Orthodox Church and the Primacy of the Pope: Are we any closer to a solution?, in Album Accademico **2008-2009**, Pontificio Istituto Orientale, pp.**44-59**; **J. Chryssavagis** (ed.), Primacy in the Church: The office of Primate and authority of Councils, vol. **2**, St. Vladimir's Seminary Press, **2016**, pp. **861-88**, **J. Meyendorff & others**, The Primacy of Peter in the Orthodox Church, The Faith Press, **1963**.

[11] **Ե. Աւ. Քհնյ Ներսէսեան**, «Սուրբ Հոգու ըմբռնումը (Filioque)», «**Հասկ**», Սեպտեմբեր (2013), էջ 942-956։

[12] Ժողովի բնագիրը տե՛ս Tanner Norman P (ed.), Decrees of the Ecumenical Councils, George Town University Press, **1990**, vol. I, pp. **523-538** (Յունարէն, լատիներէն եւ անգլերէն), հմմտ. Joseph Gill, The Council of Florence, Cambridge University Press, **1959**, pp. **412-415** (Բնագիրը լատիներէն)։

ցի կիրառութիւնը Պատարագի մէջ, հանգուցեալների վիճակը եւ Պապի առաջնութեան պահանջքը[13]: Բայց երբ 1980 թ. Պատմոսի Սուրբ Յովհաննէս աստուածաբանի անուան վանքում (յետագային Ռոդեսում) բացուեց ներկայ Միացեալ Համաշխարհային Կոմիսիան, յարմար տեսնուեց բանակցութիւնների օրակարգը սկսել ոչ թէ Ֆլորենսի ժողովի վերոյիշեալ հինգ հարցադրումներով, այլ կենտրոնանալ այլ թեմաների շուրջ: Եթէ Կոմիսիան սկսեր բանակցութիւններն այն հարցերով, որ արծածուել էին Ֆլորենսի ժողովում, վտանգ կար, որ երկու կողմերը պարզապէս կրկնելու էին այն հանրածանօթ վիճաբանութիւնները, որոնք առհասարակ արծածուել էին անցեալի Կաթոլիկ-Ուղղափառ բանավէճերի ընթացքում: Նոր, թարմ մօտեցում էր հարկաւոր:

Այս ստրատեգիան աւելի արդիւնաւէտ եղաւ երկխօսութեան առաջին տարիների ընթացքում: Արագ հերթականութեամբ Կոմիսիան որդեգրեց երեք իրար շաղկապուած հաղորդագրութիւններ՝ Միւնիխում (Munich, 1982), *Բարիում* (Bari, 1987) *եւ Վալամոյում* (Valamo, 1988)[14], *որոնց մէջ երեք հիմնական թեմաներ քննարկուեցին՝ ա. կարեւորութիւնը «Կօինօնիա» (հաղորդակցութեան), բ. առաջնակարգ նշանակութիւնը տեղական եկեղեցու եւ գ. եկեղեցու եւ պատարագի փողկապակցութիւնը:*

Համայնավարութեան փլուզումից յետոյ, Բիւզանդական Կաթոլիկ (Միարարներ (Uniate) *եկեղեցիները աշխուժացան՝ սկսած 1988 թ.՝ Ուկրաինայում, Ռումինիայում, Սլովակիայում, որոնք ճնշուել էին սկսած 1940-ական թթ., որը եւ սկսեց լարուածութիւն առաջացնել Միացեալ Կոմիսիայի գործունէութեան ոլորտում: 1993 թ. Բալամանդի հանդիպման ընթացքում Կոմիսիան բանաձեւեց մի չորրորդ հաղորդագրութիւն՝ «Միարարութեան», որը լուսաբանում է անցեալի եւ ներկայի որոնումը լիուլի հաղորդակցութեան»[15], եւ որը ենթարկւում է քննադատութեան բազմաթիւ Բիւզանդացի Կաթոլիկների կողմից եւ ընդհանրապէս չունի այն նոյն հեղինակութիւնը, որն ունեն առաջին երեք հաղորդագրութիւնները (Միւնիխ, Բարի եւ Վալամօ):*

Առաջին ութ տարիների շինիչ բանակցութիւնների առաջխաղացումը (1980-1988 թթ. ժամանակահատուածում) Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիների միջեւ սկսեց դանդաղել եւ Բալամանդի անյաջող հանդիպումից յետոյ (1993 թ.) խափանման վտանգ էր սպառնում ողջ բանակցութիւններին: Բարեբախտաբար այդ չպատահեց: Որոշ ժամանակի լռութիւնից յետոյ, Միացեալ Կոմիսիան հրապարակեց մի յաւելեալ համաձայնագիր, որը որդեգրուեց Ռաւեննայում 2007 թ.: Վերոյիշեալ թղթի վերնագիրը՝ «Եկեղեցաբանական եւ Կանոնական հետեւանքները եկեղեցու ծիսակատարողական նկարագրի: եկեղեցական Հաղորդութիւն, յաշտարար միակեցութիւն եւ հեղինակութիւն»[16]: *Այստեղ, առա-*

---

[13] Այս հինգ խնդիրները գրեթէ նոյն հերթականութեամբ ինքնարկում է Միխայէլ Վրդ. Ջամչեանն իր «Վահան Հաւատոյ ուղղափառութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ», Տէր Յովհաննէս Խաչկեան Խաչակիր Աւ. Քհնյ. (Հրատարակիչ), Կալկաթայ, 1873: Հեղինակն իր «**Յաղագս ազատ գոլոյն եկեղեցւոյն Հայոց ի հերետիկոսութենէ եւ ի հերձուածողութենէ**»-ն սկսում է այս յայտարարութեամբ. «Թէ ուղղափառութիւն հայոց ոչ արատաւորի ի բանից վայրախօսաց և չարախօսաց: Ջոր ինչ միանգամ խօսեցաք ի սկզբանէ մատենիս մինչև ցարդ, իբր և զլոյս պայծառացեալ ցուցանեն զողջամտութիւն և զուղղափառութիւն և բարեկարգութիւն եկեղեցւոյ հայաստանեայց, ոչ եթէ մերովս ասութեամբ, այլ իրացն իսկութեամբ, ինքզի մեք սովին մատենագրութեամբ … այլ միայն ի հանդէս ատենի իբրեւ ի վերայ աշտանակի եդաք առ ի փարատել զտուրեաս խաւարեցուցիչս» (էջ 103):

[14] Երեք հաղորդագրութիւնները տե՛ս **Jeffrey Gros**, **Harding Meyer**, եւ **William G. Rusch** (eds.) Growth in Agreement II: Reports and Agreed Statement of Ecumenical Conversations on a World Level 1982-1998, Geneva: WCC, MI-Cambridge, 2000, pp. 652-668, 671-679.

[15] Gros Meyer եւ Rusch, նշ. աշխ., pp. 680-685

[16] Բնագիրը տե՛ս **J. Chryssavgis** (ed.). նշ. աշխ., vol. l: Historical and Theological Perspectives, St. Vladimir's Seminary Press,2016, pp.405-420

ջին անգամ լինելով, ուղղակի արծարծում է Պապի գերագահութեան հարցը, թէեւ, ինչպէս կը տեսնենք, Ռավեննայի հաղորդագրութիւնը ոչ մի ակնարկութիւն չի պարունակում տուեալ հարցի շուրջ։

Նոիրապետական երեք աստիճանների հեղինակութիւնը

Ռավեննայի հաղորդագրութեան հիմնահարցերից մէկը վերաբերում էր երեք աստիճանի դասակարգութեան հեղինակութեան դրսեւորմանը եկեղեցում՝ տեղական, շրջանային եւ տիեզերական։ Տեղական հարթակի վրայ գործում է եպիսկոպոսի հեղինակութիւնը իր թեմից ներս։ Եպիսկոպոսի հեղինակութիւնը շրջանի վրայ ճանանչւում էր, երբ նա հանդէս էր գալիս որպէս առաջնորդ մի խումբ թեմերի, եւ յիշեալ թեմերի առաջնորդները նրան համարում են «առաջինը իրենց մէջ»՝ ըստ Առաքելական կանոնի 34 յօդուածի։ Գործնականում, աշխարհասփիւռ Ուղղափառ եկեղեցիների պարագայում, այս շրջանային իշխանութիւնը գործադրում են տարբեր պատրիարքները եւ անկախ (Autocephalous) *եկեղեցիների պետերը։ Երրորդ՝ կան առաջնորդ կամ առաջնորդներ (Հռոմի Պապը, պատրիարքները եւ պաթողիկոսները), որոնց հեղինակութիւնը տարածւում է ողջ եկեղեցու վրայ։*

Հռոմի Պապն ունի հեղինակութիւն երեք դասակարգութեան մակարդակների վրայ միաժամանակ.

1. Նա եպիսկոպոսն է տեղական թեմի՝ Հռոմ քաղաքի,

2. Պատրիարքն է ողջ Արեւմտեան կամ Լատին եկեղեցու,

3. Նա իրեն համարում է ընդհանուր եկեղեցու միակ գլուխը եւ պետը Աստուծոյ քահանայապետութեան ողջ եկեղեցու վրայ՝ թէ՛ արեւմուտքում, եւ թէ՛ Արեւելքում[17]։

Ուղղափառ եկեղեցիները, մասնաւորապէս նրանք, որ պատկանում են Կ. Պոլսոյ պատրիարքութեանը, երկու եկեղեցիների բաժանումից յետոյ, Կ. Պոլսոյ պատրիարքը նոյնպէս ստանում է տիեզերական կարգապետութիւն՝ Ուղղափառ եկեղեցիների ընտանիքից ներս։ Բայց Ուղղափառ եկեղեցիների պարագային տարակարծութիւն կայ անդամների միջեւ, թէ ինչպէս սահմանել տիեզերական պատրիարքի հեղինակութեան եւ իրաւասութեան սահմանները։ Ռուսաց եկեղեցին չմերժելով Կ. Պոլսոյ պատրիարքի աւագութիւնը եւ առաջնութիւնը Ուղղափառ եկեղեցիների ընտանիքի մէջ, այնու ամենայնիւ սահմանափակում է նրա իրաւունքները։ Մինչ Ռուսաց եկեղեցին ընդունում է տիեզերական պատրիարքի առաջնութիւնը Ուղղափառ եկեղեցիների շրջանակում, բայց չի ընդունում, որ պատրիարքի իրաւասութիւնները հաւասարւում են այն իրաւասութեանը, որ Հռոմի Պապը վայելում էր եկեղեցիների բաժանումից առաջ։

Ռավեննայում եկեղեցական հեղինակութեան դասակարգումը երեք աստիճանների, ունեցաւ յետին շատ հետեւանքներ տարբեր ուղղութիւններով թէ՛ Հռոմի Կաթոլիկ, եւ թէ՛ Ուղղափառ եկեղեցիների համար։ Թէ՛ Կաթոլիկները, եւ թէ՛ Ուղղափառները իրարից տարբեր միջոցներով փորձել են եռայարկ սխեման իջեցնել երկայարկի։ Հռոմի Կաթոլիկների համար դժուար չէր ընդունել առաջին եւ վերջին կարգերը (պապ եւ

[17] Զամչեան Միխայէլ իր «Յաղագս նախագահութեան Առաքելական Աթոռոյն» գլխում գրում է. «Վստահութեամբ ասեմ թէ հակառակորդ մեր փոխանակ գովելոյ զհայս իբրև առաւել հան զամենայն արեւելեան ազգս հաւատարիմ առաքելական աթոռոն, յանիրաւի պարսաւեն իբրև մերժող նորին կամ չընդունող նախագահութեան յաջորդին Պետրոսի» (էջ. 78)։ Հմմտ. եղիշէ Վարդապետ Տէրտէրեան, «Ակամայ անդրադարձութիւմ Ս. Գրիգոր Պետրոս ժԵ Աղաջանեան կաղդինալին իր Հովուական Թուղթերուն առիթով», Ս. էջմիածին, Ապրիլ-Յունիս (1951), էջ 25-37։

եպիսկոպոսութիւն), իսկ միջանկեալ շրջանային առաջնութեան կարգն անտեսել։ Այս է պարագան. օրինակի համար 1995 թ. "Ut Unum Sint" կոնդակում՝ հրապարակուած Յովհաննէս Պօղոս II Պապի կողմից, անտեսուած է շրջանային առաջնութեան կարգը։ Նման դիրքորոշում որդեգրուեց 2006 թ. «Annuario Pontificio» տարեգիրքը խմբագրողների կողմից, ովքեր արհամարեցին Պապի համար աւանդական դարձած «Պատրիարք Արեւմուտքի» տիտղոսի կիրառումը։ Խօսք չկայ, որ Ուղղափառները խորապէս վիրաւորուում են այս կամաւոր բացթողման համար, քանի որ այն մեկուսացնում է Հռոմի եպիսկոպոսին ողջ ստեղծուած, իրարից տարբեր, աստիճանի առաջնութիւններից։ Հետեւաբար՝ շատ խրախուսիչ է, որ Ռաւեննայի ժողովին մասնակցող կաթոլիկ ներկայացուցիչները միաձայն հաստատեցին վերոյիշեալ որոշումը՝ բացայայտօրէն ընդունելով շրջանային առաջնորդների կարեւոր դերը եկեղեցում։

Սակայն, եթէ Ռաւեննայի երեքծալ աստիճանաւորումը կարեւոր հետեւանքներ ունի Հռոմեական կաթոլիկ եկեղեցու եկեղեցաբանութեան մշակման ասպարէզում, ապա ունի ոչ աւելի պակաս հետեւանքներ Ուղղափառ եկեղեցիների համար։ Այնտեղ, որտեղ կաթոլիկութիւնը անտեսում է երկրորդ աստիճանը, այսինքն շրջանի առաջնութիւնը, շատ ուղղափառներ բացարձակապէս հերքում, արհամարհում են երրորդ աստիճանը՝ այս պարագային ընդհանրական առաջնութիւնը։ Անկարելի չէ գտնել Ուղղափառ եկեղեցու մի պատուիրակ, որ Պապին չհամարի ամենաաւագը եւ առաջինը պատրիարքների շարքում, բայց հակառակ են նրան վերագրելու որեւէ առանձնայատուկ իրաւական կարգավիճակ՝ (status) որպէս գլուխ ողջ Ընդհանրական եկեղեցու։ Նոյն տրամաբանութեամբ նրանք մերժում են նաեւ նրան վերապահել միակ խարիզմայի կամ անսխալականութեան շնորհը, որը չի վերապահւում միւս եպիսկոպոսներին։ Տիեզերական Պատրիարք Դեմէտրիոս Առաջինն իր 973 թ. ճառի մէջ յայտարարում է. «Ոչ մի եպիսկոպոս Քրիստոնէութեան մէջ արժանի չէ այդ նախապատուութեանը՝ Քրիստոսի ՄԷԿ, Սուրբ, Ընդհանրական եւ Առաքելական եկեղեցու մէջ մենք բոլորս հաւասար եւ պարզ եպիսկոպոսներ ենք՝ ենթակայ մէկ Գերագոյն Քահանայապետի եւ գլուխ եկեղեցւոյ, որն է Յիսուս Քրիստոս»[18]։

Ինչպիսի՞ ընդհանրական նախակարգութիւն է պէտք

Բացայայտ է, որ Ռաւեննայի ժողովին մասնակցողները համամիտ չէին Դեմետրիոս Պատրիարքի տեսակէտին, որովհետեւ նրանք բացայայտօրէն հաստատեցին, որ «գերագահութեան կարիքն ընդհանրական մակարդակի վրայ ընդունուած եղելութիւն է երկու կողմերի՝ արեւելք եւ արեւմուտք»[19], բայց մինչ առաջնութեան այս սկզբունքը, տիեզերական մակարդակի վրայ ընդունելի էր թէ՛ կաթոլիկների, եւ թէ՛ ուղղափառների կողմից. չկար դեռեւս լիուլի համաձայնութիւն, թէ ինչպէ՞ս կարելի է այն գործադրել։ Ինչպէս Ռաւեննայի համաձայնագիրը շեշտում է, երկու կողմերն էլ համաձայն են, որ եկեղեցին «անբաժան էր», մշակուել էր «Կանոնական տախիս», որ վճռորոշել է մեծ աթոռների հերթականութիւնը արեւելքում եւ արեւմուտքում, եւ որ այս տախիսն ընդունուել էր Հռոմի եւ Կ. Պոլսոյ կողմից։ Ռաւեննայի յուշագրութիւնը շարունակում է.

«Նրանք նաեւ իրենց համաձայնութիւնը տուին, որ Հռոմը, որպէս այն եկեղեցին, որ

[18] Դեմետրիոս Ա. Պատրիարքի նամակը կարդինալ Վիլլեբրանդին 30 Նոյեմբեր, 1973 թ. **E. J. Stormon** (ed.), Ecumenical Documents III. Towards the Healing of Schism: The Sees of Rome and Constantinople. Public statements and correspondence between the Holy See and the Ecumenical Patriarchate **1958-1984**, New York, **1987**, pp. **311**, **260**.

[19] The Ravenna Document, **43** Chryssavgis, Primacy in the church, նշ. աշխ., vol. I, pg. **419**.

«նախագահում է սիրով»՝ համաձայն Սուրբ Իգնատիոս Անտիոքացու (Նամակ ուղղուած Հռոմայեցիներին), զբաղեցնում է առաջին տեղն այդ տարիսի մէջ եւ որ Հռոմի եպիսկոպոսը համարւում էր առաջինը (protos) Պատրիարքների շարքում: Նրանք սակայն չեն ընդում այն մեկնութիւնը, որն անցեալում տրուել էր այն պատմական վկայութեանը, որ Հռոմի եպիսկոպոսն ունի արտօնեալ բացառիկ շնորհը «առաջնութեան» (protos). մի հասկացողութիւն, որ տարբեր էր ընկալւում [Քրիստոնէութեան] առաջին հազարամեակում[20]:

Հետեւաբար, Ռաւեննայի ժողովի պատգամաւորներն ընդունում են, որ միայն սկիզբն են դրել մի որոշումի, ճշմարտապէս սկիզբը մի շատ նշանակալից քայլի, որ Պապի տիեզերական առաջնութեան խնդրի վերջնական լուծմանը պիտի վերադառնան աւելի ուշ:

«Մնում է յստակեցնել Հռոմի եպիսկոպոսի դերը եկեղեցիների փոխյարաբերութիւնների մէջ աւելի հանգամանօրէն: Ի՞նչ է լինելու «առաջին աթոռի» դերը եկեղեցաբանութեան մէջ, որի դիտակէտն է «յաշտ բարեկեցութիւն»-ը: Ինչպէ՞ս պէտք է ընկալուեն Վատիկանի Առաջին եւ Երկրորդ ժողովների որոշումները տիեզերական գերագահութեան հարցում եւ իրագործելի դարձնեն առաջին հազարամեակի եկեղեցաբանութեան աւանդոյթների լուսարձակի տակ»[21]:

Ռաւեննայի ժողովի դիրքորոշումը «հիմնական հարցերի» վերաբերեալ գոհացուցիչ լուծում չգտաւ: Ի՞նչ է պատահել վերջին տարիներին: Պէտք է խոստովանել, որ շատ քիչ առաջադիմութիւն է արձանագրուել. արդար կը լինէր ասել՝ աւելի յետընթաց, քան առաջընթաց: Սրա հիմնական պատճառը Ռուսաց եկեղեցու երկու պատգամաւորների բացակայութիւնն էր Ռաւեննայի՝ 2007 թ. ժողովից: Ժողովի բացման օրը (9 Հոկտեմբեր), Ռուսաց եկեղեցու երկու պատգամաւորները՝ Մետրոպոլիտեն Հիլարիոնի գլխաւորութեամբ (այժմ Ալֆէեւ) հրաժարուեցին իրենց մասնակցութիւնը բերելուց: Ժողովից հեռանալու պատճառը ոչ մի կապ չունէր Ռուս-Կաթոլիկ եկեղեցիների յարաբերութեան ոլորտի հետ, այլ հրաժարուեցին խորհրդակցութիւններից, որովհետեւ նրանք հակառակ էին Էստոնիայի եկեղեցու ներկայացուցչի մասնակցութեանն Ուղղափառ եկեղեցիների պատգամաւորների շարքում՝ որպէս ինքնավար եկեղեցի ճանաչուած Կ. Պոլսոյ, բայց ոչ Մոսկուայի Պատրիարքութեան կողմից: Այնու ամենայնիւ, Մոսկուայի պարուիրակութեան բացակայութիւնը նշանակում է, որ Ռուսաց եկեղեցին չստորագրեց Ռաւեննայի ժողովի փաստաթղթերը եւ դրա հետեւանքով չի կարելի «Ընդունուած Համաձայնագիրը» նկատել վաւերական՝ համահաւասար առաջին երեք՝ Միւնիխ, Բարի, Վալամօ եւ նոյնիսկ մերժուած Բալամանդի համաձայնագիրներին:

Ոչ վաղ անցեալում Ռուսաց եկեղեցու դիրքն աւելի պարզաբանուել է «Արտաքին յարաբերութիւնների» մի տեղեկատուութեամբ՝ վերնագրուած «Մոսկուայի Պատրիարքութեան դիրքը Տիեզերական եկեղեցու առաջնութեան խնդրի շուրջ»՝ հրապարակուած 26 Դեկտեմբեր, 2013 թ.[22]: Այս փաստաթղթի մէջ ասւում է, թէ Ռուսաց եկեղեցին «հակառակ» է, այլ խօսքով մերժում է, Ռաւեննայի համաձայնագրի այն հատուածը, որը Հռոմի նախաթոռութեան որոշումը դնում է Տիեզերական եկեղեցու մակարդակին[23]: Հռոմի առաջնութիւնը (կամ Կ. Պոլսոյ) Տիեզերական մակարդակի վրայ դնելը պէտք է համարել պարզ «նախապատուութիւն եւ յարգանք»: «Նախապատուութիւն եւ յարգանք»-ը

[20] The Ravenna Document, 41.

[21] The Ravanna Documents, 41, Chryssavgis, նշ. աշխ., vol. I, pg. 419.

[22] John Chryssavgis, Primacy in the Church, vol. I, pp. 421-430.

[23] John Chryssavgis, Primacy in the Church, vol. I, pg. 421.

չի պարտաւորեցուում Տիեզերական կամ տեղական ժողովների կանոններում, այլ խօսքով, դրա ստոյգ իրաւասութեան սահմանները չեն բնութագրուած Ուղղափառ եկեղեցու կանոնական աւանդոյթի մէջ։ Կանոնները Հռոմի եպիսկոպոսին չեն վերապահում իշխանութիւն Ընդհանրական եկեղեցու վրայ։ Եկեղեցիների ղեկավարութեան պարտականութիւնը յանձնուած է առաջնորդներին եւ ընդունելի չի կամայականօրէն փոխանցել «տիեզերական մակարդակի»[24]։ Ոչ մի եկեղեցական կանոն չի լիազօրում Հռոմի եպիսկոպոսին «իրաւասութիւն ընդարձակելու իր հսկողութիւնը այլ եկեղեցիների սահմանների վրայ»։ Յարգանքի առաջնութիւնը՝ տրուած Հռոմի եպիսկոպոսներին, չի սահմանուել Աստուծոյ կողմից, այլ լոկ մարդկային մեծարանքի կեցուածք է՝ հանդէպ Հռոմի աթոռին, ի յարգանս Պետրոս եւ Պօղոս հիմնադիր առաքեալներին եւ երբեք տիեզերական մասշտաբով չի եղել իշխանութեան կենտրոն։ Պատուոյ առաջնակարգութիւնը չի նշանակում առաջնութիւն «իշխանութեան»[25]։ Պապի առաջնութեան պատիւը տալիս են նաեւ արեւելքում, բայց առանց այդ հանգամանքից որեւէ քաղաքական-իրաւական եզրակացութիւն հանելու, նա միայն առաջինն է հաւասարների մէջ (primus inter pares)[26]։ Ռուսաց եկեղեցու դիրքը հաստատող փաստաթղթի ընթերցումից յետոյ պարզւում է, որ Ռուսաց եկեղեցու դիրքորոշումը վերաբերում է ոչ միայն Հռոմի Պապի առաջնութեանը, այլ նաեւ Կ. Պոլսոյ Տիեզերական Պատրիարքին։

Ամփոփենք։ Ակնյայտ է, որ Ռուսաց եկեղեցին մերժում է այն իրավիճակը, որ Հռոմի Կաթոլիկ եկեղեցին ունի տիեզերական իշխանութիւն ողջ Քրիստոնեայ եկեղեցիների վրայ, որը ներառում է թէ՛ Արեւելքը, եւ թէ՛ Արեւմուրքը։ Այս կէտում, առանց վարանումի, ամէն Ուղղափառ եկեղեցի, եւ մասնաւորապէս Տիեզերական Պատրիարքը, համաձայնութեան մէջ են, թէեւ վերջիններս իրենց ընդդիմութիւնն արտայայտում էին աւելի մեղմ, կշռադատուած լեզուով։ Ռաւեննայի 2007 թ. հրապարակած հաղորդագրութիւնից յետոյ, Միացեալ՝ Ուղղափառ-Հռոմէական-Կաթոլիկ յանձնախումբը, զանազան հանդիպումներ է անցկացրել։ Փորձեր են կատարուել ստոյգ բանաձեւում մշակել Հռոմի Պապի տիեզերական առաջնակարգութեան վերաբերեալ, սակայն ոչ մէկն առ այսօր չեն վաւերացուել երկկողմանի բանակցութիւններում։

Յանձնաժողովի Վերջին հանդիպումը տեղի ունեցաւ 15-22 Սեպտեմբեր, 2016 թուականին։

Յուսալի եւ դրական աղօթքով եզրափակելու այս հետադարձ հայեացքը, պատշաճ կը լինի մէջբերել Ռուս նշանաւոր աստուածաբան հայր Սէրգիոս Բուլգակովի աղօթքը՝ գրուած եկեղեցիների միութեան համար.

«Ով Յիսուս Քրիստոս, մեր Տէրը եւ Փրկիչը,

Դու մեզ խօստացար լինել մեզ հետ ընդմիշտ.

Դու բոլոր Քրիստոնեաներին պատուիրեցիր մօտենան իրար եւ հաղորդուեն Քո Մարմնով եւ Արեամբ,

Բայց մեր մեղքերը մեզ բաժանում են

Եւ մենք չունենք քաջութիւնը միասնաբար մասնակցելու Քո Սուրբ Պատարագին

---

[24] Chryssavgis John, Primacy in the Church, vol. I, pp. 421-430.

[25] Chryssavgis John, Primacy in the Church, vol. I, pp. 428-439.

[26] Հայաստանեայց եկեղեցու Կաթողիկոսների եւ Հռոմի Պապերի փոխերը վերականգնել երկու եկեղեցիների համագործակցութիւնը։ Տե՛ս **Dr. Nerses Nersessian**, "The See of Holy Etchmiadzin and the Vatican: A chronicle of the contacts between Armenian Catholicoi and Popes ", Sion, 1-3 & 4-7 (2021), pp. 78-87 and 183-195

Մենք խոստովանում ենք մեր մեղքը եւ աղօթում Քեզ.
Ներիր եւ օգնիր մեզ՝ ծառայենք յաշտութեան Քո գծած ուղիին ըստ Քո կամքին
Բոցավառուի Մեր սրտերը Քո Սուրբ Հոգու կրակով։
Տուր մեզ հոգին իմաստութեան եւ հաւատքի,
Համարձակութեան եւ համբերութեան,
խոնարհութեան եւ հաստատամտութեան,
Սիրոյ եւ թողութեան.
Միջնորդութեամբ եւ աղօթիւք ամէնօրհնեալ Մայր Սուրբ Աստուածածնի[27]։

ԴՈԿՏ. ՆԵՐՍԷՍ ԱՒ. ՔՀՆՅ ՆԵՐՍԷՍԵԱՆ

[27] **Zernov Nicholas**, Russian religious Renaissance of the Twentieth century, London, 1963.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՇԱՀԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ՝ ԻՄԱՍՏԱՍԷՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ

«Աշխարհի մէջ շատ քիչ իրական մտածողներ կան,
եւ անոնցմէ մէկը Շահանն է»[1]։
Յ. Օշական

Սոյն յօդուածը նուիրուած է անցած դարի հայ փիլիսոփայ Շահան Պէրպէրեանին, ով 20-րդ դարում յայտնի արեւմտահայ այն մտաւորականներից էր, ովքեր Օսմանեան Թուրքիայում պայքարում էին հայկական ինքնութեան, հայ մտքի պահպանման ու զարգացման, հայեցի կրթութեան ապահովման համար։ Գիտակցական ողջ կեանքը Պէրպէրեանը նուիրաբերեց գիտամանկավարժական գործունէութեանը՝ իր ուրոյն տեղը զբաղեցնելով հայ փիլիսոփայական մտքի, գեղագիտութեան, երաժշտագիտութեան, պարագիտութեան, մանկավարժութեան ոլորտներում։

Սոյն յօդուածով փորձել ենք նաեւ մեր յարգանքի տուրքը մատուցել հայ անուանի մտաւորական Շահան Պէրպէրեանի պայծառ յիշատակին՝ այնպիսի մտաւորականի, ով իր հոգում կրում էր թէ՛ համաշխարհային, թէ՛ ազգային, հոգեւոր եւ մշակութային հզօր արժէքներ, որոնք մեծ սիրով փոխանցել է յետագայ սերունդներին՝ իր մնայուն հետքը թողնելով հայ մտքի մեծ երախտաւորների կողքին։

Հայ փիլիսոփայ, հոգեբան, գեղագէտ, երաժիշտ, պարագէտ եւ մանկավարժ Շահան Պէրպէրեանը ծնուել է 1891 թուականի Յունուարի 1-ին, Կ. Պոլսի Սկիւտար թաղամասում՝ անուանի ուսուցչապետ, հանրածանօթ Ռեթէոս Պէրպէրեանի (1848-1907) եւ Զարուհի Փանոսեանի ընտանիքում[2], զաւակներից չորրորդն էր։ Տանը՝ հայրական խընամքի ներքոյ, հայեցի դաստիարակութիւն եւ կրթութիւն ստանալուց յետոյ, Շահանը յետագայում ուսումը շարունակում է Եւրոպայում։

1908 թուականին Շահանը մեկնում է Փարիզ եւ մասնակցում Coolege de France-*ի եւ Սորբոնի համալսարանի իմաստասիրութեան եւ արուեստների դասընթացներին, որոնց ընթացքում ունկնդրում է իմաստասիրական մտքի այնպիսի ականաւոր դէմքերի, ինչպիսիք են 19-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփայ, նոբելեան մրցանակակիր Անրի Բերգսոնը, սոցիոլոգ Էմիլ Տիւրքէյմը, հոգեբան Ժանէն, Տիւման եւ ուրիշներ։ Նրանցից Շահան Պէրպէրեանի վրայ նկատելի է լինում յատկապէս Բերգսոնի փիլիսոփայութեան ազդեցութիւնը[3]։ Ինչպէս վկայում է Շահանի քոյր Մանիկ Պէրպէրեանը, Եւրոպայում ուսանելու ժամանակ հոգեբանութեան դասախօս Տիւման, պատուհանից տեսնելով բակում գրքերով լի մեծ պայուսակն ուսին քայլող Շահանին՝ իր մօտ գտնուող մարդկանց ասել է՝* «Voila un qui est quelqu'un» - *«Ահաւասիկ մէկը՝ որ մէկն է»[4]։ Շատ*

---

[1] Տե՛ս **Ա. Տէր Խաչատուրեան**, Շահան Ռ. Պէրպէրեան (1891-1956), կենսագրութիւն եւ մատենագիտութիւն, Պէյրութ, 1969, էջ 5։

[2] Տե՛ս **Ա. Տէր Խաչատուրեան**, նշ. աշխ., էջ 12։

[3] **Ս. Զաքարեան**, Փիլիսոփայութեան Պատմութիւն, Երեւան, 2005, էջ 357։

[4] **Մ. Պէրպէրեան**, Փիլիսոփայ եղբայրս՝ Շահան Պէրպէրեան, «Յորելեանական ճաշկերոյթ եւ հանդիսութիւն

չանցած՝ «Ուշադրութեան» մասին Պէրպէրեանի գրած աշխատանքը Տիման այնքան է հաւանում, որ դասախօսութիւնների ժամանակ ունկնդիրներին ներկայացնում է նրա կատարած մի շարք հարցարդրումները: Իսկ ուսումնական տարեշրջանի վերջում, երբ նա պաշտպանում է «Ուշադրութեան ճիգը եւ մկանային ճիգը վաղահաս խելագարների մօտ» վերտառութեամբ աւարտաճառը, արժանանում է փիլիսոփայական գիտութիւնների վկայականի: Շարունակելով գիտական պրպտումները հոգեբանութեան ասպարէզում՝ Շահանը տօքտորական ատենախօսութեան նիւթ է ընտրում «Ախտաբանական մեթոտը հոգեբանութեան մէջ» թեման, որը, ցաւօք, հնարաւորութիւն չի ունենում աւարտելու, քանի որ 1911 թուականի աշնանը ստիպված է լինում վերադառնալ Կ. Պոլիս: Իսկ մինչ վերադարձը մասնակցում է Բոլոնիայում կայացած իմաստասիրական չորրորդ միջազգային համաժողովին, ինչին առանձին յօդուած է նուիրել՝ կատարելով հետաքրքրական դիտողութիւններ[5]:

Թէեւ կարճ է տեւել Պէրպէրեանի ուսումը Եւրոպայում, սակայն այն մեծ դեր է խաղացել նրա իմաստասիրական, գեղագիտական, հոգեբանական գաղափարների ձեւաւորման մէջ: Այստեղ են ձեւաւորուել նաեւ նրա երաժշտագիտական գաղափարները, քանի որ նա բախտ է ունեցել հանդիպելու Կոմիտասին, եւ մեծ երգահանից կրած ազդեցութիւնն էլ աւելի է ոգեւորել ու քաջալերել նրան:

Հարկ է նշել, որ Պէրպէրեանն իր մանկավարժական գործունէութիւնը սկսել է մինչ Եւրոպա ուսանելու մեկնելը՝ դեռեւս 17 տարեկանը չբոլորած: Հօր՝ Ռեթէոս Պէրպէրեանի մահից մի քանի շաբաթ անց, ստանձնել է «Պէրպէրեան» վարժարանի[6] իմաստասիրութեան դասախօսի պաշտօնը:

Վերադառնալով Եւրոպայից՝ Պէրպէրեանը 1911-1914 թուականներին շարունակում է իր մանկավարժական գործունէութիւնը եւ միաժամանակ վարում «Պէրպէրեան» վարժարանի տնօրէնի պաշտօնը: Նրա կեանքին ու գործունէութեանը նուիրուած աշխատութիւններում եւ յօդուածներում յատակ նկատում ենք, որ նա ոչ միայն չի բաւարարուել մասնագիտական շրջանակի խնդիրներով, այլեւ այդ տարիներին աշխատակցել է պոլսահայ մամուլին՝ յատկապես «Ոստան» պարբերաթերթին:

1914-1918 թուականներին, Մեծ եղեռնի հալածանքներից փախչելով՝ Շահանն ապաստան է գտնում Կ. Պոլսի տներից մէկում[7]: Նրա կեանքի ու գործունէութեան այդ տարիների վերաբերեալ, բացի իր գրած ինքնակենսագրականում փախստական պայմանների ծանր հոգեվիճակի նկարագրութեան հատուածից՝ զգալի տեղեկութիւններ չկան:

Վալտեր Պէրպէրեան.- Հայ միջնադարեան համալսարանները – 360։

ՅՈՔԵԼԵԱՆ

Տաթեւիկ Մերջանեան.- Հալաբարի «Լռակեաց տղան» (Նար-Դոսի ծննդեան 155-ամեակի առթիւ) – 232։

Մարիամ Օհանեան.- Յովսէփ Օրբելու հնագիտական արշաւը դէպի Աղթամար կղզի (Յովսէփ Օրբելու ծննդեան 135-ամեակի առթիւ) – 241։

Revd. Dr. Zaven Arzoumanian, PhD.- Yerevan State University Founding Rectors Prof. Hagop Manandian, Catholicos Karekin I Hvsepian (1921-2021) – 250։

Ներսեհ Աբեղայ Ալոյեան.- Զօն Ծերենցի խնկելի յիշատակին (Ծննդեան 200-ամեակի առթիւ) – 418։

ՊԱՏՄԱԿԱՆ

Արփենիկ Ղազարոսեան.- Հիւսիս-Կովկասեան ժողովուրդների մասին վկայութիւնները «Աշխարհացոյցում» – 74։

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Սեւան Տէյիրմենճեան.- Այնթապէն Երուսաղէմ, սկիզբ Նորայր Արք. Պօղարեանի – 84։

Դոկտ. Զաւէն Աւ. Քհնյ Արզումանեան.- 15-րդ դարու Եւրոպայի վերածնունդը Բաղէշի Ամրդոլի համալսարանը եւ չորս մեծերը – 88։

- The Armenian Patriarchate of Jerusalem During the first world war – 92։

- Theft and return of 23 parchment manuscripts of Jerusalem (1966-1967) – 376։

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

Տօքթ. Յ. Թօփճեան.- Տելիչեան խնդիրը, Ս. Գիրքը եւ Բաբելոն, Աշխարհի ստեղծագործութիւնը (Մաս է.-ժԲ.) – 94, 253, 437։

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ներսեհ Աբղ. Ալոյեան, Կորիւն Վրդ. Բաղդասարեան.- Պաշտօնականք. Յունուար-Մարտ – 112, Ապրիլ-Յուլիս – 318, Օգոստոս-Դեկտեմբեր – 455։

Տրց. Յովհաննէս Խուտավերտեան.- Եկեղեցականք-Բեմականք. Յունուար-Մարտ – 108, Ապրիլ-Յուլիս – 312, Օգոստոս-Դեկտեմբեր – 450։

Սեւան Արք. Ղարիպեան.- Բարեպաշտական նուէրներ 2022 տարւոյ – 458։

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

Լուսինէ Թումանեան, Հայկ Յակոբեան.- Աղթամարի մի վկայագրի վերծանման շուրջ – 100։

Մհեր Քումունց, Սաթենիկ Խուրշուդեան.- Հին Գորիսը, տեղագրութեան կեղծ թէզը եւ նորայայտ արձանագրութիւնները – 379։

Սաթենիկ Խուրշուդեան.- Տեղ գիւղի պատմական յուշարձանները եւ նորայայտ վիմագրերը – 393։

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ

Լուսինէ Սահակեան.- Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանում պահուող «Տեղեկատու Դիւանի» հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանութեան արխիւի պատմութիւնը եւ «Բովանդակութիւնը» – 259։

Շուշան Խաչատրեան, Հայկ Յակոբեան, Գառնիկ Յարութիւնեան.- Դիտարկումներ նորագոյն շրջանում Հայոց նահատակութեան եւ նահատակութեան վայրի շուրջ – 285։

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

(Վերջ)

ՅՈԲԵԼԵԱՆ

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՈՇՈՐ ԿԱՋՄԱԿԵՐՊԻՉԸ

(Պրոֆեսոր Գառնիկ Ասատրեանի 70-ամեակի առթիւ)

2023 թուականին լրացաւ իրանագէտ, արեւելագէտ, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Սերոբի Ասատրեանի 70-ամեակը: Անուրանալի է նրա ներդրումը ոչ միայն հայաստանեան, այլեւ համաշխարհային իրանագիտութեան, արեւելագիտութեան գիտական անդաստաններում, եզակի է նրա դերը գիտութեան կազմակերպման ու հայաստանեան արեւելագիտական դպրոցի հիմնադրման, հանրահռչակման ու կայացման գործում:

Գառնիկ Ասատրեանը ծնուել է 1953 թուականի Մարտի 7-ին Իրանի մայրաքաղաք Թեհրանում, հայրենասէր եւ եկեղեցասէր Սերոբ Ասատրեանի ընտանիքում: 1968 թուականին անուանի գիտնականի ընտանիքը հայրենադարձւում է Խորհրդային Հայաստան՝ սովորելով ե՛ւ իրանահայ, ե՛ւ խորհրդահայ դպրոցներում: 1976 թ. աւարտել է ԵՊՀ Արեւելագիտութեան ֆակուլտետի քրդագիտութեան բաժինը: Պրոֆ. Ասատրեանն իր ասպիրանտական ուսումնառութիւնն 1976-1980 թթ. անց է կացրել ԽՍՀՄ ԳԱ Արեւելագիտութեան ինստիտուտի Լենինգրադի կամ Սանկտ-Պետերպուրկի մշակոյթի եւ իրանական հին լեզուների բաժանմունքում՝ ուսումնասիրելով “Отглагольные имена в манихейском среднеперсидском и парфянском” (“Verbal Nouns in Manichean Middle Persian and Parthian”) *թեման եւ ստանալով բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճան, ապա 1980-1983 թթ. սովորել է նոյն համալսարանի դոկտորատուրայում: 1991 թուականին Պրոֆ. Ասատրեանը Խորհրդային Հայաստանի Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն* “Армянский и новоиранские языки: классический новоперсидский, курдский, заза” (“Armenian and New Iranian Languages: Classical New Persian, Kurdish, Zaza”) *թեմայով՝ դառնալով բանասիրական գիտութիւնների դոկտոր: 1985-1999 թթ. դասաւանդել է Կոպենհագենի համալսարանում:*

Պրոֆ. Գառնիկ Ասատրեանը գլխաւորել է Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի Արեւելեան բանասիրութեան (1983-1989 թթ.), ապա իր կողմից հիմնադրուած Իրանագիտութեան (1989-1996 թթ.) բաժինները: 1997-2015 թթ. եղել է Երեւանի պետական համալսարանի Իրանագիտութեան ամպիոնի վարիչը, իսկ 1996 թ. նա հիմնադրել եւ ղեկավարել է Երեւանում գործող Իրանագիտութեան կովկասեան կենտրոնը, իսկ 2014 թ.-ից ցայժմ Կովկաս-Կասպեան տարածաշրջանի բնիկ ժողովուրդների ինստիտուտը:

Խոշոր արեւելագէտը հանդիսանում է մի շարք գիտական պարբերական հրատարակութիւնների եւ ակադեմիական սերիաների, այդ թւում՝ ամենաշատ ռեյտինգաւորուող եւ գրախօսուող միջազգային ամսագրերից մէկի՝ Iran and the Caucasus-*ի* (Brill: Leiden-Boston; *ինդեքսաւորւում է* SCOPUS, Web of Science *եւ մի շարք այլ գիտաչափական համակարգերում, հիմնադրուել է 1996 թ.,* https://brill.com/view/journals/ic/

ic-overview.xml), *ինչպէս նաեւ* Труды Института Востоковедения РАУ: Caucaso-Caspica *(ինդեքսաւորւում է* РИНЦ-*ում) ամենամեայ հանդէսի,* Yerevan Oriental Series, Труды конкурса им. академика Н. Я. Марра *միջազգային շարքերի, որը ներառում է նաեւ ոչ մեծ մենագրական աշխատանքներ եւ Մեծ Իսլամական Հանրագիտարանի հետ համատեղ պարբերէն հրատարակուող* Штудии по кавказско-каспийской словесности (Pažūhešhā-ye zabānī-adabī-ye Qafqāz va Kāspiyan*) եռամսեայ պարբերականի հիմնադիր եւ գլխաւոր խմբագիրն է: Պրոֆեսոր Աատրեանը հանդիսանում է նաեւ հայկական արեւելագիտական Իրան-Նամէ ամսագրի հիմնադիր եւ գլխաւոր խմբագիրն է, այն հրատարակուել է հայերէն լեզուով սկսած 1993 թ.-ից:*

Անուանի գիտնականը հանդիսանում է տասնեակ մենագրութիւնների, ինչպէս նաեւ հարիւրաւոր յօդուածների հեղինակ եւ համահեղինակ: Կարեւոր ենք համարում թուարկել, ըստ մեզ, կարեւորագոյնները: Այսպէս նրա գրչին են պատկանում արեւելագիտութեան մէջ մտայնութիւններ փոխող, նոր գիտական հորիզոններ յատակեցնող այնպիսի մենագրութիւնների հրատարակութիւն, ինչպիսիք են Notes on the Language and Ethnography of the Zoroastrians of Yazd. Copenhagen: "Danish Royal Academy of Sciences and Letters", **2002**, **115** pp. (with F. Vahman), Этническая композиция Ирана: от "Арийского простора" до Азербайджанского мифа. Ереван, **2012**, The Religion of the Peacock Angel: The Spirit World of the Yezidis. Acumen Publishing House, London, **2013**. (with V. Arakelova), Происхождение курдов (на персидском языке). Тегеран, Farhaneh Publisher, **2016**, Comparative Dictionary of Central Iranian Dialects, Tehran: "Safīr-e Ardahal", **2011**. *եւ այլն: Յօդուածներից յատկապէս կարեւոր են յիշատակութեան համար հետեւեալները՝* "Talish and the Talishis (The State of Research)", Iran and the Caucasus, vol. **9.1**, **2005**: **43-72**. (with H. Borjian), Prolegomena to the Study of the Kurds, Iran and the Caucasus, **13.1**, **2009**: **1-57**, "Armenian Demonology: A Critical Overview", Iran and the Caucasus, **17.1**, **2013**: **9-25**, "Middle Iranian Lexical Archaisms in Armenian Dialects" – Studia Philologica Iranica: Gerardo Gnoli Memorial Volume (Ed. E. Morano, E. Provassi, V. Rossi), Rome, **2017**: **7-16**:

Պրոֆ. Աատրեանն իրաւամբ հանդիսանում է մի մեծ՝ արեւելագիտական դպրոցի նահապետ, ում ղեկավարութեամբ իրենց գիտական գործունէութիւնն են սկսել աշխարհի տարբեր երկրիներից երեւան՝ Գառնիկ Աատրեան գիտնականի մօտ սովորելու եկած ու եկող տասնեակ ասպիրանտներ, որոնք պաշտպանել ու պաշտպանում են ատենախօսութիւններ իրանագիտութեան, քրդագիտութեան, եզդիագիտութեան, ատրպէյճանագիտութեան, թալիշագիտութեան ու արեւելագիտական ու յարակից մի շարք գիտակարգերում, որոնցից շատերի հիմնադիրը մեր մէջ, ինչու չէ նաեւ միջազգային հարթակներում հանդիսանում է սիրելի պրոֆեսորը:

Սրտանց շնորհաւորում ենք գիտութեան այդ կարկառուն ներկայացուցչին՝ մաղթելով ու յուսալով, որ պրոֆ. Աատրեանը կը շարունակի իր բեղուն գործունէութիւնը, անխոնջ կերպով ղեկավարելով, կրթելով ու ուղղորդելով հայաստանեան արեւելագիտական դպրոցը:

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Մաշտոցեան Մատենադարան, Հայ-ռուսական սլաւոնական համալսարան

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՋԱՊԱՀԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մուտք

Աջապահեան ընտանիքը Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ, ընդհանրապէս, եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան մէջ, մասնաւորաբար, ունեցած է շատ հիմնական պարտականութիւն եւ պաշտօն. ըլլալ պահապանը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Աջին - սկզբնական շրջանին, եւ այլ սրբութեանց՝ յետագային: Աջապահեան ընտանիքը այս պաշտօնը կատարեց 13-րդ դարու վերջին տասնամեակէն մինչեւ 19-րդ դարու կէսերը (շուրջ 570 տարուան ժամանակաշրջան մը) եւ արգելք եղաւ Լուսաւորչի Աջի եւ այլ սրբութեանց կորուստին կամ «գողութեան»:

Խօսիլ Աջապահեան ընտանիքին մասին կը նշանակէ փորձել հաստատել նաեւ անոր ծագումը: Պատմական տուեալները պակաս կամ հակոտնեայ են իրարու: Ընդհանրապէս ընդունուած կարծիքը այն է որ այս ընտանիքը ծագում առաւ 15-րդ դարու կիսուն: Այլ կարծիք մը, ներկայացուած Եփրեմ Կաթողիկոսին կողմէ, այս ընտանիքին ծագումը կը դնէ 13-րդ դարու աւարտին եւ անոր հիմնադիրը կը նկատէ Յովհաննէս Արքաեղբայրը: Ալիշան, Օրմանեան, Կիւլէսէրեան եւ ուրիշներ կը մերժեն այս կարծիքը եւ համամիտ են առաջին վարկածին: Այս ուսումնասիրութեան նպատակն է փաստել Յովհաննէս Արքաեղբօր պատմական գոյութիւնը եւ փորձել վերակառուցել Աջապահեան ընտանիքին տոհմածառը:

Ա. Աջապահեան Ընտանիքին Ծագումը

Աջապահեան ընտանիքին պատմութիւնը կազմելու առաջին փորձը կատարած է Եփրեմ Ա. Սսեցի Կաթողիկոս իր «Յուցակ Ազգաբանութեան Ազգիս Աջապահից»[1] գործին մէջ, զոր բանաստեղծական ձեւով եւս գրած է[2]: Աջապահեան ընտանիքին մասին կը խօսին նաեւ Ալիշան[3], Օրմանեան[4] եւ զանազան ձեռագիրներու յիշատակարանները:

Եփրեմ Կաթողիկոս իր տոհմին պատմութիւնը գրած ատեն, կը հաստատէ թէ ընտանիքին նախահայրը Յովհաննէս Արքաեղբայրն է. «Քանզի առ ի Յօհաննու եպիսկոպոսէ՝ եղբօր Հեթմոյ թագաւորին Հայոց սկսեալք» եւ քանի մը նախադասութիւն վերջ կը շարունակէ ըսելով՝ «նախ եւ յառաջ՝ Յօհան եպիսկոպոս՝ եղբայր թագաւորին հայոց Հեթմոյ երկրորդի, որդւոյ Լեւոնի երրորդի[5]»: Հետեւաբար, Յովհաննէս Արքաեղբայր Լեւոն Երրորդ թագաւորի (1271-1287) տղուն՝ Հեթում Երկրորդ թագաւորի[6] (1287-1307)

---

[1] **Հ. Յ. Տաշեան**, Յուցակ Հայերէն Ձեռագրաց, Ձեռագիր թիւ 90, Վիեննա, 1895, էջ 359 (Եփրեմ Կաթողիկոսէն եղած մէջբերումները յետ այսու պիտի նշուին որպէս Եփրեմ Կաթողիկոս):

[2] **Հ. Ղ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ, 1901, էջ 220-221:

[3] Նոյն տեղը, էջ 219:

[4] **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ., Մասն Գ., Պէյրութ, 1960, էջ 2937-2940:

[5] **Հ. Յ. Տաշեան**, նշ. աշխ., էջ 359:

[6] Հեթում թագաւոր լատին կրօնաւոր (ֆրանսիսկեան) էր, երբ իր հայրը՝ Լեւոն Գ. թագաւոր էր: Ան իր վայ

եղբայրն էր։ Ալիշան կը մերժէ կապ մը տեսնել Հեթում երկրորդին եւ Յովհաննէս Արքաեղբօր միջեւ. «քանզի բազում անգամ յիշեցաւ Աջապահից տոհմն, արժան համարիմ աստանօր, զի եփրեմ կաթողիկոս գրելով զպատմութիւն կաթողիկոսաց Հայոց, առանձինն խնամով գրէ եւ զիւրոց նախնեաց. բայց սխալէ յոյժ նախահաւ իւրոյ տոհմին ասելով զՅովհաննէս եպիսկոպոս եղբայր Բ. Հեթմոյ եւ որդի Բ. Լեւոնի, որպէս համարի. այլ նոցա չէ եղեալ այդպիսի որդի կամ եղբայր. եւ ոչ է շփոթել ընդ Յովհաննու եպիսկոպոսի եղբօր Ա. Հեթմոյ, որոյ չէր մտեալ ի կարգ աշխարհի, եւ զայն որոշէ ինքն եփրեմ»[7]։

Օրմանեան, իր «Ազգապատում» գրքին մէջ, անդրադառնալով Աջապահեան տոհմին՝ կը հաստատէ թէ «եփրեմ կաթողիկոս Աջապահեանց տոհմէն՝ կ'ուզէ իբր նախահայր ցուցնել Հեթում Բ.-ի եղբայր եւ Լեւոն Գ.-ի որդի Յովհաննէս եպիսկոպոս մը, եւ անկէ սկսելով կը կազմէ Աջապահեան սերունդ մը, Տէր Եղիազար, Յովհաննէս Եպիսկոպոս, Տէր Եղիազար, Մահտեսի Մինաս, Տէր Սահակ, Տէր Եղիազար, Տէր Յուսիկ, Տէր Մարկոս եւ վերջապէս տասներորդ Աջապահ, ինքն Եփրեմ Կաթողիկոս։ Բայց արքայազարմ Յովհաննէս Եպիսկոպոս միայն Հեթում Ա.-ի եղբայրը կայ, նա ալ կուսակրօն մնացած է, որով հիմէն կը խախտի Աջապահեան Եփրեմի կարծիքը, եւ չկրնար ալ ընդունուիլ ենթադրեալ Յովհաննէսին թոռան թոռը կոչուած Մինասին գոյութիւնը»[8]։

Օրմանեան շարունակելով իր «հաստատումները» եւ քաղելով զանոնք Սիսուանէն, Աջապահեաններուն ծագումը կ'ուզէ տանիլ մինչեւ 15-րդ դարու կէսերը՝ Մուսաբէգեանց կաթողիկոսին (1439 – 1446) օրերը. «Ուրիշ դրութեամբ Աջապահեաններուն սկզբնաւորութիւնը կը հասնի Մուսաբէգեանցի ժամանակին, երբ Լուսաւորիչի աջին անյայտանալէն ետքը, առձեռն մնացած երեք աջերը, զՍեղբեստրոսին, զՆիկողայոսին եւ զՊարսամայն, եւ Վահկայ Ս. Նշանը, կաթողիկոսին ձեռքէն կ'առնեն, եւ կը յանձնեն Հեթում խազենց անձի մը պահպանութեան, մականուանեալ Սպիտակ, որ յետոյ քահանայացած, եւ Սպիտակ Երէց անունով ճանչցուած է»[9]։

Ալիշան Յովհաննէս Արքայեղբայրը կ'ուզէ 15-րդ կամ 16-րդ դարուն մէջ տեսնել. «Դարձեալ սխալէ ի Յովհաննէ անտի ազգապետէ Աջապահից ցմինաս թոռն թոռին նորա (մահացած 1613-ին) 300 ամս ժամանակ տալով. ապա հարկ է թէ Յովհաննէսն այն եպիսկոպոս նախահաւն իւր, ո ոք եւ իցէ, ոչ ի սկիզբն ԺԴ. դարու, այլ ԺՉ-ին կամ գէթ ի կէս ԺԵ-ին կացեալ իցէ»[10]։

Հակառակ այս կարծիքներուն, հարցը կը մնայ անլոյծ, որովհետեւ ո՛չ Ալիշան եւ ո՛չ ալ Օրմանեան կրցած են փաստել կամ հերքել Յովհաննէս Արքաեղբօր գոյութիւնը։ Հաւանաբար շփոթ յառաջացնող պատճառներէն մէկը Յովհաննէսի «Արքաեղբայր» կոչումն է։ Պատմականօրէն ճիշդ է, ինչպէս Ալիշան կը հաստատէ, որ Հեթում երկրորդ թագաւորը Յովհաննէս անունով եղբայր չէ ունեցած։ Ոչ ալ ան Հեթումի «հոգեւոր եղբայր»ներէն մէկն է, որովհետեւ Յովհաննէս հայ հոգեւորական էր,[11] մինչ Հեթում լա-

---

առած էր եղբայր Յովհաննէս անունը (տե՛ս **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ., Մասն Ա., Պէյրութ, 1960, էջ 1708-1709)։

[7] **Հ. Գ. Ալիշան**, նշ. աշխ., էջ 219։

[8] **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ., Մասն Գ., Պէյրութ, 1960, էջ 2938-2939։

[9] Նոյն տեղը, էջ 2939-2940։

[10] **Հ. Գ. Ալիշան**, նշ. աշխ., էջ 220։

[11] **Մ. Արք. Օրմանեան**, նշ. աշխ., Մասն Ա., էջ 1708-1709

*տին կրօնաւոր դարձաւ։ Հետեւաբար ոչ արեւնակցական եւ ոչ ալ հոգեւոր կապ կայ երկուքին միջեւ։ «Արքաեղբայր» կոչումը Կիլիկեան շրջանին գործածուած ածական մըն էր[12]։ «Հեթում Ա.-ի եղբայրը՝ Յովհաննէս եպիսկոպոսը, որ Գռների վանքին առաջնորդ եղաւ, **Արքայ-եղբայր** կոչումը ունի»[13]։*

13-էն մինչեւ 14-րդ դարու զանազան ձեռագիրներու յիշատակարանները կը խօսին եւ կը փաստեն Յովհաննէս Արքաեղբօր գոյութիւնը եւ Հեթում Թագաւորի «եղբայր» ըլլալը.

1. *1600 թուականին, Բաղէշի մէջ ընդօրինակուած Գործք Առաքելոցի մը մեկնութեան յիշատակարանին մէջ կը կարդանք. «Աւ խնդրաղաւն համառաւտիս, Տէր Յովհաննէս Արքաեղբայր եւ եպիսկոպոս նահանգս Աստուածապահ դղեկին Մալեւունի, եւ մասին ինչ Բարձրբերդոյ, եւ նոյն տեսուչ հռչակելի Սբ. Ովստիւն Գռներոյ...»[14]։*
2. *Գործք Առաքելոցի ուրիշ մեկնութեան մը յիշատակարանը, ընդօրինակուած 18-րդ դարուն, կը յիշատակէ. «Եւ յառաջ ամօք ի հրամայական խնդրոյ Տեառն Յովհաննէսի ՅԵՂԲՕՐԷ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՑ ՀԵԹՄՈՅ [ընդգծումը մերն է][15]»։*
3. *1283-ին Գէորգ Սկեւռացի Վարդապետին աշխատասիրութեամբ պատրաստուած Վարք Սրբոցի մը յիշատակարանին մէջ կը կարդանք հետեւեալը. «Դ[րուստ ի Սբ. Առաքեալն եւ Աւետարանիչն Յոհա]նէս, ի պատկառե[լի խնդրոյ] Յովհաննու եպիսկոպո[սի, եղբաւր] բարեպաշտ արքային Հայոց [Հեթմոյ], ի թուականին ՉԼԲ (1283)[16]»։*
4. *1289-ին Վարդան Վարդապետ Կիլիկեցիի կողմէ ընդօրինակուած Էակաց Գրքին յիշատակարանին մէջ կը կարդանք. «Աղաչեմ յիշել զմեզ ի բարին Քրիստոսի զվարդան սպասաւոր բանի, հանդերձ ծնաւղաւքն մեր եղբարք, ընդ նմին եւ զուսուցիչն իմ զՏէր Յոհանէս զարքայեղբայր Հայոց Հեթմոյ»[17]։*

Վերոյիշեալ մէջբերումները կը հաստատեն թէ Յովհաննէս Արքաեղբայր պատմական անձ մըն էր, ապրած 13-րդ դարու աւարտին։ Իր մասին աւելի յստակ գաղափար մը կ'ունենանք, երբ կը կարդանք հետեւեալ յիշատակարանը, նոյնինքն Յովհաննէս Արքաեղբօր գրչէն.

> *«ԵՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, դատապարտ ծառայ Աստուծոյ եւ նըւաստ կրտսեր իսկ պաշտօնակից, ՈՐԴԻ ՔՐԻՍՏՈՍԱՍԷՐ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽՈՂԻՆ ԿՈՍՏԱՆԴԵԱ ԹԱԳԱՊԱՀԻ ԵՒ **ԱՐՔԱՅՀՕՐ** ՀԱՅՈՑ [ընդգծումը մերն է]»[18]։*

---

[12] Նոյն տեղը, էջ 1793 – 1795:

[13] Նոյն տեղը, էջ 1793:

[14] **Ն. Արք. Պօղարեան**, Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ., Երուսաղէմ, 1967, էջ 237; հմմտ. հ. Բ., էջ 135; հ. Գ., Երուսաղէմ, 1968, էջ 13, 28, 31, 38, 133, 237, 248, 252, 298, 351:

[15] **Ն. Արք. Պօղարեան**, նշ. աշխ., հ. Ե., Երուսաղէմ, 1971, էջ 307:

[16] **Ն. Արք. Պօղարեան**, նշ. աշխ., հ. Ա, Երուսաղէմ, 1966, էջ 306:

[17] **Ն. Արք. Պօղարեան**, նշ. աշխ., հ. Զ., Երուսաղէմ, 1972, էջ 18:

[18] **Ն. Արք. Պօղարեան**, նշ. աշխ., հ. Դ., Երուսաղէմ, 1969, էջ 122:

Աւելի լուսաբանիչ եւ ընդարձակ հաստատում մը եւս ունինք, դարձեալ Արքաեղբօր գրչէն, Դանիէլ Վարդապետ Ասորիի «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի» գրքի յիշատակարանին մէջ, 1289 թուականէն.

> *«Դատապարտս այցելու եւ անիմաստ րաբուն արքայեղբայր Հայոց Յովհաննէս, որ երբեմն Պաղտւոյն որդի քրիստոսարեալ եւ ամենընտիր երջանիկ եւ բարեպաշտ իշխանաց իշխանին եւ թագապահի Պրին պարոնին Հայոց կոստանդեա մականուն Մոզոն կոչեցեալ, յՌուբինեանց տոհմէ՝ որոց յիշատակն աւրհնեալ յԱստուծոյ եւ յաստուածայնոցդ լիցի, ամէն: ... Արդ ի թուականիս Հայոց ՉԼԸ = 1289 գրել ետու զեռափափաք եւ իմաստատու հոգէնիւթ եւ աստուածարեալ բանքս սրբոյն Դանիէլ մեծ վարդապետին եւ հոգէխառն իմաստնոյ Սարգսի նորակերտ գրչի վանից իրիցու՝ որոյ Տէր ողորմեսցի (էջ 229բ)[19]»:*

Նոյն ձեռագրի յիշատակարանին մէջ, հինգ անգամ եւս յիշուած է Յովհաննէս Արքաեղբայրը, իսկ գլխաւոր յիշատակարանին մէջ (էջ 439ա), Յովհաննէս կրկին կը յիշէ իր ո՞վ եւ որո՞ւ զաւակ ըլլալը:

Այս մէջբերումները, եւ մասնաւորաբար վերջին երկուքը, յստակ կերպով ցոյց կու տան մեզի Յովհաննէս Արքաեղբօր պատմական գոյութիւնը: Ո՞վ էր ուրեմն Յովհաննէս Արքաեղբայրը: Նախկին անունով Պաղտին, նախ աշխարհական եւ ապա եկեղեցական դարձած է. «Սա նախ ի կարգ աշխարհական, մտեալ՝ ծնանի որդիս ինքնեան, ապա առնու զայն աստիճան որ համայնից ի ըղձական[20]»,- ինչպէս կը յիշէ Եփրեմ կաթողիկոս: Ծննդեան թուականը յստակ չէ. Պօղարեան Սրբազան ծննդեան թուականը կը դնէ շուրջ 1259-ին[21], իսկ մահուան թուականը թէ՛ Պօղարեան, եւ թէ՛ Աճառեան կը դնեն 1289-ին[22]:

Ըստ Վարդան Վարդապետի յիշատակարանին, Յովհաննէս Արքաեղբայր ողջ ըլլալու էր 1289-ին եւ անկէ անդին, որովհետեւ երբ Հեթում Բ. թագաւորը Լուսաւորչի Աջը գնեց եգիպտացիներէն, զայն յանձնեց Յովհաննէս Արքաեղբօր առ ի պահպանութիւն, ինչպէս կը յիշատակէ Եփրեմ կաթողիկոս իր ազգաւորմի պատմութեան չափաւոր բանաստեղծութեան մէջ. «Նախ եւ յառաջ՝ Յօհան եպիսկոպոս, եղբայր թագաւորին Հեթմոյ երկրորդի, որդւոյ Լեւոնի երրորդի: Քանզի յաւուր սորա ազատեցաւ աջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի յԵգիպտոսէ»[23]:

*Յովհաննէս Արքայեղբօր եկեղեցական եւ վարչական գործունէութեան մասին ոչինչ ծանօթ է, բացի այն իրողութենէն որ առաջնորդն էր «նահանգաց աստուածապահ դղեկին Մօլեւօնի, եւ ինչ որ մասին Բարձրբերդոյ եւ նոյն տեսուչ հռչակելի Սբ. Ուխտին Գառներոյ»[24]: Արդեօ՞ք այս Յովհաննէսը նոյն Յովհաննէս է զոր Օրմանեան կը յիշէ իր «Ազգապատում»ին մէջ, զոր վերեւ յիշուեցաւ («Հեթում Ա.-ի եղբայրը՝ Յովհաննէս Եպիսկոպոսը, որ Գռների վանքին առաջնորդ եղաւ, **Արքայ-եղբայր** կոչումը*

---

[19] **Մ. Վրդ. Քէշիշեան**, Յուցակ Հայերէն Ձեռագրաց Ջմմառի Վանքի Մատենադարանին, հ. Ա., Վիեննա, 1964, էջ 242:

[20] **Հ. Գ. Ալիշան**, նշ. աշխ., էջ 220:

[21] **Ն. Արք. Պօղարեան**, Հայ Գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 198:

[22] **Հ. Աճառեան**, Անձնանունների Բառարան, հ. Գ., Երեւան, 1972, էջ 599; **Ն. Արք. Պօղարեան**, Հայ Գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 199:

[23] **Եփրեմ Կթղ.**, Պատմութիւն Աջապահից, էջ 51:

[24] **Ն. Արք. Պօղարեան**, Յուցակ Ձեռագրաց Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Ջ., Երուսաղէմ, 1972, էջ 18:

ունի»[25]: Այնպէս կ'երեւի թէ ան բարձրաստիճան եկեղեցական մըն էր, ինչպէս նաեւ քաջալերողը եւ հաւանաբար նաեւ հովանաւորողը Գէորգ Վարդապետ Լամբրոնացիին, որպէսզի աստուածաշնչական մեկնութիւններ կատարէ[26], ինչ որ ցոյց կու տայ իր սէրն ու հոգածութիւնը կրօնական գրականութեան հանդէպ:

Յովհաննէս Արքայեղբօր մասին ուրիշ տեղեկութիւն չունինք, դժբախտաբար, բայց իր գրչէն ունինք յիշատակարան մը, գրուած Երուսաղէմի անկման (1187) մասին:

«Զոր մարգարէքս սպառնացան,
Երուսաղէմ յորժամ մեղան,
Առ մեզ կրկին ի յանկ ելան,
Ի դառն աւուրքս, որ այժմ հասան:

Զի ի վեց հարիւրս Հայոց թուական [1187]
Յերեսուն եւ վեց նորին շրջան,
Եւ յիսուն ամին լրման
Հռոմայեցւոցն իշխանութեան:

Յովսեփ արքայ իսմայելեան,
Որք Թուրքիման ազգ կոչեցան,
Յեգ[ի]պտոսէ գոլով իշխան,
Մինչ ի Բաբել յԱսորեստան:

Զգեաց նա ձեռն յանդգնութեան,
Ի նուրբ սահման քրիստոնէութեան,
Քան զի մեղաւքն կորացան,
Եւ մեր իշխանքն յաղթեցան:

Գերեաց զքաղաքն աստուածական,
Զերուսաղէմ եւ իւր սահման,
Արիւն բնակչացն, որ անդ գտան,
Իբր զջուր ի զոեհս հեղան:

Մարմինքն անկեալ ոչ թաղեցան,
Եւ սուրբ տաճարքն խրթնացան,
Դրացիքն զմեզ ծիծաղեցան,
Եւ սպառնալիքս կատարեցան:

Իսկ զաւետիս դարձին որ տան,
Աստ մարգարէքս աստուածաբան,
Յարեւմտից հնչէ մեզ ձայն,
Պետրոս ի Հռովմ մեծն փախան:

Զի անդ ողբոցս հասեալ գուժան,
Կական բարձեալ ի սուգ նստան,
Ի հայրապետէն առին հրաման,
Զխաչ բարձին եւ աստ հեղան:

---

[25] **Մ. Արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ., Մասն Ա., Պէյրութ, 1960, էջ 1793:

[26] **Ն. Արք. Պօղարեան**, Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա., Երուսաղէմ, 1966, էջ 273-274; հմմտ. «**ՍԻՈՆ**» պաշտօնաթերթ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, ԼԸ տարի, թիւ 4, Ապրիլ. Երուսաղէմ, 1964, էջ 99-100:

Գոհ տուեալ ազ[գ]ք զանազան,
Բիւրք բիւրուց զաւրք միաբան,
Առագաստեալ ընդ ծով գան,
Ի Պտղոմիդեայ զետեղեցան։

Փոսս հատին եւ ամրացան,
Եւ անդրական այս երկրորդ ամ,
Ի պատերազմէն անխափան,
Եւ մահ ի դասս չերկոսեան։

Այլ խաչընգալքն փութով գան,
Յերուսաղէմն վերնական,
Եւ նոցին եղբարքն, որ աստ մնան,
Զմարտն դրդել ոչ ձանրաձան։

Հռոմայ արքայն, որ Ալաման,
Բիւրուք ի չայս չոյսս մեռան,
Սակայն մնացեալքն ոչ կասեցան,
Եւս բազում ընդ ծովն գան։

Այժմ Փռանգաց Փիլիպ արքայն,
Եւ Ընելիզացն նմին նման,
Լծեալ ի գործ տեառն հասան,
Եկին առ մեզ ի չորրորդ ամ։

Սոքաւք սպասեմըք փրկութեան,
Եւ Աստուծոյ մեր աւգնութեան,
Զի զմարգարէիցս դարձին զբան,
Վայելելոյ գոցուք արժան։


Ամէն»[27]։

Յովհաննէս Արքայեղբօր պատմական գոյութիւնը այլեւս կասկածի տակ չի կրնար մնալ։ Հեթում երկրորդ թագաւոր իրեն յանձնեց Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջին պահպանութիւնը եւ իր որդիները շարունակեցին նոյն պաշտօնը մինչեւ 19-րդ դարու կէսը։

Նախքան Աջապահեան ընտանիքի պատմութեան անցնիլը, պէտք է այստեղ հաստատենք որ գոյութիւն ունեցող տեղեկութիւնները հատուկտոր ու տարտամ են։ Գլխաւոր աղբիւրը, զոր վաւերական կրնանք կոչել որոշ վերապահումներով, Եփրեմ կաթողիկոսի գրածն է։ Նկատի ունենալով որ Եփրեմ կաթողիկոս Աջապահեաններուն պատմութիւնը գրած է Յովհաննէս Արքաեղբօրմէն շուրջ 500 տարիներ ետք, անոր պատմութեան առաջին բաժինը, մինչեւ Մինաս (1613) հաւանաբար բերանացի աւանդութեամբ պահուած է ընտանիքին մէջ, իսկ երկրորդ բաժինը, Մինասէն մինչեւ Եփրեմ (1613-1771) աւելի ընդունելի են եւ պատմական։ Եփրեմ կաթողիկոսէն ետք, Ալիշան առաջինն էր որ զբաղեցաւ Աջապահեաններով։ Մերժելով հանդերձ Եփրեմ կաթողիկոսին տեսակէտը, Ալիշան Աջապահեաններուն ծագումը կը հասցնէ մինչեւ 15-րդ դարու կէսերը եւ որպէս նախահայր կ'ընդունի Հեթում Սպիտակ Երէց Խազոնցը, ինչպէս տեսանք։ Յստակ չէ եթէ օգտագործած է Եփրեմ կաթողիկոսի գրածը։


[27] **Ն. Արք. Պօղարեան**, Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ., Երուսաղէմ, 1963, էջ 237։

Ըստ Ալիշանի, Աջապահեաններուն ընտանեկան ծառը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.




Ալիշան կը սխալի երբ Մինաս եւ Սահակ աջապահները Եղիազար Բ.-ի որդիները կը նկատէ, որովհետեւ Եփրեմ կաթողիկոսի պատմութեան մէջ, «այս մահտեսի Մինաս աջապահին եղեն բ որդիք. անուն առաջնոյն Սահակ եւ երկրորդին յակօբ»[28]: Ալիշանի ցանկին մէջ, Եփրեմ կաթողիկոս իններորդ սերունդն է, մինչ Եփրեմ կաթողիկոս յստակ կերպով ինքզինք «տասներորդ սերունդ» կը նկատէ:

Ըստ Եփրեմ կաթողիկոսի, Աջապահեաններու ընտանեկան ծառը հետեւեալ պատկերը ունի.



[28] **Եփրեմ Կթղ.**, Պատմութիւն Աջապահից, էջ 51:



Ինչպէս այս զոյգ ցանկերը ցոյց կու տան, 1468/1469 թուականներուն չիշուած Հեթում Սպիտակ երէց Խազոնցի անունը չի չիշուիր։ Ասիկա տարօրինակ կը թուի, որովհետեւ երբ Սիս վտանգի տակ էր 1468/1469 թուականին, Աջերը կապիտաւ փախցըւեցան Հեթում երէցին կողմէ[30], զոր Եփրեմ կաթողիկոս չի չիշեր իր պատմութեան մէջ։ Իր մասին պատմական ուրիշ տեղեկութիւն չունինք։ Նոյնպէս գիտենք որ Կոստանդին Գ. Վահկացի կաթողիկոսի (1430 -1438) տոհմէն ալ աջապահներ եղած են. «Յայսմ ժամանակի թուի գրաւեալ քահանայական տոհմի միոյ Վահկացւոյ զսրբութիւն»[31]։ Որո՞նք են այս աջապահները։ «Այսպէս կամ այնպէս, առանց շփոթելու այս աւանդութիւններէն ու տարբերութիւններէն, երկու կերպով կարելի է մտածել Աջապահեանց ծագման վրայ.

ա) անոնց բուն ծագումը կապ ունի Ս. Լուսաւորչի Աջին հետ, իբրեւ մասունք եւ մանաւանդ կազմութեան ժամանակին եւ աւոր կիրարկութեան հետ նուիրագործութեանց հետ. ասոր ճիշդ թուականը չեմ գիտեր առ այժմ. բայց պահ մը ենթադրելով թէ, ըստ Եփրեմի աւանդածին, Աջապահեանց ծագման ժամանակն է Աջին գերեդարձը (1292 -1295), այդ չի նշանակեր թէ Յոհան եպիսկոպոսէն առաջ չկային Աջապանք։

բ) Աջապահեանք իրենց ծագմամբ պարզապէս պահապաններն էին Աջին կամ լուսարարը, եւ ո՛չ թէ կաթողիկոս կը պատրաստէին»[32]։

---

[29] Ղուկաս Ա. Կաթողիկոս (1731-1737), Միքայէլ Ա. Կաթողիկոս (1737-1758), Գաբրիէլ Ա. Կաթողիկոս (1758-1770), եւ Եփրեմ Ա. Կաթողիկոս (1770-1784) ապագայ կաթողիկոսներ Սսոյ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան (1731-1865):

[30] **Հ. Գ. Ալիշան**, նշ. աշխ., էջ 221:

[31] **Հ. Յ. Տաշեան**, նշ. աշխ., էջ 570:

[32] **Բ. Կթղ. Կիւլէսէրեան**, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1988, էջ 1338:

Բաբգէն կաթողիկոսի հաստատումը ճիշդ է որ Աջապահեանք Աջին պահապաններն էին։ Աջին գերեդարձէն առաջ, կաթողիկոսներն էին որ կը պահէին Աջը իրենց մօտ, ինչպէս մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ կը տեսնենք։ Այս պարագային, հարցը կրկին պէտք է ձեռք առնել եւ հարց տալ. ո՞վ էր Հեթում Սպիտակ երէցը կամ որո՞նք էին Վահկացի աջապահները[33]։ Մեր կածիքով, Եփրեմ Կաթողիկոս, իր ընտանիքին պատմութիւնը գրած ժամանակ, դուրս ձգած է բոլոր անոնց, որոնք այդ ընտանիքին մայր ճիւղին մաս չէին կազմեր։ Այլ խօսքով, ան գրած է սսեցի աջապահեաններուն պատմութիւնը։ Իսկ այս անհատ աջապահներու անուններուն գոյութիւնը կ'ապացուցուի անով որ ԱՋԱՊԱՀի պաշտօնը միայն Եփրեմ կաթողիկոսի ընտանիքին չէ պատկանած միշտ, այլ ուրիշ արժանաւոր եւ վստահելի մարդիկ եւս կոչուած են այդ պաշտօնին։

Այժմ տեսնենք թէ որո՞նք են այն աջապահները, որոնց մասին կը խօսի Եփրեմ կաթողիկոս։

Բ. Աջապահեան Ընտանիքը

Ըստ Եփրեմ կաթողիկոսին, իր նախահայրը՝ Յովհաննէս Եպիսկոպոս եղբայրն էր Հեթում Բ. թագաւորին, Լեւոն Գ.-ի որդիին։ Հեթում «Յօհաննու եպիսկոպոսի՝ եղբօր իւրում յանձնեաց զԱջապահութիւն, որպէս յանձնեցաւ Ղեւտականաց աստուածայինն այն տապանակ, զի թերեւս առ ի նմանէ սերեալքն որդիք զհարս յաջորդեալք՝ վարեսցեն այսու սպասաւորութեամբ»[34]։

Յովհաննէս Եպիսկոպոսին յաջորդեց իր որդին՝ Եղիազար Քահանայ, որուն գերեզմանը կը գտնուի «ի սուրբ եկեղեցին Մանթէշու, որ առ տորոս [Տաւրո՞ս] լերամբ ի սահմանս կիլիկիոյ»[35]։

Եղիազարի յաջորդեց իր որդին՝ Յովհաննէս, որ նախապէս աշխարհական էր եւ «գոլ յետոյ եպիսկոպոս ըստ օրինակի հաւտն իւրոյ»[36]։ Յովհաննէսին յաջորդեց իր որդին՝ Եղիազար Բ.-ը, որուն «գերեզմանն է յԱտանա[յ]ի սուրբ Տելլի կոչեցեալ վայր»։

Եղիազարին յաջորդեց իր որդին՝ մահտեսի Մինասը, որ իսկական Աջապահի դեր կատարեց, Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը եւ այլ սրբութիւնները պահելով եւ կողոպուտէ ազատելով։ Մահացած է 1613 թուականին եւ գերեզմանը կը գտնուի «ի սուրբ Աստուածածին եկեղեցին ի Սիս, որպէս գրեալ է ի դուռն սուրբ աստուածածին եկեղեցւոյն»[37]։ Հաւանական է որ շատ յառաջացած տարիքին մահացած ըլլար, որովհետեւ «մեռաւ մեծաւ բարեպաշտութեամբ եւ լցեալ աւուրբ»[38] ինչպէս կը հաստատէ Եփրեմ Կաթողիկոս։ Մահտեսի Մինասին յաջորդեց իր աւագ որդին՝ Սահակ, որ քահանայացաւ եւ «զամանէ ասեն գոլ յոյժ ձայնաւոր եւ երաժիշտ. այլեւ երկայնաւուրբք ժամանակօք կեցեալ աշխարհի ըստ նմանութեան նահապետին Իսահակայ»։

Գալով իր եղբօր՝ Յակոբին, նախապէս երէց կոչուած, ամուսնացեալ քահանայ ըլլալուն պատճառով, եւ իր կնոջ մահէն ետք, վանք մտած եւ վարդապետ ձեռնադրր-

---

[33] Նոյն տեղը։

[34] **Եփրեմ Կթղ.**, Պատմութիւն Աջապահից, էջ 51։

[35] Նոյն տեղը։

[36] Նոյն տեղը։

[37] Նոյն տեղը։

[38] Նոյն տեղը։

*ւած է եւ հասած մինչեւ եպիսկոպոսական աստիճանին։ Եփրեմ կաթողիկոս կը պատմէ թէ ան էր «յոյժ բանիբուն եւ գիտնական. մանաւանդ քաջահմուտ յարուեստս աստղաբաշխութեան։ Եւ են առ մեզ ի սմանէ ասացեալ ոտանաւորք եւ ասացուածք համեղութեամբ առլցեալք»[39]։ Դանձակեցին զինք «մեծ վարդապետ, այր իմաստուն»[40] կ'անուանէ։ Ալիշան անոր անուան կը կցէ Հռետոր տիտղոսը «ոչ գիտեմք վասն որպիսեաց բանից»[41], իսկ Բաբգէն կաթողիկոս կը բացատրէ թէ «հռետոր ըսուած է պարզապէս տաղասաց ըլլալուն»[42]։ Իրմէ յիշատակարան մը հասած է 1286-ին ընդօրինակուած Ճաշոցէ մը[43]. «Ի հայրապետութեան Տ. Տէր Մինաս կաթողիկոսին՝ թվականիս հայոց ՌՀԷ (1628) նուաստս յամենայնի Յակոբ Սսեցի, որ այժմ եմ փակակալ ի դուռն Սուրբ Լուսաւորչի։ Ի կիլիկիայ այս որ ԻՄԱՍՏԱՐԱՆ ասի, բ. եւ գ. (երկու, երեք) եղբօր հետ ելայ գնացի սանդըխտով. թվականս նորա որ ի դռան վերայ կայր՝ կարդացի։ Որ է օրինակ այս. 'Կատարեցաւ յարմարումն շինութեան Հիւանդանոցիս՝ հրամանաւ մեծաւ փառաւք Քրիստոսասէր թագուհւոյ Զապէլի ի թվականութեան Հայոց ի Ո եւ Ղ (1241)»[44]։ Յակոբ ծանօթ եղած է իր տաղերով, որոնք կը գտնուին զանազան մատենադարաններու մէջ։ Պօղարեան Սրբազան «ՀԱՍԿ»ի[45] եւ Քիւրտեան «ՍԻՈՆ»ի[46] մէջ զբաղած են իր տաղերով։ Կազմած է գաւազանագիրք մը, զոր Պօղարեան հրատարակած է «ՀԱՍԿ»ին մէջ[47]։ Կոստանեանց իր «Նոր Ժողովածու»ին թիւ Դ. պրակին մէջ[48] ունի իր տաղերէն մէկը, գրուած 1635-ին։ Տաշեան իր Յուցակ Ձեռագրացին մէջ կը յիշէ իր տաղերէն երեք հատ[49]։ Իր ծննդեան թուականը անծանօթ է, իսկ մահուան թուականը 1650-էն ետք ըլլալու է. «Յակոբ Սսեցին ոեւէ բանաստեղծական տաղանդ ցոյց չի տար եւ ոչ իսկ հանգագիր կ'երեւի։ Լեզուն չէ յղկուած եւ երբեմն անտեղի կերպով թրքերէնով աղճատուած՝ խժալուր է։ Ճիգ մը կայ բան մը ըսած ըլլալու եւ սակայն առանց դոյզն յաջողութեան։ Գուցէ ատոր համար է որ իրմէ շատ բան չէ արտագրուած, քանի որ վստահօրէն իրեն պէս միջակութիւն մը արտադրելու հիւանդութենէն բռնուած ըլլալու է»[50]։

Սահակ Աջապահին յաջորդեց իր որդին՝ եղիազար Գ., որ հինգ զաւակներ ունեցաւ, որոնցմէ երեքը՝ Յուսիկ, Արիստակէս եւ Սուքիաս քահանայ ձեռնադրուած են, «իսկ երկուքն միայն աստիճանաւորք վրդանէս կորովամիտն եւ քաջաբան եւ Սահակ»[51]։ Արիստակէս քահանայի գերեզմանը կը գտնուի «ի յԱտանա ի սուրբ Ստեփան-

---

[39] Նոյն տեղը։

[40] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 262, 265։

[41] **Հ. Ղ. Ալիշան**, նշ. աշխ., էջ 223։

[42] **Բ. Կթղ. Կիւլէսէրեան**, նշ. աշխ., էջ 302։

[43] **Ն. Արք. Պօղարեան**, «Յակոբ Երէց Աջպան Սսեցի», «**ՀԱՍԿ**», 1945, էջ 28; «**Արարատ**», 1870, էջ 347։

[44] **Մ. Քէլէշեան**, Սիս-Մատեան, Պէյրութ, 1960, էջ 195; **Բ. Կթղ. Կիւլէսէրեան**, նշ. աշխ., էջ 302, 487; «**Արարատ**», 1888, էջ 354։

[45] **Ն. Արք. Պօղարեան**, «Յակոբ Երէց Աջպան Սսեցի», «**ՀԱՍԿ**», 1945, էջ 28-31։

[46] **Յ. Քիւրտեան**, «**ՍԻՈՆ**» պաշտօնաթերթ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, ԼԹ տարի, թիւ 10, Հոկտեմբեր. Երուսաղէմ, 1965, էջ 362-367։

[47] **Ն. Արք. Պօղարեան**, «Յակոբ Երէց Աջպան Սսեցի», «**ՀԱՍԿ**», 1945, էջ 29։

[48] **Կ. Կոստանեանց**, Նոր ժողովածու, Պրակ Դ., Միջնադարեան Հայոց տաղեր եւ ոտանաւորներ, Վաղարշապատ, 1909, էջ 19-21։

[49] **Հ. Յ. Տաշեան**, նշ. աշխ., էջ 1122ա.

[50] **Յ. Քիւրտեան**, «**ՍԻՈՆ**» պաշտօնաթերթ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, ԼԹ տարի, թիւ 10, Հոկտեմբեր. Երուսաղէմ, 1965, էջ 367.

[51] **Եփրեմ Կթղ.**, Պատմութիւն Աջապահից, էջ 52։

նոս եկեղեցին, իսկ Տէր Սուքիաս Քահանային՝ ի սուրբ աստուածածին եկեղեցին ի սիս»[52]: Տէր Սուքիաս երկարակենցաղ անձ մը եղած է, ապրելով 99 տարի եւ քահանայագործելով 58 տարի:

Տէր Եղիազարին յաջորդեց իր որդին՝ Յուսիկ Քահանան, որ ապրեցաւ 82 տարի եւ քահանայագործեց 53 տարի: «Սորա գերեզմանն է ի սուրբ աթոռն՝ հուպաշտրան կաթողիկոսարանին»[53]: Առաքինի վարքի տէր անձ մըն էր Յուսիկ Քահանան, սաղմոսերգու եւ «հեզութեամբ եւ խոնարհութեամբ առլցեալ»: Ունեցած է 8 զաւակներ, որոնցմէ երեքը՝ Ղուկաս, Միքայէլ եւ Գաբրիէլ, բարձրացան են Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին: Իսկ միւս զաւակներն են Մարկոս, որ քահանայացած էր, Յօհան, Ղուկաս, Մատթէոս եւ Եզեկիէլ, որոնցմէ Ղուկաս (շատ հաւանաբար Ղուկաս կաթողիկոսէն առաջ ծնած) եւ Եզեկիէլ մանուկ կամ երիտասարդ տարիքին մահացած են, իսկ Յօհան «որ դպիր էր յոյժ երժիշտ և ձայնաւոր, եւ Մատթէոս դպիր էր յոյժ կոռովամիտ եւ քաջաբան»[54]: Յուսիկ քահանայի առաջին չորս զաւակներէն զատ, միւսներուն մասին տեղեկութիւն չկրցանք հաւաքել:

Յուսիկ Քահանային յաջորդեց իր որդին Մարկոս Քահանան, որ երկու զաւակներ ունեցաւ՝ Գրիգոր եւ Եփրեմ: Գրիգոր վեց զաւակներ ունեցաւ՝ Միքայէլ, Մանուէլ, Աղեքսանդր, Մանուէլ (երկրորդ նոյնանուն զաւակ մը), Գաբրիէլ եւ Յուսիկ: Վերջին երեքը «նախ քան զհայրն փոխեցան աշխարհէս»[55]: Անդրանիկ զաւկին՝ Միքայէլի գերեզմանը կը գտնուի Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Մարկոս Քահանայի երկրորդ զաւակը՝ Եփրեմ բարձրացաւ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին՝1771-ին:

Գալով վերջապէս Հեթում Երէցին՝ ոչ մէկ տեղեկութիւն գտանք անոր ծննդեան կամ ծագման պարագաներուն մասին, բացի այն տեղեկութենէն թէ երբ Սիս յարձակումի ենթարկուեցաւ 1468/69 թուականին, ան Աջերը առաւ եւ տարաւ Կապիտառ բերդը, Թորոս Եպիսկոպոսին քով առ ի պահպանութիւն կորուստէ եւ յաջորդ տարին՝ 1469/70-ին երբ ժանտախտը տարածուեցաւ Սիսի մէջ, Հեթում Երէց մահացաւ այդ հիւանդութենէն[56]:

Այստեղ հարկ կը նկատենք մէջբերել նաեւ Եփրեմ կաթողիկոսին իր ազգատոհմին մասին գրած ոտանաւոր պատմութիւնը.

«Բարք է բնաբար առ բանական
Սեռըս՝ ներհան գոլն ըղձական
Նախանձելոյ վիպագրութեան
Եւ անվըրէպ զրուցաց ըզբան.
Եւ մանաւանդ զիւրական
Նախնեացըն վէպ կարգել անձան:
Յերիս հատեալ բաժանեցան
Ամանակաց թիւք կարգեցան.
Յանցեալն, ներկայն եւ յառապայն,

---

[52] Նոյն տեղը:

[53] Նոյն տեղը, էջ 53:

[54] Նոյն տեղը, էջ 54:

[55] **Հ. Գ. Ալիշան**, նշ. աշխ., էջ 220-221:

[56] **Բ. Եղիայեան**, Սելճուկ-Թաթոլ-Մոնկոլ-Օսմանցի Թուրքերու Պատմութիւն, Անթիլիաս, 1989, էջ 304; **Հ. Գ. Ալիշան**, նշ. աշխ., էջ 535; **Մ. Արք. Օրմանեան**, նշ. աշխ., հ. Բ., Մասն Ա., էջ 2159; **Բ. Կթղ. Կիւլէսէրեան**, նշ. աշխ., էջ 52; **Մ. Քէլէշեան**, նշ. աշխ., էջ 72:

Որով լրանայ այս յաւիտեան։
Արդ ներկայիս իղձք գիտութեան՝
Ոչ նեղէ զոք խոտիւ այնքան,
Դատարկախոյզ դառն քննութեան.
Եւ ապառնեաց գիտելոյ ջան.
Գրեալ կնքեցաւ միանգամայն
Ի հրեշտակաց եւ ի մարդկան.
Որպէս է բանըն տէրունեան,
Թէ ձեզ որ չէ այս գիտական.
Հայր եղ իւրում իշխանութեան
Յայտնեալ եւ ոչ ումեք արժան։
Իսկ անցելոց իրաց ըզբան
Եւ եղելոցըն պատմութեան՝
Լինել սիրող է բընական
Իմաստասէր ազգ բանական։
Որպէս եւ իմ եղեալ ըզջան.
Եփրեմ *անուն անձն անարժան,*
Կաթուղիկոս հայկազնեան,
Լինել սիրող այսըմ գրութեան։
Այսու ընձիւ սիրողական
Վառեալ երբեմն երջանիկն այն,
Բանիւ մատչէր թախանձական
Խօսիլ զնախնեանցն իւրական.
Դնէր առաջի զգութն հայրական
Եկ ոչ ձրգել յետ կոյս ունկան.
Ջհայրն իմ ասեմ զմեծ քահանայն
Մարկոս *անուն այն սըրբաբան.*
Ուստի եւ իմ փոյթ եւ ըզջան...»[57]։

ՆԱԻԱՍԱՐԴ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Փիլիսոփայութեան եւ բաղդատական կրօններու պրոֆեսոր

[57] **Եփրեմ Կթղ.**, Պատմութիւն Աջապահից, էջ 57-59։

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

ՏԵԼԻՉԵԱՆ ԽՆԴԻՐԸ
ԺԵ.
Ս. ԳԻՐՔ ԵԻ ԲԱԲԵԼՈՆ

Բաբելացւոց եւ ասորիներու աստուածները կը տեսնեն եւ կը լսեն ամէն բան: Իրենց հայեացքը կը թափանցէ ամէն գաղտնիքի, անհատներու եւ ազգերու ճակատագիրը անոնք կը նախատեսեն: Ամէն մարդ ամէն րոպէ կրնայ անոնց շնորհին արժանանալ, բաբելացին հաստատ համոզուած է, որ աստուածները իր աղօթքը կը լսեն, եւ հետեւեալ տողերը, որոնք ասորական աղիւսի մը վրայ գտնուած են, պերճախօս կերպով կ'արտայայտեն այս հին ժողովուրդներու աղօթքի մասին ունեցած բարձր ըմբռնումը.

«Աղօթք, պաղատանք եւ երկրպագութիւն, պէտք է դուն առաւօտեան մատուցանես անոր, այսպէսով կը զօրանաս դուն,

Եւ աստուծով ամէն դժուարութեան կը յաղթես»:

Մարդս իր ծննդեան օրէն մինչեւ իր մահը աստուածային շնորհէ կախուած է, այս պատճառով ան բարեպաշտ պիտի ըլլայ: Նորածին տղաք եւ աղջիկներ աստուծոյ պարգեւը կը համարուին եւ անոր օգնութեամբ կ'աճին: Ինչպէս որ Յոբայ Գիրքին մէջ (ԺԴ. 6) ըսուած է եահուէի մասին, «Դարձո՛ւր հայեացքդ մարդէ եւ ան կ'ոչնչանայ» նոյնպէս ալ սեպագիր արձանագրութիւնները կը գրեն, «Եթէ դուն ողորմած աչքով դիտես մարդս, ո՛վ աստուածուհի, ան կ'աճի եւ կը բարգաւաճի», կամ «ուր դուն քաղցրութեամբ նայիս, մեռեալը կը կենդանանայ եւ հիւանդը կ'առողջանայ»: Ամենէն ընտիր մաղթանքը, որ բաբելացի քահանայ մը կրնար ընել հիւանդին, էր «Քու, աստուծոյ ողորմած ձեռքերուն կը յանձնեմ քեզ»:

Ուրեմն չնայելով բաբելական բազմաստուածեան՝ կրօնա-բարոյական խնդիրներու նկատմամբ շատ մեծ նմանութիւններ կան երկու կրօններուն մէջ: Նոյնիսկ զոհերու նկատմամբ մենք զարմանալի նմանութիւններ կը գտնենք երկու կրօններու մէջ: Յովսիա եւ Եսայի յաճախ կը յայտարարեն որ Աստուած զոհ չուզեր, այլ սէր. նոյն զգացումը կը գտնենք մենք բաբելացիներուն քով.

«Ամէն օր աղօթէ՛ քու աստուծոյդ, մաքուր խօսքը ամենէն արժանաւոր խունկն է.

Անկեղծ պիտի ըլլաս աստուծոյդ նկատմամբ:

Ամենէն աւելի այս է հաճելի աստուածութեան»:

Եթէ բաբելացիք այսքան մաքուր կրօնա-բարոյական համոզումներու եւ ըմբռնումներու տէր էին, ինչպէ՞ս պէտք է բացատրել անոնց բազմաստուածութիւնը:

Դիւրին բան չէ պատկերացնել Քրիստոսէ մօտաւորապէս 5000 տարի առաջ Միջագետքէն դէպի հարաւ իջնող սեմական ցեղերու հոգեկան եւ զարգացման վիճակը: Այսքանը միայն յայտնի է, որ անոնք ենթարկուեցան սումերներու քաղաքակրթական ազդեցութեան: Սեպագիր արձանագրութիւնները մեզի սումերներու եւ բաբելացիներու յարաբերութեան մասին հետեւեալ խիստ հետաքրքրական ծանօթութիւնները կու տան:

Եփրատ եւ Տիգրիս գետերու ամենէն հարաւային ընթացքին կողմը, ուր միանգամ խոր եւ բարձր եղեգնուտներու միջով հոսելով կ՚անցնին անոնք, Բաբելոնէն ալ դէպի հարաւ մինչեւ Պարսից Ծոցը, հին ատեններ կը բնակէին Սումեացիք*։ Այս ժողովուրդը անվեհեր կերպով մաքառեցաւ ջուրի հոսանքներուն եւ արեւի կիզիչ ճառագայթներուն դէմ եւ մշակեց երկրագործութիւնն ու անասնաբուծութիւնը եւ դարձաւ մարդկային քաղաքակրթութեան կարապետը։ Անոնք տեսան ու դիտեցին մէկ կողմէն անսահման եւ անքննելի ծովը, միւս կողմէն երկու գետերու յաճախ կորստաբեր հոսանքը։ Երկրի պտղաբերութիւնը, արեւի կանոնաւոր շրջանառութիւնը, լուսին եւ լուսաւորներ, վերջապէս ամէն բան անոնց խորհրդաւոր եւ գերբնական կը թուէր։ Երկինքի բարձունքէն սկսեալ մինչեւ երկրիս խորերը, ամէն ինչ Աստուծոյ խորհրդաւոր էութեան մարմնացումն էր։ «Ամէն ինչ կը ցուցնէ միեւնոյն Աստուծոյ հետքը» կ՚ըսէին, եւ աստուածութիւնը յաճախ կ՚անձնաւորէին անոնք։ Մարդկային ընտանիքի կամ յարաբերութեան ձեւը կու տային աստուածներուն։ Անոնք իգական կամ արական սեռի աստուածութիւններ էին։ Անոնցմէ մեծագոյն մասը ծնունդ էր զոյգ մը կամ շարք մը աստուածներու։ Սումերներ այնպիսի աստուածներու կաճառ մը ունէին, ինչպէս յոյներն ու հռովմայեցիները։ Անոնք ալ գիտէին որ արեւի աստուածը ամէհի եւ անխոնջ ձիերէ լծուած կառքի մէջ նստած կը շրջագայի. հոս ալ աստուածները իրենց խորհրդանշանները ունին։ Այսպէս, զոր օր. Մարտուքի խորհրդանշանը՝ նստած, լեզուն դուրս ճօճող եւ գլխուն վրայ երկու եղջիւրներ կրող պոչաւոր, ոչխարանման կենդանի մ՚է, մինչ էայիճը՝ այծաձուկ մը, որ աղբիւրի խորհրդանիշն է։ Բաբելացիք ու սումերացիք ամենուրեք աստուած տեսնել կ՚ուզեն, ոչ միայն երկնային մարմիններու շարժման, այլ եւ թռչուններու թռիչքին եւ ծառերու շարժումին մէջ։ Անոնց հոգին ալ շարունակ կը փնտռէ զայն, կը ճգնի հետազօտելու անոր էութիւնն։ Բայց որքան ալ յունաց փիլիսոփաներու պէս բաբելացի իմաստուններն ալ առանձին աստուածութեանց բազմատեսակութեան արմատն եղող միութիւնը կ՚ըմբռնէին, անոնք կրօնական միաստուածութեան գաղափարին երբեք չկրցան հասնիլ։ Այս տեսակետէն անկարելի է Բաբելոնն ու Ս. Գիրքը երբեւիցէ հաշտեցնել։*

Այդ դաշտերուն եւ անապատներուն տէր ըլլալու համար հարկաւ բաբելացիք ամուր վարչական կազմակերպութիւն մը պիտի ունենային։ Բաբելոնեան առած մը կ՚ըսէ. «Մարդս աստուծոյ ստուերն է, գերին՝ մարդուն, իսկ իշխանը՝ աստուծոյն հաւասար է»։ Այս է պատճառը, որ Սարկոն Ա.-ի որդին Նարամսին *ինքզինք «Ակատէի աստուած» կ՚անուանէ. ուրիշները «Բէլի պատկեր» տիտղոս կը կրեն։ Որքան ալ աստուածները բազմաթիւ եւ բազմապիսի անուններ ունենան, այնու ամենայնիւ անոնք միեւնոյն իմաստն ու նշանակութիւնը կը պահեն* Իլու *բառով։ Այս բառը որ աստուած կը նշանակէ, միւս բոլոր տարբերութիւնները կը բառնայ։ Յայտնի չէ թէ սումերացիք աստուածութիւնը ո՞ր չաստուածներով կը ներկայացնէին. բայց անոնց քաղաքակրթութիւնն իւրացնող սեմական ժողովուրդներ՝ իրենց կարողութեան չափով մասնաւոր գործունէութեան շրջանակ մը կը գծէին։ Այն աստուածը, որ իսրայէլացիք Եահուէ կ՚անուանէին, մովաբացիք՝* Քամմօշ, *իսկ ամմոնացիք՝* Միլքօմ *կը յորջորջէին։ Բայց անոնցմէ իւրաքանչիւրը կ՚ընդունէր, որ իրենց աստուածը միւսներէն տարբեր էութիւն մ՚է։ Այս կ՚ուսուցանէ մեզ նաեւ Ս. Գիրքը Հռութայ Գիրքին մէջ։ Հոս ալ իւրաքանչիւր ժողովուրդ իր աստուածն ունի, այսպէս օրինակ Հռութի Ներ-Որփա «*իր ժողովուրդին եւ իր աստուածներուն*» կը դառնայ (Հռութ, Ա. 15). մինչ Հռութ կ՚ըսէ Նոյեմիին, «քու ժողովուրդդ իմ ժողովուրդս թող ըլլայ եւ քու Աստուածդ իմ Աստուածս» (Հռութ, Ա. 16)։ Այս*

հաւատքը կը տիրէ ոամիկ ժողովուրդին մէջ, նոյնը կը կրկնուի հրեայ պատմաբաններու եւ Երեմիայի, Եսայիի պէս մեծ մատենագիրներուն քով։

Նախաքրիստոնէական շրջանի սեմական բոլոր ժողովուրդները իրենց աստուածներէն մէկը զարդարած են գերագոյն ոյժերով։ Ասորիները եւ ասորեստանցիք, որոնք Քրիստոսէ մօտ 2500 տարի առաջ իրենց երկրին մէջ մեծ պետութիւն մը հիմնեցին, պահելով բաբելոնեան պանթէոնը, անփոփոխ թողուցին նաեւ իրենց ազգային աստուածը զԱսուր, զոր իրենք Աշիր կամ Աշուր կ՚անուանեն եւ «սուրբ», «ինքնածին», «սկզբնապատճառ», «հայր, տէր եւ թագաւոր» եւ նման մակդիրներ կու տան անոր։ Երէ Սաղմոսի մէջ (ճԼԶ. 2) Եահուէի համար կ՚ըսուի «Աստուած աստուածոց եւ Տէր տէրանց», այսպէս ալ Ասուր կ՚անուանեն զայն պաշտողները. երէ Յորդանանի ափերուն, «Աստուածներէն ո՞վ կը նմանի Եահուէին» հարցումը կը լսուէր, «Աստուածներէն ո՞վ կը նմանի Ասուրին», կը կանչէին ասորեստանցիք։ Անոնց իշխանները ասուրի քահանաներ կը համարուէին։ Աստուածութիւնը սեփականացնելու այս սովորութեան անմիջական արդիւնքն եղաւ այն համոզումը, որ իւրաքանչիւր ժողովուրդ միմիայն ինքզինք Աստուծմէ ընտրեալ կը համարէր։ Յայտնի է արդէն՝ թէ Հին Կտակարանի Հրեաները ո՞րպիսի ատելութեամբ կամ արհամարանքով վերէն վար կը նայէին միւս ժողովուրդներուն վրայ։ Այսպէս ալ Ասորիներ իրենք զիրենք ընտրեալ կը սեպէին, բայց միւս ժողովուրդները չէին արհամարեր։ Անոնց կարծիքով Ասորեստան այն երկիրն էր, ուր Ասուր աստուածը իջած եւ իր բնակավայրը հաստատած էր։

Այս ազգային աստուածը իր ժողովուրդին հետ դաշնագրութիւն կը կնքէր, որ Իսրայէլի մէջ նոյնիսկ ծիրանի գօտիի եւ այլ նշանով կը յայտնուի (տե՛ս Ծննդ. ԺԷ. 10-14)։ Ան կ՚ատէ իր ժողովուրդն ատողը եւ կը սիրէ զայն սիրողը. այս պատճառով Իսրայէլի թշնամիները ինքնըստինքեան նաեւ Եահուէի թշնամիներն են (տե՛ս Սաղմոս ՁԳ. եւ Համմտ. Ելից ԻԳ 22)։ Ասուր ալ ասորեստանցիներու թշնամիներուն դէմ կը պատերազմի, ինչպէս Իսրայէլի «Տէր Սեբաւովդ»-ը։ Այս պատճառով ասորական հնադարեան քարաքանդակներուն մէջ յաղթական զօրավարի կամ իշխանի գլխուն վրայ փորագրուած է միշտ Ասուրի պատկերը, որ սովորաբար երկար մօրուքով, երկար մազերով լայնալիճ աղեղը ձեռքին եւ սպառազէն անձ մը կը ներկայացնէ։ Անոր պատկերը յատիտենականութիւն նշանակող բոլորաձեւ շրջանակի մը մէջ առնուած է (Համմ. Սղմ. ԺՐ. 11, լԵ. 2ը.)։ Սաղմոս է. 12-ի մէջ կ՚ըսուի Եահուէի համար, «որ ան ... իր սուրը պիտի սրէ եւ աղեղը լարեր պատրաստեր է», Սաղմ. ԻԱ. 12. «Քու նետերդ անոնց դէմ աղեղիդ վրայ պիտի պատրաստես», այսպէս ալ աղեղով եւ սուրով պատերազմի կ՚ելլէ Ասուր։ Ինչպէս Եահվէ Սաղմ. ԺՐ. 10 «Քերովբէի մը վրայ կ՚ելլէ կը սլանայ», այնպէս ալ Ասուր ցուլի մը վրայ աղեղնալար կը խոյանայ եւ կը կռուի իր ժողովուրդին թշնամիներուն հետ։

Սեմական ժողովուրդներուն քով խոր արմատներ ձգած էր այս համոզումը։ Իւրաքանչիւր երկրի աստուած պէտք է պաշտուէր իր երկրին մէջ։ Հին Կտակարանը երկու բարացուցական օրինակներ ունի այս տեսութեան ճշդութիւնը ցուցնող. Դ. Թագ. ԺԷ. 25-28 կը պատմուի, որ Բաբելէ (Բաբելոն), Քութայէ եւ Համաթէ (Եմաթ) Սամարիա գաղթող ժողովուրդները «Եահուէէ չէին վախնար», «երկրին աստուածը չէին ճանչնար», ասոր համար Եահվէ անոնց դէմ ղրկեց առիւծներ, մինչեւ որ Բաբելոն գերի տարուած քահանաներէն մէկը վերադարձաւ եւ զանոնք մարզեց Աստուծոյ սիրոյ մէջ։ Նոյնը ըրաւ Սարկոն Ա. Բաբելոն գերի տարուող ժողովուրդներու նկատմամբ։ Անոր հրամանով քուրմերը քարոզեցին եւ ուսուցին անոնց ասուրի կրօնը։ Վերոյիշեալ Գիրքի Ե.-րդ

գլուխին մէջ ալ կը պատմուի, որ Նէէմա (Նաաման) ասորի զօրավարը հիւանդութիւնը բուժուելէ ետք երբ հայրենիք վերադառնալ կ՚ուզէ, որովհետեւ Եահուէի հաւատացող մըն էր, անոր երկրի հողէն այնքան կ՚առնէ, որքան կրնար երկու ջորի տանիլ, որպէսզի անոր վրայ պաշտէ զայն։ Այս վերջին պատմութիւնը մեզի համար խիստ կարեւոր է եւ մինչեւ օրս ուշադրութեան չէ արժանացած՝ բացատրելու համար նման պատմական երեւոյթներ։

Այս կրօնական համոզումն էր պատճառը, որ Բաբելոն տարուող կամ գաղթող ցեղերը անմիջապէս հին սումերական կրօնը ընդունեցին։ Այս պատճառով Թէրա կռապաշտ էր եւ Եսթերը սնուցանող Մուրթքէն (=Մարտոքայ) չնայած իր հօրմէն, հրեայ ըլլալուն, Մարտուք=Բէլ աստուծոյն նուիրուած էր։ Քանաանի մէջ բնակող խարայէլացիք ինկան Բահուղի եւ Աշէրաներու պաշտամունքին մէջ եւ նոյնիսկ Եսայի եւ իր նախորդները իրենց սպառնալիքով եւ բոցավառ ճառերով չկրցան ազդել անոնց վրայ։ Սամարիոյ եւ Յուդայի բնակիչները Բաբելոն տարուեցան եւ շատերը հոն ոչնչացան, իսկ մնացողները Կիւրոսի օրով, 539-ին Քրիստոսէ առաջ, իրենց երկիրը դարձան եւ իրենց տաճարը շինեցին։ Չնայելով Սաղմ. Զե 1-3-ի մէջ արտայայտուած եւ Իսրայէլի Եահուէի վրայ դրած յոյսերուն Անտիոքոս Դ. Եպիփան տաճարը կործանեց։ Մակաբայեցիներու յաղթութեամբ կրկին անգամ վերարծածեց Եահուէի վրայ դրուած յոյսերը (տե՛ս Սաղմ. ԼԳ. 12, Ճ. 116, ՃԽԴ.), բայց այդ ալ ուրիշ անյաջողութիւններով ի դերեւ ելաւ։ Մինչեւ որ Յիսուս Քրիստոս գալով վերջ տուաւ բոլոր սնոտի յոյսերուն եւ հիմնեց իր սիրոյ վրայ հաստատուած եկեղեցին։

Կէօթէ ըսած է, որ «Մարդկային հոգին աւետարաններու մէջ արտայայտուած քրիստոնէութեան վեհութեան եւ բարոյական քաղաքակրթութեան սահմանները բնաւ պիտի չանցնի»։ Ամէն պարագայի մէջ ասորա-բաբելական գրականութեամբ զբաղող բոլոր գիտնականները շատ ուրախ են եւ հիացմամբ կը կարդան Աւետարանի այն հատուածը, որ ամենէն առաջ բաբելացի իմաստուններ իրենց ընծաները կը մատուցանեն օրօրոցի մէջ գտնուող Քրիստոսին։

Կը վերջացնենք Տելիչեան Խնդիրը ընդհանուր առմամբ այլեւայլ գիրքերէ քաղուած հատուածներով կամ մեր կողմէն եղած տեսութիւններով բաւական ընդարձակելով Տելիչի առաջին եւ երրորդ դասախօսութիւնները, զորս տեղ-տեղ գրեթէ բառացի թարգմանեցինք առանց իր բոլոր եզրակացութիւններու հետ համաձայնելու։ Կը յուսանք եւ վըստահ ենք՝ որ լրջամիտ եւ ուշիմ ընթերցողներուն օգտակար եղաւ յօդուածս եւ անոնց մտաւոր հորիզոնը զգալապէս ընդլայնեց, արծարծելով անոնց մէջ Ս. Գիրքի շուրջ տարածուած գիտական խնդիրներու նկատմամբ կենդանի հետաքրքրութիւն, որով մենք ալ մեր նպատակին, այսինքն ամենէն առաջ ճշմարտութեան ծառայելու հասած պիտի ըլլանք։

ՏՕՔԹ. Յ. ԹՕՓՃԵԱՆ

Քերա - Կ. Պոլիս, 1906
(Վերջ)

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

ԽՆԱԾԱԽԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Պատմահնագիտական յուշարձաններով հարուստ Սիւնեաց աշխարհի հին ու լըքւած գիւղատեղիներում մինչ օրս պահպանուել են քարայր-մատուռներ, աղբիւրներ, կամուրջներ, գերեզմանատներ, որոնց տարբեր առիթներով անդրադարձել են նախորդ հետազօտողները: Մեր խնդիրն է ուսումնասիրել այդ յուշարձանները վիմագրագիտական տեսանկիւնից: Սիւնեաց վիմագրական հարուստ ժառանգութիւնը հիմնականում իր ամփոփ տեղն է գտել «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշարի երկրորդ պրակում: Յատուկ պէտք է նշել, որ ինչ-ինչ պատճառներով դրանց մի մասը դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Սոյն յօդուածով փորձ է արւում լուսաբանել Սիւնեաց աշխարհի մելիքական գիւղերից մէկի՝ Խնածախի անտիպ վիմագրերը:

Խնածախը (յայտնի նաեւ՝ Խանազակ, Խոնածախ, Խանածախ անուններով): Գրտնւում է ՀՀ Սիւնիքի մարզում, Գորիս քաղաքից 10 կմ հիւսիս-արեւելք: Ըստ պատմագիր Ստեփանոս Օրբէլեանի հարկացուցակի՝ գիւղը պատմական Հաբանդ գաւառի կազմում է՝ 20 միաւոր հարկով[1]: Հնագիտական պեղումների արդիւնքները վկայում են, որ գիւղը բնակեցուած է եղել վաղնջական ժամանակներից: 1980-1981 թթ. հնագէտ Օնիկ Խնկիկեանի կողմից դամբարաններ եւ կացարաններ են պեղուել Խնածախում: Ջորս դամբարաններից պեղուած նիւթերը, բրոնզէ թիթեղից ձեռնափի տեսքով պատրաստուած կախիկը, որը Հայաստանում գտնուել է առաջին անգամ, պահպանւում են Երեւանում[2]:

Ինչպէս նշում է Մորուս Հասրաթեանը, 13-րդ դարից սկսած Խնածախը դառնում է Սիւնիքի առաջնակարգ կենտրոնը (վարչական առումով)՝ գերազանցելով Տաթեւին, Տեղին, Գորիս-Վերին շէնին եւ Անգեղակոթին[3]: Հեղինակը մի ծաւալուն ուսումնասիրութիւն ունի նուիրուած Քաշաթաղ-Խնածախ բնակավայրերին[4], այնտեղ ապրած ու մեծ պատմութիւն կերտած մելիքական տանը, որտեղ հանգամանօրէն քննւում է մելիքների, նրանց ժառանգների, պատմական այդ ժամանակահատուածում նրանց թողած դերի ու նշանակութեան մասին: Ըստ փաստերի՝ Քաշաթաղի մելիքական տունը սերում է Վայոց ձորի Պռոշեան իշխանական տոհմից[5]:

Հաբանդ գաւառում ձեւաւորուած մելիքութիւններից ամենազօրեղը մելիք-Հայկազեան տունն է: Այն յիշատակւում է որպէս Քաշաթաղի, իսկ աւելի ուշ՝ Խնածախի մելիքութիւն: 16-րդ դարի առաջին կէսին մելիք Հայկազ Ա-ի որդին՝ Հախնազարն իրենց նստավայրը Քաշաթաղից տեղափոխում է Խնածախ գիւղ, որտեղ եւ ծաւալում է իր յետագայ գործունէութիւնը: Տեղափոխման հիմնական պատճառն այն էր, որ մահմետական իշխանութիւնները Քաշաթաղում սկսել էին բնակեցնել քրդական քոչուոր ցե-

---

[1] **Ստ. Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 399:

[2] **Օ. Խնկիկեան**, ՊԲՀ, 1988, №1,էջ 235: **Ս. Հախուերդեան**, Գորիսի ամփոփ պատմութիւն, Երեւան, 2005, էջ 52:

[3] **Մ. Հասրաթեան**, Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան, 1985, էջ 156:

[4] Նոյն տեղում, էջ 155:

[5] Նոյն տեղում, էջ 162:

ղերի, որի համար էլ հայ մելիքները նման որոշում կայացրին[6]։ Գիւղի ձորամիջեան ճանապարհի եզրին[7] պահպանուել է մելիքական ապարանքը, որը 16-րդ դարից մեզ հասած պալատական հազուագիւտ յուշարձան է՝ դարաշրջանին յատուկ յօրինուածքով[8]։ Ապարանքը յետագայում ժառանգել է մելիք Հախնազարի որդին՝ մելիք Հայկազը (1551-1623 թթ.)։ Նա վայելում էր շահ Աբաս Ա-ի համակրանքը եւ ըստ աւանդութեան շահի կողմից ստացել էր «Մեր առիւծ» մականունը[9]։ Այդ փաստն արձանագրուած է նաեւ այլ աղբիւրներում. «Անապատին հիմնարկողներուն կարգին պիտի յիշենք նաեւ ոչ կրօնաւոր մէկ մը, Ջուղայեցի Հախնազարի որդի Հայկազն իշխանը, որուն անունը անգամ մը տուինք եւ զոր զինուորական քաջութեան համար Շահաբաս շատ սիրեց, և կացոյց զնա իշխան երկրի, հանեալ ի պատիւ մեծութեան»[10]։

Մելիք Հայկազեանների շառաւիղների հետքերը 19-րդ դարի առաջին կէսին գըտնում ենք մե՛րթ Քութայիսում, մե՛րթ Շաքի քաղաքում[11]։ 1899 թուականին տպագրուած «Մուրճ» ամսագրում յիշատակութիւն կայ մելիքական այս տոհմի ներկայացուցիչներից մէկի մասին։ Այսպէս. «Մելիք-Հայկազեան Իսահակ, գնդապետ, վախճանուեց Թիֆլիսում, Փետր. սկզբներին։ Հանգուցեալը, որը վերջին տարիներս ծառայութեամբ իբիրիալումն էր, աւելի առաջ, Ախալցխա եղած միջոցին 10 տարի եղաւ նախագահ Կովկասի Հայոց բարեգ. ընկերութեան Ախալցխայի ճիւղի, ուր նա գործեց այնքան եռանդով, որ ճիւղի առաջարկով՝ ընկերութեան կենտրոնի ընդհանուր ժողովը նորան ընկերութեան պատուաւոր անդամ նշանակեց»[12]։

Գնդապետ Իսահակ Մելիք Հայկազեանցը ստանձնել էր նաեւ 1890 թուականին Անիում կաթողիկէ եկեղեցու խաչկալը կառուցելու ծախսը[13]։

*Յուշարձանագէտ-պատմաբան Ս. Կարապետեանը մի առիթով անդրադարձել է Քաշաթաղի մելիքական տոհմից սերող Դաւիթ Լազարեւի տապանաքարի վերծանութեանը[14] **(նկ. 1)**։ Տապանաքարը գտնւում է Շաքիի «զարիպականաց» գերեզմանատունը։ Հանգուցեալի որդին՝ Իվան Դաւթի Լազարեւը, ռուսական բանակի զինուորական գործիչ էր[15]։ 1867 թ. նրան շնորհուել է գեներալ-լէյտենանտի կոչում[16]։ Նշանաւոր գեներալի կրտսեր եղբայրը՝ Յակոբ Դաւթի Լազարեանը (ռուսական բանակի գնդապետ, 1824-1903), ծնուել եւ մեծացել է Շուշիում։ Նրա մասին ասւում է. «Թողնելով զինուորական ծառայութիւնը, զբաղուել է պատմութեամբ։ Իր ձեռքի տակ եղած պատմական կարեւոր արժէք ունեցող փաստաթղթերը եւ տեղեկութիւնները նա տրամադրել է Բաֆֆուն՝ «Խամսայի մելիքութիւնները» եւ ռուս զինուորական պատմաբան Վ. Պոտտոյին՝ «Գեներալ ադիւտանտ Յ. Դ. Լազարեւ», «Ղարաբաղի առաջին կամաւորները»*

---

[6] **Ս. Հախուերդեան**, նշ. աշխ., էջ 5։

[7] **Ա. Ղուլեան**, Արցախի եւ Սիւնիքի մելիքական ապարանքները, Երեւան, 2001, էջ 23։

[8] Նոյն տեղում, էջ 25։

[9] **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 156։

[10] **Մաղաքիա Արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ., Ս. էջմիածին, 2001, սիւն 2731։

[11] **Ս. Կարապետեան**, Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում, հ. 3, Երեւան, 1999, էջ 126։

[12] «**Մուրճ**», Թիֆլիս, 1899, № 1, էջ 144-145։

[13] «**Մշակ**», Թիֆլիս, 1890, № 1, էջ 3։

[14] **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 126։

[15] Генераль-Адьютантъ Иванъ Давыдовичъ Лазаревъ. Составилъ В. Потто, Тифлисъ, 1900.


[16] **Ա. Ս. Ղազիեան**, ԲՀԱ, Հ. Դ. Լազարեանի նամակները Առաքել Կոստանեանցին, 1988թ., հ. 2, էջ 220։

աշխատութիւններում օգտագործելու համար[17]։

Խնածախի տարածքում պահպանուած հնագիտական յուշարձաններն են. գիւղից 1 կմ հարաւ «Խաչին խութ» կոչուող բլրի հարաւային լանջին գտնուող դամբարանադաշտ (մ. թ. ա. 1 հազ.), գիւղի չորս կողմերի բարձունքներին կանգնեցուած 1301, 1581, 1601, 1620 թուակիր խաչքարեր[18], Սբ. Հռիփսիմէ եկեղեցի (1610 թ.), քարայր-եկեղեցի, որը գտնւում է Անապատի ձոր կոչուող վայրում, երկու մատուռ, մզկիթ, աղբիւր, նշանաւոր մելիքական ապարանք։

Սուրբ Հռիփսիմէ եկեղեցի. *Գտնւում է գիւղի արեւմտեան կողմում՝ Գիւնի կոչուող թաղամասում, կառուցել է մելիք Հայկազ Բ-ն։ Եռանաւ, թաղածածկ եկեղեցի է՝ զոյգ աւանդատներով, կառուցուած մանր քարերով, ունեցել է երկու մուտք՝ հարաւից եւ արեւմուտքից, հարաւային մուտքը ներկայումս չի գործում։ Ըստ եկեղեցու ճակատակալ քարի արձանագրութեան՝ կառուցուել է 1610-1615 թթ.։*


1. Եկեղեցու բարաւորին, 2 տող.



1610 /Թ[ՎԻՆ] ՌԿԹ (1615): Նկ. 2

1701 թուականին, եկեղեցուն արեւմտեան կողմից կից կառուցուել է սրբատաշ գաւիթ, իսկ 1905 թուականին՝ զանգակատուն։

2. Գաւթի արեւմտեան պատին՝ արտաքուստ, 5 տող.



ԹՎԻՆ / ՌՃԾ (1701)
ԿԱՄԱԻՆ Ա3 ԵՄ՝ Պ[Ա]Ր[Ո]Ն ԱՂԱՃԱՆ ԲԷԿՍ,
ՇԻՆԵՑԻ ԶԳԱՒԻԹՍ Ի Վ[Ե]Ր[Ա3] ԳԵՐԵԶՄԱՆԻ
ԵՂԲՕՐՆ ԻՄՈՅ Պ[Ա]Ր[Ո]Ն ՊՀԱԹՈՐ ԲԷԿԻՆ[19]: Նկ. 3

[17] **Ա. Ս. Ղազիեան**, ԲՀԱ, ՆՂ. աշխ., էջ 38:


[18] **Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Հ. Խ. Բարսեղեան**, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2 (դ-կ), Երեւան, 1988, էջ 743:

[19] Այս արձանագրութեանն անդրադարձել են Գորիսի պետական համալսարանի դասախօսներ Ս. Հախուեր-

Խոտ գիւղի վարչական տարածքում գտնուող Մրգաձորի Ս. Աստուածածին եկեղեցու բարաւորի արձանագրութիւնը բովանդակային առումով հետաքրքիր տեղեկութիւն է հաղորդում վերոյիշեալ Պհաթոր բեկի գործունէութեան մասին: Ստորեւ Մրգաձորի եկեղեցու բարաւորի շինարարական արձանագրութիւնը. «Ես՝ պարոն Պհաթուր պակս, որդի/ պարոն մէլիք Հախնազարին, որ եմք յերկրէն Քաշ[ա]թաղուց, ի գեղջէն Խանածա/խա, ես և մայր իմ Մահփարին, շինել տվինք/ սբ եկեղեցիս փրկութի[ին] հոգոյն թվ[ին] ՌՃԽՒ (1700)[20]»:

Արձանագրութիւններից պարզ են դառնում, որ եկեղեցին կառուցել են Խնածախ գիւղում ապրող Քաշաթաղի Մելիք Հախնազարի կինը՝ Մահփարին եւ նրանց որդին՝ Պհաթուր բեկը: երկու արձանագրութիւններում էլ յիշատակուած է միեւնոյն Պհաթուր բեկը, որը որդին էր մելիք Հախնազարի եւ եղբայրը Աղաճան բեկի: Մրգաձորի եկեղեցու արձանագրութիւնը եւս մէկ դրուագ է ապացուցելու Սիւնեաց ազնուազարմ տիկնանց ծաւալած շինարարական գործունէութիւնը:

*3. **Շինարարական արձանագրութիւն** նախորդին կից, արտաքուստ՝ 4 տող.*



ԱՅՍ ԳԱԽԻԹՍ ՆՈՐՈ
ԳԵՑ ՂԱՀՐԱՄԱՆՅԱ
ՐՈՒԹԻ[Ի]ՆԻԱՆ
1897: Նկ. 4

Ըստ վիմագրի՝ գաւիթը վերանորոգուել է 1897 թ. Ղահրաման Յարութիւնեանի մեկենասութեամբ:

Եկեղեցու ներսում կան սալատապաններ՝ «այս է տապան», «լուսայհոգի» արձանագրութիւններով: Առաջին հայեացքից թւում է, թէ եկեղեցու ներսում թաղումներ են արուել, մինչդեռ դրանք եկեղեցուն կից գերեզմանատան տապանաքարերն են, որոնք 1937 թ. կոլեկտիւացման տարիներին քանդուել են կոմունիստների կողմից եւ որպէս շինաքար օգտագործուել եկեղեցին վերանորոգելու ժամանակ, որը յետագայում պիտի ծառայեր որպէս պահեստ[21]:

4. Տապանաքարի բեկորներ.



ԱՅՍ Է ՏԱՊԱ[Ն]:



ԼՈՍԱՅՀՈԳԻ:

դեանը եւ Գ. Շաբունցը՝ վերլուծելով այն այլ տեսանկիւնից: Մենք վերծանութեանը կից տալիս ենք համապատասխան գրչագիրը եւ լուսանկարը:

[20] **Ս. Հախուերդեան**, **Գ. Շաբունց**, Մրգաձոր գիւղի տեղադրութեան եւ այդ գիւղում եկեղեցի կառուցած սիւնեցի տիկնոջ իմաստութեան հարցի շուրջ, Հայագիտական ուսումնասիրութիւն (գիտական յօդուածների պարբերական ժողովածոյ), Ստեփանակերտ, 2017, էջ 14-18:

[21] Այս տեղեկութիւնը մեզ հաղորդեց Խնածախցի Արգամ Լալայեանը:

Հարկ ենք համարում նշել, որ եկեղեցում ժամանակին ծառայել են Տ. Արսէն եւ Տ. Ալեքսանդր քահանաները, որոնց անունները վկայուած են Հայաստանի ազգային արխիւի ծխական մատեաններից մէկում.


1. Արսէն քահանայ – 1881 թ.

2. Ալէքսանդր քահանայ Տէր-Աստուածատրեանց – 1896 թ.[22]*:*

Գիւղի նախկին մանկավարժ Ալեքսանդր Մուսաէլեանի անձնական արխիւում գրառումներ եւ տեղեկութիւններ կան գիւղի պատմութեան մասին: Մանկավարժն այդ նիւթերը հաւաքել է, հաւանաբար, յետագայում գիւղի պատմութիւնը լուսաբանելու եւ տպագրելու համար: Խնածախի դպրոցի տնօրէն Արտաւազդ Աբրահամեանի աջակցութեամբ ձեռք բերեցինք Մուսաէլեանի արխիւում գտնուող նիւթերը, որոնք որոշ առումներով ուղեցոյց դարձան մեզ համար: Այնտեղ եւս յիշատակւում են վերը նշուած քահանաները. «Եկեղեցում աշխատել են երկու քահանայ (տէրտէր), մեծ եւ փոքր: Մեծ քահանան եղել է Արսէն Աստրեանը, թաղուած է եղել եկեղեցու բակում: Նրա որդին՝ Վասիլ Աստրեանը, յետագայում հօր դիակը հանել է եկեղեցու բակից եւ տեղափոխել ընդհանուր գերեզմանատուն, իսկ փոքր քահանան՝ Ալեքսան Աստրեանը, թաղուած է եկեղեցու հիւսիս-արեւելեան կողմում»[23]*:*

Եկեղեցու հիւսիսարեւելեան կողմում երկու տապանաքար կայ՝ գծապատկերներով, անգիր, ուստի դժուարանում ենք ասել, թէ դրանցից որն է Տէր Ալեքսանի տապանաքարը: Մեզ յաջողուեց եկեղեցու բակում՝ պատի տակ գտնել տեղահանուած, ջարդուած եւ փոքր-ինչ եղծուած գրով մի տապանաքար, որն ըստ ամենայնի Արսէն քահանայինն է:

*5. **Տապանաքարի** բեկոր, 4 տող.*



[ՏԱ] ՊԱՆ Ի ԳԷ[ՐԵԶՄԱՆ]
ԵՒ ՄԵՐ
Ք ՋԱՐՍԵ[Ն]
. . . Ի: Նկ. 5

Յաջողուեց գտնել նաեւ Արսէն քահանայի եւ կողակցի միասնական տապանաքարը: Ինչպէս վերը նշեցինք, Արսէն քահանայի աճիւնը տեղափոխուել էր գիւղի ընդհանուր գերեզմանատուն:

*6. **Քառակողմ յուշակոթող**, չորս կողմերում արձանագրութիւններ.*

1. ԱՐԴ ՀԱՆԳՉՈՒՄ / Է ԱՅՍՏԷՂ ԱՆ/ՓՕՓԵԱԼ ՄԱՐ/ՄԻՆԸ ԼՈՒՍԱ/ՀՕԳԻ ԵՒ ՀՈՒՐԱ/ՍԷՐ ՄԱՐՔԱՐ/ԻՏ ՏԷՐ-ԱՍՏ/ՈՒԱԾԱՏՈՒՐ/ԵԱՆՑՆ՝ ԿՕՂԱԿԻՑ /ԱՐՍԷՆ ՔԱՀԱՆԱՅԻ, / ԾՆՎ[ԱԾ] 1865 Թ. / ՎԱԽՃ[ԱՆՈՒԱԾ] 19..:

[22] ՀԱԱ, ֆոնդ 47, ցուցակ 5, գործ 562:

[23] Ալ. Մուսաէլեանի անձնական արխիւ (պահւում է գիւղում՝ իր հայրական տանը):

2. ԲԱՐԻ ՅԻՇԱ/ՏԱԿՍ ՊԱՐ/ՏԱՈՐՎԱԾ / ԱՐԺԱՆԱ/ՈՐ ԵՆՔ ՀԱ/ՄԱՐՈՒՄ ՄԷՐ / ԾՆՕՂՆԵՐԻՆ / ՄԵՆՔ՝ ԵՂԲԱ/ՅՐՔՍ:

3.ԱՐԴ ՀԱՆԳՋՈՒՄ /Է ԱՅՍՏԷՂ ԱՆ/ՓՕՓԵԱԼ ՄԱՐ/ՄԻՆԸ ԼՈՒՍԱ/ՀՕԳԻ ՀԱՅՐ ԺՕՂՕ/ՎՈՒՐԴԻ ԱՐՍԷՆ/ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-/ՊՕՂՕՍԵԱՆ ՏԷՐ-/ԱՍՏՈՒԱԾԱ/ՏՈՒՐԵԱՆՑԻ/ 1881 Թ. ՕԳ 11 ԻՆ ԾՆՎ[ԱԾ] Է 1958Թ ՎԱԽՃ[ԱՆՈՒԱԾ]:

4. ԲԱՐԻ ԺՕՂՕ/ՎՈՒՐԴ ՅԻՇԷ/ՅԷՔ ԴՈՒՔ ԱՅՆ ՕՐԸ, ՈՐ/ԾԵՋ ՀԵՏ ԷԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ..1 ՏԱՐԻ/ԲԱ/ՅՑ ԱՆԳՈՒԹ ՄԱՀԸ ՇՈՒՏ/ԲԱԺԱՆԵՑ ԻՆՁ ԾԵՋԱՆԻՑ... Նկ. 6, 7, 8, 9:

Ըստ գիւղի տարեցներից Սվետլաննա Աբրահամեանի պատմածի՝ «Ղերանց Արսենը եւ ղերանց[24] Ալեքսանը հորեղբօր տղաներ են եղել: Ասում են գիւղացիների կողմից սիրուած քահանաներ են եղել ղերանց տղերքը: Մինչեւ հիմա էլ նրանց տոհմը կայ, ապրում են գիւղում, նրանց ղերանց ցեղ են ասում»:


Եկեղեցու բակում՝ արեւմտեան պատի տակ կան արձանագիր խաչքարի եւ տապանաքարի բեկորներ.

*7. **Խաչքարի** բեկոր, 3 տող.*




Խ[Ա]ՉՍ Մ...
ԱՂԻ ...
ՓՐ[ԿՈՒԹԵԱՆ]: Նկ. 10

*8. **Տապանաքար**, 2 տող.*



ՊՐԴ Է ՈՐԴԻՆ ԻՄ ՕՀԱՆՋԱՆ ԲԵԿԻՆ
ԹՎ[Ի]Ն ՌՃՀԱ (1722): Նկ. 11


*9. **Տապանաքարի** բեկոր, 5 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊ[ԱՆ]
ԻՇԽԱՆ Թ...
ԳՈՂՈՎ ՊԵ...
ՆԵԱՆ ՄԵՐ ...
ՌՃԾ (1701)...: Նկ. 12

[24] Գորիսի բարբառում հաճախային ասել են նաեւ ադեր, այսինքն տէրտէր / ղերանց-տէրտէրանց/:

*10. **Տապանաքարի** բեկոր, 4 տող.*



...Ա ԱՅՍ Ն
...ՈՒՐՆ ԻՄ Շ...
...Ն ՀՈԳՈՅՆ
...[ՓՐ] ԿՈՒԹԻ[ՒՆ]: Նկ.13

Քարայր եկեղեցի. *Գտնւում է ձորամիջում, Անապատի ձոր կոչուող վայրում: Այն ամբողջովին ժայռի մէջ է եւ ծառայել է որպէս եկեղեցի (**նկ. 27**): Եկեղեցու ներսում կայ մէկ խաչքար (**նկ. 28**), առանց արձանագրութիւնների, տարածքում՝ տապանաքարեր, որոնց վրայ քանդակուած են պարզունակ խաչեր[25]: Գիւղացիներն այն անուանում են ձորամիջեան եկեղեցի, սակայն Խնածախ գիւղում ընդօրինակուած ձեռագիր յիշատակարաններից մէկում կարդում ենք, որ Անապատի ձորի եկեղեցու անունը Ամենափրկիչ է: Ձեռագրի հեղինակը Մարիամն է, պատուիրատուն՝ Մարկոս եպիսկոպոսը.*

«Գրեցաւ զսայ ի յերկրիս Քաշաթաղու, ի գուղս Խանածախ, ընդ հովանեաւ Ամէնափրկչիս, ի թըւականիս Հայոց ՌՂԶ-ին (1647). որում և մեք թողաք զսա յիշատակ: Ով ոք զսա կարդայ և աւրինակէ, մի բերան զմեզ յիշէ և ողորմի ասէ՝ Աստուած իւրն ողորմեսցի, իւր միւսանգամ գալստեանն. ամէն[26]»:

*Դառնանք գիւղի զոյգ մատուռներին: Դրանցից մէկը գտնւում է Սբ. Հռիփսիմէ եկեղեցուց մօտ 20 մ հարաւ-արեւելք, Վ. Թունանեանի տնամերձ հողամասում: Տեղացիներն այն անուանում են Քմախաչի սրբավայր: Միւս մատուռը, որ կոչւում է Բհաւորի[27], կառուցուել է 13-14-րդ դդ. (**նկ. 14**) եւ գտնւում է Անապատի հանդում՝ գիւղից մօտ 2 կմ հարաւ-արեւելք: Գիւղացիները մի քանի աւանդազրոյց գիտեն այդ մատուռի մասին. այդ հողակտորը, որտեղ կառուցուել է մատուռը, մի գիւղացու է պատկանելիս եղել: Հողը մշակելու ժամանակ մշակը սերմացուի պարկը ծածկել է շորով, որպէսզի արեւից պաշտպանի: Նրա որդին եկել, թաքուն մտել է այդ շորի տակ եւ երբ մշակը վերադարձել է սերմացուն տանելու, զգացել է, որ ինչ-որ բան է շարժւում շորի տակ: Կարծելով, թէ օձ է մտել պարկի մէջ, բահով ուժգին հարուածել է, որից եւ մահացել է նրա մանկահասակ երեխան: Հէնց այդ նոյն վայրում էլ վշտահար գիւղացին իր որդու յիշատակին կառուցել է մատուռը՝ անուանելով այն Բհաւէրի:*

Մէկ ուրիշ աւանդազրոյցի համաձայն՝ Բհաւորի մատուռից դէպի հարաւ-արեւելք մի փոքրիկ գիւղ է եղել: Այնտեղ Ձիթհան-սրանոց է եղել, որտեղ բուսական իւղ են ստացել: Տարածքում սրբավայր կառուցելու համար քահանան իւրաքանչիւր գիւղացու առաջարկել է մի բահ օգնութիւն: Այստեղից էլ ծագել է մատուռի անուանումը՝ Բհաւոր:

Կայ նաեւ այսպիսի մի զրոյց, որում ընդգծւում է մատուռի զօրութիւնը. իբրեւ երաշտի ժամանակ կոյս աղջկայ ձեռքով քար է բերուել Բհաւորից եւ նետուել աղբիւրի

[25] **Եր. Լալայեան**, Ազգագրական հաւաք, հ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 37:

[26] Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ժէ դար, հ. Գ, կազմեց՝ Վ. Յակոբեան, Երեւան, 1984, էջ 256, հ. 421:


[27] Բհաւէր բառի հիմքում ընկած է բահ բառը: Գորիսի բարբառում բահը արտասանում են պահ, ուստի Բհաւէր՝ Պհաւէր, այսինքն պահով (բահով) մարդ:

ջրի մէջ, որից յետոյ յորդ անձրեւ է տեղացել[28]։

Մզկիթ. *Գիւղում պահպանուել են մզկիթի մնացորդներ կամ աւերակներ, որոնք վկայում են, որ ժամանակին այստեղ քրդեր են ապրել։ Կիսաւեր մզկիթը կամ ինչպէս գիւղացիներն են ասում քումբազը, գտնւում է Ղուզի մայլա կոչուող թաղամասում (**նկ. 15**)։ Այն կառուցել է մելիք Հայկազի հաւատափոխ եղած եւ Ալլահվերդի անուն ստացած որդին, որն իր հօր կենդանութեան օրօք կամեցել է ստանձնել մելիքութիւնը, որի համար գնացել է շահի մօտ, մահմեդականութիւն ընդունել եւ շահի զօրքով եկել հօր դէմ։ Այդ ժամանակ մելիք Հայկազն արդէն մահացած է եղել եւ մելիքութիւնն ականջից անցնում է նրան[29]։ Վերոնշեալ Ալլահվերդու պատմութիւնը գրի է առել նաեւ Ս. Խանզադեանը[30]։*

Խնածախի նշանաւոր խաչքարերը. *Խորհրդանշական են գիւղը եզերող բարձունքներին կանգնեցուած խաչքարերը, որոնց վիմագրերում յիշատակուած են մելիքական տոհմի նշանաւոր անձինք։ Վիմագրերի հիմամբ Մ. Հասրաթեանը յստակեցրել է Քաշաթաղի մելիքների ծագումնաբանութիւնը, Քաշաթաղում յայտնուելու փաստերը եւ թուագրութիւնը։ Տեղացիներն աւանդազրոյցներ են պատմում խաչքարերի մասին, մինչդեռ դրանցից իւրաքանչիւրը պատմական մի կարեւոր ժամանակահատուածի վկայութիւն է։ Բլուրներից իւրաքանչիւրն ունի իր անուանումը, իսկ այնտեղ կանգնեցուած խաչքարերն իրենց նշանակութիւնն ու պատմութիւնը։ Մենք հնարաւորութիւն ունեցանք գրի առնել գիւղի նախկին մանկավարժ Օլգա Յովսէփեանի հետ զրոյցը։ Ի դէպ, խաչքարերից մէկը գտնւում է հէնց նրանց հողամասի մէջ։ Այդ խաչքարերն իբրեւ թէ կանգնեցուած են եղել գիւղի մի մեծահարուստ մարդու երեխաների յիշատակին։ Ոմանք պնդում են, որ դրանք կանգնեցուել են չորս եղբայրների յիշատակին, ովքեր գիւղի մեծահարուստի զաւակներն են եղել։ Նրանց յիշատակը անմահացրել են՝ գիւղի բարձունքին կանգնեցնելով խաչքարեր։*

*11. **Խաչքար** (1,70 x 0,70 մ) գիւղի հիւսիսարեւմտեան բարձունքին՝ Ճղացի խութ կոչուող բլրի վրայ։ Պահպանուել է կոտրուած խաչքարի վերին կէսը, հետեւեալ արձանագրութեամբ. «ԵՄ՝ ՀԱԽՆԱԶԱՐ, Կ[Ա]ՆԳ...։ Աւելի վաղ Մ. Հասրաթեանը գրառել է խաչքարի բուն բովանդակութիւնը. ԵՄ՝ ՀԱԽՆԱԶԱՐ, ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱԶՍ ՀԱՒՐԵՂԲԱՒՐ ԻՄ ՂՈՒԼԻՆ, Թվ. Ռվ (1581)[31]։ Տեղացիների հաղորդմամբ՝ խաչքարը վնասուել է կայծակից։ Յետագայում, Խաչեր կոչուող տարածքից մի խաչքար է բերուել եւ տեղադրուել վնասուած խաչքարի անմիջապէս կողքին՝ պատուանդանի վրայ։ Քիւին խաչքարի տեղափոխման եւ տեղադրման տարեթիւն է.*



1987 թ.: Նկ. 16

Ըստ Ալ. Մուսաէլեանի անտիպ արխիւի. «1985 թ. Մայիսի 10-ին կայծակը խփում է գիւղի հիւսիսարեւմտեան բլրի վրայ կանգնեցուած խաչքարին։ Այն կրկին կանգնեցւում է 1987 թ-ի Մայիսի 10-ին»։

---

[28] Աւանդազրոյցները մեզ պատմեց Խնածախցի Սր. Աբրահամեանը։ Այն գրի է առել նաեւ գիւղի նախկին մանկավարժ Ալ. Մուսաէլեանը, աւանդազրոյցները պահպանուել է նրա անձնական անտիպ արխիւում։


[29] **Եր. Լալայեան**, նշ. աշխ., էջ 14։

[30] **Ս. Խանզադեան**, Հայրենապատում, Երեւան, 1981, էջ 120։

[31] **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 163։

*12. **Խաչքար**. (2,0 x 0,60 մ)[32]: Գտնւում է գիւղի հիւսիսարեւելեան բարձունքին: Երկլեզու՝ (հայերէն-պարսկերէն) արձանագրութեամբ 1620 թուակիր խաչքար է[33] (**նկ. 17**):*

*13. **Խաչքար** (2,20 x 0,80 մ)[34],[35]: Կանգնեցուած է Մոթալ-ղայա բլրի վրայ, Ջումանց կալում կամ Բաղդասարեանների տնամերձ հողամասում: Ասում են, տարիներ առաջ Բաքուից իրենց գիւղ տեղափոխուած եւ բնակութիւն հաստատած մի ընտանիք հոգեկան խնդիրներով մի տղայ ունէր, ով պնդում էր, որ աստծոյ կողմից հրաման ունի սեւացնելու գիւղի բոլոր խաչքարերը: Գիւղի գերեզմանատան խաչքարերից շատերն արդէն հասցրել էր սեւացնել ու մի գիշեր էլ, մազութով լի տարան ձեռքին եկել էր, որպէսզի սեւացնի նաեւ իրենց հողամասում գտնուող խաչքարը, որը նրան այդպէս էլ չյաջողուեց: Տիկին Յովսէփեանն ասում է, որ յաճախ է խաչքարը կործանումից փրկել: Պատմում է, որ գանձագողութեան նպատակով գալիս էին խաչքարի տակը քանդելու, որտեղ ամփոփուած է մեծահարուստի աղջիկ: Փաստօրէն, երկու զրոյց է շրջանառւում. խաչքարերը մեծահարուստի չորս տղաների կամ մեծահարուստի երեք տղաների եւ մէկ աղջկայ յիշատակին են կանգնեցուած:*



ԿԱՄԱԻՆ Ա֊Յ, ԵՍ՝ ԱԻՔԱՆ, ԿԱՆԳՆԵՑԻ ՋԽԱՋՍ Ի ՓՐԿՈՒԹԵ[ԱՆ] ՀՈԳՈ ԻՄՈ, ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ: ԹՎ[ԻՆ] ՉԾ (1301): Նկ. 18

*14. **Խաչքար**. (1,50 x 0,80 մ). սեւ բազալտից[36], կանգնեցուած է պատուանդանի վրայ. Բահաւորի եկեղեցուց հիւսիս, Յուղնատու խութ կոչուող բլրի վրայ: Յուղնատուն բոյս է, որից էլ ծագել է բլրի անունը: Հաւանաբար տարածքում նման անունով բոյս է աճել: Ներկայումս գիրը հողմահարուած է: Այս խաչքարի մասին տեղեկութիւն է պահպանուել պրոֆեսոր Գր. Գրիգորեանի անձնական արխիւում: Մեզ յաջողուեց նախկինում արուած լուսանկարի հիման վրայ վերծանել խաչքարի քիւին տեղ գտած արձանագրութիւնը, որի գրաւոր վերծանութիւնը եւս պահպանուել է պրոֆեսորի՝ Սիւնիքում կատարած հետազօտութիւնների՝ Գորիսի շրջանին նուիրուած դաշտային օրագրերից մէկում:*

---

[32] Գր. Գրիգորեանի դաշտային օրագիր, էջ 52:

[33] **Մ. Հասրաթեան**, նշ. աշխ., էջ 164:

[34] Նոյն տեղում, էջ 161:

[35] Գր. Գրիգորեանի դաշտային օրագիր, էջ 53:

[36] Նոյն տեղում, էջ 51:

ԵՍ՝ ՄԷԼԻՔ ՂԻՄԱ, ԿԱ
ՆԿՆԵՑԻ ՍԲ ԽԱՉՍ Հ
ՕՐՆ ԻՄ՝ ԳԻՆՈՍԻՆ
Ի ՌԾԹ (1601)[37]: Նկ. 19

Թուով տասներեք խաչքար կայ կանգնեցուած Ջալուկի խութ կոչուող սրբավայրում: Դրանք անարձանագիր են, որոնց վրայ կան պարզունակ քանդակներ եւ խաչեր: Աւանդոյթի համաձայն՝ հէնց այս սրբավայրից են զինուորական ծառայութեան ճանապարհում գիւղի երիտասարդ տղաներին:

Դառնանք գիւղի գերեզմանատանը պահպանուած խաչքարերին: Վերջերս յուշարձանների պահպանութեան Սիւնիքի մարզային ծառայութեան աշխատակիցների կողմից (ղեկավար՝ Անահիտ Գրիգորեան) աշխատանքներ իրականացուեցին Խնածախի գիւղամիջեան գերեզմանատանը: Հողածածկից մաքրուեցին եւ վեր հանուեցին մի շարք նորայայտ արձանագրութիւններ, որոնք էլ ներկայացնում ենք ստորեւ.

*15. **Խաչքար**. քանդակազարդ, քիւին եւ ստորին հատուածում, թուականը հիմնախորանի վերին երկու անկիւններում.*



ԵՍ՝ ՀԱՅԿԱԶՍ, ԵՒ Մ[Ա]ՅՐՆ ԻՄ՝ Ն[Ա]Զ
ԼՈՒԽ[Ա]ՆՍ, Կ[Ա]ՆԿՆԵՑ[Ո]ՒՑԱՔ
ՍԲ Խ[Ա]ՉՍ
ԹՎ[ԻՆ] ՌՃԱ (1652)
ՓՐԿՈՒԹԻ[ՒՆ] ՀՈԳ[Ո]Յ Մ[Ա]ՒՐՆ
ԻՄՈՅ՝ Խ[Ա]ԹՈՒՆԱՂԻՆ ՈՐ ԷՐ ԿԻՆ ՅԻՇ
Խ[Ա]ՆԻՆ, ՈՐ Ա[Ի]ՂԼ[Ա]Ն ՔԷՇԻՇ ԿՈՉԻՆ: Նկ. 20

Աւղլանքէշիշ (Օղլանքէշիշ) թուրքական անձնանուն է, առաջացել է տղայ եւ քահանայ բառերից. յիշատակւում է 1605 թ.[38]: Խաթունաղան եւս թուրքական անձնանուն է, նշանակում է ազնուական տիկին: Գործածւում է 16-18-րդ դդ.[39]:

*16. **Խաչքար**, քանդակազարդ, հիւսածոյ զարդերով քիւի երկու եզրերը կոտրուած, կենտրոնում՝ խորադիր մակերեսի մէջ խաչ, թուականը խաչաթեւերի տակ.*

[37] Նոյն տեղում, էջ 49:


[38] **Հր. Աճառեան**, Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երեւան, 1962, էջ 234:

[39] Նոյնի՝ հ. 2, Երեւան, 1944, էջ 447:



ԹՎ[ԻՆ] ՉԼԸ (1289): Նկ. 21

*17. **Խաչքար.** քանդակազարդ, կենտրոնում փորագրուած են զոյգ խաչեր, ստորին հատուածում՝ 2 տող.*



ԱՆՈՒԱՄԲՆ Ա֊Յ ԵՍ ԽԱՉ/
ԻՉԱՆՈՒ ...ԻՐԷԱ ԿԱՆԳ... Նկ. 22

*Արձանագրութեան վերջին տողի երկու բառերն անընթեռնելի են, յստակ է միայն, որ անձնանուն է, որին յաջորդում է բովանդակային առումով կանոնական **կանգնեցի սուրբ խաչս** ձեւակերպումը: Գր. Գրիգորեանի դաշտային օրագրում պահպանուել է այս խաչքարի թուականը, որն այժմ եղծուած է: Վիմագրագէտն իր օրագրում գրառել է՝ Թվ. ՉԱ (1252)[40]:*

*18. **Խաչքար.** քանդակազարդ, ճակատին չորս խաչեր, կենտրոնում՝ քանդակազարդ խաչ, աջ եւ ձախ կողմերում եղծուած արձանագրութեամբ, թուականը աջակողմին: Հողածածկի տակ մնացած ստորին հատուածը նոյնպէս արձանագիր է, որի վերծանութիւնը պահպանուել է Գր. Գրիգորեանի դաշտային օրագրում[41].*

.Ս	**ԻՄ**
...	**ՈՅ**
ՈՒ	**ՈՏ**
ԽԱՅԱՅ ԿԱԿՆ	**ՈՒ**

ԵՅԻՆ ԽԱՉՍ ՈՐԴՈՅ ԽԱՅԱՅ... ԹՎ ՉԵ (1256/: Նկ. 23


[40] Գր. Գրիգորեան, դաշտային օրագիր, էջ 54:

[41] Նոյն տեղում, էջ 54:

*Բացի արձանագրուած խաչքարերից, գերեզմանատանը տեղ են գտել նաեւ քանդակազարդ, անգիր խաչքարեր (**նկ. 24, 25**)։*

Գիւղում կանգուն է մինչ այժմ ջրի հիմնական աղբիւր հանդիսացող Մեջի մահլի աղբիւրը՝ քահրիզը։ Քահրիզ բառը պարսկերէնից նշանակում է թունելով բերուած ջուր։

19. Աղբիւրի պատին պահպանուել է յուշաքար՝ հետեւեալ արձանագրութեամբ.




ՅԻՇԱՏԱԿ Է ԱԽԲՈՒՐՍ ԱԼՂՈՒԼ ԵՑԻ ԱՓՈՒ ՈՐԴԻ ՌՍԴԱՄԻՆ, ԱՄԻՐԻՆ, ԳԱԼՈՒՍՏԻՆ, ԽԱՉԱՏՈ[ՒՐԻՆ], ՅԱՐԱՊԵՏԻՆ, ԴԱՆԻԷԼԻՆ 1861: Նկ. 29

Ուշագրաւ է արձանագրութեան մէջ յիշատակուած «ալղուլեցին»։ Ժամանակին Ալղուլ անունով գիւղ է եղել, որը գտնուել է Հակարոյ գետի աջ ափին։ Այն, իբրեւ հայաբնակ գիւղ, գոյատեւել է մինչեւ 1905 թ.։ Վերջնականապէս հայաթափուել է 1918 թ. եւ բնակեցուել թրքախօս քրդերով եւ թուրքերով[42]։ Աղբիւրի պատին յիշատակուած են ալղուլեցի Ափու որդիները։

Ալ. Մուսաէլեանի արխիւում կարդում ենք. «Քահրիզի ղաբի համար դրամը տրուել է ալղուլեցի Դանիէլեան Ռուստամի կողմից։ Կառուցողը եղել է Խնածախ գիւղի լաւագոյն վարպետ Սիմոն Սիմոնեանը»[43]։

Ամփոփելով՝ արձանագրենք, որ 16-րդ դարի առաջին կէսին մելիքանիստ դարձած Խնածախ գիւղն իր հարուստ անցեալի ու պատմամշակութային ժառանգութեան կրողն է։ Այսօր աւելի քան առաջնային են դառնում Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի մշակութային արժէքների ուսումնասիրութիւնն ու հանրայնացումը, ի փառս մեր պատկառելի ու բովանդակալից անցեալի։ Սիւնիքի նշանաւոր մելիքանիստ գիւղերից մէկի՝ Խնածախի պատմական յուշարձաններն առաջին անգամ փորձ է արւում ներկայացնել համահաւաք ձեւով։ Տեղի թուով 15 նորայայտ արձանագրութիւն առաջին անգամ կը դրուեն գիտական շրջանառութեան մէջ։ Անդրադարձանք նաեւ մելիքական տոհմից սերող անձանց, ովքեր կարեւոր դեր եւ հեղինակութիւն են ունեցել։

Լուսանկարներ



Նկ. 1



Նկ. 2

[42] **Ս. Կարապետեան**, նշ. աշխ., էջ 174։


[43] Ալ. Մուսաէլեանի անտիպ արխիւ, էջ 6։



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10




Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15



Նկ. 16



Նկ. 17



Նկ. 18



Նկ. 19



Նկ. 20



Նկ. 21



Նկ. 22



Նկ. 23



Նկ. 24



Նկ. 25



Նկ. 26



Նկ. 27 լսնկ.՝ Մ. Յակոբեանի



Նկ. 28 լսնկ.՝
Մ. Յակոբեանի

ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ

ՏՊԱԳՐԱԿԱՆ

ՈՍԿԱՆԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՄԻ ԲԱՅԱՌԻԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ*

Ներածութիւն

Հայ իրականութեան մէջ նշանակալի իրադարձութիւն էր հայերէն Աստուածաշնչի առաջին տպագրութիւնը (1666-1668), որը հայ գրատպութիւնը հասցրեց համաշխարհային մակարդակի: Հայերէն Աստուածաշնչի տպագրութեան մտայղացումն անցեալում չի յաջողուել իրագործել, որը, սակայն, մեծ ջանքերի գնով տեղի ունեցաւ մի խումբ նուիրեալների՝ Ամստերդամի Ս. էջմիածնի եւ Ս. Սարգիս Զօրավարի հայկական տպարանի հիմնադիր Մատթէոս Սարկաւագ Ծարեցու, տպարանի առաջին բարերար, վաճառական Աւետիս Ղլիճենցու, նրա եղբօր՝ գրաշար, տպագրիչ եւ հրատարակիչ Ոսկան Վարդապետ Երեւանցու, վերջինիս օգնականներ Յովհաննէս (Յօհան) Սարկաւագ Երեւանցու, հայերէն Աստուածաշնչի սրբագրիչ կարապետ Վարդապետ Անդրիանացու եւ ուրիշների անմիջական մասնակցութեամբ[1]: Ոսկան Երեւանցու գործունէութեան մանրամասն ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ նա միաժամանակ հանդէս է գալիս որպէս Աստուածաշնչի բնագրագէտ, տեքստաբան ու թարգմանիչ[2]:

Հայերէն Աստուածաշնչի տպագրութեան գործն իրականացնելու համար Ոսկան Երեւանցուն հարկաւոր էին դրամական միջոցներ: Նա սոյն տպագրութիւնն սկսել էր իր հանգուցեալ եղբօր՝ Յովհաննէսի թողած ժառանգութեան միջոցներով՝ համաձայն իր իսկ վկայութեան՝ «որոյ ընչիւքն մտի ես ի գործ յայս»[3]: Տեսնելով, որ իր ֆինանսական միջոցները չեն բաւարարում նման ծաւալի եւ ծախսատար տպագրութիւն ձեռնարկելու համար, Ոսկան Երեւանցին գործակցում է ջուղայեցի վաճառականներ Ստեփանոսի, Թէոդորոսի եւ Պետրոսի հետ: Այս առիթով Ոսկանեան Աստուածաշնչի յիշատակարանում կարդում ենք. «Այլ ընդ երից հաւատարմագունից վերոգրեցելոց արանց և Ք[րիստո]սասիրաց՝ յետ բազմաց քննութե[ան]ց և հարցափորձութե[ան]ց միաբանեցայ սիրով՝ և դաշնադրականաւ գրով. զի սոքա երեքեանս ընդ իս հոգասցեն զամ[ենայն] զծախ վերոգրեցելոյ մատենին մինչև ցաւարտ. առ յօգուտ ազգիս և ՚ի շահ սրբոց աթոռոյն: Բայց այսպիսի եղև պայմանն, ք[ան]զի ՚ի թուին ռճժդ. ([1665]) փետրվարի. ի. ([20]) վերոգրեցեալ պարոն Ստեփաննոսն և պարոն Պետրոսն խոս-

---

* Դեռեւս 2016 թուականին, երբ նշւում էր Ոսկանեան Աստուածաշնչի տպագրութեան մեկնարկի 350-րդ տարելիցը, մտայղացանք սոյն թեման, որի ուսումնասիրութեանը ձեռնամուխ եղանք վերջին տարիներին:

[1] Ամստերդամի հայկական տպարանում աշխատել եւ Աստուածաշնչի տպագրութեան մէջ զգալի մասնակցութիւն են ունեցել նաեւ օտարազգիներ, որոնցից թերեւս ամենագործուն գրաշարը հոլանդացի եան եանսէն Ռիֆֆելմանն էր (Jan Jansen Rikkelman), որի մասին Կարապետ Անդրիանացին յիշատակում է՝ «զշարօղ գրոյս եան եանսէն Րիֆկլման պատանի, որ թարգմանի Յօհաննէս Յօհանիսի» (տե՛ս Սաղմոսարան, յԱմստէրդամ, 1661-1662, «Յիշատակարան», էջ 754):

[2] **Խ. Սամուէլեան**, Աստուածաշնչի տպագրութիւնն ու պոլիգրաֆիական արուեստը (հրատարակութեան 300-ամեակի առիթով), էջմիածին, 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 228:

[3] Տե՛ս Աստուածաշունչ, յԱմստէրդամ, 1666-1668, «Յիշատակարան», էջ 834 (երկրորդ էջակալութիւն):

տացան զաւելեալ շահան որ՝ի վաճառմանէ Ա[ստուա]ծաշնչոյն լինիցի տալ ս[ուր]բ էջմիածնի։ Նոյնպէս և պարոն Թէոդորոսն զիւր բաժնի շահոյ զկէսն խոստացաւ ս[ուր]բ Երուսաղ՝էմի. և զկէսն յՈւշոյ վանից սրբոյն Սարգսի զօրավարին»[4]։

Ոսկանեան Աստուածաշնչի անուանաթերթից (տե՛ս նկ. 1) եւ յիշատակարանից (տե՛ս նկ. 13) տեղեկանում ենք, որ դրա տպագրութիւնն սկսուել է 1666 թ. Մարտի 11-ից եւ տեւել մինչեւ 1668 թ. Հոկտեմբերի 13-ը, այսինքն՝ 2 տարի 7 ամիս։ Տպագրութիւնը կատարուած է վարպետօրէն ու խնամքով, որի շարուածքը շատ մաքուր է։ Տպագրական որակի տեսանկիւնից էլ Ոսկանեան Աստուածաշունչը գերազանցեց մինչ այդ եղած հայկական բոլոր տպագրութիւններին[5]։ Յաւօք, մեզ յայտնի չէ, թէ սոյն Աստուածաշունչը որքա՜ն տպաքանակ է ունեցել. ուսումնասիրողները հիմնականում առաջ են քաշում 2 վարկած՝ 5000[6] կամ 3000[7] տպաքանակ։

Մեզ են հասել Ոսկանեան Աստուածաշնչի՝ պայմանականօրէն երկու տպագրութիւններ, որոնք միմեանց նկատմամբ ունեն բովանդակային որոշակի տարբերութիւններ։ Այդ պատճառով էլ Աստուածաշնչի երկու տպագրութիւնների երկրորդ էջակալութիւնների էջերի քանակը նոյնպէս տարբեր է։ Առաջին տպագրութեան օրինակներում Ոսկանեան Աստուածաշնչի առաջին էջակալութիւնը բաղկացած է 8 չհամարակալուած եւ 628 էջից, իսկ երկրորդ էջակալութիւնը՝ 834 էջից (ընդամէնը՝ 1472 էջ[8])։ Մինչդեռ նոյն Աստուածաշնչի երկրորդ տպագրութեան օրինակներում երկրորդ էջակալութիւնը բաղկացած է 808 էջից (առաջին էջակալութիւնը մնում է անփոփոխ, ընդամէնը՝ 1446 էջ[9])։ Ոսկանեան Աստուածաշնչի առաջին տպագրութիւնն աւելի մօտ է Կաթոլիկ եկեղեցում կիրառութիւն ունեցող Աստուածաշնչին (Վուլգատա), որը տարբերւում է Հայ Առաքելական եկեղեցու կողմից պաշտօնապէս ընդունուած աստուածաշնչական կանոնից։ Ուստի այս հարցում Հայ եկեղեցու դիրքորոշմանը մօտ լինելու համար Ոսկանը տպագրում է նաեւ Աստուածաշնչի մէկ այլ տարբերակ, որի երկրորդ էջակալութիւնն արդէն 26 էջով պակաս է առաջին տպագրութեան երկրորդ էջակալութիւնից՝ զանց առնելով «Աղօթք Մանասէի արքայի Յուդայի» եւ «Գիրք Եզրասայ չորրորդ» պարականոն երկու գրքերը[10]։

Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան հետքերով

Ինչպէս Հայաստանի, այնպէս էլ արտերկրի մի շարք գիտական ու մշակութային հաստատութիւններում հանգրուանել են Ոսկանեան Աստուածաշնչի բազմաթիւ օրինակներ։ Դրանցից պահւում են նաեւ Հայ Առաքելական եկեղեցու նուիրապետական չորս Աթոռներում, Մխիթարեան միաբանութեան երկու վանքերում (Վենետիկ, Վիեննա) եւ հայկական հոգեւոր-մշակութային շատ կենտրոններում։

---

[4] Աստուածաշունչ, յԱմստէրդամ, 1666-1668, «Յիշատակարան», էջ 833 (երկրորդ էջակալութիւն)։

[5] Տե՛ս **Ռ. Իշխանեան**, Հայ գրքի պատմութիւն, հ. 1, Երեւան, 1977, էջ 441։

[6] Տե՛ս **Ռ. Իշխանեան**, Ոսկանեան տպարանը եւ նրա հրատարակած Աստուածաշունչը, «Էջմիածին», 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 134, **նոյնի** Հայ գրքի պատմութիւն, հ. 1, էջ 470։ **Վ. Դեւրիկեան**, Ոսկան Վարդապետ Երեւանցի (կեանքը եւ տպագրական գործունէութիւնը), Երեւան, 2015, էջ 84։

[7] Տե՛ս **Ջ. Լէյն**, Հայկական տպագրութեան սփիւռք (1512-2012 թթ.), Ամստերդամ - Երեւան, 2012, էջ 93։

[8] Թէեւ հաճրագումարը կազմում է 1470 էջ, սակայն բնագրում տեղ գտած էջահամարների վրիպակների (երկրորդ էջակալութեան 175-րդ եւ 176-րդ էջահամարները կրկնւում են՝ չնայած բովանդակութեան տարբերութեանը) պատճառով էջերի հաճրագումարն ստացւում է 1472 (տե՛ս նաեւ **Խ. Սամուէլեան**, նշ. յոդ., էջ 229)։

[9] Տե՛ս նախորդ ծանօթագրութեան բացատրութիւնը։

[10] Մանրամասն տե՛ս **Ա. Խաչատրեան**, Աստուածաշնչի ոսկանեան տպագրութիւնների առեղծուածը, «Բանբեր Մատենադարանի», 2018, № 25, էջ 133-165։

Սոյն ուսումնասիրութեան շրջանակներում մեր կողմից հետազօտուել են Ոսկանեան Աստուածաշնչի առաջին եւ երկրորդ տպագրութիւնների 50-ից աւելի օրինակներ[11], որոնք պահւում են Մ. Մաշտոցի անուան Մատենադարանում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում, Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում եւ մասնաւոր անձանց հաւաքածոներում: Ուսումնասիրել ենք նաեւ արտասահմանեան մի շարք գրադարաններում գտնուող Ոսկանեան Աստուածաշնչի թուայնացուած օրինակները:

*Մեր թեմայի շրջանակներում ուսումնասիրել ենք նաեւ Երուսաղէմի Ս. Թէոդորոս Ձեռագրատանը մինչ օրս պահուող Ոսկանեան Աստուածաշնչի տպագրութեան մի եզակի օրինակի լուսապատճէնուած որոշ էջեր: Աստուածաշնչի այդ օրինակի մատենագիտական նկարագրութիւնը կատարել է Երուսաղէմի լուսահոգի միաբան, յայտնի ձեռագրագէտ, բանասէր Նորայր Արքեպիսկոպոս Պօղարեանը: Նրա՝ տասնամեակների տքնաջան աշխատանքի արդիւնքում հրատարակուած «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» բազմահատոր աշխատութեան 11-րդ հատորի թիւ 3621 նկարագրութիւնը ոչ թէ վերաբերում է հերթական ձեռագրին, այլ՝ Ոսկանեան Աստուածաշնչի տպագրութեան մի եզակի օրինակին: Նորայր Արքեպիսկոպոսի կատարած մատենագիտական նկարագրութեան մէջ կարդում ենք. «Աստուածաշունչ (Տպ. 1666-1668), Ծաւալ 26x20.5x19: Էջք Ը+628+836: Հանգամանք շատ լաւ: **Մագաղաթ կոկեալ** (ընդգծումն իմն է – **Ս. Պ.**): Կաշեկազմ տախտակեայ մաշած: Դատարկ թուղթք սկիզբը երկու թերթ, վերջը՝ մէկ»: Յաջորդիւ նա նկարագրում է Աստուածաշնչի բովանդակութիւնը՝ սկսելով անուանաթերթի (տե՛ս նկ. 2) ամբողջական մէջբերումից: Ապա նշում է բնագրի գլուխների վերնագրերն ու էջահամարները, իսկ վերջում մէջբերում է Աստուածաշնչի երկրորդ էջակալութեան 831-րդ (նկարագրութիւնում՝ 831ա) էջի «Առ ընթերցօղդ» խորագրով գրութիւնից մի քանի տող, այնուհետեւ 833-րդ (նկարագրութիւնում՝ 833ա) էջի «Յիշատակարան»-ից մէջբերում է մի տող՝ յաւելելով, որ յիշատակարանի «կէսէն աւելին քերուած չնչուած»[12] է: Զարմանալի է այն հանգամանքը, որ Նորայր Արքեպիսկոպոսը ձեռագրացուցակում ձեռագրերի նկարագրութեան շարքում կատարել է ոչ թէ ձեռագիր, այլ տպագիր Աստուածաշնչի նկարագրութիւն՝ միաժամանակ շեշտելով, որ այն տպագրուած է մագաղաթի վրայ:*

Եւրոպական տպագրութեան պատմութեան մէջ քիչ չեն այն դէպքերը, երբ տարբեր հրատարակիչներ տպագրութիւնն իրականացնում էին մագաղաթի վրայ: Հայ գրատպութեան պատմութեան մէջ, սակայն, մեզ յայտնի են մագաղաթի վրայ տպագրութեան եզակի դէպքեր, որոնցից թուարկենք մի քանիսը: Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մատենադարանում պահւում է 1714 թուականին Ամստերդամում (տպ. Ղուկաս Վանանդեցու) տպագրուած «Պարզատօմար Ազարիայի» գիրքը[13], իսկ Մ. Մաշ-

---

[11] Հայաստանի ազգային գրադարանում (ՀԱԳ) պահուող Ոսկանեան Աստուածաշնչի օրինակներն ուսումնասիրել եմ տարիներ առաջ, երբ նոյն գրադարանի «Մատենագիտութեան եւ գիտական հետազօտութիւններ» բաժնի աշխատակից էի: Բացի դրանից՝ ՀԱԳ-ում պահուող Ոսկանեան Աստուածաշնչի 12 օրինակները ուսումնասիրուել է նաեւ գրադարանի վերոյիշեալ բաժնի նախկին աշխատակից Արմէն Խաչատրեանի կողմից (տե՛ս Ա. Խաչատրեան, նշ. յօդ., յաւելուած՝ «Համեմատական աղիւսակ Զ. Պտուկեանի «Ոսկանեան Աստուածաշնչի» մանրաժապաւէնում եւ ՀԱԳ-ի «Ոսկանեան Աստուածաշնչի» 12 օրինակներում նկատուած տարբերութիւնների», էջ 153-164): Նշեմ նաեւ, որ ինձ չյաջողուեց ուսումնասիրել Հայաստանի պատմութեան թանգարանում պահուող Ոսկանեան Աստուածաշնչի օրինակները, քանի որ այդ օրերին թանգարանի գրադարանավար եւ հնատիպ գրքերի ֆոնդապահը գտնւում էր արձակուրդում:

[12] Տե՛ս **Նորայր Արք. Պօղարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 11, Երուսաղէմ, 1991, էջ 37:

[13] Հայկական թուանշանային գրադարանի ֆէյսբուքեան էջում տեղադրուած է այս հրատարակութեան մա-

տոցի անուան Մատենադարանում պահւում է 1740 թուականին Պոլսում (տպագր. Բարսեղ եւ Յակոբ Սեբաստացիների) տպագրուած մի Աւետարան[14]: Սակայն պէտք է նկատի ունենալ, որ յիշեալ երկու մագաղաթեայ հրատարակութիւնները ե՛ւ ծաւալով, ե՛ւ չափերով չեն կարող համեմատուել Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան հետ: Թերեւս Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ այս տպագրութիւնը հայ գրատպութեան պատմութեան մէջ կարելի է համարել մագաղաթի վրայ տպագրութեան առաջին փորձը: Բացի գրքերից՝ մեզ յայտնի են նաեւ մագաղաթի վրայ տպագրութեան այլ դէպքեր: Միհրան Մինասեանն իր հետազօտութիւններից մէկի ժամանակ յիշատակում է 1715 թուականին Ամստերդամում մագաղաթի վրայ Ղուկաս Վանանդեցու հրատարակած «խնդրագիրը»[15]: Սահակ Վրդ. Ճէմճէմեանն էլ Մխիթար Սեբաստացու հրատարակչական գործունէութեանը նուիրուած իր մեծարժէք աշխատութեան մէջ անդրադառնում է աստուածաշնչեան թեմաներով առանձին պատկերներին, որոնց մի մասը Մխիթար Աբբահայրը հրատարակել էր մագաղաթի վրայ[16]:

Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան այս բացառիկ օրինակը «առ աչօք» ուսումնասիրելու հնարաւորութիւնը թողնելով ապագայում՝ հետազօտութեան նպատակով դիմեցինք Երուսաղէմի Հայոց պատրիարքարան՝ մեզ հետաքրքրող էջերի լուսապատճէններն ստանալու խնդրանքով: Երուսաղէմի Հայոց պատրիարք Նուրհան Արքեպս. Մանուկեանի արտօնութեամբ Ս. Թէոդորոս Ձեռագրատան տեսուչ Արշակ Աբեղայ Ղազարեանի կողմից ստացանք խնդրոյ առարկայ էջերի լուսապատճէնները[17]:

Մեզ յայտնի չէ, թէ Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան այս օրինակն ի՛նչ ճանապարհով է հանգրուանել Երուսաղէմի Ս. Թէոդորոս Ձեռագրատունը[18]: Թեմայի ուսումնասիրութեան ընթացքում նկատել ենք, որ Ոսկանեան Աստուածաշնչի շատ օրինակների տարբեր էջերում առկայ են աւելի ուշ շրջանում աւելացուած ձեռագիր յիշատակագրութիւններ, որոնք չենք հանդիպել Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագիր օրինակի՝ մեզ հասանելի էջերում: Բնական է, որ Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի միայն բոլոր էջերի ուսումնասիրութիւնից յետոյ է հնարաւոր պնդել, թէ արդեօ՞ք այնտեղ առկայ են նմանատիպ ձեռագիր յիշատակագրութիւններ, որոնք նոր լոյս կարող են սփռել գրքի անցած ճանապարհի պատմութեան վրայ:

գաղաթեայ օրինակի անուանաթերթը՝ կից գրութեամբ. «Տպագրութիւն մագաղաթի վրայ (Մխիթարեան միաբանութեան Վիեննայի վանատան մատենադարանին նուիրեց Փարիզի Նուպարեան գրադարանի վարիչ Աւամ Անտոնեանը 1950-ին, իր մահուան նախորդ տարում), Պարզատօմար Ազարիայի, Ամստերդամ, տպ. Ղուկաս Վանանդեցու, 1714»: https://www.facebook.com/digilib/photos/a.210523472325634/859373540773954/?type=3 (առ 21.06.2023):

[14] Տե՛ս **Դ. Ղազարեան**, Մի եզակի մագաղաթեայ տպագրութիւն (Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 10665), «Բանբեր Մատենադարանի», 2018, № 29, էջ 189-197:

[15] Տե՛ս **Մ. Մինասեան**, Հայերէն նորայայտ հնատիպ գիրեր եւ մատենագիտական լրացումներ, «Հասկ», 1997, է.-Ը. տարի (1995-1996), էջ 558-559:

[16] **Սահակ Վրդ. Ճէմճէմեան**, Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւնը, Վենետիկ - Ս. Ղազար, 1980, էջ 120:

[17] Մեր խորին երախտագիտութիւնն ենք յայտնում Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի միաբան Տ. Արշակ Աբեղայ Ղազարեանին՝ ցուցաբերած օժանդակութեան համար:

[18] Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի Հին կտակարանի Ծննդոց գրքի առաջին էջի վրայ առկայ է կնիք՝ հետեւեալ գրութեամբ. «Յիշատակ թանգարանի Սրբոց Յակովբեանց 1657 [՞]» (տե՛ս նկ. 3):

Հասկանալի է, որ ժամանակին խիստ կարեւորելով Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի բացառիկ արժէքը՝ այն չի տեղափոխուել Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի Կիւլպէնկեան մատենադարան, որտեղ պահւում են հնատիպ բազմաթիւ գրքեր, այդ թւում՝ Ոսկանեան Աստուածաշնչի միւս օրինակները[19]:

Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան՝ մեր ձեռքի տակ եղած լուսապատճէնուած էջերը համեմատել ենք նոյն գրքի մի շարք այլ օրինակների համապատասխան էջերի հետ: Կարող ենք ասել, որ բովանդակային առումով չենք գտել տարբերութիւններ՝ չհաշուած սրբագրական որոշ շտկումները, որոնցից մի քանիսին կ'անդրադառնանք աւելի ուշ: Նորայր Արքեպիսկոպոսի կատարած մատենագիտական վերոյիշեալ նկարագրութեան մէջ կարող է տպաւորութիւն ստեղծուել, թէ երկրորդ էջակալութիւնն աւարտւում է 836-րդ էջով[20], այնինչ իրականում այն աւարտւում է 834-րդ էջով: Բանն այն է, որ վերջինս նկատի է ունեցել Աստուածաշնչի երկրորդ էջակալութեան փաստացի էջերի հանրագումարը (836)՝ մագաղաթեայ տպագրութեան մէջ դարձեալ հանդիպող երկու էջահամարների վրիպակներն ի մտի ունենալով[21]: Ոսկանեան Աստուածաշնչի թղթեայ օրինակների հետ համեմատել ենք նաեւ մագաղաթեայ օրինակի յիշատակարանը, ինչպէս նաեւ յիշատակարանային արժէք ունեցող «Բանահիւսութիւն առ վեհագոյն հայրապետն հայոց տէր Յակոբ ի նուաստէ ումեմնէ բանի սպասաւորէ Ոսկան վարդապետէ յաղագս տպագրութեան տառից Աստուածայնոց» եւ «Առ ընթերցօղսդ» գրութիւնները (տե՛ս նկ. 4), որոնցում որեւէ տպագրական տարբերութիւն չենք նկատել: Յիշատակարանում առկայ են յետագայում արուած միջամտութիւններ, որոնց կ'անդրադառնանք աւելի ուշ:

*Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակում, սակայն, նկատել ենք մի շարք սրբագրութիւններ՝ մեր ուսումնասիրած Ոսկանեան Աստուածաշնչի թղթեայ տպագրութիւնների 50-ից աւելի օրինակների հետ համեմատած: Ոսկանեան Աստուածաշնչի տպագրութիւնների երկու տարբերակներում Ոսկան Երեւանցին կամ էլ սրբա-գրիչ Կարապետ Անդրիանացին նկատել են որոշ վրիպակներ եւ հմտօրէն շտկել: Այսպէս, Ոսկանեան Աստուածաշնչի երկրորդ էջակալութեան 390-րդ էջի 2-րդ սիւնակի 7-րդ գլխի 8-րդ համարում (Ովսէ 7:8) «նկան» բառի «ն» տառն առանձնացել է իր բառից եւ միացել «եփրեմ» բառին՝ «եփրեմն կան» (տե՛ս նկ. 5ա), որի պատճառով կատարուել է սրբագրութիւն՝ «նակիւր. եղև եփրեմ **նկ**ան չդարձուցեալ» (տե՛ս նկ. 5բ), իսկ երկրորդ էջակալութեան 510-րդ էջի երկրորդ սիւնակի 7-րդ գլխի 11-րդ համարում (Ղուկ. 7:11) բացակայում է «անուն» բառը. «...քաղաք մի՝ որում էր նային...» (տե՛ս նկ. 6ա) տողի վրայ փակցուած է՝ «եւ եղեւ 'ի վաղիւն, երթայր 'ի քաղաք մի՝**

---

[19] Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան մասին որեւէ յիշատակութեան չենք հանդիպում հայ գրի մատենագիտական ցանկերում: Այն մինչեւ անգամ բաց է թողնուած «Հայ գիրը 1512-1800 թուականներին» մատենագիտական մեծարժէք եւ կոթողային աշխատութիւնից՝ հաւանաբար այն պատճառով, որ յիշեալ Աստուածաշնչի մագաղաթեայ օրինակը, պահուելով Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի ոչ թէ Կիւլպէնկեան մատենադարանում, այլ Ս. Թէոդորոս նեռագրատանը, պարզապէս վրիպել է անուանի մատենագէտների տեսադաշտից: Աւելացնենք, որ հայ հնատիպ գրի մատենագէտները Ոսկանեան Աստուածաշնչի մատենագիտական նկարագրութիւնից յետոյ գրի պահպանման վայրերի թում յիշատակում են նաեւ Կիւլպէնկեան մատենադարանը (տե՛ս **Ոսկանեան Ն.**, **Կորկոտեան Ք.**, **Սաւալեան Ա.**, Հայ գիրը 1512-1800 թուականներին (մատենագիտութիւն), հ. 1, Երեւան, 1988, նկարագրութեան Հմր 58, էջ 50):

[20] Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան բնագրի վերջում, ինչպէս նկատել է Նորայր Արքեպիսկոպոսը, կայ մէկ դատարկ թղթեայ թերթ, որը ինչպէս նաեւ շրջերեսի վրայ մատիտով համարակալուած են 835 եւ 836 թուերով:

[21] Տե՛ս 8-րդ ծանօթագրութիւնը:

*որում **աճում** էր նային...»[22] (տե՛ս նկ. 6ᵇ) տողը: Հարկ է նշել, որ սրբագրողը, նկատելով այս վրիպակները, ոչ թէ նոր (սրբագրուած) շարուածքով տպագրել է արդէն իսկ պատրաստի ողջ տպաքանակի յիշեալ էջերը, այլ բոլոր օրինակների համար տպագրել է միայն խնդրոյ առարկայ տողերը, որոնք հմտօրէն սոսնձել է համապատասխան վայրերում: Նկատենք, որ Ոսկանեան Աստուածաշնչի որոշ օրինակներում փակցուած վերոյիշեալ տողերը ժամանակի ընթացքում թուլացել եւ մասնակի կամ ամբողջովին պոկուել են, որի պատճառով էլ հնարաւոր է եղել մի քանի օրինակներում ընթերցել այդ տողերի նախնական՝ չսրբագրուած հատուածը:*

*Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակում վերոբերեալ վրիպակների ուղղումներն արդէն կատարուած են բուն շարուածքում (այն փոխուել եւ սրբագրուել է) (տե՛ս նկ. 5ᵃ, 6ᵃ): Բացի երկրորդ էջակալութեան 390-րդ էջի երկրորդ սիւնակի 7-րդ գլխի 8-րդ համարի սրբագրութիւնից՝ հետաքրքրական է, որ Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի նոյն հատուածի լուսանցքում կատարուել է մէկ այլ սրբագրութիւն: Ոսկանեան Աստուածաշնչի՝ մեր ուսումնասիրած թղթեայ բոլոր օրինակներում գրուած է. «Եփրեմն եղև **ենէթ** մոխրոյ հաց, որ ոչ դառնայ» (հաւանաբար վրիպակը չեն նկատել) (տե՛ս նկ. 5ᵐ, 5ᵖ), մինչդեռ մագաղաթեայ օրինակում յիշեալ հատուածն արդէն փոխուած-սրբագրուած է. «Եփրեմն եղև **ըմէդ** մոխրոյ հաց, որ ոչ դառնայ» (տե՛ս նկ. 5ᵍ):*

Այս սրբագրութիւնները յուշում են, որ Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութիւնը Ոսկան Երեւանցին կատարել է բոլոր տպագրութիւնների վերջում, այսինքն՝ նա այս քայլին գնացել էր Աստուածաշնչի ողջ տպաքանակն արդէն իսկ աւարտած լինելուց յետոյ: Հետեւաբար, Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութիւնն իրականացուել է ոչ թէ 1666 թ. Մարտի 11-ից մինչեւ 1668 թ. Հոկտեմբերի 13-ը, ինչպէս թղթեայ տպագրութիւնների դէպքում էր, այլ՝ աւելի ուշ: Հակառակ այս իրողութեանը՝ Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի անուանաթերթի վրայ որպէս տպագրութեան թուականի սկիզբ կրկնութեամբ նշուած է թղթեայ օրինակների տպագրութեան թուականի սկիզբը («՚ի թուում Փրկչին. 1666, իսկ ՚ի Հայոց. ՌՃԺԵ. նամսեանն մարտի մետասանի»), իսկ որպէս տպագրութեան թուականի աւարտ յիշատակարանում կրկնութեամբ նշուած է թղթեայ օրինակների տպագրութեան թուականի աւարտը (ներ թուոջն Ք[րիստոս]ի հազարորդի վեցհարիւրորդի վաթսներորդի ութերորդի. յամսեանն հոկտեմբերի, որոյ էին աւուրք երեքտասաներորդ: Իսկ ըստ մերոյս հազարորդի հարիւրորդի եօթնևատասներորդի, ներ նոյնում ամսում հոկտեմբերի երրորդի. իսկ ըստ հայոց ամսոյ հրոտից քսաներորդի հինգերորդի): Ոսկանի համար թերեւս կարեւոր չի եղել տարեթուի փոփոխութիւնը, ինչը յանգեցնելու էր անուանաթերթի նոր շարուածքի ստեղծմանը: Հասկանալիօրէն, մագաղաթեայ թերթերի չորանալու համար յաւելեալ ժամանակ էր անհրաժեշտ լինելու, քանի որ թանաքի չորանալուց յետոյ միայն հնարաւոր կը լիներ թերթերը կազմել մամուլներով:

Այստեղ հարց է առաջանում, թէ ինչո՞ւ է Ոսկան Երեւանցին Աստուածաշունչը տպագրել մագաղաթի վրայ, որը թղթից մի քանի տասնեակ անգամ աւելի թանկ էր: Խաչիկ Սամուէլեանը գրում է, որ Աստուածաշնչի տպագրութեան համար Ոսկան Երեւանցին օգտագործել է 42x54 սմ չափի բարակ ու դիմացկուն թուղթ: Շարուած էջերը տպագրական հաստոցի մէջ են դրուել 4-ական թերթով, որի առաջին երեսի տպագրութիւնն աւարտելուց յետոյ տպագրուել են յաջորդ երեսի թերթերը: Այսպիսով, ըստ տպագրա-

[22] Տե՛ս նաեւ **Ա. Խաչատրեան**, նշ. յօդ., էջեր 151, 158-159:

կան մամուլի չափերի ու թղթի ընձեռած հնարաւորութեան՝ Ոսկանեան Աստուածաշունչի 1 մամուլը կազմել է 8 էջ կամ 4 թերթ: Ամբողջ Աստուածաշունչը բաղկացած է 183 մամուլից, 6 ու 4 յաւելեալ էջից[23]: Հետեւաբար, նոյն տրամաբանութիւնը պէտք է գործեր նաեւ մագաղաթեայ տպագրութեան դէպքում: Նկատենք, որ Ոսկանեան Աստուածաշնչի մէկ թերթի չափը հիմնականում 27x21 սմ է, իսկ շարուածքի չափը՝ 21x14.7 սմ[24]:

Ոսկանեան Աստուածաշնչի «Առ ընթերցօղսդ» գրութիւնում Ոսկան Երեւանցին նշում է, որ «տուին կարի ստուար գայր՝ և ծախն յոլով. որոյ աշխատանքն և ծախն դիտաւորութե[ան]ն ոչ արժեին»[25], այսինքն՝ նրան լրջօրէն անհանգստացրել էր գրքի ծաւալի մեծանալու հարցը, որի հետեւանքով էլ աւելի շատ ծախս էր պահանջուելու մեծ կազմեր պատրաստելիս: Ոսկան Երեւանցու այս մտահոգութիւնն աւելի ակնառու է դառնում Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան ժամանակ՝ գրքի բարձրութիւնը կազմելով 19 սմ (տե՛ս նկ. 7ա), ինչն Աստուածաշնչի թղթեայ մի շարք օրինակների գրեթէ կրկնակի բարձրութիւնն է (տե՛ս նկ. 7բ): Բնական է, որ առհասարակ մագաղաթեայ թերթերը շատ աւելի հաստ էին «նուրբ ու բարակ» թղթեայ թերթերից:

*Նկատենք, որ Նորայր Արքեպիսկոպոսի կիրառած «**մագաղաթ կոկեալ**» բնութագրումը ցոյց է տալիս, որ Ոսկանը, հաշուի առնելով կազմարարական աշխատանքների դժուարութիւնները, ձեռք էր բերել լաւ մշակուած եւ յղկուած մագաղաթեայ բարակ թերթեր, որոնք, հասկանալիօրէն, շատ աւելի թանկ պէտք է արժենային: Կարծում ենք, որ Ոսկան Երեւանցին նման աշխատատար եւ ծախսալից տպագրութիւն ձեռնարկելիս նկատի է ունեցել այն իրողութիւնը, որ իր կողմից արդէն իսկ հրատարակուած Աստուածաշնչի վաճառքից ստացուած հասոյթով կարող էր մարել ոչ միայն իր պարտքերը, այլեւ հոգալ Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան եւ կազմարարութեան ծախսերը: Այս առնչութեամբ հետաքրքրական է Միքայէլ Ջամչեանցի հետեւեալ դիտարկումը. «Յետ աւարտելոյ Ոսկանայ զԱստուածաշունչն՝ առաքեաց զտպագրեալսն յարևելս, զի վաճառեսցին, և դրամովք նոցին վճարեսցին բազում պարտք իւր՝ զորս արար յամստելոդամ»[26]:*

Կասկածից վեր է, որ Ոսկան Երեւանցին Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակը չէր նախատեսել վաճառքի համար: Միեւնոյն ժամանակ դժուար է կռահել, թէ արդեօ՞ք դա միակ մագաղաթեայ օրինակն էր, թէեւ ենթադրաբար շատ օրինակներ լինել չէին կարող: Մի՛ գուցէ Ոսկան Երեւանցին նպատակ է ունեցել այն նուիրել մի երեւելի անձի՞, չնայած այս վարկածը հաւանական չենք համարում, քանի որ, ինչպէս գիտենք, Հռոմի Կղեմէս Թ. քահանայապետին[27] եւ Ֆրանսիայի Լիւդովիկոս ԺԴ. թագաւորին[28] Ոսկանն արդէն իսկ նուիրել էր իր հրատարակած Աստուածաշնչի թղթեայ տպագրութեան մէկական օրինակ՝ շքեղ կազմով եւ ուղերձով[29]:

Արդեօ՞ք Ոսկան Երեւանցին նախատեսել էր Աստուածաշնչի մագաղաթեայ թան-

---

[23] Տե՛ս **Խ. Սամուէլեան**, նշ. յօդ., էջ 240-241:

[24] Հայ գիրը 1512-1800 թուականներին (մատենագիտութիւն), նկարագրութեան Հմր 58, էջ 44:

[25] Տե՛ս Աստուածաշունչ, յԱմստէրդամ, 1666-1668, «Առ ընթերցօղսդ», էջ 834 (երկրորդ էջակալութիւն):

[26] Տե՛ս **Միքայէլ Վրդ. Ջամչեանց**, Պատմութիւն Հայոց, հտ. Գ., 1786, Վենետիկ, էջ 660:

[27] Տե՛ս **Սահակ Վրդ. Ձէմճէեան**, Հայ տպագրութիւնը եւ Հռոմ (ԺԷ. դար), Վենետիկ-Ս. Ղազար, 1989, էջ 94-95:

[28] Լիւդովիկոս ԺԴ. թագաւորին Ոսկանի նուիրած Աստուածաշնչի կազմի նկարները տե՛ս **Ֆ. Ե. Դուբիեզ**, Հայերէն գրերի տպագրութիւնը Ամստերդամում XVII-XVIII դարերում, «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտութիւնների», 1963, № 2, էջ 88:

[29] Տե՛ս **Խ. Սամուէլեան**, Ոսկան Երեւանցին ապաւինում է Լիւդովիկոս XIV թագաւորին, «Էջմիածին», 2003, Զ., էջ 59-60:

կարժէք տպագրութեան այս օրինակը նուիրել Ամենայն հայոց կաթողիկոս Յակոբ Ջուղայեցուն, ով կանգնած էր Աստուածաշնչի տպագրութեան ակունքներում: Այս տեսակէտը նոյնպէս հաւանական չենք համարում՝ այն պատճառաբանութեամբ, որ Ոսկան Երեւանցին իր տպագրած Աստուածաշնչի թղթեայ օրինակների որոշակի քանակ կարողացել էր ուղարկել Յակոբ Ջուղայեցուն, ով էլ դրանք ընծայագրերով նուիրում էր հայկական մի շարք վանքերի ու եկեղեցականների: Այս առիթով վկայակոչենք Ոսկանեան Աստուածաշնչի երկու օրինակ, որոնց երկրորդ էջակալութեան 718-րդ էջը կնքուած է կաթողիկոսական կարմիր կլոր կնիքով, որի ներքոյ տեղ են գտել Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ընձայագրերը՝ մի դէպքում ուղղուած Շոռոթի վանքերից մէկին[30], միւս դէպքում՝ Ցղնայի Ս. Աստուածածին եկեղեցուն[31]: Հետեւաբար, Ոսկան Երեւանցին Աստուածաշնչի թղթեայ տպագրութեան մի խմբաքանակ արդէն իսկ նուիրել էր Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսին, ուստի մագաղաթեայ տպագրութեան օրինակը նոյն կաթողիկոսին նուիրելու անհրաժեշտութիւն չկար:

Այսպիսով, Ոսկան Երեւանցին Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութիւնը ձեռնարկելիս, ինչպէս տեսանք, ապահովել էր նոր շարուածք, որտեղ սրբագրուած էր նախորդ տպագրութիւններում մեզ հանդիպած վրիպակների մեծ մասը: Փաստորէն Ոսկանը, իր համար գրեթէ անթերի աստուածաշնչեան այս բնագիրը տպագրելով թանկարժէք մագաղաթեայ թերթերի վրայ, կարծում ենք, նպատակ է ունեցել որպէս գլուխգործոց՝ այն վերապահել կա՛մ իր անձնական կիրառութեան համար, կա՛մ էլ Ուշիի Ս. Սարգսի վանք տեղափոխման համար[32], որտեղից նա իր հետ Եւրոպա էր բերել երկու ձեռագիր Աստուածաշունչ: Դրանցից մէկը 1295 թ. ընդօրինակուած Հեթում Բ.-ի «արքայական» Աստուածաշունչն[33] էր (տե՛ս նկ. 8), իսկ միւսը 1660 թ. ընդօրինակուած Ղազար Վարդապետ Վալաքացու (Բաբերդացի)՝ Վուլգատայի հիման վրայ խմբագրած Աստուածաշունչը[34]:

Նկատենք, որ վերոյիշեալ երկու ձեռագրերը մագաղաթեայ են, որոնցից Հեթում Բ.-ի Աստուածաշունչը, ինչպէս յիշատակում է Սուրէն Քոթանջեանը, «գրուած է լաւ

---

[30] Այս օրինակը պահւում է Հայաստանի ազգային գրադարանում (գոյհահամար 958-2000, գրանցահամար 2165 ԱՀ):

[31] Այս օրինակը պահւում է Ն.Ա.-ի մասնաւոր հաւաքածոյում (առ 05.07.2023 Հայաստան):

[32] Ոսկանեան Աստուածաշնչի յիշատակարանում տեղ գտած տեղեկութեան համաձայն՝ ջուղայեցի երեք վաճառականներից Թէոդորոսը Ոսկան Երեւանցու հետ կնքած պայմանագրով պարտաւորուել էր Աստուածաշնչի յետագայ վաճառից ստացուած հասոյթի կէսը փոխանցել Երուսաղէմի Ս. Աթոռին, իսկ միւս կէսը՝ Ուշիի Ս. Սարգիս Զօրավարի վանքին: Ենթադրելի է, որ ջուղայեցի վաճառականը չէր կարող անգամ իմանալ Ուշիի Ս. Սարգսի վանքի տեղը, ուր մնաց թէ նուիրատուութիւն անել պարտաւորուէր այդ վանքին: Հասկանալի է, որ այդ մասին նրան յորդորել է Ոսկան Երեւանցին, ով նախկին վանահայրն էր այդ վանքի, որի մասին հոգ տանելուց նա փաստացի չէր հրաժարուել:

[33] «Աստուածաշունչ, Կիլիկիա, 1295, գրիչ՝ Ստեփանոս, ստացող՝ Հեթում թագաւոր, թերթ՝ 564, նիւթ՝ մագաղաթ, մեծութիւն՝ 22×15,8 սմ, գրութիւն՝ երկսիւն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ ոսկեդրոշմ շագանակագոյն կաշի (Ա. փեղկին՝ Վերափոխումն Աստուածածնի, Բ. փեղկին՝ Խաչելութիւն), լուսանցակողերը՝ ոսկեգոյն ծաղկադրոշմ» (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Երեւան, 1984, նկարագրութեան Հմր 180, էջ 730):

[34] «Աստուածաշունչ, Սպահան, 1660, գրիչ՝ Աստուածատուր Քհնյ., ծաղկող՝ Հայրապետ, ստացող՝ Ջաֆարիա Վրդ., թերթ՝ 616, նիւթ՝ մագաղաթ, մեծութիւն՝ 27,5×20 սմ, գրութիւն՝ երկսիւն, գիր՝ բոլորգիր, կազմ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի՝ դռնակով» (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., նկարագրութեան Հմր 201, էջ 872):

յղկուած նուրբ սպիտակ մագաղաթի վրայ»[35]: Այս հանգամանքն էլ հաւանաբար ի մտի ունենալով՝ Ոսկան Երեւանցին նախատեսել էր մի անթերի տպագրութիւն իրականացնել «կոկեալ» մագաղաթի վրայ: Գէորգ Տէր-Վարդանեանն էլ նշում է, որ Ոսկանեան Աստուածաշնչի թռչնապատկեր զարդագրերը համապատասխանում են հայկական ձեռագրական արուեստին, որոնք պատուիրուած-ձուլուած են Հեթում Բ.-ի Աստուածաշնչում առկայ թռչնագիր զարդագրերի նմանութեամբ: Աւելին, Ոսկանեան Աստուածաշնչի երկսիւն, էջում 50 տող եւ այլ յատկանիշներով ձեւաւորումը հետեւում է հայերէն ամբողջական Աստուածաշնչի ձեռագրական աւանդոյթին[36]: Սա իր հերթին վկայում է, թէ Ոսկան Երեւանցին Աստուածաշնչի տպագրութեան հարցում որքա՜ն բծախնդիր մօտեցում է ցուցաբերել՝ ոչ միայն պատրաստելով նոր բնագիր, այլեւ ըստ կարելւոյն ընդօրինակելով հայերէն ձեռագրերի գեղարուեստական յարդարանքը:

Մ. Մաշտոցի անուան Մատենադարանում պահուող Հեթում Բ.-ի «արքայական» Աստուածաշունչն (թիւ 180) ուսումնասիրելիս պարզեցինք, որ դրա ներկայիս կազմը պատրաստուած է հոլանդացի վարպետների կողմից Ոսկան Երեւանցու պատուէրով: Նկատենք, որ Հեթում Բ.-ի «արքայական» Աստուածաշնչի կազմը (տե՛ս նկ. 9ա) եւ դրա լուսանցակողերը (տե՛ս նկ. 9բ) գրեթէ համընկնում են Ոսկանեան Աստուածաշնչի մի շարք օրինակների շքեղ կազմերի («փառակազմեր») եւ դրանց լուսանցակողերի հետ: Սա խօսում է այն մասին, որ Ոսկանը ոչ միայն հոգ է տարել եւ խնամել Հեթում Բ.-ի ձեռագիրը, այլեւ գումար է ծախսել վերջինիս կազմի համար:

Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի կազմի (տե՛ս նկ. 10) լուսապատճէնների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այն թէեւ շքեղ չէ, սակայն բնորոշ է հայկական ձեռագրարուեստի կազմարարութեանը (որպէս նմոյշ տե՛ս նկ. 11): Մեզ յայտնի չէ, թէ այդ կազմն արդեօ՞ք Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան բնօրինակ կազմն է, թէ՞ այն պատրաստուել է յետագայում: Իսկ եթէ բնօրինակ կազմն է, արդեօ՞ք այն պատուիրուել է Ոսկան Երեւանցու, թէ՞ մէկ ուրիշի կողմից: Հարկ է նկատի ունենալ, որ Աստուածաշունչը կազմւում էր պատուիրատուի հայեցողութեամբ եւ միջոցներով, որն օտարազգի կազմարարների կողմից կատարւում էր Ամստերդամի հայկական տպարանից դուրս:

Բացառում ենք, որ Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութիւնն ունեցած լինէր ոսկեզօծ շքեղ կազմ, որի հնարաւոր կորստից յետոյ էլ պատրաստուած լինէր ներկայիս կազմը[37]: Բանն այն է, որ ոսկեզօծ շքեղ կազմ ունենալու դէպքում Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի լուսանցակողերը նոյնպէս պէտք է համահունչ լինէին կազմին՝ ունենալով ոսկեզօծ ծաղկադրոշմներ, ինչպիսիք առկայ են Հեթում Բ.-ի «արքայական» ձեռագրի եւ Ոսկանեան Աստուածաշնչի մի շարք շքեղ կազմերով օրինակներում:

Ի հարկէ, տրամաբանական կը լիներ, որ Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ թանկարժէք տպագրութեան համար նոյնպէս պատրաստուէր շքեղ կազմ: Սակայն չմոռանանք, որ Ոսկան Երեւանցին Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութիւնն

---

[35] Տե՛ս **Ս. Քոթանջեան**, Հեթում Բ.-ի ձեռագիր Աստուածաշունչը եւ ոսկանեան հրատարակութիւնը, «Էջմիածին», 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 103:

[36] Տե՛ս Ոսկանեան Աստուածաշնչի պատկերները, գրքի մտայղացումը՝ Տ. Առաքել Քհնյ. Պօղոսեանի, առաջաբանի հեղինակ եւ խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան, նկարների մեկնաբանող՝ Ա. Սիմոնեան, 2017, Ս. Էջմիածին, էջ 10-11:

[37] Կազմն առանց կապիչների է, լաւ պահպանուած:

իրականացնելուց յետոյ չունէր բաւարար միջոցներ, մանաւանդ որ ջուղայեցի վաճառականները հրաժարուել էին կատարել իրենց պայմանագրային պարտաւորութիւնները[38], իսկ Ոսկանը, յայտնուելով անելանելի պարտքերի մէջ, ի վիճակի չէր մագաղաթեայ օրինակի համար պատուիրել շքեղ կազմ: Մ. Չամչեանցը գրում է, որ Ոսկանի ակնկալիքը, «որով սպասէր դրամոց վաճառեալ Ա[ստուա]ծաշնչիցն, ՚ի դերև ել. նախ՝ զի բազումք ՚ի տպագրեալ գրեանց ն[ո]ր[ա] կորեան. քանզի յառաքել նորա զայնս զանազան նաւուք ՚ի Կոստանդինուպօլիս՝ մին ՚ի նաւուց, յորում էին բ[ա]զ[ու]մ Ա[ստուա]ծաշունչք և Շարականք, ընկղմեցաւ. երկ[րոր]դ՝ զի և այնք՝ որք ամբողջ հասին, յոյժ յամր վաճառէին. որով և պակասեալ ն[ո]ր[ա] ՚ի դրամոց՝ կայր ՚ի տարակուսի. և պարտատերք նորա սկսան նեղել զնա...»[39]:

Ուշագրաւ է, որ հայերէն Աստուածաշնչի առաջին տպագրութիւնից աւելի քան կէս դար անց Ոսկան Երեւանցու պարտքերի պատճառով նրա տպագրած Աստուածաշնչի շատ օրինակներ գրաւադրուած էին, որոնց վաճառքն արգելուած էր: Այդ մասին Սահակ Վրդ. Ճէմճէմեանը յիշատակում է, որ Մխիթար աբբահայրը երբ ցանկանում էր Աստուածաշունչ հրատարակելու համար ձեռք բերել Ոսկանեան Աստուածաշնչի օրինակներ, հանդիպում է լուրջ դժուարութիւնների: Նրան տեղեակ են պահում, որ Պոլսում հնարաւոր չեղաւ գտնել Ոսկանեան Աստուածաշնչի գէթ մէկ օրինակ, «զի զամենայն գրաւ եդեալ են եւ ոչ վաճառեն մի մի», և ոչ էլ անգամ անկազմ Աստվածաշունչ[40], «քանզի սակաւք գոն մնացեալք, եւ զայն եւս ի գրաւ եդեալ են, եւ ոչ կամին դիւրագին վաճառել»[41]:

Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի յիշատակարանը

Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան յիշատակարանի բնագիրը, ինչպէս ժամանակին նկատել է Նորայր Արք. Պօղարեանը, «կէսէն աւելին քերւած ջնջուած» է: Սակայն Նորայր Արքեպիսկոպոսը չի անդրադարձել, թէ դրանք յիշատակարանի կոնկրէտ ո՛ր հատուածներն են: Նկատենք, որ անցեալում եղել են դէպքեր, երբ ձեռագրերի մագաղաթեայ թերթերը քերելով՝ ջնջում էին բնագիրը, որպէսզի փոխարէնը նոր շարադրանք աւելացնէին կամ էլ առկայ տեղեկատուութեան հետքերը վերացնէին[42]: Այս նոյն եղանակով էլ քերուած-ջնջուած է Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան յիշատակարանի բնագրի մի զգալի մասը[43]՝ հաւանաբար յետագայում կա՛մ այն լրացնելու ձեռագիր հատուածներով, կա՛մ էլ յիշատակարանից դուրս թողնելու ջնջուած հատուածների պարունակած տեղեկատուութիւնը:

Այսպէս, Ոսկանեան Աստուածաշնչի առաջին տարբերակի երկրորդ էջակալութեան

---

[38] Տե՛ս **Լէո**, Հայկական տպագրութիւն, հ. առաջին (XVI-XVII դար), Թիֆլիս, 1904, էջ 280-282:

[39] Տե՛ս **Միքայէլ Վրդ. Չամչեանց**, նշ. աշխ., էջ 661:

[40] «Անկազմ Աստուածաշունչ» ասելով՝ նկատի ունենք Աստուածաշնչի տպագրութիւնից յետոյ ոչ թէ կազմից զրկուած, այլ չկազմուած օրինակները:

[41] Տե՛ս **Սահակ Վրդ. Ճէմճէմեան**, Մխիթար Աբբահօր հրատարակչական առաքելութիւնը, Վենետիկ - Ս. Ղազար, 1980, էջ 74:

[42] Հետաքրքրական է, որ Հեթում Բ.-ի «արեւելական» Աստուածաշնչի 562բ թերթն ամբողջութեամբ բերուած-ջնջուած է (տե՛ս Մայր Ցուցակ ձեռագրաց հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., նկարագրութեան Հմր 180, էջ 730): Բացի դրանից՝ նոյն ձեռագրից բերուած-ջնջուած է Ոսկանի կատարած նշումների մի մասը (տե՛ս **Ս. Քոթանջեան**, նշ. յոդ., էջ 107):

[43] Յիշատակարանի բնագիրը զետեղուած է որպէս յաւելուած:

833-րդ էջի յիշատակարանի առաջին սիւնակում հետեւեալ պարբերութիւնը՝ «զի ետ զկարողու[թ]ի[ւն] անարժանութե[ան] իմում ձեռնտուութե[եամ]բ և օժանդակութ[եամ]բ ընկերակցութե[ան] մարմնականօք գոյիւք պայազատափառաց. Ստեփաննոսի Թէոդորոսի, և Պետրոսի ջուղայեցւոց: Ֆանզի Ա[ստուա]ծասէր և կորովիմս այսոմիկ հայելով ՚ի նուազութի[ւն] Ա[ստուա]ծայնոց կտակարանաց որ ի մէջ ազգիս հայոց. մանաւանդ վարդապետաց՝ և վանականաց՝ և գրոց աշակերտաց: վ[ա]ս[ն] որոյ ջերմեռանդ սիրով յօժարեալք յորդորեցին զմիմեանս, բաջալերելով և զիմս նուաստութի[ւն]. որ սակս գոյից վարանէի. ձեռնտուք եղեն ինձ ներգործաւնութե[ան]ս այսմիկ. տալով առատապէս զծախս դրամոյն ըստ որում և յորժամ պիտոյանայր», *«խմբագրուել» է այսկերպ (քերուած-ջնջուած հատուածների վրայ գիծ ենք քաշել)՝* «զի ետ զկարողու[թ]ի[ւն] անարժանութե[ան] իմում ձեռնտուութե[եամ]բ և օժանդակութ[եամ]բ ընկերակցութե[ան] մարմնականօք գոյիւք պայազատափառաց. ~~Ստեփաննոսի Թէոդորոսի, և Պետրոսի ջուղայեցւոց~~: Ֆանզի Ա[ստուա]ծասէր և կորովիմս ~~այսոմիկ~~ հայելով ՚ի նուազութի[ւն] Ա[ստուա]ծայնոց կտակարանաց որ ի մէջ ազգիս հայոց. մանաւանդ վարդապետաց՝ և վանականաց՝ և գրոց աշակերտաց: վ[ա]ս[ն] որոյ ջերմեռանդ սիրով յօժարեալք յորդորեցին ~~զմիմեանս,~~ բաջալերելով և զիմս նուաստութի[ւն]. որ սակս գոյից վարանէի. ձեռնտուք եղեն ինձ ներգործաւնութե[ան]ս այսմիկ. տալով առատապէս զծախս դրամոյն ըստ որում և յորժամ պիտոյանայր»*:*

Ոսկանեան Աստուածաշնչի առաջին տարբերակի երկրորդ էջակալութեան 834-րդ էջի յիշատակարանի առաջին եւ երկրորդ սիւնակների՝ ջուղայեցի վաճառականների վերաբերեալ հետեւեալ հատուածը՝ «Յիշեսջիք միով հայրմերով զվերոգրեալ խաւենց պարոն Ստեփաննոսն. և զհանգուցեալ ծնօղսն նորին. զհայրն զպարոն եղումն, և զմայրն զփառանձեմն, և զայլ արեան մերձաւորս նորին: Այլև զթոռչենց Թէոդորոսն, և զհայր նորին զմահդասի յետգարն. և զմայրն աննամէլիքն: և զայլ համազունս նորին բոլորովին: Նաև զպարոն Պետրոսն. և զհայր նորին զտէր աւագն. և զմայր նորին զօղլան գարաճն: և զայլ հոմասեռս նորին զնոր և զհին», *նոյնպէս ենթարկուել է նմանաբնոյթ «խմբագրման»՝* «Յիշեսջիք միով հայրմերով զվերոգրեալ խաւենց պարոն ~~Ստեփաննոսն~~. և զհանգուցեալ ծնօղսն նորին. զհայրն ~~զպարոն եղումն,~~ և զմայրն ~~զփառանձեմն~~. և ~~զայլ արեան մերձաւորս նորին: Այլև զթոռչենց Թէոդորոսն, և զհայր նորին զմահդասի յետգարն. և զմայրն աննամէլիքն: և զայլ համազունս նորին բոլորովին: Նաև զպարոն Պետրոսն. և զհայր նորին զտէր աւագն. և զմայր նորին զօղլան գարաճն: և զայլ հոմասեռս նորին զնոր և զհին»*:* *Ոսկանեան Աստուածաշնչի առաջին տարբերակի երկրորդ էջակալութեան 833-րդ էջի յիշատակարանի երկրորդ սիւնակում նշուած վաճառականների եւ Ոսկանի միջեւ տեղի ունեցած պայմանաւորուածութիւնների մասին տեղեկութիւնները նոյնպէս ամբողջովին քերուած-ջնջուած են մագաղաթեայ տպագրութեան օրինակի յիշատակարանից[44]:*

Այստեղից եզրակացնում ենք, որ ջուղայեցի վաճառականների մասին տեղեկութիւնները Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի յիշատակարանից քերուել-ջնջուել են կանխամտածուած կերպով՝ բոլոր դէպքերում յոգնակի թիւը փոխելով եզակի թուի, հաւանաբար նրանց փոխարէն մէկ ուրիշի անունը ձեռագրով յիշատակելու մտադրութեամբ: Հակառակ դէպքում, անտրամաբանական կը լիներ յոգնակի թուով բոլոր նախադասութիւնները դարձնել եզակի թիւ, առաւել եւս միեւնոյն նախադասութեան մի մասը թողնելով, իսկ միւս մասը ջնջելով: Այսպէս, «Յիշեսջիք միով հայրմերով զվերոգրեալ խաւենց պարոն Ստեփաննոսն. և զհանգուցեալ ծնօղսն նորին. զհայրն զպարոն եղումն, և զմայրն զփառանձեմն, և զայլ արեան մերձաւորս

[44] Տե՛ս յաւելուածը:

ՈՈրին» նախադասութիւնը չնչուած է հետեւեալ կերպ՝ «Յիշեսջիք միով հայրմերով զվերոգրեալ խաւենց պարոն ••••••. և զհանգուցեալ ծնօղսն ՈՈրին. զհայրն •••••• և զմայրն զ••••••. և ••••••»: Ուշագրաւ է, որ վերոբերեալ հատուածում պահպանուել է «խաւենց պարոն» արտայայտութիւնը, ինչը նշանակում է, որ չնչուած անուան փոխարէն հաւանաբար գրուելու էր ջուղայեցի ազնուական մէկ այլ վաճառականի անունը՝ իր ծնողների եւ ընտանիքի անդամների անուան յիշատակմամբ:

Կարծում ենք, որ մագաղաթի վրայից յիշատակարանի բնագրի մեծ մասի հատուածների քերող-չնչողն ու «խմբագրման» հեղինակը Ոսկան Երեւանցին չէ, ով հազիւ թէ չնչէր իր տպագրական գործունէութեանը, մերձաւոր գործակիցներին եւ ընտանիքի անդամներին վերաբերող հատուածները: Այս «խմբագրումը» չէին կարող կատարել նաեւ Կարապետ Անդրիանացին, Յովհաննէս (Յօհան) Երեւանցին, քանի որ վերջիններս իրենց մասին տեղեկութիւնները չէին չնչի յիշատակարանից: Ուստի դժուար է ասել, թէ ո՛վ կարող էր քերել-չնչել Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի յիշատակարանի համապատասխան տողերը:

Եզրակացութիւն

Հայ գրատպութեան պատմութեան մէջ Աստուածաշնչի առաջին տպագրութիւնը դարակազմիկ երեւոյթ էր, որը մեծապէս պայմանաւորուած էր մի խումբ նուիրեալների անձնազոհ եւ տքնաջան գործունէութեամբ: Հայերէն Աստուածաշնչի տպագրութեան առաջամարտիկը Ոսկան Վրդ. Երեւանցին էր, ով բազում զրկանքների[45] գնով կարողացել էր գլուխ բերել բաւական բարդ տպագրական այս գործը: Սակայն չբաւարարուելով Աստուածաշնչի թղթեայ տպագրութեամբ՝ նա ձեռնամուխ է լինում նաեւ Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեանը, որի բնագիրը մասամբ սրբագրումների էր ենթարկել, ինչը վկայում է, որ Ոսկանի համար չափազանց կարեւոր էր տպագրել Աստուածաշնչի՝ իր համար անթերի բնագրով մի օրինակ՝ այս անգամ մագաղաթի վրայ: Սա աւելի էր մեծացնում Ոսկանեան Աստուածաշնչի տպագրութեան դերն ու արժէքը ոչ միայն հայկական, այլեւ համաշխարհային միջավայրում:

Այս ուսումնասիրութիւնը, կարծում ենք, նոր լոյս կը սփռի Ոսկան Երեւանցու կատարած տպագրական հսկայածաւալ գործունէութեան վրայ, որի գագաթը Աստուածաշնչի տպագրութիւնն էր՝ իր բոլոր տարբերակներով: Մեր վերլուծութիւնը հնարաւոր եղաւ իրականացնել Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան Ս. Թէոդորոս Ձեռագրատանը բարեբախտաբար պահպանուող Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան բացառիկ եւ մինչ օրս մեզ յայտնի միակ օրինակի շնորհիւ:

Յօդուածի նպատակն է նաեւ ոչ միայն հանրահռչակել Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ այս օրինակը, այլեւ առաջադրուած հարցադրումներով նոր հետազօտութիւնների գաղափար տալ թեմայով հետաքրքրուած ուսումնասիրողներին: Ապագայում նախատեսում ենք տեղում «առ աչօք» ուսումնասիրել Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակն ամբողջութեամբ եւ դրան առնչուող վա-

[45] Առաւել Դաւրիժեցու պատմութեան մէջ Ոսկան Երեւանցին, իր ինքնակենսագրականում երրորդ դէմքով, այսինքն՝ Ա. Դաւրիժեցու անունից խօսելով իր կրած հալածանքների մասին, մասնաւորապէս նշում է. «...բայց զնեղութի[ւն]ս կրեաց և կրէ՝ ՚ի սուտակասպասից՝ և ՚ի բարձրայօնից իմաստակաց. յեկեղեցականաց և յաշխարհականաց. մերձակայից, և հեռաւորաց. իսկ նա զչարչարանսն յանձին տարեալ ասէր. եթէ տակաւին մարդկան հաճոյ լինիմ. ապա Ք[րիստոս]ի ծառայ ոչ եմ (տե՛ս **Առաքել Վրդ. Դաւրէժացի**, Գիրք պատմութեանց, յԱմսթէլօդամ, 1669, էջ 638, **Հ. Միրզոյեան**, Ոսկան Երեւանցու ինքնակենսագրութիւնը, «Բանբեր Երեւանի համալսարանի. Հայագիտութիւն», 2014, № 1, էջեր 43-44, 51):

ւերագրերը, եթէ այդպիսիք լինեն Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան տրամադրութեան տակ։

Այս առիթով ցանկանում ենք հրաւիրել հայ գրքի մատենագիտութեամբ զբաղուղների յատուկ ուշադրութիւնն առ այն, որ հայերէն առաջին տպագիր Աստուածաշընչի մատենագիտական նկարագրութիւնը կատարելիս Ոսկանեան Աստուածաշնչի առաջին եւ երկրորդ տպագրութիւնների հանգամանքը հաշուի առնելուց բացի պէտք է նկատի ունենալ նաեւ մագաղաթեայ տպագրութեան հանգամանքը՝ նշելով մատենագիտական առնուազն երեք առանձին նկարագրութիւն, յատկապէս որ Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան թուականը, ինչպէս ցոյց ենք տուել, այլ է։

Յաւելուած

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ[46]: *(տե՛ս նկ. 12)*

Գոհութի[ւն], պատիւ, և փառք էութե[ան]ն ինքնագոյի՝ տէրութե[ան]ն յարակայի։ Երրորդականի անձնաւորութե[ան]ն, և միականի Ա[ստուա]ծութե[ան]ն Հօր և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ՝ ծնողի և ծնիցելոյ. և բղխողի ՚ի նոցունց էութ[են]է։ Համապետաց՝ համագոյից՝ և համազօրաց.՚ի հանուրց արարածոց, և բնաւից ստեղծուածոց , իմանալեաց և զգալեաց. նիւթականաց տարրեղինաց, և յաննիւթից հրաբունից սեռից. անցեալով ամանակաւ, և ներկայիւ կենցաղիւ. և ապառնեաւ յաւիտենիւ։ զի ետ զկարողու[թ]ի[ւն] անարժանութե[ան] իմում ձեռնտուութ[եամ]բ և օժանդակութ[եամ]բ ընկերակցութե[ան] մարմնականօք գոյիւք պայազատափառաց. Սահակայեոսի Թէոդորոսի, և Պետրոսի ջուղայեցւոց։ քանզի Ա[ստուա]ծասէրք և կորովիքս այսոքիկ հայելով ՚ի նուազութի[ւն] Ա[ստուա]ծայնոց կտակարանաց որ ի մէջ ազգիս հայոց. մանաւանդ վարդապետաց՝ և վանականաց՝ և գրոց աշակերտաց։ վ[ա]ս[ն] որոյ ջերմեռանդ սիրով յօժարեալք յորդորեցին զմիմեանս, քաջալերելով և զիմս նուաստութի[ւն]. որ սակս գոյից վարանէի. ձեռնտուք եղեն ինձ ներգործառնութե[ան]ս այսմիկ. տալով առատապէս զծախս դրամոյն ըստ որում և յորժամ պիտոյանայր։

Քանզի ես իշխանութ[եամ]բ և հրամանաւ վեհափառի Կարապետի և պատրիարգի հայկազանս տեառն. ներ պատրիարգարանում սրբոյ էջմիածնի՝ լուսանկարի՝ և քրիստոսահամբեցելոյ, տեառն Յակոբու։ ներ թուոջ փրկչին վեց հազարորդի վեցհարիւրորդի վաթսներորդի երկրորդի։ իսկ ըստ հայոց թուոյ հազարերորդի. հարիւրորդի մեսաներորդի։ սեպտեմբերի. իէ. եղեալ յերկրէ և յազգէ իմմէ դրմեցի ՚ի կողմանս Ծերպոյ. յաղագս տպման մատենիս այսորիկ աստուածայնոյ. և բազմաւ վշտիւ և տառապակրութ[եամ]բ եկեալ հասի ՚ի տարմանս յիսաղոյ՝ յերկիրն թուրգանու.՚ի քաղաքն

[46] Յիշատակարանը շարադրելիս հաւատարիմ ենք մնացել բնագրին, յապաւուած բառերը վերականգնելիս օգտագործել ենք ուղիղ փակագծեր, իսկ յիշատակարանի մագաղաթեայ թերթերից ճերուած-ջնջուած հատուածների վրայ գիծ ենք քաշել։ Հետազօտողները, համեմատելով Ոսկանեան Աստուածաշնչի առաջին եւ երկրորդ տարբերակների յիշատակարանների բնագրերը, նկատել են, որ երկրորդ տարբերակի յիշատակարանն անհշան խմբագրութեամբ տարբերւում է առաջին տարբերակի յիշատակարանից, իսկ որոշ դէպքերում Ոսկանեան Աստուածաշնչի երկրորդ տարբերակի այլ օրինակների յիշատակարանի բնագիրը նոյնութեամբ կրկնում է առաջին տարբերակի յիշատակարանը (տե՛ս **Ք. Կորկոտեան**, **Ն. Ոսկանեան**, Հայերէն Աստուածաշնչի առաջին տպագրութիւնը եւ նրա տարբերակը, «Էջմիածին», 1966, ԺԱ.-ԺԲ., էջ 174, **Ա. Խաչատրեան**, նշ. յօդ., էջեր 143, 147)։ Աւելացնենք, որ Ոսկանեան Աստուածաշնչի առաջին տարբերակի յիշատակարանը (տե՛ս նկ. 13) նոյնութեամբ կրկնում է նաեւ մագաղաթեայ տպագրութեան օրինակի յիշատակարանի բնագիրը, ինչին յանգել ենք մեր կատարած համեմատութեամբ։

Իլիվօնայ. ներ նախնում նուագում զոչ ոք գոի ինձ զօժանդակ. սակս որոյ թողեալ գնացի՛ւ Հռօմայ. գոնեայ անդ գացի յաջողութիւն գործառնութենէն. և անդ ես ոչ եղէ ինչ մխիթարութիւն օգնականութենէն գործոյս. վ[ա]ս[ն] յոքունց պատճառաց ներհակականաց. թէ՛ի մերայնոց ազանց. և թէ ինքեանց կանօնաց և սահմանաց՝ զորս մի ըստ միոջէ շարագրել ձանձրութիւն է։

Իսկ՛ի դառնալն իմում անդրէն յԻլիվօնայ յետ բազմաց հակառակութենէն տուտակասպասից արանց և փառքուսաց մերայնոց ազանց. որք ոչ զօգուտ ազգի և զսրբոյ աթոռոյն այլ զանձանց զցանկութիւն. և կամաց զհաճութիւն կամէին լնուլ, որոց ընդդիմակայեալ. զոչինչ եաոե հատանութենէն բանս։ այլ ընդ երից հատատարմագունից վերագրեցելոց արանց և Քրիստոսատուրաց՝ յետ բազմաց քննութենէն և հարցափորձութենէն միաբանեցայ սիրով՝ և դաշնադրականաւ գրով. զի ոտքս երեքեանս ընդ իս հոգասցեն զամենայն զծախս վերագրեցելոց մատենին մինչեւ աւարտ. աւ յօգուտ ազգիս և՛ի շահ սրբոյ աթոռոյն։

Բայց այսպիսի եղև պայմանն, քանզի՛ի թուին ռճժդ. փետրվարի. ի. վերագրեցեալ պարոն սահմանեոսն. և պարոն պետրոսն խոստացան զաւելեալ շահան որ՛ի վաճառմանէ Աստուածաշնչոյն լրիւքի տալ սրուբք էջմիածնի։ նոյնպէս և պարոն Թէոդորոսն զիւր բաժնի շահոյ զկէսն խոստացաւ սրուբք երուսաղէմի. և զկէսն յուշոյ վանից սրբոյն սարգսի զօրավարին։ Այսու պայմանաւ ես ես չու արարեալ հասի՛ւ կողմանս հիւսիսայնոյ յերկիրս բէլգիկոյ. որ այժմ կոչի հոլլանտիայ. ՛ի քաղաքս յամսթէլօտամի՛ւ տպարան սրբոյ էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրավարի։ ուրանօր և սկիզբն արարի տպել գրովքն զորս առեալեան էր յօրինեալ. զի գիրք ժառանգաւորին յոյժ խոշորք էին և անյարմարք. նաև զի ոչ գոյր գիր վասն համաձայնութենէն և խորագրութենէն հարկեցայ առնել զնօսր գիրդ իմով գոյիւ, զոր վ[ա]ս[ն] փորձի եղեալ եմ ներ վերջնում շարակնոցին։ նա և այսու բոլոր գրիւ որ յառեալէն էր յօրինեալ։ որովք գրովք զսկիզբն արարաք ներ թուջն ո[ր]պ[էս] գրեալ է՛ի սկզբան, և յաւարտ սորին ժամանեցաք ողորմութ[եամ]բ նունոյ Տ[եառ]ն և փրկչին Յ[իսուս]ի. ներ թուջն Ք[րիստոս]ի հազարորդի վեցհարիւրորդի վատներորդի ութերորդի. յամսեանն հոկտեմբերի, որոյ էին աւուրք երեքտասաներորդ։ Իսկ ըստ մերոյս հազարորդի հարիւրորդի եօթնևտասներորդի, ներ նոյնում ամսում հոկտեմբերի երրորդի. իսկ ըստ հայոց ամսոյ հրոտից քսաներորդի հինգերորդի։

Արդ տեարք սուրբք և ծառայակիցք՛ի Ք[րիստո]ս, որք հանդիպիք այսմ նորատնկոյ բուրաստանի. և Ա[ստուա]ծակերտի դրախտի՝ և յոքնազանի այգւոյ. և յեդեմաբղխի քառավտակեան գետոյս, որ ոռոգեալ արբուցանէ՝ և բողբոջեալ պտղաբերէ յոգիս բանականաց զպէսպ[էս] տեսակս առաքինութե[ան]ց՝ և վարուց բարեաց։

Ձիշեսջիք միով հայրմերով զվերոգրեալ խանենց պարոն Սահականոսն. և զհանգուցեալ ծնօղսն նորին. զհայրն զպարոն եղումն, և զմայրն զփառանձեմն. և զայլ արեան մերձաւորս նորին։

Ազգէ զքթուէշենց պարոն Թէոդորոսն. և զհայր նորին զմահդասի յետագարն. և զմայրն աննամէլիքն։ և զայլ համազունս նորին բոլորովին։

Նաև զպարոն Պետրոսն. և զհայր նորին զտէր աւագն. և զմայր նորին զօղլան գարրաքն։ և զայլ հոմասեռս նորին զնոր և զհին։

Ընդ նոսին և զհայրն իմ զպարոն Թորոսն. և զմայրն իմ զգօհար ազիզն. և զեղբայրն իմ զՅօհաննէսն զվոխեցեալն աւ Քրիստոս, որոյ ընչիւքն մոմ եմ ի գործ յայս։

այլև զմիւս եղբայրն իմ զաւետիսն որոյ գրովն սկսաւ գիրքս. և ինքն ևս աշխատեցաւ ժամանակս ինչ՝ի խահարարութե[ան] և՝ի տուրեաւուխրնե[ն] գործոյս, և զայլ ազգացեղս նոցին։

Ընդ որս և զհատատարիմ աշակերտն իմ զկարապետ վարդապետ անդրիանացի. որ միշտ և անձանձիր՝ տքնեցաւ՝ի վե[ե]րայ սրբագրութե[ան]ն և այլոց գործոց։

Այլև զձեռնատուն աշակերտն իմ զյօհան սարկաւագ երևանեցի. որ զառաջնեւորդ փորձն միշտ ընթերցաւ ընդ իս և ընդ վարդապետին՝ և աշխատեցաւ՝ի սփոելն զթուխտն և՝ի ժողովելն՝, և՝ի կապելն՝ և զտնտեսատան հոգսն և զամե[ենայն] զարտաքին գործս հոգաց և ծառայեաց մտերմաբար։

Եւ զայլս զամենեսեան զաշխատաւորս և զբարեմիտ ջանացօղս յիշեսջիք, զի և դուք յիշեալ լիջիք յարքայութե[ան] Տ[եառ]ն մերոյ Յ[իսուս]ի Ք[րիստոս]ի լսելով զերանաւէտ բարբառ ն[ո]ր[ա]. որ է օրհնեալ ընդ Հօր. և ընդ սրբոյ Հոգւոյն յաւիտեանս, և յաւիտեանս յաւիտենից. Ամէ՛ն։ Հայր մեր որ յերկինս։

ՎԵՐՋ։


ՍՈՂՈՄՈՆ


ՀՆԱՑ ՆՒ ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱ
ԲՆԱՏՑ ՆՈՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՎ։ ՇՂԲԱ
ԿԱՐԳՈՒԹԵԱՄԲ ՆԱԽՆԱՑՑՆ
ՍՈՐՈՑ ՆՒ ԱՀՈՒՄՐՏԱՍՒ
ԲԱՑ ԹՂԹՈՄՆԵՂԱՑ։

Յակ զկնի Հրամանաւ վեհափառին Տեառն Յակոբայ
Հայոց Աղթուղիկոսի գլխակոչեալ և անատեալ ըստ Դաղմատացւոցն. Նա և զՀամաճայնութե[ան] Հանուրց գրոց Ն՝ծաչնչից ընդ
իրեարս առընթեր կարգեալ ամենեցուն. Նուաստ
ուսեալն քանի Տն սպասաւորի. Ոսկանէ
Նրևանեցւոյ։

ՅԱՄՍՏԻՐԴԱՄ։

Ի՛ներ Տպարանումս սրբոյն Էջմիածնի. և սրբոյն Վարդան զօրավարի, ի Ամստերդամ փոխչին. 1666, Յակ Հայոց.
ՌՃԺ-Ե. Նամսեանն Մարտի ԻԸ-տասանիւ։

Նկ. 1 Ոսկանեան Աստուածաշնչի թղթեայ տպագրութեան օրինակի անուանաթերթը (Հայաստանի ազգային գրադարան)



ՍԱՂՄՈՍՔ
ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՆ
ԲԱՆԱՑ ՆԱԽ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ՝ Շ.ԸՐԴ.
ԿԱՐԳՈՒԹԵԱՄԲ ՆԱԽՆԱՑԱՑՆ
ՍՆՈՒՑՈՑ ԵՒ ԱՇԽԱՐՏԱՒՈՒ
ԲԱՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ·

Իսկ զկնի հրամանաւ վեհափառն Տեառն Յակոբայ
Հայոց կաթուղիկոսի զվանականեալ և անատեալ ըստ Դաւմատա
ցւոցն. նա և զՀամաձայնութիւն Հանուրց գրոց Ի Ձեռնէից ընդ-
իրեարս առընթեր կարգեալ ամենեցուն. Նուաստի
ոմանից քանի Տն սպասաւորի. Որոնիկ
Նշանեցաւ·


ՅԱՄԱՏՆԻՐԳԻՄ

Ի Թուին Տպարանութեամբ սրբոյն Լուսաւորչի. և սրբոյն Գրիգորի զօրա
վարի, Ի Ղուսումի փրկչին. 1666, Իսկ Հայոց.
ՌՃԺԵ. Նամսեանն մարտի ութսանեկ։


Նկ. 2 Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի անուանաթերթը (Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան Ս. Թէոդորոս Նեռագրատուն)




Նկ. 3 Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի՝
Հին կտակարանի Մննդոց գրքի առաջին էջի կնիքը




Նկ. 4 Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի «Բանաձիւսութիւն» եւ «Առ ընթերցօղսդ» գրութիւնների առաջին էջերը




Նկ. 5ա Ոսկանեան Աստուածաշնչի թղթեայ տպագրութեան օրինակի Ովսէէ 7:8 համարի՝ վրիպակ պարունակող տպագրութեան տողերը




Նկ. 6ա Ոսկանեան Աստուածաշնչի թղթեայ տպագրութեան օրինակի Ղուկաս 7:11 համարի՝ վրիպակ պարունակող տպագրութեան տողերը




Նկ. 5բ Ոսկանեան Աստուածաշնչի թղթեայ տպագրութեան օրինակի Ովսէէ 7:8 համարը՝ վրան թղթէ սրբագրուած տող փակցուած



Նկ. 6բ Ոսկանեան Աստուածաշնչի թղթեայ տպագրութեան օրինակի Ղուկաս 7:11 համարը՝ վրան թղթէ սրբագրուած տող փակցուած




Նկ. 5գ Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի Ովսէէ 7:8 սրբագրուած համարը՝ շարուածքի փոփոխութեամբ




Նկ. 6գ Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի Ղուկաս 7:11 սրբագրուած համարը՝ շարուածքի փոփոխութեամբ




Նկ. 7ա Ոսկանեան Աստուածաշնչի մազաղաթեայ տպագրութեան օրինակի բարձրութիւնը (19 սմ)



Նկ. 7բ Ոսկանեան Աստուածաշնչի թղթեայ երկրորդ տպագրութեան օրինակի բարձրութիւնը (9.7 սմ) (Պ. Պ.-ի մասնաւոր հաւաքածոյ, առ 05.07.2023, Հայաստան)





Նկ. 8 Հեթում Բ.-ի «արհայական» ձեռագիր Աստուածաշնչից երկու թերթ (Մատենադարան, ձեռագիր № 180)



Նկ. 9ա Հեթում Բ.-ի «արհայական» ձեռագիր Աստուածաշնչի կազմի դիմերեսը, մէջքը եւ վերջերեսը



Նկ. 9բ Հեթում Բ.-ի «արհայական» ձեռագիր Աստուածաշնչի կազմի լուսանցակողերը



Նկ. 10 Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի կազմի դիմերեսը, մէջբը եւ վերջերեսը




Նկ. 11 Ղազար Վալաֆացու (Բաբերդացի) խմբագրած ձեռագիր Աստուածաշնչի կազմի դիմերեսը, մէջբը եւ վերջերեսը (Մատենադարան, ձեռագիր № 201)



Նկ. 12 Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի «Յիշատակարան»-ը



Նկ. 13 Ոսկանեան Աստուածաշնչի թղթեայ տպագրութեան օրինակի «Յիշատակարան»-ը
(Հայաստանի ազգային գրադարան)



Նկ. 14 Ոսկանեան Աստուածաշնչի մագաղաթեայ տպագրութեան օրինակի տուփը (յետագայում պատրաստուած)

ՍՏԵՓԱՆ ՊԵՏՈՅԵԱՆ

Պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ



ՈՒՂԵԳՐԱԿԱՆ

ԲՈԼՈՐԻ ՔԱՂԱՔԸ

* * *

Գօտկատեղիս բարձրութեան ուղղանկիւն փոքրիկ պատուհանով նայում եմ սենեակի ներսում՝ վանքի հին խոհանոցում սնունդը մեքենայաբար տոպրակների մէջ դասաւորող Աշոտին: Հայաստանցի է, քսան տարի առաջ է եկել: Լուռ է, բծախնդիր, այս պարզ աշխատանքի մէջ նոյնիսկ լարուած: Տոպրակների վրայ գեղեցիկ ձեռագրով գրում է սննդի հասցէատերերի անունները: Արաբերէնի, արեւմտահայերէնի եւ եբրայերէնի յարակից աղմուկի մէջ իր հազուագիւտ արեւելահայերէն բառերը ականջս շոյում են: Օրեր անց, երբ արդէն ծանօթներ ենք, Աշոտը անճանաչելի շատախօս է, վրդովուած ու բողոքաւոր, վիրաւորուած՝ մէկ իրեն Արցախի առաջին կուսում չմիացածներից, մէկ տեղի անտարբերութիւնից, մէկ կեղծ-հայերից: Յաճախ հայհոյում է: Աշոտի հոգին վերքեր ունի:

* * *

Սուրբ քաղաք այցելութիւնը հայրենադարձութիւն է՝ զուգահեռ ընտրեալ ժողովրդի հայրենադարձութեանը: Հրեաների համար այն պատմական հայրենադարձութիւն է, որն ի հարկէ հետեւում ունի գաղափար, նուիրում, կարօտ, աշխատանք, հաւատ, ինքնութիւն եւ այլն: Քրիստոսին սիրողների համար էլ այն իրերի հակառակ դասաւորութիւնն ունի. մարդիկ այստեղ են գալիս նախ սուրբ ձգտումով, դեռ անծանօթ կարօտով, աւելի մեծը դառնալու իղձով, հաւատքի նորոգման սպասումով եւ այդ ընթացքի մէջ յանկարծակի յայտնաբերում են, որ այս այցելութիւնը հայրենադարձութիւն է: Այդ պահին է բացայայտւում, որ սա հէնց այն վայրն է, որտեղ պէտք էր վաղուց լինել. վայր, որտեղ լինելն իրական ու բնական է դարձնում լինելը:

Հայրենադարձի հաւատարմութիւնը տոգորւում է թէ՛ յիսուսականների եւ թէ՛ մովսիսականների մէջ, բայց սուրբ քաղաքն ինքնին անհաւատարիմ է. հաւատարմութիւն, հնազանդութիւն եւ նուիրում պահանջող բոլորից:

* * *

Փակել եմ աչքերս ու լսում եմ գալիլեական լճակի մօտ քարոզող երիտասարդ սքեմաւորի ձայնը, թռչունների գարնանային զրնգուն կանչը եւ ջրերի մեղմ դարձդարձումը: Յիսուսի երիտասարդութիւնն է այստեղ, նրա եռանդը, գեղջուկ աշխոյժը, նրա նախաերուսաղէմեան անհոգութիւնը:

* * *

Բոլո՞րն են զգում, որ արդէն եղել են այստեղ: Հոգեհարազատութիւնն ուղեկից է եւ ամէն բան առ աչօք ծանօթ: Պատճառը այս քաղաքում հիւսուած մի, հաւատարիմ, արդար, փրկող Աստծոյ նկատմամբ հաւատքի անընդհատութիւնն է, ինչպէս նաեւ շնորհի եւ օրէնքի, մարդու եւ հակամարդու, տիրապետութեան եւ ազատութեան, վէ-

ճի եւ համաձայնութեան միմեանց հակազդող շարունակականութիւնը: Այո՛, քաղաքը այցելուին հարազատ է, բայց այն ինքնին հարազատութիւն չի փափաքում. այն մարդամօտ չէ, քանի որ մարդիկ հետաքրքասէր են, իսկ ինքը՝ մեկուսի գոյող խորհուրդների գաղտնարան: Այցելուներն, ի հարկէ, իրենցն են համարում այն, բայց քաղաքը խառնուածքով անպատկան է, անենթակայ, նուաճումներ չհանդուրժող: Թէ՛ հարազատական նուաճումներ, թէ՛ մտաւոր եւ թէ՛ զգայական նկրտումներ չախորժող: Նրան վաղուց ամուր գրկած պարիսպներն ու խիտ տները բնաւ չեն կաշկանդում: Կրօնական թշնամանքը, ազգայնական բնազդները, ոստիկանական հսկումը նրա համար ոչինչ են: Նրա աչքերում դրանք բնական են, քանի որ նոյնութիւններ են, այն են՝ ինչի մէջ չկայ «նոր»-ի վտանգը:

Վաղուց ի վեր Աբրահամն իր սրտում բոլորի նման այս քաղաքի նկատմամբ հարազատութիւն էր ապրել: Թէկուզեւ մեռած Սառայի միջոցով, մի վերջին անգամ խորամանկելով՝ նրան այստեղ էր թաղել եւ հաւատացել, որ ինքն ու իր բազմահազար սերունդը բաժին կ'ունենան դրանում: Սակայն ո՞ր սերունդը. Իսմայէլի՞, Իսահակի՞, թէ Յիսուսի՞:

Մոխրանալով եւ յառնելով, այսօր՝ երկրորդ հազարամեակում, նա՝ երիտասարդ փիւնիկի նման, մէկ վեր ճախրելով, մէկ վար՝ դէպի բլուրներ ազատ անկումով վստահ թառել է երկինք ձգտող բարձունքների վրայ. կարծես ոչինչ էլ չի եղել:

Յիսուսն Աբրահամից առաջ էր սիրում այս քաղաքը եւ յետոյ էլ իր թեւերի տակ հրաւիրելով՝ պատսպարել փորձում: Սաղէմն էլ իր հերթին հոգեկանութիւնը, ազատութիւնը, նորը, յայտնութենականը, ինքնուրոյնը չէր հանդուրժելու եւ գալիլեական գիւղերից եկած Յիսուսին արհամարհանքով իր պարիսպներից դուրս խաչելու էր:

* * *

Մօտենում եմ Բեթղեհէմին՝ մանկան ծննդեան յաւիտենական բերկրանքին: Մայրութեան, նոր ծննդի եւ ընդհանրապէս կեանքի յարահոսումն ու վերակազմումն այստեղ ամենուր է:

* * *

Սոֆիի մայրը հրեայ է, իսկ հայրը գերմանացի: Ինքն իրեն հրեայ է համարում, բայց ոչ կրօնական: Աշխատում է Պաղեստինի դպրոցականների համար կրթական ծրագրեր գրելով. դա իր համար մարդասիրութիւն է ընդդէմ հրեական յայտնի ոճիրների (ոճիրների զոհերի, որոնք ոճիրներ են գործում): «Պապս, որ ողջ կեանքն այստեղ է ապրել, ինձ ասել է, որ եթէ հրեայ չլինէր հակասեմիտ կը լինէր», - ասում է Սոֆին՝ սպասելով իմ արձագանգին: Շփոթուած ժպտում եմ:

* * *

Երուսաղէմը լարումների ոստան է: Ապրումներն առատութեամբ գլխապտոյտ են առաջացնում: Մէկ անգամ փողոցով անցնելը սրտիդ մէջ կարող է միահիւսել տրամադրութիւնների, բնաւորութիւնների, դէմքերի, եւ աւելին՝ քաղաքակրթութիւնների, բարոյականութիւնների, գաղափարաբանութիւնների պրկուած մի կծիկ: Իսկ փողոցի վերջում, երբ դու վայրկեաններ անց միայնակ ես ու չես հասցրել բերանդ, միտքդ, սիրտդ բացել այս պրկմանը հակազդելու համար, ո՞ւր ուղղորդել այդ ամէնը ... ու լարումը գնում է ներս, սկսում է այլազանօրէն կերտել նոր երուսաղէմադրոշմ ներաշ-

խարհիդ։

* * *

Տառապանքը սքողուած է սուրբ քաղաքում։ Այն սիրում է սոսկ սրբազնութիւն, կատարելութիւն, օրէնքներ եւ չի ցանկանում ուշադրութիւն դարձնել ցաւին, անցողիկութեանը, խնդրանքներին։ Դրա համար բոլորի ուշադրութիւնից ծպտեալ, որեւէ մէկի նուիրական եւ գեղագիտական զգացմունքներին խանգարելուց զգուշանալով՝ տառապեալ հոգիները, իրենց հիւանդ, օրհասականօրէն ախտահար հարազատներին երկիւղալից մօտեցնում են սրբատեղիներին՝ որպէս վերջին միջոց փրկութեան, իրենց սիրոյ ապացոյցի եւ խղճի անհնար փարատման։ Եւ ոմանք զուգահեռաբար նոր ապրումների եւ տեսարժան վայրերի ետեւից ցցուն շրջում են, վայելում լոկ զանազան զգացական պրկումներ՝ կրօնական, գեղապաշտ, այլ։

Ի՞նչ է անհրաժեշտ հասկանալու համար, որ այս ոստանի սրբատեղիները վերպատմական են, վեր-նիւթական։ Նրանք նորոգւում ու նորանում են այցելուների սրտերով, արցունքով, աղերսով։ Դրանց մէջ միայն Յիսուսի, Աստծոյ Որդու, Անանց Խօսքի, Անմոռունչ Գառան ներկայութիւնը, աղօթքը, հեծկլտանքը, խինդը, խանդը, ձգտումն ու սպառումը չէ, այլեւ բոլոր նրանց, որոնք ապրեցին ու կրեցին այդ ամէնը այս վայրն այցելելիս եւ առանց այցելութեան։

* * *

Հրեաները գրի/գրքի ժողովուրդ են եւ միակ բանը, որ նրանց զանցում է գրից երաժշտութիւնն է։ Սրճարանում լսում ենք մի կարճլիկ հրէուհու հոսուն ձայնը, որ արտացոլում է ամերիկեան յայտնի երգեր։ «Իմացի՛ր, սա անսուրբ մարդկանց Սուրբ Քաղաքն է»։ Սոֆին դա ասում է առանց երկար մտածելու կամ զգացմունքների, ինքնաբերաբար, ասացուածքի պէս։ Նորից ժպտում եմ ու մտածում, որ ինձ դրա մասին պէտք էր շուտ ասել, չէ որ ես արդէն մեկնում եմ։

* * *

Գեթսեմանին. այն Քրիստոսի կեանքում անպայման պէտք է լինէր։ Այն միակ հակակշիռն է քառասնօրեայ գերմարդկային փորձութեան։ Գեթսեմանին բոլորի քաղաքից դուրս է, ուրեմն նաեւ օրէնքից ու կանոններից ազատ, ճկուն ու հեզ ձիթենիների մէջ, որոնք կը հասկանան, կ'ընդունեն, կը լսեն, որքան ուզես քեզ կը լսեն, կը սփոփեն։ Յիսուսը չէր կարող արնաշիթ աղօթել, տառապանաց բաժակից հրաժարուել Երուսաղէմում, օրէնքի քաղաքում. Երուսաղէմը դա թոյլ չէր տայ։

* * *

Վերջին անգամ եմ տեսնում Աշոտին։ Միայնակ ենք։ Այս անգամ գլուխ կախ է սկսում խօսել։ (Մինչ այդ սեւեռուն հայեացքը միշտ աչքերիս մէջ էր)։ Խոհանոցում արագ-արագ նոյն գործն է անում։ Գիտի, որ մեր վերջին հանդիպումն է. պէտք է խոստովանի, բացատրի իր սրտի ցաւը։ Շուրթերը դժկամօրէն շարժելով, գրեթէ անլսելի ասում է, որ երիտասարդ եղբայրը, իր երիտասարդ եղբայրը զոհուել է աւտովթարում (դրա մասին լսել էի տարիներ առաջ)։ Վարդապետ է եղել, սիրուած ու ոգեշնչող, բոլորին նուիրուած։ Մնացածը ասում է ասելու համար...։

Միմեանց յաջողութիւն չենք ասում, ձեռք չենք սեղմում, դրա կարիքը չկայ, դրա

մէջ կարող է կեղծիք լինել: Յակոբեանց վանքի ամէն աքեմաւոր, որքան էլ Աշոտը դա թաքցնի ինքն իրենից, իրեն իր եղբօրն են յիշեցնում: Աշոտը սիրում է բոլորին, իր սիրտը տրորող եղբայրական կարօտը նրանցից է փորձում առնել: Բայց չէ՞ որ իր եղբայրը անփոխարինելի է, հաւասարը չունեցող ... իսկ ինքը ինքն իրեն չի մխիթարելու, ինքնասփոփանքով չի զբաղուելու, դա սիւնեցու համար չէ: Աշոտն իր վերքերով է ապրելու...

* * *

Այստեղ երկինքը կախուած է: Գրեթէ հնարաւոր չէ ինքդ քեզ զգալ երկրի վրայ: «...Աստուած ստեղծեց երկինքը «եւ» երկիրը». յստակ է, որ Մովսէսը սա գրեց Երուսաղէմից դուրս: Այստեղ նա «եւ»-ը չէր տեսնելու: Այստեղ «եւ» չկայ: Միազանգուածութեան, ամբողջակալութեան պայքարը այստեղ է հրաւիրել հին ու նոր թագաւորների, կայսրերի, զօրավարների, մարգարէների, բայց նրանք բոլորն էլ ձախողուել են: Հոգի «եւ» մարմին, միտք «եւ» սիրտ, Աստուած «եւ» մարդ, լուութիւն «եւ» ձայն, զօրութիւն «եւ» նուաղում, պայքար «եւ» պարտութիւն. յունական երկուութիւնը, «եւ»-ը կամ «կամ»-ը անվաւեր են այստեղ: Մէկութեան, միութեան, ամբողջութեան քաղաքն է Սաղէմը: Այստեղ է, որ մեր օրերի մի հայ վարդապետ պէտք է հասկանար, որ «եւ»-ը հակաստուածային է, յօրինուածք է, հակաքրիստոսեան, ուրեմն՝ հակամարդկային է: Իրականութիւնը, բնութիւնը, կեանքը մի է: Նա համայնի ամբողջութիւնը պէտք է ջատագովէր ու դրա համար մոռացուէր:

Երուսաղէմը յիշողութիւնների դարան է, բայց ինքը ոչ ոքի չի յիշում, իր համար ամէն նոր բան միեւնոյնն է:

Այստեղ հնարաւոր չէ ապրել առանց սիրոյ, չնայած այն վտարում է սէրը, քանի որ սէրը ամէն օր նոր է, եւ սիրուց է ծնւում նորը, սիրուց է բխում ամբողջը:

ՍԱՄՈՒԷԼ ՍՐԿ. ՊՕՂՈՍԵԱՆ

Սաղէմ, Մեծ Պահք, 2023



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ
ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԿԱՐԳԱԼՈՅԾ ՀՌՉԱԿՈՒԱԾ Է Տ. ՊԱՐԵՏ Ծ. ՎՐԴ. ԵՐԷՅԵԱՆ

Կարգալոյծ հռչակուած է Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան։

Տնօրէն ժողովի միաձայն որոշմամբ եւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի տնօրինութեամբ կարգալոյծ հռչակուած է Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան։

Տնօրինութեան համար որպէս հիմք ընդունուած է Պարետ Ծ. Վարդապետի՝ Ս. Աթոռոյս կարգաց եւ կանոնաց հանդէպ դրսեւորած անհաւատարիմ ընթացքը եւ յատկապէս «Կովերու պարտէզ» կալուածի համաձայնագրի վերաբերեալ անոր կատարած շարք մը խարդախութիւնները եւ խաբեբայութիւնները։

Կարգալոյծ եկեղեցականը չետ այսու կը դասուի աշխարհականներու կարգին՝ իր Խաչիկ Երէցեան աւազանի անունով։

ԴԻՒԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎԻ
Ս. ԱԹՈՌ, ԵՐՈՒՍԱՂԷՄ, 12 ՄԱՅԻՍ, 2023

12 Մայիս, 2023-ին հրատապ հրաւիրուած Տնօրէն ժողովը իր խոր մտահոգութիւնը յայտնեց Մայիս 11-ին սոցիալական կայքերու միջոցաւ շրջանառութեան մէջ դրուած, ապա շարք մը Յորդանանեան եւ Պաղեստինեան օրաթերթերու մէջ լոյս տեսած այն լուրի առնչութեամբ, ըստ որու Յորդանանի Հաշիմական Թագաւորութիւնը եւ Պաղեստինեան կառավարութիւնը որոշած են սառեցնել Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի պատրիարքական ճանաչումը։

Առաւել զարմանալին եւ մտահոգիչն այն է, որ այս լուրը շրջանառութեան մէջ դրուեցաւ «Կովերու պարտէզի» խնդրի հիմնական պատասխանատու կալուածոց տեսուչ՝ նախկին Պարետ Ծ. Վրդ. Երէցեանը պաշտօնէն հեռացնելէ եւ Տնօրէն Ժողովի կողմէ անոր կարգալոյծ հռչակելու եւ վանքէն արտաքսելու որոշումէ ետք։

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը եւ Տնօրէն Ժողովը իրենց կարելին կ'ընեն անվթար պահելու Հայ Եկեղեցւոյ եւ համայնքի շահերը։

ԴԻՒԱՆ ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
Ս. ԱԹՈՌ, ԵՐՈՒՍԱՂԷՄ, 13 ՄԱՅԻՍ, 2023

13 Մայիս, 2023-ին հրաւիրուած արտահերթ Միաբանական ժողովը, որուն կը մասնակցէին Սուրբ Երկրի մէջ ծառայող միաբան հայրերը, իր խոր մտահոգութիւնը յայտնեց Մայիս 11-ին հրապարակուած Յորդանանի Հաշիմական Թագաւորութեան եւ Պաղեստինեան կառավարութեան որոշման առնչութեամբ, որով սառեցուած է Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի պատրիարքական ճանաչումը։

Միաբանական ժողովը առաւել մտահոգ է եւ անակնկալի եկած այն փաստէն, որ այս որոշումը կը յաջորդէ Երուսաղէմի Հայ Պատրիարքի եւ Տնօրէն ժողովի երեք կարեւոր եւ վճռական որոշումներու.

1) Պատրիարք Սրբազանը 11 Յունուար, 2023-ին կալուածոց տեսչութեան պաշտօնէն հեռացուց նախկին Պարետ Ծ. Վրդ. Երէցեանը,

2) 6 Մայիս, 2023-ին Երուսաղէմի Հայ Պատրիարքի նախագահութեամբ գումարուած Տնօրէն ժողովը միաձայն որոշմամբ կարգալոյծ հռչակեց Պարետ Ծ. Վրդ. Երէցեանը,

3) 10 Մայիս, 2023-ին անոր արտաքսեց Սրբոց Յակոբեանց մայրավանքէն։

Կարեւոր է շեշտել, որ Պատրիարք Սրբազանը այս որոշումներն առաւ եւ կամ գործադրեց այն բանէ ետք, երբ համոզուեցաւ, որ կարգ մը հարցերու մէջ Պարետ Ծ. Վրդ. Երէցեան չարաչար օգտագործած է անոր վստահութիւնը եւ իրագործած է իր խաբեբայ եւ խարդախ գործընթացը։

Նկատի ունենալով վերոնշեալ բոլոր փաստերը, Միաբանական ժողովը միաձայն կը դիմէ Յորդանանի Հաշիմական Թագաւորութեանը եւ Պաղեստինեան կառավարութեանը կոչ ընելով վերանայիլ իրենց որոշումը եւ չեղեալ նկատել այն, որը մեծապէս պիտի նպաստէ Երուսաղէմի Հայ Պատրիարքին՝ առանց խոչընդոտի ապահովելու Պատրիարքութեան եւ հայ համայնքի շահերը։

ԴԻՒԱՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
Ս. ԱԹՈՌ, ԵՐՈՒՍԱՂԷՄ, 6 ՅՈՒԼԻՍ, 2023

6 Յուլիս, 2023-ին, համաձայն կանոնադրութիւն Ընդհանուր ժողովոյ Միաբանական Ուխտին Սրբոց Յակոբեանց (Յօդուած 6, Բ.) գումարուեցաւ Միաբանական Ընդհանուր ժողով, մասնակցութեամբ Ս. Աթոռ գտնուող Միաբանութեան անդամներուն, որուն ընթացքին Միաբան Հայրեր, նկատելով եպիսկոպոսներու անմիջական կարիքը Սուրբ Տեղեաց եւ Ս. Աթոռէն ներս՝ կատարեց եպիսկոպոսական թեկնածուներու արժա-

նաւորութեան քուէարկութիւն։

Միաբանական Ընդհանուր ժողովը Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի եւ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի կողմէ ներկայացուած եպիսկոպոսական չորս թեկնածուներէն գաղտնի քուէարկութեամբ ընտրեց Հոգշ. Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանը եւ Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեանը՝ արտօնելով անոնց եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ու օծումը։

Եպիսկոպոսական թեկնածուներուն այս բարձր առաքելութեան մէջ թող զօրավիգ ըլլան Սուրբ Աթոռոյս հիմնադիր՝ Յակոբոս Տեառնեղբայր Առաքեալը եւ պաշտպան մեծ Սուրբը՝ Սուրբ Գլխադիրը, Սուրբ Աթոռոյս նուիրեալներ՝ Սուրբ Գրիգոր Շղթայակրի, Սուրբ Գրիգոր Պարոնտէրի եւ բոլոր սուրբ հայրերի բարեխօսական աղօթքները։

ԴԻՒՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպս. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր տնօրինութեամբ կատարուած են նոր նշանակումներ։

Հոգեշնորհ Տ. Գէորգ Աբեղայ Հայրապետեան, ազատուելով Սուրբ Աթոռոյս Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանի տեսչի պաշտօնէն, նշանակուած է Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ։

Հոգեշնորհ Տ. Ներսեհ Աբեղայ Ալոյեան նշանակուած է Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանի նոր տեսուչ։

Քրիստոնէական կարեւոր կրօնական արարողութիւններէն մէկոյ՝ Լոյսի տօնակատարութեան, Իսրայէլի ոստիկանութեան կողմէ անտրամաբանական սահմանափակումներու վերաբերեալ հոգեւոր պետերու յայտարարութիւնը

CELEBRATION OF ONE OF CHRISTIANITY'S MOST IMPORTANT RELIGIOUS CEREMONIES - HOLY LIGHT - TO BE UNREASONABLY RESTRICTED BY ISRAELI POLICE

This week marks the holiest week in Christianity - Holy Week. We recall the events that led to the crucifixion of Jesus Christ our Lord and Saviour and we remember His glorious resurrection. The celebration of the Holy Light Ceremony, is a great moment that ties the faithful to the light of Jesus Christ. This ceremony has been faithfully taking place in the Church of the Holy Sepulchre for nearly 2,000 years, attracting Christians from around the world.

Each year, the Churches coordinate with the authorities to ensure this ceremony can take place without issue. Notably, last year barriers were imposed by the Israel Authority throughout the Old City that made impossible the access of our local Christian Communities pilgrims from attending the Holy Light Ceremony in the Holy Sepulchre, impeding their freedom to worship and witness the miracle of the resurrection.

This year, after many attempts made in good will, we are not able to coordinate with the Israeli authorities, as they are enforcing unreasonable, and unprecedented restrictions on access to the Holy Sepulchre - more so than last year. These heavy-handed restrictions will limit access to the Church of the Holy Sepulchre and the Holy Light Ceremony. Police are unfairly and inappropriately placing the burden on the churches to issue invitations, while tying the Churches' hands with unreasonable restrictions that will prevent worshippers from attending particularly our local community. This make difficult our coordination with the police.

As we the Greek Orthodox Patriarchate, the Custody of the Holy Land and the Armenian Patriarchate clearly stated in our various statements, we shall continue to uphold the Status Quo customs, and the ceremony will be held as customary for two millennia and all who wish to worship with us are invited to attend. With that made clear, we leave the authorities to act as they will. The Churches will freely worship and do so in peace.

12.04.2023

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՈՒԶՈՒԹԻՒՆ

21 Յուլիս, 2023-ին, յետ երեկոյեան ժամերգութեան եւ նախատօնակի, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Մասնաւոր Վարդապետութեան չորս աստիճաններ տրուեցան Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտի երկու Հոգեշնորհ Հայրերու՝ Տ. Վազգէն Աբեղայ Ալէքեանի եւ Տ. Տիրան Աբեղայ Յակոբեանի։

Հայց. Եկեղեցւոյ «վարդապետ»-ը սկզբնական ժամանակներէն սկսեալ, միշտ ունեցած է եկեղեցական գլխաւոր առաքելութիւն եւ քարոզելու եւ ուսուցանելու պաշտօն։ Եւ անշուշտ, այս առաքելութիւնը շատ լուրջ պարտաւորութիւններ կ'ենթադրէ՝ ուսումնական եւ գիտական, նկարագիր եւ առաքինութիւններ, հաւատքի կրակը դնելով իրենց ուսումին եւ ամբարուած գիտութեան մէջ։ Այսպէս ընդունուած է հայ «վարդապետ»-ին եկեղեցական տիպարը։

Յետ Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ նախատօնակի, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան սարկաւագներու եւ հոգեւորականներու թափօրով փոքր ատեանէն շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Մայր տաճարի դուռը եւ բազմեցաւ Աթոռին։

Ընծայեալները կը ներկայացնէր Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան։

Արարողութեան մասնակից խարտաւիլակն էր՝ Հոգշ. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան։

Պատրիարք Սրբազան Հայրը յատուկ աղօթքներու ընթերցումով Մասնաւոր Վարդապետութեան չորս աստիճաններ շնորհեց Տ. Վազգէն Աբեղայ Ալէքեանի եւ Տ. Տիրան Աբեղայ Յակոբեանի։

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
Տ. ՎԱՉԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԷՔԵԱՆԻ

Աւազանի անունով Աւետիք, ծնած է 9 Յուլիս, 1980-ին Երեւան։ Զաւակն է Սլաւիկ եւ Կարինէ Ալէքեաններու։

1986-էն 1997 նախնական կրթութիւնը ստացած է Երեւանի թիւ 106 միջնակարգ դպրոցին մէջ։ 1997-էն 1998 ուսանած է Շիրակի թեմին հոգեւոր ճեմարանին մէջ։

1998-ին ծառայած է Փարաքարի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ։

1998-ին ընդունուած է որպէս ուսանող Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ժառանգաւորաց վարժարանէն ներս, որուն ընթացքն աւարտելէն յետոյ 2003-ին ձեռնադրուած է Սարկաւագ, ձեռամբ՝ երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի։

2006-ին աւարտած է Ընծայարանի եռամեայ բաժինը։

2006-էն 2007 պաշտօնավարած է ժառանգաւորաց վարժարանին մէջ որպէս քարտուղար եւ հսկիչ։

2007-ի Յուլիս 15-ին Քրիստոսի Այլակերպութեան տօնին, ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի։

2008-2019 տարիներուն եղած է Ս. Յարութեան տաճարի փոխտեսուչ։ Նոյն տարիներուն համատեղութեամբ եղած է Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ տեսուչ՝ ի Նոր Երուսաղէմ։

2006-2008 տարիներուն ժառանգաւորաց եւ Սրբոց Թարգմանչաց վարժարաններու մէջ դասաւանդած է Քրիստոնէական, Հին եւ Նոր կտակարան առարկաները։

2016-2019 տարիներուն եղած է Համբարձման լերան տեսուչ։

2020-ի Սեպտեմբեր 25-էն ցայսօր Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգմանն է։

2023-ի Մարտ 8-ին, Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ ընտրուած է որպէս Տնօրէն Ժողովի անդամ։

2023-ի Յուլիս 21-ին, ստացաւ Մասնաւոր Վարդապետութեան չորս աստիճաններ, ձեռամբ՝ Ամենաս. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի։

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
Տ. ՏԻՐԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Աւազանի անունով Արտակ, ծնած է 4 Փետրուար, 1983-ին էջմիածնի շրջանի Ոսկեհատ գիւղին մէջ։ Նախնական կրթութիւնը ստացած է գիւղի Միջնակարգ դպրոցին մէջ։

1999-ին ընդունուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարան, ապա Ընծայարան։

2004-ի Հոկտեմբեր 22-ին, ձեռամբ երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի ձեռնադրուած է Սարկաւագ։

2011-ի Մարտ 3-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի՝ վերակոչուելով Տ. Տիրան Աբեղայ։

2008-ին աւարտած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ընծայարանը։

2008-2009 ուս. տարին Ժառանգաւորաց վարժարանի մէջ դասաւանդած է Քրիստոնէական եւ Նոր կտակարան առարկաները։

2014-2015 տարիներուն ուսանած եւ աւարտած է Երուսաղէմի Եբրայական Համալսարանի նախապատրաստական բաժինը։

2010-2014 եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի քարտուղար եւ վիզանեբրու եւ վաւերագրերու գրասենեակի վարիչ։

2014-2019, ապա 2022-էն ցայսօր Տեսուչն է Յոպպէի Սբ. Նիկողայոսի վանքի եւ Ռամլէի Սբ. Գէորգայ վանքի։

2018-2021 տարիներուն ուսանած եւ աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետը՝ ստանալով մագիստրոսի կոչում։

2019-ին Սփիւռք-Արցախ կապերու մէջ ունեցած ներդրումի համար արժանացած է Արցախի Հանրապետութեան Պետական Նախարարի «Ոսկէ Մետալ»-ին։

2023-ի Յուլիս 21-ին, ստացաւ Մասնաւոր Վարդապետութեան չորս աստիճաններ, ձեռամբ՝ Ամենաս. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի։

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ԻՍՐԱՅԷԼԻ ՓԵԹԱԽ ԹԻՔՈՒԱ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ ԲԱՑՈՒԵՑԱՒ ՇԱՌԼ ԱԶՆԱՒՈՒՐԻ ԱՆՈՒԱՆ ՊԱՐՏԷԶ

2 Ապրիլ 2023-ին, երեկոյեան ժամը 5-ին, Իսրայէլի Փեթախ Թիքուա քաղաքի Հանրային պարտէզը պաշտօնապէս վերանուանուեցաւ ֆրանսահայ աշխարհահռչակ շանսոնիյէ Շառլ Ազնաւուրի անունով։

Հանրային պարտէզը Շառլ Ազնաւուրի անունով վերանուանելու որոշումը միաձայն ընդունուած է Փեթախ Թիքուայի Քաղաքային խորհուրդին կողմէ՝ քաղաքապետ Ռամի Գրինպէրկի գլխաւորութեամբ։

Բացման արարողութեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեան եւ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Հոգեշնորհ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան։ Բացման արարողութեանը ներկայ էին նաեւ Եաֆայի եւ շրջակայից հոգեւոր հովիւ՝ Հոգեշնորհ Տ. Տիրան Աբղ. Յակոբեան եւ Հայֆայի Հայոց հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Տիրայր Քհնյ Յովակիմեան եւ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեան։

Բացման արարողութեան ընթացքին Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեան փոխանցեց Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի ողջոյնի խօսքն ու շնորհակալիքը՝ ուղղուած Փեթախ Թիքուայի Քաղաքային խորհուրդին, քաղաքապետ՝ Տիար Ռամի Գրինպէրկին եւ ներկաներուն։

Բացման արարողութեան ընթացքին հնչեցին նաեւ մեծն Շանսոնիյէ Շառլ Ազնաւուրի ֆրանսերէն երգերը՝ Տիար Աշոտ Գասպարեանի կատարմամբ, որուն սաքսոֆոնով կը նուագակցէր Տիար Շայ Պերկովիչ։

Յուշաքարին վրայ գրուած է հետեւեալը.

«Շառլ Ազնաւուր

(1924-2018)

Երգիչ, երգահան, դերասան, ֆրանսացի, համաշխարհային շանսոնիյէ, որ կեանքը նուիրած է իր ծննդավայր Հայաստանին եւ պսակուած Ազգային հերոսի կոչումով։ Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքին Ազնաւուրեան ընտանիք յաջողած է փրկել տասնեակ հրեայ ընտանիքներ բնաջնջումէ»։

ԱՒԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ. ԱՌԺԱՄԵԱՅ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ ՀԵԼԷՆ ԵՒ ԷՏՈՒԱՐՏ ՄԱՐՏԻԿԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Հելէն եւ Էտուարտ Մարտիկեան թանգա-

րանի երկրորդ յարկին մէջ Սուրբ Աթոռոյս Ձեռագրատունը Ապրիլ 25-29 բացած էր «Աւագ Շաբթուան Խորհուրդը» խորագիրը կրող մանրանկարներու առժամեայ ցուցահանդէս։ Ցուցանմոյշները Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Գանձատան եւ Սուրբ Թէոդորոս Ձեռագրատան հաւաքածոներէն էին, որոնք կը ներկայացնէին Տիրոջ Երուսաղէմ հրաշափառ մուտքը, չարչարանքները եւ յարութիւնը։

ՅԻՇԱՏԱԿ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՄԵՐՈՑ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՄՆ ՀԱԻԱՏՈՑ ԵՒ ՀԱՅՐԵՆԵԱՑ

(108-րդ տարելից)

23 Ապրիլ, 2023-ին, երեկոյեան ժամը 5։30-ին, տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 108-րդ տարելիցին նուիրուած ջահերով երթ Սբ. Յակոբեանց Մայր տաճարէն դէպի Նոր Երուսաղէմի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի։ Երթին մասնակից էին թէ օտարներ եւ թէ Հայեր, ովքեր պաստառներով եւ դրօշակներով քալեցին դէպի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, ուր տեղի ունեցաւ կարճ աղօթք։ Ապա երթը շարունակուեցաւ դէպի Հայոց ցեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ մոմավառութիւն։

24 Ապրիլ, 2023-ին, Հայոց ցեղասպանութեան վաան հաւատոյ եւ հայրենեաց նահատակաց տօնին, առաւօտեան ժամը 7-ին, Սբ. Յակոբեանց Մայր տաճարին մէջ կատարուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ, ապա Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Հոգեշնորհ Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան։ Յաւարտ Սբ. Պատարագի, հոգեւորականաց դասը եւ ժառանգաւոր սաներ թափօրով եւ շարականի երգեցողութեամբ քալեցին դէպի Հայոց ցեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ Բարեխօսութեան կարգ, որմէ յետոյ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սբ. Աթոռոյս անունով ծաղկեպսակ մը զետեղեց յուշարձանին, ապա յաջորդաբար Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեանը, Իսրայէլի եւ Երուսաղէմի մէջ գործող հայ միութիւններու ներկայացուցիչները եւս իրենց միութիւններու կողմէ ծաղկեպսակներ զետեղեցին յուշարձանին։

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7-ին, նախագահութեամբ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հօր, եւ կազմակերպութեամբ Սաղիմահայ Միացեալ Յանձնախումբի ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ յուշահանդէս։ Բացման խօսքը կատարեց Սբ. Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեան։ Ապա ժառանգաւորաց եւ Թարգմանչաց վարժարաններու սաները հանդէս եկան խմբերգերով ու ասմունքներով։

Յուշ-երեկոն իր լրումին հասաւ Լուսարարապետ Սրբազան Հօր փակման աղօթքով։

ԱՐՑԱԽԵԱՆ 44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾ ՀԵՐՈՍ ՋԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՀՈՐՈՐԴ ԽՈՒՄԲԻՆ ԱՅՑԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

21 Ապրիլ, 2023-ին, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հրաւէրով եւ Հայաս-

տանի Հանրապետութեան Ազգային Ժողովի պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի եւ Պաշտպանութեան Նախարարութեան համագործակցութեամբ, Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին, հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործը կատարելիս վիրաւորուած զինուորներու չորրորդ խումբը ժամանեց Սուրբ Երկիր։ Ուխտագնացութեան այս խումբին մէջ ներգրաւուած էին Հայաստանի տարբեր մարզերու մէջ ապրող վիրաւորում ունեցող զինուորներ։

Շաբաթ, 22 Ապրիլ, 2023-ի առաւօտեան, հերոս զինուորները ուղեկցութեամբ գընդերէց՝ Արժ. Տ. Պսակ Քհնյ Մկրտչեանի, Ազգային Ժողովի պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի փորձագէտ՝ Աննա Եարմալոյեանի, պատերազմի բովով անցած բժիշկ՝ Տիար Աշոտ Գաբրիէլեանի այցելեցին Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանին՝ ստանալու Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը։

Ուխտագնացութեան սոյն ծրագրի կազմակերպչական աշխատանքները համակարգած է Ազգային Ժողովի պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի փորձագէտ՝ Աննա Եարմալոյեան, իսկ ծրագրի իրականացման բարերարն է գիւմրեցի Բալասանեան ընտանիք։

ՋԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒ ԱՌԻԹՈՎ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԱՅՑԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

3 Մայիս, 2023-ին, Ջատկական տօներու առիթով Երուսաղէմի քաղաքապետ Տիար Մոշէ Լէոն այցելեց Հայոց Պատրիարքարան՝ հանդիպելու եւ շնորհաւորելու քրիստոնեայ համայնքներու հոգեւոր պետերուն։

Քաղաքապետի ժամանումէն առաջ Պատրիարքարանի դահլիճին մէջ հաւաքուած էին Սուրբ Երկրի հոգեւոր պետերը՝ իրենց միաբաններով ու ներկայացուցիչներով։

Ժամը 13։45-ին, քաղաքապետ Տիար՝ Մոշէ Լէոն վանքիս Մայր դրան առջեւ դիմաւորուեցաւ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Հոգշ. Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի եւ Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Աղան Աբղ. Գոգչեանի կողմէ եւ առաջնորդուեցաւ դէպի Պատրիարքարանի դահլիճ։

Ցերեկոյթի բացման խօսքը կատարեց Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Աղան Աբղ. Գոգչեան, ապա հրաւիրեց Երուսաղէմի քաղաքապետ Տիար Մոշէ Լէոնը՝ կատարելու իր շնորհաւորական ուղերձը։ Քաղաքապետի խօսքէն ետք, իրենց ողջոյնի խօսքերով յաջորդաբար հանդէս եկան Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանի ներկայացուցիչ՝ Գերշ. Տ. Արիստարքոս Արքեպս., Լատինաց Պատրիարք՝ Ամեն. Տ. Փիերպատիսթա Արքեպս. Փիցապալա, Սուրբ Երկրի Քիւսթոտ՝ Հայր Ֆրանչեսկո Փաթոն եւ Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրհան Արքեպս. Մանուկեան։

Ցերեկոյթի ողջ ընթացքին Հոգեւոր պետերու ուղերձները կ'ընդմիջէին ժառանգաւորաց վարժարանի սանները՝ իրենց հոգեւոր երգերու գեղեցիկ կատարումներով։

Հանդիպման վերջաւորութեան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Արքեպս. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը Երուսաղէմի քաղաքապետ՝ Տիար

Մոշէ Լէոնի նուիրեց Երուսաղէմի մէջ յայտնի Հայկական յախճապակեայ գեղեցիկ յուշանուէր-նուռ մը։

ԱՆՏԻՈՔԻ ԵՒ ԱՄԲՈՂՋ ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

4 Մայիս, 2023-ին, Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II այցելեց Սուրբ Երկիր, ապա կատարեց իր առաջին պաշտօնական մուտքը Սբ. Յարութեան տաճար։

Նորին Ամենապատուութիւնը դիմաւորուեցաւ Երուսաղէմի Հին քաղաքի՝ Եաֆայի դարպասին առջեւ, եւ Սուրբ Երկրի քրիստոնեայ միւս յարանուանութեանց ներկայացուցիչներու ուղեկցութեամբ առաջնորդուեցաւ դէպի Սբ. Յարութեան տաճար, ուր դիմաւորուեցաւ նաեւ Սբ. Յարութեան տաճարի իրաւատէր երեք համայնքներու տեսուչներու կողմէ։

Քրիստոսի Սբ. Գերեզմանի այցելութենէն ետք, Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II Պատրիարք Հայրը պատուուեցաւ Հայոց տեսչարանին մէջ, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Սբ. Յարութեան տաճարի Հայոց տեսուչը՝ Հոգեշնորհ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, ապա Նորին Ամենապատուութիւնը իր շնորհակալական խօսքն ըսաւ զինքը դիմաւորող իրաւատէր երեք համայնքներու ներկայացուցիչներուն։

Սոյն արարողութեանց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան, Սբ. Յարութեան տաճարի տեսուչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, Սբ. Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Աբգ. Ալէքեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Աբգ. Գոգչեան։

ԱՆՏԻՈՔԻ ԵՒ ԱՄԲՈՂՋ ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՍԲ. ԾՆՆԴԵԱՆ ՏԱՃԱՐ

7 Մայիս, 2023-ին, Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II կատարեց իր առաջին պաշտօնական մուտքը Բեթղեհէմի Սբ. Ծննդեան տաճար։

Նորին Ամենապատուութիւնը Բեթղեհէմի Սբ. Ծննդեան հրապարակին վրայ դիմաւորուեցաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի, Աւագ Թարգման՝ Հոգեշնորհ Տ. Վազգէն Աբգ. Ալէքեանի եւ Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբգ. Գոգչեանի կողմէ։ Բեթղեհէմի Սբ. Ծննդեան հրապարակին վրայ Նորին Ամենապատուութիւնը դիմաւորելու եկած էին նաեւ Պաղեստինի վարչապետ՝ Վսեմաշուք Տիար Մոհամմատ Շտայէհ, նահանգապետ՝ Տիար Քեամալ Ահմատ Հասան Ամիդ, Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Հաննա Հանանիա եւ Պաղեստինեան կառավարութեան այլ ներկայացուցիչներ, որոնց ուղեկցութեամբ առաջնորդուեցաւ դէպի Սբ. Ծննդեան տաճար։

Տաճարի մուտքին Լուսարարապետ Սրբազան Հայրը Պատրիարք Սրբազան Հօր ներկայացուց զինքը դիմաւորող, Սբ. Ծննդեան տաճարի իրաւատէր երեք համայնքներու տեսուչները։ Ապա Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II Պատրիարք Սրբազան Հայրը բարձրացաւ Սբ. Ծննդեան տաճարի Հայկական վանքը, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Սբ. Ծննդեան տաճարի Հայոց տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան, Պաղեստինի վարչապետ՝ Վսեմաշուք Տիար Մոհամմատ Շտայէհ, ապա Նորին Ամենապատուութիւնն իր շնորհակալական խօսքն ըսաւ զինքը դիմաւորող իրաւատէր երեք համայնքներու ներկայացուցիչներուն եւ պետական ու կառավարական մարդոց։

Հանդիպումէն ետք, Հայոց ուղեկցութեամբ Նորին Ամենապատուութիւն Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II Պատրիարք Սրբազան Հայրը առաջնորդուեցաւ Սբ. Ծննդեան տաճար, ուր Հայոց բաժնի Սբ. Թլփատութեան խորանին առջեւ տեղի ունեցաւ կարճ աղօթք մը, ապա Պատրիարք Սրբազան Հայրն իր միաբաններով եւ դարձեալ Հայոց ուղեկցութեամբ իջաւ Ս. Այր, ուր Քրիստոսի Սբ. Ծննդեան վայրին երկրպագելէ եւ դարձեալ կարճ աղօթք մը ընելէ ետք Նորին Ամենապատուութիւն Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II Պատրիարք Սրբազան Հայրն իր միաբաններով մեկնեցաւ Սբ. Ծննդեան տաճարէն։

ԱՆՏԻՈՔԻ ԵՒ ԱՄԲՈՂՋ ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

8 Մայիս, 2023-ին, Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II իր եպիսկոպոսներով այցելեց Հայոց Պատրիարքարան։

Պատրիարքարանի կամարին առջեւ Նորին Ամենապատուութիւնը դիմաւորուեցաւ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Աբգ. Ալէքեանի եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Աբգ. Գոգչեանի կողմէ եւ առաջնորդուեցաւ դէպի վանքին Մայր դուռը, ուր Լուսարարապետ Սրբազան Հայրը դիմաւորեց եւ ողջագուրուեցաւ Պատրիարք Սրբազան Հօր հետ, զոյգ Սարկաւագները վարդաջուր ցօղեցին Պատրիարք Սրբազան Հօր ձեռքերուն եւ առաջնորդեցին դէպի Պատրիարքարանի գաւիթ։ Ապա Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ուղեկցութեամբ Նորին Ամենապատուութիւնը մուտք գործեց Սրբոց Յակոբեանց Մայր տաճար, եւ Սբ. Գլխադրի սրբավայրին իր ուխտն ու երկրպագութիւնն ընելէ ետք կատարուեցաւ կարճ աղօթք մը, որմէ յետոյ Նորին Ամենապատուութիւնն առաջնորդուեցաւ Աւագ Խորանին առջեւ եւ հոն եւս կատարուեցաւ կարճ աղօթք մը, ապա Մայր տաճարի մասին կարճ բացատրութիւն մը տրուեցաւ Նորին Ամենապատուութեան։

Մայր տաճարէն Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II Սրբոց Յակոբեանց Միաբանութեան թափօրով առաջնորդուեցաւ Պատրիարքարան, ուր դիմաւորուեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի կողմէ։

Սուրբ Աթոռոյս Գահակալը ողջունեց Անտիոքի Պատրիարքը եւ իր խօսքին մէջ ըսաւ. «Հայերը եւ Ասորիները մինչ օրս եղբայրաբար կը ծառայեն Հայաստանի մատուռներու մէջ։ Եւ այդպիսով, մեր ժողովուրդի եւ եկեղեցիներու միջեւ այս եղբայրութիւնն ու փոխադարձ յարգանքը սոսկ հոգեւոր կապ չէ, այլ նաեւ երկրային՝ ինչը կը փաստուի գործերով եւ հաւատքով»։ Ապա Նորին Ամենապատուութիւնն Տ. Մոր Իգ-

նատիուս Աֆրեմ II իր շնորհակալական խօսքն ըսաւ Սուրբ Աթոռոյս Գահակալին եւ իր ուրախութիւնը յայտնեց Սուրբ Երկրի մէջ Հայ եւ Ասորի եկեղեցիներու միջեւ տիրող բարիդրացիական յարաբերութիւններու եւ այս այցով այդ աւելի ամրապնդելու համար: Նորին Ամենապատուութիւնը շնորհալութիւն յայտնեց միաբան եղբայրներուն եւ մասնաւորապէս Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Աղան Աբղ. Գոգչեանին, այս այցելութեան եւ Սրբատեղեաց մէջ իր կատարած պաշտօնական մուտքերը համաձայն Status Quo-ի խաղաղ եւ անխոչընդոտ կազմակերպելու համար:

Հանդիպման վերջաւորութեան, խորհրդանշական նուէրներ փոխանակուեցան զոյգ Պատրիարքներու միջեւ: Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան շնորհաւորեց նաեւ Երուսաղէմի Ասորի եպիսկոպոս Գերշ. Տ. Անթիմոս Ճաք Յակուբը իր գահակալութեան առիթով եւ անոր նուիրեց ականակուռ պանակէ եւ խաչ:

Հիւրասիրութենէ ետք Նորին Ամենապատուութիւն Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ուղեկցութեամբ մեկնեցաւ Պատրիարքարանէն:

ՎԵՐԱՕԾՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑԻ՝ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԷԻ ՄԱՏՐԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ԽՈՐԱՆԻՆ ԵՒ ՊԱՏԿԵՐԻՆ

27 Մայիս, 2023-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի մեկնեցաւ Սբ. Հրեշտակապետաց եկեղեցի, ուր տեղի ունեցաւ Երեկոյեան ժամերգութիւն եւ երկրորդ Ծաղկազարդի նախատօնակը:

Յետ Երեկոյեան ժամերգութեան, Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի եւ առընթերակայ Հայր Սուրբերու՝ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանի եւ Տ. Ներսեհ Աբղ. Ալոյեանի զգեստաւորուելէ ետք, նախ ջուրով ապա գինիով լուացուեցաւ Սբ. Հռիփսիմէի մատրան վերանորոգեալ խորանը, ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը կատարեց խորանի վերաօծման արարողութիւնը:

Իսկ Սբ. Հռիփսիմեանց կոյսերու տօնին ընդառաջ 11 Յունիս, 2023-ին, ձեռամբ Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի օծուեցաւ Սբ. Հռիփսիմէի մատրան խորանի պատկերը:

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏԻՑ ՀԱՆԴԷՍ

13 Յունիս, 2023-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր, տեղի ունեցաւ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի Ամավերջեան հանդէսը:

Միաբանութիւնը դիմաւորուեցաւ ժառանգաւորաց վարժարանի օրհներգ «Սիրտ ի սիրտ» երգի հնչիւններու ներքոյ, ապա յոտնկայս երգուեցաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգը։

Հանդիսութեան բացման խօսքը վստահուած էր վարժարանի փոխտեսուչ՝ Բարեշնորհ Աշոտ Սարկաւագ Ղազարեանին։ Երեկոյի ողջ ընթացքին Ընծայարանի եւ ժառանգաւորաց վարժարանի շրջանաւարտներ եւ ժառանգաւոր սաներ հանդէս եկան իրենց հայերէն, անգլերէն եւ եբրայերէն ուղերձներով, ասմունքներով ու խմբերգերով, ինչպէս նաեւ դաշնամուրի եւ թառի գեղեցիկ կատարումներով։

Հանդիսութեան վերջաւորութեան վարժարանի Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան ներկայացուց ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի 2022-2023 ուս. տարուայ տեղեկագիրը։ Ապա հրաւիրեց Պատրիարք Սրբազան Հայրը, որպէսզի յանձնէ Շրջանաւարտներու վկայականները ինչպէս նաեւ վարժարանի եւ Ընծայարանի առաջադէմ ուսանողներու մրցանակները։ Վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն յետոյ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց շրջանաւարտները եւ իր պատգամը տուաւ անոնց, ապա երեկոն փակուեցաւ Ս. Աթոռոյս օրհներգով եւ «Պահպանիչ»-ով, որմէ յետոյ ներկաները պատուեցան հիւրասիրութեամբ։

Ընծայարանի շրջանաւարտներն էին. Բարեշնորհ Գրիգոր Սարկաւագ Թաքուշեան եւ Բարեշնորհ Յովհաննէս Սարկաւագ Խուդավերդեան։

Իսկ ժառանգաւորաց վարժարանի շրջանաւարտներն էին. Բարեկրօն դպիրներ՝ Զօրի Կարապետեան, Էրիկ Պօղոսեան, Հրանդ Բադալեան, Մուշեղ Սարգսեան, Սպարտակ Նազարէթեան եւ Սուրէն Աւետիսեան։

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏԻՑ ՀԱՆԴԷՍ

10 Յունիս, 2023-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, Ս. Թարգմանչաց վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց երկրորդական բաժնի 65-րդ Շրջանաւարտից հանդէսը՝ նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի եւ ի ներկայութեան Հոգեշնորհ Հայրերու, ծնողներու եւ հանդիսականներու հոծ բազմութեան։

Հանդէսին յայտագիրը կը բաղկանար երկու մասերէ։ Առաջինը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգի եւ Թարգմանչաց շարականի («Որք զարդարեցին») երգեցողութեամբ, զոր կատարեցին Շրջանաւարտները։

Երեկոյի ընթացքին շրջանաւարտ սաները հանդէս եկան իրենց սրտի շնորհակալական խօսքերով, ապա վարժարանի փոխ-տեսուչ՝ Տիար Մհերան Տէր Մաթոսեան ներկայացուց 2022-2023 ուսումնական տարուայ կրթական տեղեկագիրը։

Հանդիսութեան վերջաւորութեան Սրբոց Թարգմանչաց վարժարանի Տեսուչ՝ Արժ. Տ. Արտէն Քհնյ Աբրահամեան շնորհակալական խօսքեր ըսաւ բոլոր ուսուցիչներուն, աշակերտներուն, ծնողներուն, եւ յատկապէս Լուսարարապետ Սրբազան Հօր՝ իր հայրական վերաբերմունքին համար։ Ինչպէս նաեւ վարժարանի ուսուցիչներէն Տիար

Սեւան Տէյիրմենճեանին շնորհակալական յախճապակեայ Յուշագիր մը յանձնեց Սբ. Թարգմանչաց վարժարանին մատուցած իր ծառայութեան համար: Ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը, յանձնեց շրջանաւարտներու վկայականներն ու առաջադեմ աշակերտներու մրցանակները:

Մրցանակներու բաշխումէն յետոյ Լուսարարապետ Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը եւ իր պատգամը փոխանցեց շրջանաւարտներուն: Երեկոն փակուեցաւ «Պահպանիչ»-ով եւ «Հայր մեր»-ով:

Շրջանաւարտներն էին. Լիանա Տիգպիքեան, Զաւէն Թադէոսեան, Լուսիանա Հէքիմեան, Կալինա Պօյաճեան, Սեւան Սահակեան, Կալինա Շօհմէլեան, Մարիա Սահակեան, Վրէժ Պետրոսեան:

ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

17 Յունիս, 2023-ին, յետ երեկոյեան ժամերգութեան եւ նախատօնակի, Սրբոց Յակոբեանց Մայր տաճարին մէջ, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հօր ձեռամբ կատարուեցաւ Սարկաւագական կոչման արարողութիւնը՝ Սուրբ Աթոռոյս Ուրարակիրներէն Տրց. Իվան Ադամեանի, Տրց. Սարգիս Գինոսեանի եւ Սբ. Աստուածածնայ տաճարի ծառայող միաբաններէն Տրց. էրիկ Սարդարեանի:

Ընծայեալները ծնրադիր յառաջացան Դասի մուտքէն եւ Ձեռնադրիչ Սրբազան Հօրմէն ստացան կիսասարկաւագութեան աստիճան՝ խարտաւիլակութեամբ Հոգշ. Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանի եւ առընթերակայութեամբ՝ Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեանի: Ձեռնադրութենէն ետք, ընծայեալները կարմիր բազկուրարներ իրենց թեւերուն մեկնեցան Ս. Յարութեան տաճար՝ մասնակցելու Տնօրինական Ս. Տեղեաց թափօրին:

ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

18 Յունիս, 2023-ին, կաթուղիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի տօնին, առաւօտեան ժամը 7-ին, Սրբոց Յակոբեանց Մայր տաճարին մէջ կատարուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ, ապա հանդիսապետութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի՝ «Անդաստան»: Տօնի սուրբ եւ անմահ պատարագը Մայր տաճարի Աւագ խորանին վրայ մատոյց Հոգշ. Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: «Հայր մեր»-էն առաջ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք» վասն Ս. Էջմիածնի:

Պատարագի սկիզբն ազդարարող կոչնակի հարուածներու եւ Կոմիտասեան եղանակով «Խորհուրդ խորին» շարականին հետ սկսաւ Պատարագը եւ շարունակուեցաւ մինչեւ Ճաշոց գրքին ընթերցումը, ապա Սուրբ Աթոռոյս երկու կիսասարկաւագներ Սարկաւագական ձեռնադրութեան շնորհին արժանացան Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հօր ձեռամբ: Որպէս խարտաւիլակ Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան ընծայեալները առաջնորդեց ձեռնադրիչ Սրբազան Հօր՝ իրեն առընթերակայ ունենալով Հոգշ. Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանը:

Ձեռնադրութենէ առաջ ընծայեալները ներկաներուն առջեւ կատարեցին իրենց ուխտը. «Աստուածային եւ երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զԻվան եւ զՍարգիս ի կիսասարկաւագութենէ ի սարկաւագութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն ըստ վկայութեան անձանց իւրեանց եւ ամենայն ժողովրդեանս»։

Ուխտէն յետոյ ընծայեալները ստացան ուրար՝ կրելու Տիրոջ քաղցր լուծը իրենց ուսերուն, Աւետարան՝ քարոզելու Տերունական ճշմարտութիւնները, Բուրվառ՝ հրաման խնկարկելու Ս. Եկեղեցւոյ մէջ խունկի անոյշ բոյրով լեցնելու տաճարը, ապագային դառնալու մէյ-մէկ ծխացող կնդրուկներ հայ եկեղեցւոյ տաճարէն ներս։

Ձեռնադրութենէն անմիջապէս յետոյ նորընծայ՝ Բարեշնորհք Իվան Սարկաւագ Ադամեան եւ Սարգիս Սարկաւագ Գինոսեան կատարեցին սուրբ պատարագի սպասարկութիւնը՝ մին կարդաց աւետարանը, միւսը՝ վերաբերումը մատուցեց հոգեշնորհ պատարագիչին։

Այս ուրախալի առիթով, նորընծայ սարկաւագներուն, որոնցմով Սուրբ Աթոռոյս սարկաւագներուն թիւը բարձրացաւ, սրտագինս կ'ըսենք.

«Բարեաւ գնացէք ընդ այս ճանապարհ...»։

ՈՒՐԱԽԻ ՏՈՒՀՈՒԹԻՒՆ

1 Յուլիս, 2023-ին, յետ երեկոյեան ժամերգութեան, Սրբոց Յակոբեանց Մայր տաճարին մէջ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Ուրար կրելու իրաւունք շնորհեց Ա. Ընծայարանի ուսանողներ՝ Էդգար Բաղդասարեանի, Խաչիկ Սարգսեանի, Յարութիւն Անդրիասեանի, Յովհաննէս Խումարեանի, Նուէր Գեղամեանի եւ Ռուբէն Յակոբեանի։

Թող Աստուած անխախտ պահէ անոնց ուխտը, որպէսզի Իր այգիին նուիրուին նոր եւ եռանդուն մշակներ։

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՀ ԱՔԵԼԱՅ ԱԼՈՅԵԱՆ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ս. ԱԹՈՌՈՅՍ ԿԻԼԻՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ Է ՀԵՏԵԻԵԱԼ ԳԻՐՔԵՐԸ

1. Արամ Գամպուրեան կը նուիրէ իր հեղինակած գիրքերէն.

- Ղանդարի շուկան, Իսթանպուլ, 2020։

- Աշխարհի չորս ծագերէն, Իսթանպուլ, 2022։

2. Սրբոց Յակոբեանց միաբաններէն Հոգշ. Տ. Ժիրայր Ծ. Վրդ. Թաշճեան կը նուիրէ.

- Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1956։

- Մեսրոպ Մաշտոց, Յօդուածներուն ժողովածոյ, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակութիւն, Երեւան, 1962։

3. Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան կը նուիրէ երկու հնատիպ գիրքեր.

- Մեկնութիւն Սրբոյ Աւետարանի որ ըստ Յօհաննու, Կոստանտնուպոլիս, 1737։

- Պատմութիւնք յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռովմայեցիս, էջմիածին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, 1787։

4. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններէն Հոգշ. Տ. Զաքարիա Ծ. Վրդ. Բաղումեան կը նուիրէ իր հեղինակած «Կիրակոս Երզնկացու Սուրբ Աւագ Պոնտացու երկերի լուծմունքները» գիրքը, Երեւան, 2022 գիրքը։

5. Հայրենաբնակ Սամուէլ Մհերեան կը նուիրէ իր հեղինակած գիրքերէն.

- Մենաւոր բազեն, Երեւան, 2014։

- Եւ եղաւ լոյս, Երեւան, 2018։

- ԱՅԲ ՔԷ, Երեւան, 2018։

- Փոթորկից առաջ, Երեւան, 2023։

6. Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանը կը նուիրէ.

- Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, Հատորներ Բ., Գ., Դ., Ե., Է., Թ.։

- Մատենագիրք Հայոց, Ներսէս Շնորհալի, Գիրք Բ., ԻԲ. հատոր, ԺԲ. դար, Երեւան, 2022։

7. Էմմա Զուքասզեան կը նուիրէ իր՝ «Վասակ Իշխանի Աւետարանը եւ Կիլիկիայի Հայոց արքունական ձեռագրերի պատկերագրական աւանդութիւնները» աշխատութիւնը, Երեւան, 2023։

8. Ա. Գ. Մանուչարեան կը նուիրէ իր ուսումնասիրութիւններու ժողովածոն. «Հայոց Եկեղեցու պատմութեան վիմագրագիտական-պատմագիտական ուսումնասիրութիւններ», Երեւան, 2019։

9. Միլենա Մկրտչեան կը նուիրէ իր հեղինակած «Սուրբ Ներսէս Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղօթքի բացատրութիւնը», Լոս Անջելես, 2019։

10. Մանչեսթերէն Յովհաննէս Թաքուկեան կը նուիրէ Մանչեսթերի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ 150-ամեակին նուիրուած Վիգէն Կուլիկեանի «From Armenia to Manchester (1870-2020), The Holy Trinity Armenian Church of Manchester and its Community», Great Britain, 2020 աշխատութիւնը։

11. Լոնտոնաբնակ Արժ. Տ. Ներսէս Աւ. Քհնյ Ներսէսեան կը նուիրէ 140 անգլերէն գիրքեր։

12. Լալիկ Խաչատրեան կը նուիրէ իր հեղինակած գիրքերէն.

- Գրաբար ուսումնական բառարան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 2016։

- Հայերէնագիտական տերմինների ուսումնական բառարան, Երեւան, 2020։

- Լեզուաբանական տերմինների ուսումնական բառարան, Երեւան, 2021։

ԱՆՆԱ ԿԷՃԷՔՈՒՇԵԱՆ

Գրադարանավարուհի Կիւլպէնկեան Մատենադարանի





ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՔԵՄԱԿԱՆ

Շաբաթ, 1 Ապրիլ.- *Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ Զարչարանաց եւ Մտանելոյն ի Վիրապն: Ս. Պատարագը մատուցեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:*

Կիրակի, 2 Ապրիլ.- *Զ. Կիրակի Քառասնորդաց: Գալստեան: Առաւօտեան, գլխաւորութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Նոր Երուսաղէմ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուչքունեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:*

Հինգշաբթի, 6 Ապրիլ.- *Երեկոյեան ժամը 7-ին, ի Ս. Յակոբ, պաշտուեցաւ Մեծ Պահոց վերջին «Հանգստեան» ժամերգութիւնը:*

Ուրբաթ, 7 Ապրիլ.- *Առաւօտեան, ի Ս. Յակոբ, պաշտուեցաւ Մեծ Պահոց «Արեւագալի», իսկ երեկոյեան՝ «Խաղաղական» վերջին ժամերգութիւնները:*

Շաբաթ, 8 Ապրիլ.- *Յիշատակ Յարութեան Ղազարու: Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:*

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, ապա մեր Վերնամատրան մէջ պաշտուեցաւ Երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ: Յետ Երեկոյեան ժամերգութեան եւ նախատօնակի կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր, տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 9 Ապրիլ.- *Ծաղկազար: Առաւօտեան ժամը 6:15-ին, հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանի, միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր Վերնամատրան մէջ, ապա Հայոց երկրորդ մուտքէն յետոյ նոյն տեղւոյն մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի: Թափօրականք ի ձեռին ունէին ձիթենեաց եւ արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները:*

Վանք վերադարձին, հայոց թաղի՝ ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրները «Որ զխորհուրդ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Ս. Պատարագէն ետք վանքի շրջափակէն ներս կատարուեցաւ թափօր:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դռնբացէք»-ի արարողութեան նախագահեց Ամենապատիւ՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը:

«Դռնբացէք»-ի արարողութիւն կատարուեցաւ նաեւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ:

Երկուշաբթի, 11 Ապրիլ.- *Աւագ Երեքշաբթի: Յիշատակ Տասն կուսանաց: Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Վազգէն Աբգ. Ալէքեան: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց թափօր» տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուչքունեան:*

Հինգշաբթի, 13 Ապրիլ.- *Աւագ Հինգշաբթի (Յիշատակ վերջին ընթրեաց): Առաւօտուն, Մայր*

տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»։

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր տաճարի Աւագ խորանին վրայ մատոյց Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան։ «Հայր Մեր»-էն առաջ կարդացուեցաւ Ս. Բարսեղ հայրապետի Հաղորդութեան ճառը՝ գերազանցօրէն վեհ եւ շինիչ խրատներով լեցուն։

Գիշերուան ժամը 7-12, Մայր տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգը»։ «Փառք ի բարձունս»-էն ետք տաճարին խորհրդաւոր մթութեան մէջ «Յայսմաւուրքի ամպիոնէն» քարոզեց Գանատայի Անթիլիասական թեմի առաջնորդ Տ. Բաբգէն Արք. Զարեան։

Ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչի քո Քրիստոս»-ի խնկարկութիւնը։

Ուրբաթ, 14 Ապրիլ.- Աւագ Ուրբաթ։ Յիշատակ Զարչարանաց Խաչելութեան եւ Թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Կէսօրէ ետք ժամը 1։30-ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»։ Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան։

Երեկոյեան Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թաղման Կարգ»-ը։ Արարողութեանը Նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը։ Հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը։

Շաբաթ, 15 Ապրիլ.- Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Զատկի)։ Առաւօտեան ժամը 9-ին Ս. Յարութեան տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնելով Աւագ Թարգման Տ. Վազգէն Աբգ. Ալէքեանի ձեռքէն։

Ժամը 11-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը, սկաւտներու նուագախումբերով առաջնորդուած, մեկնեցաւ Ս. Յարութեան տաճար, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեալի յարակից հանդիսութիւնները, սկսելով Ս. Գերեզմանի դրան կընքումէն։ Յունաց Թափօրէն ետք, մեր լուսահանը՝ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան, Յունաց Ամեն. Տ. Թէոֆիլոս Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ հինգ վայրկեան յետոյ դուրս տրուեցաւ նուիրական լոյսը, որ ակնթարթի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամատրան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Լուսարարապետ Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց Ս. Գերեզմանի շուրջ կանգնած խուռներամ բազմութիւնը ամենազգի ուխտաւորներուն։ Ապա տեղի ունեցաւ եռադարձ թափօր։ Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեաւ» շարականը։ Լուսահան Հայր Սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց թափօրը։ Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները։

Վանք դարձին, դարձեալ սկաւտներու նուագախումբով առաջնորդուած, թափօր կազմուեցաւ, լուսահան՝ Տ. Ասպետ Վրդ. Պալեան շուրջառազգեստ եւ ապակէ պահպանակի մէջ Ս. Գերեզմանէն լոյսը ի ձեռին թափօրին մէջտեղէն քալելով։ Դաւթի Բերդին մօտ Լուսարարապետ Սրբազան Հօր տրուեցաւ շուրջառ, խաչ, գաւազան։ Շարականներ երգելով եւ զանգահարութեամբ մուտք գործեցին Մայր տաճար։

Լուսարարապետ Սրբազան Հայրը, Մայր տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատկական Աւետարանը եւ «Պահպանիչ»-ով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Ժամ մը ետք, կատարուեցաւ Ճրագալոյցի արարողութիւնը Մայր տաճարին մէջ։ Ս. Պատարագը մատոյց Տ. Ազան Աբգ. Գոգչեան։ Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Նախատօնակ։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը։ Ապա, Միաբանութիւնը եւ դպիրներ «Այսօր յարեաւ» շարականը երգելով գացին Պարտիզաթաղ ուր տեղի ունեցաւ Տնօրհնէքի արարողութիւն։

Ճրագալոյցի Ս. Պատարագներ մատուցուեցան նաեւ Ս. Յարութեան տաճարի մեր Վերնամատրան մէջ՝ պատարագեց Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան, եւ ի Ս. Հրեշտակապետաց՝ պատարագեց Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան։

Կիրակի, 16 Ապրիլ.- Զատիկ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Կէս գիշերէն ետք ժամը 1։45-ին Մայրավանքի մեծ զանգը ոտքի հանեց Միաբանութիւնը, որ հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանի մեկնեցաւ Ս. Յարութեան տաճար։

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»։ Ապա միաբան հայրեր եւ ժառանգաւոր սաներ զգեստաւորուած իջան Սուրբ Գերեզմանի շրջափակը, ուր պաշտամունքը շարունակուեցաւ եռադարձ թափօրով Գերեզմանի եւ Պատանատեղւոյն շուրջ։ Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորւոց թափօրները։ Կատարուեցաւ «Անդաստան», իսկ Ս. Գերեզմանին առջեւ՝ «Խաչի քո Քրիստոս» բաժինի երգեցողութիւնը։

Առաւօտեան ժամը 7-ին լուսարարապետ Սրբազան Հայրը միաբան հայրերու հետ մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, եւ կարճ դադարէ ետք Գանատայի Անթիլիասական թեմի առաջնորդ Տ. Բաբգէն Արք. Զարեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ։

Վանք դարձին հայոց թաղի մուտքէն «Այսօր յարեաւ» շարականը երգելով Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան։

Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատկական մեծահանդէս «Անդաստան»-ին։

Երկուշաբթի, 17 Ապրիլ.- *Բ. օր Ս. Զատկի։ Յիշատակ մեռելոց։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր տաճարի Աւագ խորանին վրայ մատոյց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, քարոզեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը։ Ս. Պատարագի վերջաւորութեան Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպհովանիի ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նաեւ միաբան հայրեր մասունքներով, դարձան եռադարձ թափօր, որուն աւարտին երգուեցաւ «Ճանապարհ» ուխտաւորաց բարի ճանապարհ մաղթելու համար։ Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազանը բոլորին նշխար բաժնեց։*

Երեքշաբթի, 18 Ապրիլ.- *Գ. օր Ս. Զատկի։ Յիշատակ մեռելոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Տիրան Աբգ. Յակոբեան։ Ս. Պատարագէն ետք հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հոր կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ։*

Հինգշաբթի, 20 Ապրիլ.- *Աւետումն Ս. Աստուածածնի։ Առաւօտեան Լուսարարապետ Ս. Հոր գլխաւորութեամբ, միաբան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ տօնի հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան։*

Շաբաթ, 22 Ապրիլ.- *Յիշատակ գլխատման Սրբոյն Յովհաննու Կարապետին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ։ Ժամարարն էր Տ. Ներսեհ Աբգ. Ալոյեան։*

Կիրակի, 23 Ապրիլ.- *Նոր Կիւրակէ (Կրկնազատիկ)։ Ըստ սովորութեան Մայր տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց լուսահան Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան։*

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին։

Երկուշաբթի, 24 Ապրիլ.- *Յիշատակ Սրբոց Նահատակաց մերոց, որք կատարեցան յընթացս Հայոց ցեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց։ Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ։ Պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան։ Յետ Ս. Պատարագի Միաբանութիւնը թափօրով եւ շարականի երգեցողութեամբ քալեց դէպի Ապրիլեան զոհերու յուշարձան, ուր տեղի ունեցաւ կարգ Բարեխօսութեան կարգ։*

Շաբաթ, 29 Ապրիլ.- *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։*

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, ուր պաշտուեցան Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը, մեր վերնամատրան մէջ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան։

Կիրակի, 30 Ապրիլ.- *Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ)։ Առաւօտեան ժամը 6։15-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար։ Հանդիսապետն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան։ Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր Վերնամատրան մէջ։ Հայոց երկրորդ մուտքէն ետք Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Խադ Ծ. Վրդ. Ճունտուրեան։ Ս. Պատարագի վերջաւորութեան պատարագիչ Հայր Սուրբը նախագահեց Ս. Գերեզմանին առջեւ կատարուած «Անդաստան»-ին։*

Շաբաթ, 6 Մայիս.- *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան։*

Կիրակի, 7 Մայիս.- *(Կարմիր Կիւրակէ)։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան։ Ժամարարն էր Տ. Խադ Ծ. Վրդ. Ճունտուրեան։*

Կէսօրէ ետք, Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին։

Շաբաթ, 13 Մայիս.- *Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Գէորգ Աբգ. Հայրապետեան։*

Կիրակի, 14 Մայիս.- *Տօն Երեւման Ս. Խաչին։ Առաւօտեան ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը ընթերցաւ Ս. Կիւրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդ կայսեր եւ հանդիսապետեց «Անդաստան»-ի արարողութեանը։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Աւագ Սեղանին վրայ, որուն վերեւը զետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը։ Պատարագեց Տ. Ներսեհ Աբգ. Ալոյեան։*

Շաբաթ, 20 Մայիս.- *Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Արշակ Աբգ. Ղազարեան։*

Կիրակի, 21 Մայիս.- *Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան։ Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան։*

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը։

Չորեքշաբթի, 24 Մայիս.- *Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր բարձրացան Ջիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին մօտ կառուցուած վրանամատրան մէջ կատարուեցաւ «Պղծեալ տաճարի» արարողութիւն, ապա Երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ։*

Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան «եկեսցէ»-ի եւ Հակման կարգերը եւ ապա Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր։

Հինգշաբթի, 25 Մայիս.- *Համբարձումն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Առաւօտուն Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Համբարձման լեռ, ուր «Հրաշափառ»-ով կատարուեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս, եւ Հայկական բաժնի վրանին ներքեւ մատուցուեցաւ Ս. Պատարագը։ Պատարագեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան։ «Հայր մեր»-էն առաջ Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթիւ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք»։ Պատարագի վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարուած «Անդաստան»-ին հանդիսապետեց պատարագիչ Հայր Սուրբը։*

Շաբաթ, 27 Մայիս.- *Պատարագը մատուցեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Համբարձման մատրան մէջ։ Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան։*

Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

Կիրակի, 28 Մայիս.- *Երկրորդ Մաղկազարդ։ Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները կատարուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ։ Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուչքունեան։*

Շաբաթ, 3 Յունիս.- *Պատարագը մատուցեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Ս. Առաքելոց մատրան մէջ։ Ժամարարն էր Տ. Աղան Աբգ. Գոգչեան։*

Կէսօրէ ետք, Հոգեգալստեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

Գիշերապաշտօնը Մայր տաճարին մէջ պաշտուած «եկեսցէ»-ի եւ Հակման կարգերուն նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

Կիրակի, 4 Յունիս.- *Հոգեգալուստ։ Առաւօտեան ժամերգութեան աւարտին հանդիսապետութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի կատարուեցաւ «Անդաստան» ի Ս. Յակոբ։ Ապա Միաբանութիւնը Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Փրկիչ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեց մատուռէն ներս, ուր եւ մատուցուեցաւ օրուան Ս. Պատարագը։ Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան, որ Պատարագի ընթացքին կարդաց նաեւ Յովհաննէս Ոսկեբերանի Հոգեգալստեան ներբողը։ Պատարագի վերջաւորութեան նախագահութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ, հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարապետաց եւ միաբանից հոգիներուն ի հանգիստ։*

Կէսօրէ ետք, Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանի գլխաւորութեամբ միաբան հայրեր մեկնեցան Սիոն լեռ, այցելեցին վերջին ընթրեաց վերնատունը։ Օրուան դէպքին պատմական վայրը կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն։

Շաբաթ, 10 Յունիս.- *Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան։*

Կիրակի, 11 Յունիս.- *Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան։ Ժամարարն էր Տ. Տիրան Աբղ. Յակոբեան։*

Կէսօրէ ետք, նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

Երկուշաբթի, 12 Յունիս.- *Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց։ Գիշերային ժամերգութիւնը պաշտեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հռիփսիմէի մատրան մէջ։ Ժամարարն էր Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան։*

Ուրբաթ, 16 Յունիս.- *Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան։*

Շաբաթ, 17 Յունիս.- *Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին։ Յիշատակ ելանելոյն ի Վիրապէն։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ։ Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ Աբրահամեան։*

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, ապա «Տէր ողորմեա» երգուեցաւ ծնրադիր։ Նախատօնակէն ետք կատարուեցաւ կիսասարկաւագական ձեռնադրութիւն՝ ձեռամբ Լուսարարապետ Սրբազան Հօր։

Կիրակի, 18 Յունիս.- *Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Սուրբ Էջմիածնի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Աւագ Սեղանին վրայ։ Ժամարարն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան։ Յընթացս Ս. Պատարագի կատարուեցաւ Սարկաւագական ձեռնադրութիւն՝ ձեռամբ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, որ նաեւ նախագահեց «Հայր Մեր»-էն առաջ կատարուած «Հայրապետական մաղթանք»-ին։*

Շաբաթ, 24 Յունիս.- *Սրբոցն՝ Մեծին Ներսիսի Հայրապետին մերոյ եւ Խադայ Եպիսկոպոսին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Խադ Ծ. Վրդ. Ճունտուրեան։*

Կիրակի, 25 Յունիս.- *Գ. Կիրակի զկնի Հոգեգալստեան։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեան։ Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։*

Ուրբաթ, 30 Յունիս.- *Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան։*

Շաբաթ, 1 Յուլիս.- *Գիւտ նշխարաց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝ Ս. Մակարի Մատրան մէջ։ Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան։*

Կիրակի, 2 Յուլիս.- *Դ. Կիրակի զկնի Հոգեգալստեան։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։ Ժամարարն էր Տ. Ներսեհ Աբղ. Ալոյեան։*

Չորեքշաբթի, 5 Յուլիս.- *Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան։*

Հինգշաբթի, 6 Յուլիս.- *Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Սահակայ եւ Մեսրոպայ։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց։ Պատարագեց Կիւլպէնկեան Մատենադարանի Տեսուչ՝ Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան։*

Շաբաթ, 8 Յուլիս.- *Սրբոցն՝ Տրդատայ Թագաւորին մերոյ եւ Աշխէն Տիկնոջն եւ Խոսրովիդխտոյն։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց։ Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան։*

Նոյն օրը, կէսօրէ ետք նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

Կիրակի, 9 Յուլիս.- *Ե. Կիրակի զկնի Հոգեգալստեան։ Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի։ Առաւօտեան Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ միաբան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան դէպի Գեղեսմանիի Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան Ս. Պատարագը մատոյց Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան։*

Ուրբաթ, 14 Յուլիս.- *Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան։*

Շաբաթ, 15 Յուլիս.- *Սրբոց Երկոտասան Առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ Երեքտասաներորդ Առաքելոյն։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց։ Ժամարարն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան։*

Կիրակի, 16 Յուլիս.- *Զ. Կիրակի զկնի Հոգե-*

գալստեան։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան։ Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուչքունեան։

Ուրբաթ, 21 Յուլիս.- *Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան։*

Շաբաթ, 22 Յուլիս.- *Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ։ Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին։ Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան։*

Երեկոյեան, Վարդավառի նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը։

Իրիկնադէմին Ս. Յակոբեանց Մայր տաճարին մէջ պաշտուեցան «Եկեսցէի» եւ «Հսկման» արարողութիւնները։ Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

Կիրակի, 23 Յուլիս.- *Վարդավառ։ Տօն Աչլա-կերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Յետ Առաւօտեան ժամերգութեան կատարուեցաւ օրուան «Անդաստան»-ը։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Աւագ Սեղանին Վրայ։ Պատարագեց եւ քարոզեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Տ. Վազգէն Արք. Միրզախանեան։*

Երկուշաբթի, 24 Յուլիս.- *Յիշատակ մեռելոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան։ Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն։ Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան։*

Ուրբաթ, 28 Յուլիս.- *Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան։*

Շաբաթ, 29 Յուլիս.- *Սրբոցն Թադէոսի Առաքելոյն մերոյ եւ Սանդխտոյ կուսին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան։*

Կիրակի, 30 Յուլիս.- *Բ. Կիրակի զկնի Վարդավառի։ Առաւօտեան միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար։ Ս. Պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան։ Ժամարարն էր Տ. Տիրան Վրդ. Յակոբեան։*

Պատրաստեց՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԲԿ. ԽՈՒՏԱՎԵՐՏԵԱՆ



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ-Ք



Երեքշաբթի, 11 Ապրիլ.- *Կէսօրէ ետք, ժամը 3:45-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը նախագահութեամբ Սբ. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հօր, Ջատկական շնորհաւորութիւններու գնաց Ֆրանչիսկեան Քիւսթոտ՝ Հոգեշնորհ Տ. Ֆրանչեսկո Փաթոնի եւ Միաբանութեան: Ապա ժամը 4:30-ին Լատինաց Ամենապատիւ Տ. Փիերպաթիսթա Արքեպս. Փիցաբալա Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան:*

Երեքշաբթի, 18 Ապրիլ.- *Սբ. Յարութեան տօնի առիթով, առաւօտեան ժամը 10:30-էն սկսեալ, յաջորդաբար Պատրիարքարան Ջատկական շնորհաւորութեան եկան Ֆրանչիսկեան Քիւսթոտ Հոգեշնորհ Տ. Ֆրանչեսկո Փաթոն իր միաբաններով:*

Ապա ժամը 11:30-ին՝ Լատինաց Պատրիարքական Փոխանորդը իր միաբաններով, եւ Կաթոլիկ, Բողոքական, Հապէշ, Ղպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 4:30-ին, Սբ. Յարութեան տօնին առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հօր, Ջատկական շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրի մէջ Հայերու հետեւակ՝ Ասորի եւ Ղպտի եկեղեցիներու եպիսկոպոսներուն եւ միաբանութեանց:

Ուրբաթ, 23 Յունիս.- *Ամերիկայի Անկախութեան 247 ամեակին առիթով Երուսաղէմի մէջ Ամերիկայի դեսպանատան «Պաղեստինեան բաժնի» ղեկաւար՝ Տիար Ճորճ Նոլի կողմէ կազմակերպուած ընդունելութեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Աղան Աբղ. Գոգչեան եւ Կալուածոց տեսուչ՝ Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան:*

Նոյն օրը, Սուրբ Երկրի Ասորիներու Եպիսկոպոս՝ Գերաշնորհ Տ. Անթիմոս Ճաք Յակուբ, ընկերակցութեամբ իր երկու միաբան հայրերու՝ այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպման ընթացքին Գերաշնորհ Տ. Անթիմոս Ճաք Յակուբ Սուրբ Աթոռոյս Գահակալին յանձնեց Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II-ի Շնորհակալագիրը՝ Սուրբ Երկիր կատարած իր առաջին պաշտօնական այցելութեան ընթացքին Սրբատեղեաց մէջ իր պաշտօնական մուտքերը համաձայն Status Quo-ի խաղաղ եւ անխոչընդոտ կազմակերպելու համար:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Աղան Աբեղայ Գոգչեան:

Երկուշաբթի, 11 Յուլիս.- *Իսրայէլի, Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Աֆրիկայի տարածաշրջանի տնօրէն Տիկին Գարոլա Նիւրել՝ ընկերակցութեամբ իր օգնականի, այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:*

Հանդիպման ընթացքին Տիկին Գարոլա իր աջակցութիւնը յայտնեց Պատրիարք Սրբազան Հօրը եւ վստահեցուց, որ իր կարելին պիտի ընէ պայքարելու քրիստոնեաներու վրայ հրեաներու թքնելու եւ հալածանքներու դէմ:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՀ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական հանդէսը հիմնուած է 1866-ին, պաշտօնաթերթն է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ լոյս կ'ընծայուի Սրբոց Յակոբեանց Տպարանէն։

«Սիոն» կրօնական, գրական, բանսիրական նիւթերէ զատ, կ'ընդգրկէ նաեւ պատմական, եկեղեցական, լեզուական եւ հայ արուեստի վերաբերեալ ուսումնասիրութիւններ եւ այլ բնոյթով նիւթեր։

Յօդուածներու հիմնական լեզուն Հայերէնն է, կ'ընդունուին նաեւ Անգլերէնով յօդուածներ, նախընտրաբար 8-15 համակարգչային շարուածքով լման էջ՝ Word միջավայրին մէջ, երկու կողմերէն հաւասարեցուած, առանց տողադարձերու, ծաւալը՝ A4 ֆորմաթի, տառատեսակը՝ Arian Grqi, տառաչափը՝ 12 pt, տողերու հեռաւորութիւնը՝ 1.15 pt։

Յղումները կը տրուին տողատակը՝ աճման կարգով, տառատեսակը՝ Arian Grqi, տառաչափը՝ 10 pt։ Հայերէն յօդուածները «Սիոն»-ի մէջ կը հրատարակուին դասական հայերէն ուղղագրութեամբ։ «Սիոն»-ին յանձնուած յօդուածները պէտք է ըլլան անտիպ։

Յօդուածին սկիզբը կը դրուի հեղինակի անունը, մականունը (գլխագիրներով), գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտօնը եւ ելեքտրոնային փոստի անուանումը։

Յօդուածագիրներու արտայայտած գաղափարներն ու կարծիքները պայման չէ որ համընկին «Սիոն»-ի խմբագրութեան տեսակէտին։

Մեր սրտագին բաղձանքն է որ «Սիոն» մուտք գործէ բոլոր հայ տուներէ ներս. Վստահ ենք թէ ամէն ընթերցող պիտի գտնէ անոր էջերուն մէջ գրութիւններ՝ որոնք համապատասխան ըլլան իր ճաշակին եւ նախասիրութեան։

Յօդուածներ եւ այլ թղթակցութիւններ, ուսումնասիրութիւններ պէտք է ուղարկուին «Սիոն»-ի հետեւեալ հասցէով.

E-mail: ***sionjournal@yahoo.com***





Իսրայէլի Պետախ Տիկուա քաղաքի հանրային պարտէզը վերանուանուեցաւ ֆրանսահայ աշխարհահռչակ շանսոնիյէ Շարլ Ազնաւուրի անունով եւ առ այդ տեղադրուեցաւ յուշարար



Ծաղկազարդի «Անդաստան» ի Սբ. Յարութիւն



Ծաղկազարդի Ս. Պատարագէն ետք Միաբանութիւնը եւ ժառանգաւոր սաներ ոտիկանատան առջեւէն թափօրով եւ շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան



Աւագ Հինգշաբթի, Ոտնլուայ



Աւագ Հինգշաբթի
Խմբանկար Ոտնլուայի երգչախումբ



Ոտնլուայ



Ջատկական շնորհաւորական այցելութիւն Ֆրանչիսկեաններուն



Ջատկական շնորհաւորական այցելութիւն
Լատինաց Ամենապատիւ Պատրիարքին եւ միաբանութեան



Աւագ Ուրբաթ, Կարգ Թաղման



Լուսահան՝ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան
Քրիստոսի Յարութեան Լոյսը Հայոց Թաղի սկիզբէն թափօրով կը բերէ Մայրավանք



Աւագ Շաբաթ, Ճրագալոյց
Ժառանգաւորաց երգչախումբը



Յարութիւն Տեառն
Պատարագիչ՝ Գանատայի Անթիլիասական թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Բարգէն Արք. Զարեան



Մեծահանդէս «Անդաստան» Մեծ բակին մէջ



Բ. օր Ջատկի, Ուխտաւորաց Պատարագ
Պատարագիչ՝ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան



Աւետումն Ս. Աստուածածնի
Պատարգիչ՝ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան



Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին վիրաւորուած
հերոս զինուորներու չորրորդ խումբին այցը Պատրիարքարան



Աշխարհամատրան Կիրակի
Պատարագիչ՝ Տ. Խադ Ծ. Վրդ. Ճումտուրեան



Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիոս Աֆրեմ II-ի
առաջին պաշտօնական մուտքը Սբ. Յարութեան տաճար



Ջատկական տօներու առիթով Երուսաղէմի հաղաբապետ՝ Տիար Մոշէ Լէոն այցելեց Հայոց Պատրիարբարան՝ հանդիպելու եւ շնորհաւորելու Իրիստոնեայ համայնքներու հոգեւոր պետերուն



Երուսաղէմի հաղաբապետ՝ Տիար Մոշէ Լէոն
ժառանգաւորաց երգչախումբին հետ, ի Հայոց Պատրիարբարան



Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II
կատարեց իր առաջին պաշտօնական մուտքը Բեթղեհէմի Ս. Ծննդեան տաճար,
ապա հիւրասիրուեցաւ Հայոց տեսչարանին մէջ



Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II
Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարեց իր ուխտն ու երկրպագութիւնը Ս. Գլխադրին,
ապա այցելեց Պատրիարքարան



Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II
կատարեց իր առաջին պաշտօնական այցը Երուսաղէմի Հայոց Պատրիարբարան



Տօն Համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
«Հայրապետական մաղթանք» ի Համբարձման լեռ



Վերաօծում Ս. Հռիփսիմէի մատրան վերանորոգեալ խորանի ի Սբ. Հրեշտակապետաց



«Անդաստան» ի Ս. Յակոբ



Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի
2022-2023 տարւոյ շրջանաւարտից խմբանկար



Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի 2022-2023 տարւոյ շրջանաւարտները
Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ կը կտրեն շրջանաւարտից հանդէսի կարկանդակը



Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի 2022-2023 տարւոյ
շրջանաւարտներու եւ ուսուցիչներու խմբանկար



Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի 2020-2021 տարւոյ շրջանաւարտից խմբանկար



Կիսասարկաւագական Ձեռնադրութիւն
Տրց. Իվան Ադամեանի, Տրց. Սարգիս Գինոսեանի եւ Տրց. Էրիկ Սարդարեանի



Սարկաւագական Ձեռնադրութիւն
Տրց. Իվան Ադամեանի եւ Տրց. Սարգիս Գինոսեանի



Սարկաւագական Ձեռնադրութիւն
Տրց. Իվան Ադամեանի եւ Տրց. Սարգիս Գինոսեանի



Ուրարի տուչութիւն Ա. Ընծայարանի ուսանողներ՝
Էդգար Բաղդասարեանի, Խաչիկ Սարգսեանի, Յարութիւն Անդրիասեանի,
Յովհաննէս Խումարեանի, Նուէր Գեղամեանի եւ Ռուբէն Յակոբեանի



Վարդապետական աստիճանի տուչութիւն
Տ. Վազգէն Աբղ. Ալէմեանի եւ Տ. Տիրան Աբեղայ Յակոբեանի



Վարդապետական աստիճանի տուչութիւն
Ձախէն աջ՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէմեան, Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, Պատրիարք Հայր՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեան, Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան, Տ. Տիրան Վրդ. Յակոբեան



Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
Պատարագիչ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան՝ Տ. Վազգէն Արք. Միրզախանեան



Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
Պատարագիչ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան՝ Տ. Վազգէն Արք. Միրզախանեան

«ՍԻՈՆ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՍԻՈՆ»-ի խմբագրութիւնը կը փորձէ ամբողջացնել եւ արդիականացնել բաժանորդներու ցանկը։ Բաժանորդագրուեցէ՛ք նոր շրջանի «ՍԻՈՆ»-ին, զոր կրնաք ստանալ նամակատան միջոցաւ եւ կամ այցելելով մեր կայքէջը։

Հաճեցէք ներքեւի կտրոնը յստակ եւ գլխագիր տառերով ամբողջացնել եւ փութով մեր E-mail: sionjournal@yahoo.com հասցէին ղրկել։

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱղԷՄԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՈՆԻ

Անուն, Մականուն. _____

Տիտղոս. _____

Կազմակերպութիւն. _____

_____

Հասցէ. _____

_____

Կայքէջ. _____ *E-mail address* _____

Տարեկան բաժանորդագրութիւն՝ $150 USD

NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is driving up a new updated list to its official periodical SION. To ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittence as soon as possible. You can also write to our E-mail: sionjournal@yahoo.com.

Name, Surname. _____

Title. _____

Organization. _____

Address. _____

_____

Annual Subscribtion $ 150 USD

Send your checks to: Armenian Patriarchate of Jerusalem P.O.Box 14235 Jerusalem, Israel

Tel: +972 (0)2-6282331
Fax: +972 (0)2-6264861
E-mail: sionjournal@yahoo.com

